# ԷՋՄԻԱԾԻՆ



1956. 11-12

193

ՌՆԶ

ԺԳ. ՏԱՐԻ

Նոյեմբեր–դեկտեմբեր

# ԷՋՄԻԱԾԻՆ

Պաշտօնական ամսագիր
Հայրապետական Աթոռոյ
Ս. Էջմիածնի

XI - XII

1956

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԷՆԵԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Բացվել է Ամենայն Հայոց Կաթողիկոսության պաշտոնաթերթ «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրի 1957 թվականի տարեկան բաժանորդագրությունը։*

*Ամսագրի տարեկան ընդհանուր բաժանորդագինն է՝*

| | |
|---|---|
| *ՍՍՌՄ* | *75 ռուբլի* |
| *Ռումինիա* | *60 լեյ* |
| *Բուլղարիա* | *60 լևա* |
| *Արտասահման* | *5 դոլար* |

*Կարելի է բաժանորդագրվել առաջնորդարաններում և եկեղեցիներում։*

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Էջ

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպության . . . 3
Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին արքության պատիվ շնորհելու մասին . . . 6
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Մեր վերածնունդը և Աֆրիկիա . . . 8
Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի կապակցությամբ փոխանակված հեռագրեր . . . 13
Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի կապակցությամբ փոխանակված հեռագրեր . . . 15
Վեհափառ Հայրապետի հեռագիրը Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին՝ պատրիարքական ընտրության հարցի կապակցությամբ . . . 17
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ— Խաչի խորհուրդը . . . 18
Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն Հոգևոր Ճեմարանում . . . 20
Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից . . . 25
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ . . . 27
Սուրբ Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում . . . 32
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԳԻՍՅԱՆ— Հայաստանի պետական երգեցիկ խմբի եկեղեցական համերգը Հոգևոր Ճեմարանում . . . 37
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱՐՅԱՆ— Դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը Մայր Աթոռում . . . 39
ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ— Մեսրոպ Մաշտոց . . . 41
ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ— Համառոտ տեսություն հին Հայաստանի պատմության . . . 48
ԱԼ. ՍԱՀԻՆՅԱՆ— Նոր նյութեր Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ . . . 56
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ— Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ . . . 68
Հ. ԹՈՒՐՇՅԱՆ— Հայ-հաբեշական եկեղեցական առնչություններ . . . 77
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ— Գլաձորի մանրանկարչության դպրոցի հիմնադիր վարպետ Մոմիկը . . . 82
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԻԼԱՄԻԱՐՅԱՆ— Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի . . . 92
ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ— Հովվական այցելություն Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմում . . . 97
ԲԺԻՇԿ Ն. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ— Ադրբեջանի թեմն այսօր . . . 100
Կ. ՂՈՐԼԱՆՅԱՆ— Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանն այսօր . . . 104
Գ. ՍԻՐԱԿՈՍՅԱՆ— Սուրբ Էջմիածին և Ամենայն Հայոց Հայրապետությունը . . . 109
Ս. ՄԱՆՎԵԼՅԱՆ— Նպաստակը Մայր Աթոռի տպարանի հաստատման . . . 112
Նոր մատուռի շինություն Սոֆիայում . . . 113
Դերենիկ Կարապետի Դեմիրճյան . . . 115
ՓԱՅԼԱԿ ՄԻԱԹԱՆ— Դերենիկ Դեմիրճյան . . . 117
Հանգիստ արժանապատիվ Տ. Խորեն ավագ քահանա Ծուշանյանի . . . 120
Հանգիստ արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Գևորգյանի . . . 121
Մայր Աթոռի դիվանատան կողմից . . . 122
Ցանկ «ԷՋՄԻԱԾԻՆ» ամսագրում 1956 թվականի ընթացքում տպագրված նյութերի . . . 123

# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ. ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ. ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉՆԵՐՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Սիրելի՛ և հարազա՛տ զավակներ Մեր.

Ամենայն Հայոց Հայրապետն է, որ սույն թղթով Ձեզ կխոսի, ուրախությամբ ընդառաջելով Ձեր պաշտոնաբերի Մեզ ուղղած դիմումին:

«ԶԻ ԹԷՊԷՏ ԵՒ ՄԱՐՄՆՈՎ ՀԵՌԻ ԵՄ, ԱՅԼ ՀՈԳԻՈՎ ԸՆԴ ՁԵԶ ԵՄ, ԽՆԴԱՄ ԻԲՐԵՒ ՏԵՍԱՆԵՄ ԶԿԱՐԳՆ ՁԵՐ ԵՒ ԶՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑՆ ՁԵՐՈՑ ՈՐ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ» (Կողոս., Բ 5):

Մեր խոսքը կուգա Հայոց Աշխարհի սրտեն՝ Ս. Էջմիածնեն, ուր շատ դարեր առաջ մարդասեր Աստուծո Որդին՝ Ինքը Միածինը իջավ և օրհնեց զայն, և լուսավորեց մեր ժողովուրդը, ցույց տալով անոր ճանապարհը հավիտենական կյանքի: «ԷՋ ՄԻԱԾԻՆՆ Ի ՀՕՐԷ ԵՒ ԼՈՅՍ ՓԱՌԱՑ ԸՆԴ ՆՄԱ»:

Այդ օրեն, մեր Մայր Հողը սրբացավ և մեր ժողովրդի զավակները դարձան լույսի որդիներ, Աստուծո որդիներ:

Ահա մեծ և սքանչելի խորհուրդը մեր Եկեղեցիին, ահա մղիչ ուժը հայ ժողովրդի պատմության, ահա աղբյուրը մեր զավակներու ստեղծարար շնորհներուն, ահա գրավականը մեր Ազգի յուսավոր ապագային:

Աստված այդտե՛ղ կնքած է Իր ուխտը մեր ժողովրդի հետ, և ինչ որ Աստված է կապած, ո՛չ մեկ մարդկային ձեռք չի կրնար քակել: Եվ դարե դարին պատմեց այս սրբազան ուխտի մասին, և սերունդներ շարան-շարան հավատարիմ մնացին անոր: Հայ ժողովուրդը մաշեցավ բայց չանհետացավ, հայ ժողովուրդը տառապեցավ, բայց միշտ ստեղծեց, հայ ժողովուրդը նահատակվեցավ, բայց միշտ վերստին ծնավ ու ապրեցավ:

Դո՛ւք, սիրելի՛ երիտասարդներ, հարազատ զավակներն եք այդ հայ հավատավոր, աստվածասեր ժողովրդին: Կալ ճանչցեք ինքզինքնիդ, և ազնիվ հպարտությամբ, համարձակ գոչեցե՛ք. «I am armenian»:

Հավատարի՛մ մնացեք Ձեր պապերու սրբազան ուխտին, քրիստոնեական լույս հավատքին և առաքելահաստատ Ս. Էջմիածինին, մեր մայրենի անուշ լեզվին և մեր ժողովրդի մշակույթին, մեր ազգային արդար դատին ու մեր վերածնյալ Մայր Հայրենիքին:

Հավատարի՛մ մնացեք Ձեր պետության օրենքներուն, եղե՛ք կարգապահ ու ջանասեր քաղաքացիներ, միշտ բարձր պահելով ջահը մարդու ազատության և ժողովուրդներու եղբայրության գաղափարներուն:

Հավատարի՛մ մնացեք նաև Ձեր կազմակերպության նպատակներուն, և պատվով կատարեցեք Ձեր աշխատանքները ի շինություն Եկեղեցվո և հօգուտ մեր Ազգի:

Ուշադրություն մի՛ դարձնեք այն վեճերուն և հակամարտություններուն, որոնք Սփյուռքի հայության ներքին կյանքը կպղտորեն: Անոնք անցողիկ, մակերեսային և շատ անգամ արվեստականորեն ստեղծված անիմաստ երևույթներ են: Դուք այդ բոլորեն վեր մնացեք, ինչպես Քաջարի սավառնորդը, որ ամպերեն վեր կսլանա դեպի խաղաղ ու պայծառ բարձունքները երկնակամարի: Բուն հայ ժողովուրդը այդտե՛ղ, այդ բարձունքին վրա կգտնվի իր Հայրական Եկեղեցիով, իր հերոսական պատմությամբ, իր փառավոր մշակույթով և իր վերածնության ներկա խոյանքով:

Արդ, սիրելինե՛ր, մի՛ երկնչիք, մի՛ դանդաղիք, մի՛ տկարանաք: Երիտասարդի վայել չեն այդ բոլորը: Սիրեցե՛ք Ձեր Ազգը, ինչպես կսիրեք Ձեր հարազատ մայրը: Սիրեցե՛ք Հայաստանյայց Եկեղեցին, ինչպես կսիրեք Ձեր սեփական տունը: Սիրեցե՛ք Ս. Էջմիածինը, ինչպես կսիրեք Ձեր հորենական ժառանգությունը:

«ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ԵՂԲԱՐՔ, ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՑԷՔ ԵՒ ՊԻՆԴ ԿԱԼԱՐՈՒՔ ԶԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՍ ԶՈՐ ՈՒՍԱՐՈՒՔ, ԵԹԷ ԲԱՆԻՒ ԵՒ ԵԹԷ ԹՂԹՈՎ ՄԵՐՈՎ» (Բ Թեսաղ., Բ 14):

Դո՛ւք, Ամերիկայի մեջ ծնած ու սնած հայ երիտասարդնե՛ր ու պատանինե՛ր, թեև հեռու մեր Մայր Հողեն, մեծ բաժին մը ունիք աշխատանքի և պայքարի՝ Եկեղեցի, Ազգ ու Հայրենիք վերաշինելու և ծաղկեցնելու պատմական առաքելության ճանապարհին վրա: Աշխատանքի և պայքարի բաժին ունիք նաև մեր Ազգի արդար իղձերու իրականացման ճամբուն վրա:

Հպա՛րտ եղեք այդ ազնիվ աշխատանքով, հպա՛րտ եղեք այդ նվիրական պայքարով: Մի՛ մնաք կրավորական դիրքերու վրա, հրապարակ իջե՛ք, առե՛ք Ձեր դալար ձեռքերուն մեջ ղեկը մեր եկեղեցական-ազգային գործերուն, և

ծերերում իմաստության ու փորձառության խառնեցե՛ք Ձեր մտքին լույսը, Ձեր սրտին կրակը, Ձեր շինելու կամքը և Ձեր տեսիլքը:

Եվ ամեն բանի վեր, Ձեր բոլոր ուժերով պահեցե՛ք, պահպանեցե՛ք Հայ Եկեղեցվո ու Հայ Ազգի միությունը ու անբաժանելիությունը Սրբազնասուրբ Էջմիածնով:

«ՔԱՆԶԻ Ո՞Վ Է ՄԵՐ ՅՈՅՍ, ԿԱՄ ԽՆԴՈՒԹԻՒՆ, ԿԱՄ ՊՍԱԿ ՊԱՐԾԱՆԱՑ ՄԵՐՈՅ ԵԹԷ ՈՉ ԴՈՒՔ» (Ա Թեսաղ., Բ 19):

Երանի՜ Ձեզ, որ երիտասարդ եք: Աշխարհը նորեն կստեղծվի Ձեզ համար: Եվ դուք ամբողջ կյանք մը ունիք Ձեր առաջ:

Իսկ Ս. Աստծո առաջ Մենք սրտանց կաղոթենք, որ Տերը Ձեզ պահե պահպանե, առողջ ու անսասան, իր շնորհները առատապես բաշխե Ձեր հոգիներում և Ձեր կյանքը պտղաբեր դարձնե, փառավորելով Ձեզ և Ձեզմով մեր եկեղեցին ու մեր պատմական ժողովուրդը:

Ապրեցե՛ք, աճեցե՛ք, ծաղկեցե՛ք ու գործեցե՛ք ի փառս Աստուծո և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, այժմ և միշտ. ամեն:

Հայրապետական օրհնությամբ՝

Վազգեն Ա

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 10-ն նոյեմբերի
1956 Փրկչական ամի.
և ի թուականիս Հայոց ՌՆԵ,
ի Ս. Էջմիածին:

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ԳԵՐ. Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մխիթարական է Մեզ համար, Սահակ Սրբազան, Ձեզ տեսնել ներկայի մեր բարձրաստիճան հոգևորականության հոյլին մեջ։ Դուք Ձեր ամբողջ կյանքը նվիրեր եք լուսակրոն մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն, նախ իբրև քահանա և ապա իբրև կուսակրոն միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի։

Ավելի քան կես դար Դուք Ձեր ուժերը ի սպաս եք դրեր Մեր Ս. Եկեղեցվո փառքին և պայծառության սրբազան գործին՝ Ձեր գրչով, Ձեր կենդանի խոսքով և գործերով. մխիթարեր ու լուսավորեր եք հավատացյալները և ռուսերեն լեզվով հրատարակություններով ծանոթացուցեր ու լայն շրջաններու մեջ տարածեր եք փառքը մեր բազմադարյան եկեղեցվո վարդապետության, մշակութային արժեքներուն և հերոսական պատմության։ Մեր բազմաչարչար ժողովրդի կյանքին պայքարի չարաբաստիկ աղետներու ծանր տարիներուն՝ 1914—1920 թվականներուն, Դուք, իբրև Հայ Եկեղեցվո անձնդիր սպասավոր և իբրև քաջ հովիվ, աշխատեր եք ժողովրդի կարիքներու և հոգերու դարմանման համար, ըլլալով գործոն անդամ բազմաթիվ ազգային-հասարակական մարմիններու։

Այժմ ևս, հակառակ Ձեր պատկառելի տարիքին, նույն եռանդով ու խանդավառությամբ կշարունակեք Ձեր եկեղեցանվեր գործունեությունը որպես Մայր Տաճարի լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ։

Այժմ Դուք կհանդիսանաք Մեր թանկագին գործակիցը և լավագույնս կկատարեք Ձեր վրա դրված հոգևոր և վարչական պարտականությունները՝ ի փառս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ի վարձատրություն Ձեր աստվածահաճո և եկեղեցանվեր գործունեության և ի մխիթարություն Ձեզ, Հայրապետական Մեր այս կոնդակով կշնորհենք Ձեզ ԱՐՔՈՒԹՅԱՆ ԳԱՏԻՆ, և կմաղթենք, որ այս բարձր կոչումը ավելացնե նոր փայլ ու հեղինակություն Ձեր անվան վրա, տալով Ձեզ Գերաշնորհութեան գործունեության նոր մղում, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և ճուրախություն մեր հավատացյալ ժողովրդյան:

Կօրհնենք զՁեզ և կաղոթենք, որ մեր Երկնավոր Հայրը պարգևե Ձեզ երկար տարիներ՝ աշխատանքի պտղառատ և փառազարդ ճանապարհի վրա:

«Ողջ լերուք, զօրացեալ ի Հոգւոյն Սրբոյ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 7-ն Նոյեմբերի
1956 Փրկչական ամի.
և ի տումարիս Հայոց ՌՆԶ.
ի Ս. Էջմիածին:

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՄԵՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԵՎ ԱՆԹԻԼԻԱՍ

Հայաստանյայց բազմադարյան Եկեղեցին մեր օրերին գտնվում է վերազարթոնքի շրջանի սեմին:

Հայաստանյայց Եկեղեցին նույնինքն հավատացյալ հայ ժողովուրդն է, իր աստվածակառույց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ունենալով իբրև գլուխ Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես ընդհանրական Հայրապետ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը արդեն իսկ վերակազմակերպվել է: Երկու տասնյակ երիտասարդ հավատավոր և հայրենասեր հոգևորականներ, Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի կողքին են կանգնել, պատրաստ «բարուք պատերազմելու մտիւք՝ ի խնդիր հայ ժողովրդի հոգևոր կյանքի վերաշինության:

Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանը այս տարի մոտավորապես հիսուն ուսանողների առաջ իր դռները բացեց և դասախոսական նոր կազմով, ուսումնական նոր ծրագրով առաջ ընթանում է դեպի իր կոչման բարձունքը:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի շքամուտքի ու հարավից շենքերի վերանորոգումները առաջ են ընթանում, համաձայն նախագծված ծրագրի, որով առաջիկա հինգ տարիների ընթացքում, այսինքն մինչև 1961 թվականը, Աստուծո օգնությամբ, հիմնովին կվերաշինվեն Մայր Աթոռի հողամասի վրա գտնվող մեր բոլոր սուրբ տաճարները ու շենքերը, ներառյալ նաև Վեհարանի նոր շենքը:

Առաջիկա տարում կվերաբացվի Մայր Աթոռի նոր տպարանը, որը փառավոր ու սրտագին նվերն է, հանդիսանալու Ամերիկահայ հավատացյալ ժողովրդի:

Վարչական տեսակետից բավարար չափով վերակազմակերպվել են թեմերը, այն է՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստան-Նախիջևանի թեմերը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր թեմական խորհուրդը, ընտրված առաջնորդը կամ առաջնորդական փոխանորդը և քահանայական դասը: Շնորհիվ մեր բարեխնամ կառավարության բարյացակամության, հետզհետե վերաբացվում են նոր եկեղեցիներ հայ հավատացյալների համախոսականների հիման վրա: Եկեղեցիների վերաբացման ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվում այժմ, հաղթահարվում են քայլ առ քայլ մի շարք դժվարություններ, հետզհետե վերացվում են որոշ թերություններ՝ պայծառ հեռանկարներ բաց անելով մեր Ս. Եկեղեցու կյանքի առաջ:

Այս բոլորից հետո, հույժ մխիթարական է հաստատել, թե Սփյուռքի հայ հավատացյալ ժողովուրդը ևս անմասն չի մնացել այս ընդհանուր վերազարթոնքից: Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի 1956 թվականի փետրվար—մայիս ամիսներին արտասահմանում կատարած հովվապետական այցելությունը լիովին ապացուցեց, ակնկալվածից ավելի մեծ չափերով, որ **ՄԻ ԵՎ ԱՆԲԱԺԱՆ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԻ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**:

Քրիստոնեական սուրբ հավատի բոցկումը Մայր Երկրից ներս, այժմյան նպաստավոր պայմաններում, և արտասահմանի հայության սերն ու հավատարմությունը դեպի Ս. Էջմիածինը, գերագույն ու վճռական գրավականներն են այն բանի, որ մեր հոգևոր-եկե-

դեցական կյանքի վերաշինության ընթացքը կշարունակվի անարգել և հաղթական:

Չափազանց ուրախալի է հաստատել նաև, որ մեր նվիրապետական մյուս Աթոռները ևս. Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռները, իբրև նույն հոգևոր մարմնի անբաժանելի անդամներ, առաջնորդված Ս. Հոգուց, մնում են հավատարիմ Մայր Աթոռին և մարտակից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Հայաստանյայց Եկեղեցու ուխտի միության վեմին վրա:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու այս ընդհանուր համերաշխության և շինարար մթնոլորտում, Տանն Կիլիկիո Աթոռից ներս կատարված անկարգությունը, և որպես դրան հետևանք՝ առաջ եկած հերձվածը, որոշ չափով եկան վրդովելու Սփյուռքի հայ հավատացյալ ժողովրդի խիղճը:

Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը, պատմական ծանոթ դեպքերի բերումով, մինչև մեր օրերը մնացել էր որպես մասնավոր մի Աթոռ. «ի հոգևորս ներակա Մայր Աթոռին», իսկ մոտիկ անցյալում՝ շատ հաճախ, նաև «ի վարչականս ենթակա Կոստանդնուպոլսի Հայ Պատրիարքության»:

Համաշխարհային առաջին պատերազմից հետո Կիլիկյան Աթոռն էլ իր ժողովրդի հետ ու նրա նման հալածական ու տարագիր, եկել ու հաստատվել է Լիբանանի հյուրընկալ հողում, Անթիլիաս գյուղաքաղաքում, Միջերկրականի այդ ափին, իր իշխանությունը տարածելով Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի վրա, համաձայն Երուսաղեմի երջանկահիշատակ Դուրյան սրբազան Պատրիարքի բարյացակամ կարգադրության, որով Կիլիկիայի Կաթողիկոսության զիջվում էին Երուսաղեմի հոգևոր իշխանության տակ գտնվող վերոհիշյալ շրջանները:

Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատմությունը շատ փոթորկալից և հաճախ անկայուն է եղել իր ներքին վեճերով և պառակտումներով: Անշուշտ և երբեմն էլ թշնամական է եղել նրա վերաբերմունքը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Սակայն, վերջին ժամանակներում, մանավանդ լուսարժանք Տ. Սահակ Բ, Տ. Բաբգեն Ա, Տ. Գարեգին Ա շինարար Կաթողիկոսների օրով արդեն մոռացության էին տրված այդ հին անիմաստ ու վնասաբեր անկարգությունները, որոնք երբեմն խախտել էին Կիլիկյան Աթոռի ի հոգևորս հպատակության կանոնը՝ Ամենայն Հայոց Հայրապետի հանդեպ:

Հոգելույս Տ. Գարեգին մեծանուն Կաթողիկոսի մահից հետո, սակայն, վերստին սկսվեցին ամպեր կուտակվել Անթիլիասի վերև: Կաթողիկոսական ընտրության հարցի շուրջ ծայր տվավ մի ներքին պայքար, միաբանության և ժողովրդի ծոցի մեջ, սպառնալով պառակտել նրանց: Որպես հետևանք այդ ներքին անհամաձայնությունների, միաբանությունն ու հավատացյալ հոտը բաժանվել էին երկու հակընդդեմ խմբերի: Ստեղծված այդպիսի պայմանների մեջ, պարզ է, որ անխոհեմություն կլիներ ու վնասակար՝ կատարել մյուս կողմի համար անընդունելի մի ընտրություն:

Եկեղեցու մի հովվապետ, որ ընտրված է իր միաբանների մեծամասնության ու հավատացյալների լայն զանգվածների կամքի դեմ, բուռն հակամարտությունների ու կրքերի սանձազերծման մթնոլորտում, պարզապես անընդունելի է և կործանարար: Միայն հայ ժողովրդի օտար թշնամիները, մեր տխուր պատմության ընթացքում, նման արարքներ գործել են և զանազան աններելի միջոցներով՝ կաշառքով, դավադրությամբ, նաև ուղղակի բռնի ուժի գործադրությամբ, ներսից պառակտել ու տկարացրել են Հայ Եկեղեցին, քաջ գիտենալով, որ հայ ժողովուրդը տկարացնելու ամենահիմնական միջոցներից մեկն է տկարացնել ու պառակտել Հայ Եկեղեցին: Մեր թշնամիները լավ էին հասկացել այդ ճշմարտությունը Հազկերտներից, բյուզանդական կայսրերից սկսած մինչև թուրքական սուլթաններն ու ցարերը և վերջին ժամանակներում էլ ուրիշներ: Ահա այս վտանգի առաջքը առնելու մտահոգությամբ, Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը փութացրեց Իր ճանապարհորդությունը դեպի արտասահման, համոզված լինելով, որ Իր ներկայությունը կմեղմացնի կրքերն ու հակամարտությունները, որոնք սկսել էին արդեն ալեկոծել Անթիլիասի միաբանական կյանքը և բովանդակ Սիրիայի և Լիբանանի հայ ժողովուրդը:

Նորին Ս. Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, 1956 թվականի փետրվար 14-ի Իր պատմական կոչով Անթիլիասում, հորդորեց հավաքված միաբաններին և երեսփոխաններին՝ մի շաբաթով հետաձգել ժողովը, որպեսզի Ամենայն Հայոց Կաթողիկոսը ձեռնարկի մի ելք գտնելու՝ կողմերի միջև համերաշխության հող ստեղծելու համար: Վեհափառ Հայրապետի այս առաջին իսկ կոչը լսելի չեղավ ժողովի մեջ մեծամասնություն ունեցողների կողմից և դրա անմիջական հետևանքը եղավ այն, որ միաբանների և երեսփոխանների դժգոհ կողմը ժողովից հեռացավ: Պառակտման ոգին սկսել էր արդեն ցույց տալ իր ժանիքները:

Թեև վշտացած, բայց միշտ լավատես, Վեհափառ Հայրապետը շարունակեց Իր ճիգերը ի գործ դնել, միշտ ի խնդիր հաշտության և խաղաղության. բայց, ավա՜ղ, առանց ար-

դյուններ: Կոստանդնուպոլսի ամենապատիվ սրբազան Պատրիարքի, Ս. Երուսաղեմի Պատրիարքական տեղապահի և Անթիլիասում հավաքված բոլոր եպիսկոպոսների կոչերը, եպարքիական հոտերները մնացին նույնպես «ձայն բարբառոյ յանապատի» Տ. Խորեն, Տ. Զարեհ, Տ. Ղևոնդ եպիսկոպոսների և նրանց գործակից ներսփոխանների համար: Հուսախաբ բայց ոչ հուսահատ, Վեհափառ Հայրապետը փետրվարի 20-ին մեկնեց Անթիլիասից Եգիպտոս, շարունակելով իր հովվապետական այցելությունը, համաձայն նախօրոք կազմված իր ծրագրի:

Զբաղեցնելով Ս. Երուսաղեմ ուխտի գնալ, Վեհափառ Հայրապետը որոշեց եպիսկոպոսական ժողովը գումարել Կահիրեում, մարտ ամսի 6—8 օրերին: Ժողովին մասնակցեցին մեր Եկեղեցու նվիրապետական բոլոր Աթոռների ներկայացուցիչները՝ տասնութ արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ:

Կահիրեում գումարված եպիսկոպոսական այս ժողովը անդրադառնալով Անթիլիասի Աթոռից ներս ստեղծված կացության, փետրվարի 20-ին Անթիլիասում Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա կատարված միակողմանի ընտրությունը միաձայնությամբ գտավ թերի և անընդունելի և կազմեց Համաձայնագրի մի նախագիծ, ուր նշված էին այն պայմանները, որոնցով այդ ընտրությունը կարելի պիտի լիներ նկատել ընդունելի և կաթողիկոսական օծումը կատարել Հայ Եկեղեցու կանոնների համաձայն, Կիլիկյան Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի համերաշխության պայմաններում:

Տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսը, իր մարտ 10-ի թվակիր նամակով, մերժեց առաջարկված Համաձայնագրի պայմանները, առանց իր կողմից որևէ առաջարկ ներկայացնելու, ստեղծված անել կացությունից դուրս գալու մի դարման որոնելու մտահոգությամբ: Ավելին, այդ դրությամբ Տ. Խորեն եպիսկոպոսը սկզբունքով իսկ մերժում էր խոսքի նստել Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր վերին իշխանությունը ներկայացնող Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարքական Աթոռների ներկայացուցիչների և Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսների հետ, ժխտելով նույնիսկ եպիսկոպոսական ժողովի իրավասությունը Անթիլիասի հարցով զբաղվելու գործում:

Վեհափառ Հայրապետի մտածումն էր Կիլիկյան Աթոռի տագնապին մի դարման գտնել ընդհանուր ճիգերով, մեր Եկեղեցու ծոցում ստեղծված ՄԱՍՆԱԿԻ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԵԼ ՀԱՄԻՆԱԼՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐՈՎ, ԵՎ Ի ՇԱՀ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ: Բայց նա չհասկացվեց այն խմբի մարդկանց կողմից, որին հարում էին Տ. Խորեն, Տ. Զարեհ և Տ. Ղևոնդ եպիսկոպոսները ընդդեմ բոլոր մյուս եպիսկոպոսների:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը իր խղճի պարտքը կատարած համարեց թողնելով, որ Կիլիկյան Աթոռի տագնապը լուծվի Աթոռի միաբանության և ժողովրդի կողմից:

Կիլիկյան միաբանության ծոցում, այս բոլորից հետո, հաջորդեցին ներքին նոր խմորումներ և համաձայնության ճիգեր, որոնց Մայր Աթոռը չի մասնակցել ոչ ուղղակի, ոչ էլ իր որևէ լիազոր ներկայացուցչի միջոցով: Մայր Աթոռը հետևել է միայն դեպքերի ընթացքին, կատարված անհաջող փորձերի մասին իրազեկ դառնալով մեծ ուշացումներով:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, խոր վշտով նշելով, որ հաշտության մի ելք գտնելու բոլոր ճանապարհները փակվել էին և կողմերի անհամաձայնությունները գնալով էլ՝ ավելի էին խորանում, խորհեց, հանուն հաշտության, միջնորդության մի նոր փորձ ևս կատարել, և իր հունիսի 22-ի հեռագրով Անթիլիասի միաբանության և երկու կողմերի ներկայացուցիչներին հրավիրեց Ս. Էջմիածին, առաջարկելով ընտրված Տ. Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսական օծումը կատարել Ս. Էջմիածնում և կամ Անթիլիասում: Ցավ ի սիրտ պետք է այստեղ արձանագրել այն տխուր փաստը, որ սույն հրավերները ևս մերժվեցին Տեղապահ Տ. Խորեն եպիսկոպոսի կողմից, մեզ համար բոլորովին անհասկանալի և անըմբռնելի կերպով:

Ավելի ուշ, Անթիլիասի միաբանության մեծամասնությունը ներկայացնող ժողովի անունից ստացված խնդրանքների և Երուսաղեմի Պատրիարքական տեղապահի դիմումի հիման վրա, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկով, Վեհափառ Հայրապետը իրավունք և պարտք համարեց օգոստոսի 13-ին հեռագիր հղել Լիբանանի Հանրապետության Նախագահին, հիշեցնելու համար ի գիտություն՝ Հայ Եկեղեցու կանոնները՝ կաթողիկոսական իշխանության և Աթոռի միաբանության մեծամասնության իրավունքների մասին:

Այս բոլորից հետո, փոխանակ անդրադառնալու իրենց հետևողականորեն ժխտական և մերժողական կեցվածքին, որով բաժանվում էին մեր Ընդհանրական Եկեղեցու ոգուց և նվիրապետական սուրբ հեղինակությունից, նրանք, այսինքն Տ. Խորեն, Տ. Զարեհ և Տ. Ղևոնդ եպիսկոպոսները և իրենց համախոհ գործակիցները, վճռեցին Տ. Զարեհ եպիսկոպոսի օծումը կատարել սեպտեմբերի 2-ին:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, նախատեսելով մեծ վտանգը, Խորեն, Զարեհ և Ղևոնդ սրբազան եպիսկոպոսներին

ուղղված իր օգոստոս 30 թվակիր հեռագրով զգուշացնում էր նրանց՝ հեռու մնալ հակականոնական մի արարք գործելուց և հերձված առաջացնելուց մեր Ս. Եկեղեցու ծոցում, և կոչ էր անում սրտից բխած ջերմ խոսքերով ու հորդորներով՝ հետաձգել այդ արարողությունը, խոստանալով Իր հեղինակությունը ի գործ դնել նոր ու գործնական առաջարկով, ուղի գտնելու համար ի շահ Կիլիկյան Աթոռի և Զարեհ Եպիսկոպոսի կաթողիկոսական օծման:

Ցավով պետք է արձանագրել, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այս շինարար և վերջին կոչն էլ անլսելի մնաց: Եվ այսպիսով 1956 թվականի սեպտեմբերի 2-ին Անթիլիասի Տաճարում Տ. Զարեհ Եպիսկոպոսի վրա կատարվեց հակականոնական մի արարողություն, մասնակցությամբ Տ. Խորեն, Տ. Ղևոնդ Եպիսկոպոսների և հակոբիկյան ասորի Եպիսկոպոս Սևերիոսի:

Ի պատասխան Կիլիկյան Աթոռի միաբանության մեծամասնության ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիո Տեղապահ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աչապահյանի սեպտեմբեր 3 թվակիր հեռագրի, Վեհափառ Հայրապետը իր 8 սեպտեմբեր թվակիր պատասխան հեռագրում հայտնում էր, թե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նման մի արարողություն չի կարող ընդունել կաթողիկոսական ձեռնադրություն և օծում, որովհետև կատարված արարողությունը համաձայն չէ մեր Եկեղեցու սուրբ կանոններին և ավանդությանց և աննախընթաց է որպես այդպիսին մեր Եկեղեցու ամբողջ տարեգրության մեջ: Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը շեշտում էր Իր հեռագրում, թե Հայ Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը երբեք չպիտի կարենան հանդուրժել այն իրողությունը, որ ոտնահարվեն մեր եկեղեցական կանոններն այն աստիճան, որ մի հայ կաթողիկոս իր իշխանությունը ստանա օտար մի հոգևորականի ձեռքով և ընդդեմ Հայ Եկեղեցու հեղինակության: Սեպտեմբեր 2-ի արարողությունը եղել է և մնում է հակականոնական մի արարք, անվավեր և հակառակ մեր Եկեղեցու ոգուն և նկարագրին:

Եզրափակելով Անթիլիասի կաթողիկոսական հարցի շուրջ մեր խորհրդածությունները, մենք այստեղ պետք է կարևորությամբ նշենք, որ

1) Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը, որպես Գերագույն Հոգևոր Պետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, ԻՐԱՎՈՒՆՔ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ուներ «յԱթոռոյ» կոչ անելու, որ Տանն Կիլիկիո միաբանությունը և հավատացյալ ժողովրդի ներկայացուցիչները գտնեին համերաշխության գետին՝ խաղաղությամբ ընտրելու իրենց Աթոռի գահակալը:

2) Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը ԻՐԱՎՈՒՆՔ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ուներ Իր խոսքը ասելու փետրվար 20-ի միակողմանի ընտրության առթիվ, երբ երկփեղկվում էր Կիլիկյան Աթոռի միաբանությունն ու ժողովուրդը, խոսք, որը հիմնված էր Մեծի Տանն Կիլիկիո միաբանության մեծամասնության, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարքական Աթոռների և Հայաստանյայց Եկեղեցու Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովի ներկա և բացակա բոլոր Եպիսկոպոսների և հոգևորականների միաձայն տեսակետի վրա:

3) Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը ԻՐԱՎՈՒՆՔ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ուներ հայրաբար ցույց տալու մի պատվավոր ճանապարհ, փետրվար 20-ի միակողմանի ընտրությունը ընդունելի դարձնելու համար: Այդ ճանապարհներից առաջինն էր Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովի կողմից պատրաստված և ներկայացված ծանոթ Համաձայնագրի նախագիծը, ինչպես նաև հաջորդ ամիսներին Մայր Աթոռից եկած մյուս շինարար առաջարկները:

4) Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը ԻՐԱՎՈՒՆՔ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ուներ հիշեցնել և շեշտել օտար պետական իշխանությանց առաջ մեր Ս. Եկեղեցու դարավոր կանոնները ու սուրբ ավանդությունները ի մասին կաթողիկոսական իշխանության և միաբանության մեծամասնության իրավունքների, երբ այդ իշխանությունը, բարեմտորեն է անտեղյակ մեր եկեղեցական կանոններին, կաթողիկոսական իշխանության վկայական էր տալիս մի հայ եպիսկոպոսի, և երբ Հայ Եկեղեցու ներքին հարցերը պետական իշխանությանց առաջ քննության առարկա էին դառնում, անկախ Մայր Աթոռի կամքից և ցանկությունից: Ամենայն Հայոց Հայրապետները, նման պարագաներում, միշտ իրենց խոսքը ասել են, և սրանից հետո էլ միշտ կասեն ամեն անգամ, երբ որևէ տեղ, ուր էլ որ լինի, կոտնահարվեն և կխախտվեն բազմադարյան Հայ Եկեղեցու կանոնները ու ավանդությունները և մեր Ս. Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի կենսական շահերը: Նման դեպքում այսպես են վարվում նաև քրիստոնեական մյուս մեծ Եկեղեցիների հոգևոր գերագույն պետերը: Եվ այս՝ անկախ այն հանգամանքից, թե ի՞նչ դրական արդյունք կարող է ունենալ նման մի դիմում: Հոգևոր, բարոյական կեցվածքները չեն չափվում իրենց անմիջական արդյունքներից: Այստեղ պետք է արձանագրել, որ ողբալին և նվաստացուցիչը մեր ազգա-

յին արժանապատվության տեսակետից այն է, որ որոշ հայ թերթեր, մոռացած իրենց Եկեղեցու և Ազգի հիմնական շահերը, օգտագործում են այսպիսի առիթներ, փորձելով հրապարակավ վարկաբեկել Ս. Էջմիածինը ու Ամենայն Հայոց Հայրապետությունը հօգուտ օտար պետական իշխանության, մինչդեռ ապահովաբար այդ իշխանության մտքով իսկ չի անցնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրենց ուղղած նամակներին կամ հեռագրերին վերագրել այն, ինչ նրանք, այսինքն Սփյուռքի հայ մամուլի մի որոշ մասը, կամենում են վերագրել Մայր Աթոռին և Նրա Գահակալին. Ս. Էջմիածնի դեմ իրենց պայքարի միակ զենք ընդունած լինելով քաղաքական արտառոց վերագրումների ուղին:

Ավելորդ է ամեն մի մեկնություն: Թող ինքը, հայ հավատացյալ ժողովուրդը դատի և իր խոսքն ասի համարձակ ու վճռական:

5) Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետը ԻՐԱՎՈՒՆՔ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ունի նշելու, թե Անթիլիասում սեպտեմբերի 2-ին Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա կատարված արարողությունը, երկու հայ և մի ասորի եպիսկոպոսների ձեռքով, ԱՆՎԱՎԵՐԱԿԱՆ է Հայ Եկեղեցու կանոնների և ավանդության լույսի տակ, և հետևաբար Զարեհ եպիսկոպոսը ոչ միայն կաթողիկոսական իշխանությունից զուրկ է, այլ Նորին Սրբազնությունը, գերաշնորհ Խորեն և Ղևոնդ եպիսկոպոսների հետ միասին պատասխանատու են Հայ Եկեղեցու նվիրապետության առաջ՝ իրենց հանձնված սուրբ ավանդները պահպանելու ուխտը դրժելու և ներքին հերձված առաջ բերելու համար:

Ոչ մի Ամենայն Հայոց Կաթողիկոս, ոչ մի պատասխանատու հոգևոր գերագույն իշխանություն երբեք չի վավերացրել ու չի կարող վավերացնել կանոնական նման խախտում:

Միմիայն անկեղծ զղջումից հետո Իջման Ս. Սեղանի առաջ, և կանոնական օծումով, Եկեղեցու և Ազգի հավանության հիման վրա, Տ. Զարեհ եպիսկոպոսը կարող է կաթողիկոսական իշխանություն ունենալ:

Բազմադարյան մեր Եկեղեցին հարուստ պատմական փորձ ունի: Ի՞նչ փոթորիկներ եկել ու անցել են Նրա սուրբ մարմնի վրայով: Բազմիցս չար ձեռներ աշխատել են քանդել մեր ժողովրդի հավատքի ամրոցները: Բայց միշտ անսասան է մնացել հայության սուրբ հավատը, Ս. Եկեղեցին և սրբազնասուրբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Եվ ի՞նչ, այսօ՛ր, երբ հավատի հուրով փոթորկված է Հայաստան աշխարհը և վերածննդի սեմին է կանգնել մեր Մայր Եկեղեցին, մի՞թե պիտի կարենային մտածել իսկ, թե Մայր Աթոռից և Մայր Հողից հոգեպես կտրված Կիլիկյան երեք եպիսկոպոսների արարքով կրնա շարժվել մեր Ս. Եկեղեցու դարավոր կաղնին: Հեռո՜ւ մեզանից նման մի մտածման ամենափոքր նշույլն անգամ:

Հայաստանյայց Եկեղեցու միության և անբաժանելիության սուրբ կանոնի վրա ամուր կանգնած, Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Իր պատմական ու առաքելական դերը պիտի շարունակի կատարել անայլայլ և անվարան, Իր հետ ունենալով մեր ամբողջ եկեղեցականության և հավատացյալ ժողովրդի սիրտը: Եվ Նա պիտի սպասի, որ անիմաստ կերպով և թերևս հակամայից իրենք իրենց հերձվածի մեջ գցողները անդրադառնան իրենց մոլորության, և ուխտի դառնան ու ծնրադրեն Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ, Ամենայն Հայոց Հայրապետի հետ միասին և Նրա կողքին:

# ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ 39-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ն. Ա. ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Շնորհավորում ենք Ձեզ և հանձին Ձեզ՝ սովետական բազմազգ ժողովրդին՝ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի կապակցությամբ։ Մաղթում ենք մեր Մեծ Հայրենիքին բարօրություն և հետագա բարգավաճում, ինչպես և խաղաղություն՝ ամբողջ աշխարհին։

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի առթիվ ընդունեցեք Մեր ամենաջերմ շնորհավորանքները։ Աղոթում ենք առ Աստված սովետական ժողովուրդների բարօրության և աշխարհի խաղաղության համար։

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ, ՊԱՐՈՆ ԳՈՍՏԵՎԻՆ

ՄՈՍԿՎԱ

Ընդունեցեք Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի առթիվ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՀՐԱՉՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Ընդունեցեք Մեր ջերմագին շնորհավորանքն ու լավագույն բարեմաղթությունները Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի առթիվ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների խորհուրդը իր շնորհակալությունն է հայտնում Ձեր շնորհավորանքի և բարեմաղթությունների համար: Խորհուրդը Ձեզ ցանկանում է հաջողություն ու բարօրություն:

ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝

ԳՈՍՏԵՎ.

ՄՈՍԿՎԱ

---

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Անկեղծ շնորհակալություն ենք հայտնում շնորհավորանքի Ձեր այն հեռագրի համար, որ Դուք բարեհաճեցիք ուղարկել Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի առթիվ: Ընդունեցեք մեր ամենաջերմ բարեմաղթությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի առթիվ հաճեցեք ընդունել Մեր սրտաբուխ ողջույնները և ամենաջերմ բարեմաղթությունները մեր վերածնված Հայրենիքի հարատև վերելքի ու ծաղկման համար, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր ջերմագին ողջույնները և լավագույն բարեմաղթությունները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի առթիվ: Աղոթում ենք առ Աստված մեր սիրելի Հայրենիքի վերելքի ու ծաղկման, հայ ժողովրդի բարօրության ու վերամիավորման համար Հայրենի Հողի վրա, սովետական ժողովուրդների համերաշխ, եղբայրական ընտանիքում:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր սրտագին ողջույններն և ամենաջերմ բարեմաղթությունները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ պանծալի տարեդարձի առթիվ: Թող խաղաղ մնա մեր վերածնված Մայր Հայրենիքը և ավելի ևս շենանա ու բարգավաճի՝ ներշնչություն համայն հայ ժողովրդի:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ընդունեցեք մեր անկեղծ շնորհակալությունները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի առթիվ Ձեր ուղարկած շնորհավորական հեռագրի համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ՝ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

### ՍՈՒՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՄՀԱՃՅԱՆԻՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Դժբախտ կացությունը հետզհետե պարզվեցավ Մեզ համար, խոր հիասթափություն և վիշտ պատճառելով Մեզ։ Կհաստատենք Ձեր 16 հոկտեմբերի թվակիր նամակը, զոր ստացանք 29-ին։ Դուք եք, որ օրինավոր մեծամասնությամբ հաստատած եք ներքին խաղաղ վիճակ։ Կհանձնարարենք շուտափույթ կերպով կատարել պատրիարքական ընտրությունը։ Մեր թելադրանքին վրա Եղիշե արքեպիսկոպոս խոստացավ ի շահ Եկեղեցվո հաշտվիլ ամեն գործե և մեկնեցավ դեպի Եվրոպա։

Կոչ կընենք բոլոր միաբաններուդ՝ պահպանել ներքին միությունը, առաջնորդվիլ Աստուծո պատվիրաններեն և եկեղեցվո շահերեն։

Ձեզ հաջողություն մաղթելով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

18 նոյեմբեր 1958

# ՔԱՐՈԶ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

## ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Քրիստոնեական եկեղեցու կյանքում Քրիստոսի սուրբ խաչը հանդիսացել է հավատացյալների համար հարգանքի և երկրպագության սրբազան առարկա։ Սուրբ խաչով էր պատկերվում քրիստոնյայի մտքին ու հոգուն Քրիստոսի կյանքը. քարոզության ճշմարտությունը, գործի ու նվիրման վեհությունը և փրկագործության խորհուրդը։ Սուրբ խաչով էր, որ նորադարձ հավատացյալները ապավինում էին Քրիստոսի զորության, օգնության և սուրբ խաչն էր, որ հավատացյալների հոգում զորացնում էր հավատի ու զոհողության սրբազան հուրը։ Քրիստոսի խաչելությունից հետո, պատժի և մահվան գործիք հանդիսացող այդ խաչը Քրիստոսով սրբացավ, գեղեցկացավ և դարձավ հավատավոր ժողովրդի երկրպագության առարկան։ Ամեն հավատացյալ իր հոգու մեջ դրոշմված ու քանդակված էր տեսնում Քրիստոսի սուրբ խաչը, որի վրա մահացավ մեր բոլորի Փրկիչն ու Տերը. քավելու համար մարդկության մեղքերը։

Սուրբ խաչը խորհրդանիշն է տառապանքի, զոհողության։ Տառապանքն է, որ կատարելագործում, ազնվացնում, սրբացնում է մարդկանց և հավաքականություններին։ Տառապանքի մեջ է, որ ծնվում են հոգեկան, բարոյական, իմացական արժեքներն ու գեղեցկությունները։ Չկա ոչ մի գեղեցկություն առանց զոհողության, առանց տառապանքի։

Աշխարհի բոլոր ժողովուրդներից հայ ժողովուրդն է, որ առավել կարիքն է զգացել խաչի զորության, խաչի խորհրդին, որովհետև շատ է տառապել մեր ժողովուրդը հանուն քրիստոնեական կրոնի սրբությունների. այդ տառապանքը, զոհողությունը տարել է մեր ժողովուրդը վեհությամբ և քրիստոնեական զոհողության ոգով։ Տարել ենք սիրով, որովհետև հավատացել ենք խաչի զորության և խաչի հրաշքին։ Ինչպես Քրիստոսը, գիտցել ենք տառապել ու խաչվել և հարություն առնել Քրիստոսի նման։ Գիտցել ենք մեր նահատակությունը վերածել հաղթանակի։ Այն ժողովուրդները, որ մեզ ու մեր հոգին ուզեցին ստրկացնել, կարողացան կողոպտել միայն մեր երկրի բնական հարստություն-

ները, բայց նրանց չհաջողվեց մեր հոգին սպանել, որովհետև Քրիստոսի նման, տառապանքի ու փորձությունների միջով, մեր հավատը և ազգային արժանապատվությունը պահեցինք, տվինք, զոհեցինք ամեն բան, բայց չվաճառեցինք մեր հոգին։ Մեր երկրի և ժողովրդի գլխի վրայով անցան դարերի մրրիկները, բայց մենք կրեցինք մեր խաչը սրբությամբ, գիտակցությամբ և այդ խաչի փրկարար խորհրդով, ռանցանք ընդ հուր և ընդ ջուր։

Ամեն ժողովուրդ իր խաչն ունի։

Մենք, որպես Եկեղեցի, մեր գոյությունը կպարտինք Քրիստոսի սուրբ խաչի զորության։ Հիշեցեք Վարդանանց խոսքը, որը եղավ մեր պատմության անկյունաքարը. «Մեր հավատից մեզ ոչ ոք չի կարող բաժանել, ոչ սուրը և ոչ հուրը, ոչ մարդիկ և ոչ էլ նույնիսկ երկնքի հրեշտակները»։ Բոլորս գիտենք այս խոսքի ճշմարտությունը։

Այն օրը, որ մեր ժողովուրդը կկորցնի Քրիստոսի սուրբ խաչի նկատմամբ իր նվիրումը, հավատը դեպի քրիստոնեությունը և դեպի իր Առաքելական Ս. Եկեղեցին ու կուրանա իր Մայրենի Հողի սրբություններն ու ավանդությունները, այդ օրվանից մենք կդատապարտվենք դանդաղ, բայց ստույգ մահվան։

Աղոթենք, որ մեր սրտերից անպակաս լինի սերը քրիստոնեական հավատի, սերը մեր սիրելի Հայրենիքի և մեր Ս. Եկեղեցու, որովհետև մինչև այսօր մեր զգացմունքների և գիտակցության մեջ անբաժան են եղել հավատը՝ Եկեղեցուց, Եկեղեցին՝ Հայրենիքի սուրբ սիրուց։ Եկեղեցու և Հայրենիքի համերաշխ միության ու համագործակցության ենք պարտական մեր ազգային գոյությունը։ Այս երկուսի սերտ միությամբ է, որ մենք խիզախեցինք ապրել ու ստեղծագործել, և այսօր կանք, ինչպես ավերակներից ծնված փյունիկ։ Մեր գոյության իրավունքը արդար է, որովհետև մենք այն արյունով ու զոհողությամբ ենք ձեռք բերել։ Մեր խնկելի նախնիք ամեն մի կորսայան պատասխանել են ստեղծագործությամբ, ապրելու և տևելու վճռականությամբ։ Մեր ժողովրդին երբեք չի պակասել զոհողության գիտակցությունը։ Ապրել ենք այդ զոհողության զգացումով և ոգով։

Թո՛ղ Քրիստոսը Իր սուրբ խաչով մեզ օգնական լինի մեր քրիստոնեական և հայրենասիրական պարտականությունների իրագործման ճանապարհին։ Թո՛ղ Քրիստոսի սուրբ խաչը օգնական լինի մեզ բոլորիս, որպեսզի, ինչպես մեր նախնիները, այնպես էլ մենք դիտենանք Քրիստոսի սուրբ խաչով խորհրդանշված տառապանքի գեղեցկությունն ու նշանակությունը, զոհողության անհրաժեշտությունն ու կենսունակությունը։

Թո՛ղ Քրիստոսի սուրբ խաչի զորությունը հովանի և պահապան լինի բոլոր հավատացյալների վրա։ Ամեն։



# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 36-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 29-ին, հինգշաբթի օր, ժամը 4.30-ին, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դահլիճում, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, տեղի ունեցավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն։

Հանդեսին ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և վանքի պաշտոնեությունը։

Հանդեսը բացվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագումով, որն ունկնդրվեց հոտընկայս։ Ապա Ճեմարանի փոխ-տեսուչ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Աշճյանը հանդես եկավ օրվա տոնի նշանակության և խորհրդին նվիրված հետևյալ գեղեցիկ ճառով.

«Շրջադարձային տարիները ժողովուրդների պատմության մեջ կատարել են վճռական դեր, երբեմն աննպաստ, երբեմն էլ նպաստավոր։ Այդպիսի պատմություն է ունեցել նաև հայ ժողովուրդը։ Այդ է վկայում նրա հերոսական գոտեմարտը հաճախակի Հայոց աշխարհ ներխուժած անողոք մահվան դեմ, և այդ է վկայում մանավանդ 36 տարիներ առաջ հայ հողի և հայ ժողովրդի վրա երջանկավետ օրհնության պես իջնող մեր Երկրի ազատագրման և Հայաստանում սովետական կարգերի հաստատման մեծ ավետիսը։ Մեր պատմությունը մի ահավոր մարտիրոսություն լինելով հանդերձ, է նաև աննահանջ հերոսություն, երբ մեր արյունով, և, ինչու չասել, նաև դիակներով ուռճացրինք մեր գոյության բոլոր երաշխիքները, մեր մշակույթը, մեր արվեստն ու գրականությունը, և մեր հոգու տուն ու տաղավար Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին։ Գիտցել ենք ապրել նաև մեռնելիս, գիտցել ենք ստեղծել ամեն ձևի փլուզումների ժամին, գիտցել ենք տոկալ, երբ տառապանքը լեռների ծանրությամբ ընկնում էր մեր գլխին առանց փոքրինչ խղճմտանքի։ Ու գիտցանք մանավանդ, փա՜ռք մեր մտքի անդավաճան լույսին, բռնել մեզ կարկառված բազուկը հուժկու և միանգամ ընդմիշտ հաշվեհարդարի նստել «հայկական ողբերգություն» կոչված ահավոր դրեչի հետ։ Մենք կռթնեցինք հաստատուն և հուսարծարծ այն կաղնուն և մաքառելով ու պայքարելով սկսեցինք տնօրինել մեր ճակատագիրը։

Մեր Հայրենիքը բոլորում է սովետական կարգերի հաստատման իր 36-րդ տարին և ամբողջ հայ ժողովրդի հետ Հոգևոր Ճեմարանն էլ իր ցնծության և երախտագիտության արտահայտությունն է բերում այսօրվա այս փոքր հավաքույթի միջոցով։

Հայաստանի ազատագրումը մեզ թևագրեց անչափ ներշնչում և բաշխեց անհատնում թափեր։ Նախ մենք խմբվեցինք ու դարձանք ուժ։ Կռիվ մղեցինք և ապա անցանք ստեղծագործ աշխատանքի, կառուցեցինք տուն, գյուղ, կառուցեցինք քաղաք, և այդ գյուղի ու քաղաքի մեջ շինեցինք արհեստանոց և ապա գործարան, հաստատեցինք դպրոց, ինստիտուտ, համալսարան, ունեցանք հայ բժիշկներ, ճարտարապետ, աստղաբաշխ ու ատոմագետ գիտնական, վերջապես բացվեց ծաղիկը մեր հանճարի՝ Գիտությունների մեր ակադեմիան, և, համառոտ ասած, արձանագրեցինք բյուր նվաճումներ ու հաղթանակ. Հենց որ դադարել ենք մեռնել, ստեղծել ենք. ահա մեր պատմության և մեր կարողությունների բնութագիրը։

Սովետական կարգեր ընդունած Հայաստանում, երբ մեր բոլոր ժամանակների երազները թել առ թել, հատիկ առ հատիկ կյանքի ենք կոչում, և երբ քանդակ առ քանդակ կառուցում ենք մեր տեսիլները հավատով ու լավատեսությամբ, մենք անկասկած երջանիկ ենք, այս բառի թեկուզ մի քիչ ընդհանուր առումով։ Եղած պակասը մեր և մեր Երկրի համար ոչ խոց է, ոչ էլ հանցանք։ Մենք ունենք մեր ուժը և ունենք վճռականություն վերացնելու այն։ Հայաստանը այսօր կենդանի է, բացարձակ ու միակ իրավատերն է՝ լինելու ամբողջ հայության ամենարավ Հայրենիքը, իր հոգով և իր անսայթաք աճով։

Փա՜ռք Հայաստանի ազատագրությանը։

Փա՜ռք նրա առաջընթացին ու կենսունակությանը»։

Ճեմարանի երգչախումբը, պ. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, հաջողությամբ երգեց մի շարք երգեր («Մայրի՛կ», ազատ իմ Հայրենիք», «Էս գիշեր, լուսնակ գիշեր», «Ցոլալիս»)։ Ճեմարանի Ա լսարանի ուսանողներ Ցոլակ Աղաջանյանը ու Բեյրութից նոր եկած միայր Ծնրենյանը խանդավառորեն արտասանեցին, առաջինը Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»-ն, իսկ երկրորդը՝ Սմբատ Տերունյանի «Իմ Երևան. Քեզի կու գամ»-ը։ Բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհրույյանը կարդաց Նոյեմբերի 29-ին նվիրված իր սրտագին ճառը.

«1920 թվականի Նոյեմբերի 29-ին հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ բացվեց մի նոր ու լուսապայծառ այգաբաց։ Ստեղծագործ ու բազմաչարչար հայ ժողովուրդը Նոյեմբերի 29-ին ձեռք բերեց այն ամենը, ինչի մասին երազում էր և ինչի համար պայքարում էին նրա լավագույն զավակները հարյուրամյակների ընթացքում, այսինքն՝ ազատ կյանք, անկախ պետականություն, ժողովրդական տնտեսություն և հոգևոր մշակույթի ծաղկում։

Ծանր ու ողբերգական է եղել հայ ժողովրդի պատմական ճակատագիրն ու դժվարին՝ նրա անցած ճանապարհը։ Դարեր շարունակ հայ ժողովուրդը դժբախտ դեպքերի հետևանքով հեծում էր օտարների դաժան լծի տակ։ Օտար դահիճներն էին իշխում նրա նվիրական հողերի վրա։

Բայց հայ ժողովուրդը կուրծք է տվել մեծ աղետների, աշխարհավեր հեղեղների և հասել այսօրվա լուսապայծառ հանգրվանին։

Անհավասար ու դաժան մարտերում արիաբար պայքարելով օտար նվաճողների դեմ, հայ ստեղծարար ժողովուրդը սիրով պահպանել է իր հոգևոր մշակույթի անմահ գանձերը, իր մատենագրությունն ու ժողովրդական երգերը, մանրանկարչությունն ու ճարտարապետությունը, սքանչելի բանաստեղծությունը, իր Ս. Եկեղեցին։

Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի հոգում չի հանգել երբեք ազատության անշեջ ծարավը և հայրենասիրության բոցավառ զգացումը։

Իրականացան մեր նախնիքների ամենանվիրական երազանքները։ Բոցերի ու մոխիրների միջից կրկին հարություն առավ աշխատավոր հայության սրբազան Հայրենիքը։ Վերջացան բոլոր տառապանքները, բացվեց նոր կյանքի պայծառ արշալույսը։

Եվ ահա անցնող յուրաքանչյուր տարի երջանկության, հաջողության նոր գարուններ է բերում մեր երկրին ու մեր ժողովրդին։ Այսօր 36 տարի է անցել այդ օրվանից և այդ 36 տարիների ընթացքում անճանաչելիորեն փոխվել է Հայաստանի դեմքը։ Նախկին մերկ ու ամայի վայրերում բարձրացել են արդյունաբերական հսկաները, երկիրը պատվել է գործարանների, ջրանցքների, էլեկտրակայանների խիտ ցանցով։

Փակված են դարավոր թշվառության դռները։ Այսօր հայ ժողովուրդը ավելի քան երբեք երջանիկ է ապրում, ստեղծագործում, կերտում իր փառավոր ապագան, շնորհիվ այն բարիքների, որ բերեց Նոյեմբերի 29-ը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման պանծալի թվականը»։

Ապա Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասատու պ. Պարույր Շահբազյանը հանգամանորեն բանախոսեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի կապակցությամբ և ասաց.

«Պատմության մեջ կան թվականներ, որոնց թևագրած խորհուրդը չափազանց մեծ է։ Նոյեմբերի 29-ը մեր պատմության մեջ մտել է որպես մեր ժողովրդի պատմության մեծագույն թվականներից մեկը։ Նոյեմբերի 29-ին իրագործվեցին հայ ժողովրդի ազատության դարավոր իղձերը։

Դարեր շարունակ մեր ժողովուրդը երազել է ազատության մասին և պայքարել։ Ազատության համար մղած մեր պայքարն ունի շատ հին պատմություն։ Մեր ազգային ինքնուրույնությունը պահելու համար հայ ժողովուրդը զանգվածաբար գրոհել է միշտ թշնամու դեմ և իր հավաքական հաստատակամությամբ տարել է բարոյական հաղթանակ։ Մենք խորին երախտագիտությամբ ենք հիշում մեր ազգային հերոսներից շատերին, մանավանդ Կարմիր Վարդանին, որին մեր եկեղեցին նրա զինակիցների հետ դասում է իր սրբերի կարգը։ Վարդանով սկսված հայ ժողովրդի ազատագրական պայքարը, առավել կամ նվազ սաստկությամբ, միշտ էլ շարունակվել է։

Սակայն 19-րդ դարի առաջին կեսը հանդիսանում է հայ ժողովրդի զարթոնքի շրջանը։ Այդ զարթոնքին մեծապես նպաստեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 1828 թվականին։ Այդ զարթոնքը նշանավորվեց մի այնպիսի խոշոր ու լուսավոր դեմքով, ինչպիսին Խաչատուր Աբովյանն է՝ մեր նոր գրականության հիմնադիրը։ Աբովյանի դերը կայանում է նրանում, որ նա հայ ժողովրդի ազատագրության գործը դրեց ճիշտ ուղու վրա՝ հայ ժողովրդի բախտը կապելով ռուս ժողովրդի հետ։ Այդ գիծը զարգանալով, մի ավելի բարձր աստիճանի հասավ Միքայել Նալբանդյանի մոտ։ Պատմությունը հաստատեց Աբովյանի և Նալբանդյանի տեսակետի ճշտությունը հայ ժողովրդի ազատագրության գործում։ Այսօր ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Հայաստանը ազատագրվեց շնորհիվ Ռուսաստանի եղբայրական օգնության։ Իր արևմտյան դաշնակիցներ-ից թողլքված Հայաստանը, որ կործանման եզրին էր հասել, փրկվեց միայն Ռուսաստանի օգնությամբ։ Նոյեմբերի 29-ը հանդիսանում է հայ ժողովրդի ազատագրության իսկական, մեծ և պանծալի թվականը։

Նոյեմբերի 29-ը հանդիսացավ հայ ժողովրդի հոգևոր և ֆիզիկական վերածնության սկիզբը։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ հայ ժողովուրդը վերագտավ իր ազգային անկախությունն ու պետականությունը, ազատագրվեց ընկերային տեսակետից՝ փշրելով իր ստեղծագործական հնարավորությունները կաշկանդող դասակարգային ամբարտակները և վերագտավ իրեն այնքա՜ն պակասած խաղաղությունն ու անվտանգությունը, ձեռնամուխ եղավ իմացական, հոգեկան, տնտեսական իր բոլոր ուժերի դրսևորմանը, որ նա ժառանգելով իր լուսաշավիղ նախորդներից, կուտակել էր իր մեջ։

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում մեր երկիրը սոսկ պատմական անուն էր։ Մեր ժողովրդի զավակները սփռված էին աշխարհով մեկ և զուրկ՝ ինքնուրույն, անկախ կյանքից։ Մեր ժողովրդի արևմտյան հատվածը ոչ միայն դարեր շարունակ շահագործվեց սուլթանական Թյուրքիայի բռնակալ լծի տակ, այլ նաև 1914 թվականին ենթարկվեց պատմության մեջ իր նախընթացը չունեցող գազանային բնաջնջման։ Թուրքերը մեզանից խլեցին մեր ժողովրդի ավելի քան մեկ միլիոն, անհետեցին մեկ՝ բնաջնջելով մեր մտավորական ընտրանին։

Նոյեմբերի 29-ի մեծագույն նշանակությունը կայանում է նրանում, որ ստեղծվեց մի կենտրոն, որտեղ հայ կյանքը զարգանում է համաչափ, բազմակողմանի և, ինչ որ ամենից կարևորն է, պետականորեն։ Հայ պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն նվաճումն է և նրա առաջիկա մեծ հաջողությունների հաստատուն գրավականը։

Շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման երեկի հետամնաց, գյուղատնտեսական մեր երկիրը այսօր դարձել է արդյունաբերական, առաջավոր մշակույթի, ծաղկող տնտեսության և համատարած գրագիտության երկիր։

Սովետական իշխանությունը ապահովեց հայ ժողովրդի ստեղծագործական ուժերի բուռն վերելքը տնտեսության ու մշակույթի բոլոր բնագավառներում։ Աճեցին արդյունաբերական խոշոր կենտրոններ Երևանը, Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Ղափանը և մյուսները։

Սովետական իշխանության տարիներին կառուցվել և գործարկվել են այնպիսի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, ինչպիսիք են Երևանի Կիրովի անվան էլեկտրամեքենաշինական, էլեկտրալամպերի, կարբիդի, ավտոդողերի գործարանները, Կանազը, Լենինականի հյուսվածեղենի, Քաջարանի պղնձի-մոլիբդենի և Կիրովականի քիմիական մեծ գործարանները, Սևանի, Գյումուշի, Քանաքեռի հիդրոէլեկտրակայանները և այլն։

Օրավուր մեծ թափ և ծավալ է ընդունում բնակարանային շինարարությունը։ Անճանաչելիորեն փոխվել է մեր սիրելի մայրաքաղաք Երևանը։ Մինչև սովետական կարգերի հաստատումը Երևանը մի նահանգային հետամնաց քաղաք էր 23.000 բնակչությամբ։ Այժմ Երևանը դարձել է մեր Մեծ Միության առաջավոր ու գեղեցիկ քաղաքներից մեկը, Սովետական Հայաստանի զարգացող արդյունաբերության, գիտության ու մշակույթի կենտրոնը։ Հիմնովին կերպարանափոխվել ու բարեկարգվել են Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, Ղափանը։

Մեծ հաջողություններ են ձեռք բերվել նաև ժողովրդական առողջապահության գործում։ 1913 թվականին Հայաստանում կար ընդա-

մինչ 57 բժիշկ։ Այժմ մեր ռեսպուբլիկայում ժողովրդական առողջապահության ասպարեզում աշխատում է 3.067 բժիշկ։ Հիվանդանոցների թիվը 1913 թվականի համեմատությամբ ավելացել է 33 անգամ։ Մինչև ռևոլյուցիան Հայաստանում չկային առողջարաններ ու հանգստյան տներ։ Այժմ մենք ունենք 21 առողջարան և 8 հանգստյան տուն, որտեղ ամեն տարի բուժվում ու հանգստանում են հազարավոր աշխատավորներ։

Այսօր Սովետական Հայաստանը դարձել է համատարած գրագիտության, առաջավոր գիտության, արվեստի և գրականության երկիր։ 1914 թվականին Հայաստանում կար ընդամենը 459 դպրոց, որից 446-ը տարրական, 6-ը՝ թերի միջնակարգ և միայն 7-ը՝ միջնակարգ։ Այդ դպրոցներում սովորում էր 34.738 աշակերտ և աշխատում 1.146 ուսուցիչ։

1919 թվականին կար միայն 166 տարրական դպրոց։ Սովետական հասարակարգը ժողովրդական զանգվածների համար բացեց լայն ճանապարհ դեպի գիտությունը, դեպի կրթությունը։ Այժմ մեր երկրում կա 1.184 դպրոց, որոնցում սովորում է 281.000 աշակերտ և աշխատում է մոտ 20.000 ուսուցիչ։ Ներկայումս գործող դպրոցների թիվը գերազանցում է 1914 թվականի Հայաստանի բոլոր դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվն։

Նախասովետական Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, ոչ մի գիտահետազոտական հիմնարկ։ Սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո՝ 1921 թվականին, բացվեց Երևանի Պետական համալսարանը և ապա Պոլիտեխնիկական, Գյուղատնտեսական, Բժշկական, Մանկավարժական, Թատերական և այլ ինստիտուտներ, ինչպես նաև Պետական երաժշտանոցը։ Այժմ մեր բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում է ավելի քան 15.000 ուսանող։

Մեր Հայրենիքում աննախընթաց վերելք է ապրում գիտական միտքը, որի կենտրոնը հանդիսանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ Գիտությունների ակադեմիան միավորում է 30 գիտահետազոտական ինստիտուտ, բաժանմունք և լաբորատորիա։ Նշանակալից են մեր ռեսպուբլիկայի գիտնականների հաջողություններն աստրոֆիզիկայի, տիեզերական ճառագայթների, մաթեմատիկայի ուսումնասիրության ասպարեզում։ Այսօր մեր երկրում կան ավելի քան 2.500 գիտական և գիտա-մանկավարժական որակյալ աշխատողներ, որոնք գիտությունների դոկտորներ և թեկնածուներ են։

Ներկայումս մեր ռեսպուբլիկայում կա 10 երաժշտական և դրամատիկ թատրոն։

Հայկական ֆիլհարմոնիան իր մեջ ընդգրկում է երգի և պարի անսամբլ, քառաձայն երգեցիկ խումբ, սիմֆոնիկ նվագախումբ, էստրադային նվագախումբ, գուսանական անսամբլ և այլ ստեղծագործական խմբեր, որոնք մեր ժողովրդի գնահատման և անվերապահ հիացմունքին են արժանացել իրենց ինքնատիպությամբ, կատարման բարձր արվեստով։ Ստեղծագործական անկաշկանդ վերելքի ճանապարհի վրա է գտնվում Երևանի կինոստուդիան, որի արտադրած կինոնկարները համամիութենական ճանաչում են գտնում։

Օրավուր զարգանում է սովետահայ գրականությունը։ Ստեղծագործական նվաճումների են հասել նաև Սովետական Հայաստանի երաժիշտները, նկարիչները, քանդակագործները, ճարտարապետները։ Վերածնված հայ ժողովրդի մշակույթի բուռն ծաղկման ամենափայլուն ստուգատեսը հանդիսացավ հայկական արվեստի ու գրականության տասնօրյակը, որը տեղի ունեցավ 1956 թվականի հունիսին։

Սովետական իշխանության տարիներին մեր ռեսպուբլիկան ծածկվել է մշակութային, լուսավորական հիմնարկությունների խիտ ցանցով։

Տաղանդավոր հայ ժողովրդի գիտական մտքի և գեղարվեստական բարձր ընդունակությունների անհերքելի ու փայլուն ապացույցն են հանդիսանում այնպիսի դեմքեր, ինչպիսիք են ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, Ալիխանյան եղբայրները, Արամ Խաչատրյանը, երիտասարդ մաթեմատիկոս Մերգելյանը և ուրիշներ, որոնց անուններն ու գործերը համաշխարհային ճանաչում են գտել։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ահա արդեն անցել է 36 տարի։ Այդ տարիների ընթացքում հիմնովին փոխվել, անճանաչելի է դարձել մեր երկրի դեմքը։ Անվերադառնալիորեն պատմության գիրկն է անցել քսենոֆոնյան գետնափոր տների վաղնջական Հայաստանը։ Պատմության բառուղիներում մոլորված երբեմնի ողբավոր Մայր Հայաստանը այսօր ոտքի է կանգնել։ Նա այսօր դարձել է հզոր Սովետական Միության հավասարազոր անդամներից մեկը, դադարել է արցունքի հովիտ, որբերի և այրիների երկիր լինելուց։ Հայտնաբերվել ու շահագործման են հանձնվել մեր երկրի ընդերքի հարստությունները։ Մեր հայրենի ջրերը դարձել են ուժ և լույս։ Երկարաձիգ, ասֆալտված ճանապարհները կենտրոնին են կապում մեր երկրի շրջանները։ Նրա փառքի ու մեծության համար աշխատող նրա զավակներից շատ-շատերը այսօր արժանացել են համաշխարհային ճանաչման։

*Անցյալում չի եղել մի ժողովուրդ, որի նկատմամբ պատմությունը այնքան անարդար եղած լինի, որքան հայ ժողովրդի նկատմամբ։ Նոյեմբերի 29-ը սրբագրեց պատմության թույլ տված սխալն ու անարդարությունը մեր նկատմամբ։ Այսօր մեր բնիկ երկրում, մեր հայրենավանդ հողի վրա մենք ունենք մեր ամրակուռ պետությունը։ Սովետական Հայաստանի ստեղծումը հային վերադարձրեց իր ազգային հպարտությունը և հավատն իր ուժերի նկատմամբ։*

*Շնորհիվ այդ հավատի վերածնման, այսօր ամբողջ հայությունն իր Հայրենիքում և նրանից դուրս ապրում է միասնական թրթռումով։*

*Հայը վերադարձավ իր հողը և, առասպելական Անթեի նման, շփվելով իր հողին, անհունորեն զորացավ։ Այսօր Սովետական Հայաստանի գոյությունը, նրա հզորացումը Սովետական Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում հայ ժողովրդի ամբողջացման գրավականն է։*

*Հայ ժողովրդի ամբողջացման գործում քիչ դեր չի կատարում նաև մեր Ս. Էջմիածինը։ Մեր Վեհափառ Հոր շրջագայությունը արտասահմանի հայաշատ կենտրոններում մի նշանակալից իրադարձություն էր մեր պատմության մեջ։ Շնորհիվ այդ շրջագայության, շնորհիվ օրավուր աճող Ս. Էջմիածնի հեղինակության, ամրապնդվում է կապը հայության երկու թևերի միջև։ Այդ թևերը մի օր անխուսափելիորեն կմիանան, և կիրագործվի հայության դարերով փայփայած ամբողջացման երազը իր հայրենավանդ հողի վրա։*

*Մեր սիրելի Հայրենիքի ազատագրման 36-րդ տարեդարձի օրը մեր մաղթանքն է առ Աստված, որ անսասան մնա մեր Սովետական հզոր պետությունը, որ խաղաղության գործը հաղթանակի ամբողջ աշխարհում։*

*Ճեմարանի Գ դասարանի ուսանողներից* Խորեն Անյխանաչյանը *և* Աբրահամ Մազարյանը *հուզումով արտասանեցին մեկը՝ Ա. Իսահակյանի «Հայրենիքիս»-ը, մյուսը՝ Գ. Սարյանի «Խորհրդային Հայաստան»-ը։* Ժիրայր Ջերենյանի *հաջողորեն մեներգած «Հայաստան, երկիր դրախտավայր» երգից հետո, խանդավառ մթնոլորտում և ծափահարությունների տակ խոսք առավ Նորին* Ս. Օծությունը Վեհափառ Հայրապետը *և ասաց.*

«Այսօրվան հանդեսը մեր սրտին շատ մոտիկ հանդես մըն էր. հաջող էին արտասանություններն ու երգերը, ոգևորիչ՝ խոսված ճառերը։

Մենք ալ կանգ առինք հայ ժողովրդի իրականացած երազի՝ Մայր Հայրենիքի ազատագրման տարեդարձի առաջ։ Պահ մը կանգ առինք երկու իմաստով. նախ դիտելու համար իրականությունը, որ մենք կտեսնենք մեր աչքերով, ուր կյանք և կենսուրախ ժողովուրդը։ Ապա մեր հայացքը ուղղենք անցյալին, երբ հայ ժողովուրդը զրկված էր իր Մայր Հողի վրա ապրելու իրավունքեն։ Վերհիշեցինք մեր սխուր անցյալը և հակադրեցինք անոր այժմու Հայաստանի նվաճումները, բոլոր բնագավառներու մեջ։

Բոլոր ժողովուրդներն ալ ունին իրենց պատմության երջանիկ և ողբերգական օրերը, իրենց ստրկության և ազատության շրջանները։ Հայ ժողովուրդը իր հազարամյա պատմության մեջ ունեցեր շատ դժբախտ շրջաններ է ունեցած և ապրած է հալածական, ողբալի կյանք մը։ Ազատության և անկախության շրջանները մեր պատմության ընթացքին կարճատև են եղած։ Ահա թե ինչու այսօր պետք է մեր ունեցածի արժեքը գիտնանք։ 1920 թվականին հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն իսկ հարցականի տակ էր դրված, ինչպես այդ եղած էր արևմտահայերու համար 1915-ին, և երբ ամբողջ Արևմտահայաստանի հայ բնակչությունը—հայ ժողովրդի կեսը—նահատակվեցավ անհավոր պայմաններու մեջ։ Ամբողջ ժողովրդի մը կյանքի ճրագը մարեցավ։ Նույն ճակատագիրը կսպառնար նաև Արևելահայաստանին 1918—1920 թվականներու հուսահատական օրերուն։ Ահա թե ինչու 1920-ը հայ ժողովրդի ազատության, այլ նաև ֆիզիկական գոյության իրավունքի տարեդարձն է։ Այս լույսի տակ պետք է գիտնանք գնահատել դեպքերը։

Մենք հայ հոգևորականներս ենք, ծառաներն ու մշակները «Հայաստանեայց»-ու Ս. Եկեղեցիին և մենք երբեք եկեղեցին չենք բաժներ ժողովրդեն, Հայրենիքեն։ Այս ոգիով կուզենք, որ դուք ևս դաստիարակվիք, սիրելի՛ ուսանողներ։ Աճիք ու զորանաք, ձգտիք ու պտղաբեր դառնաք մեր Ս. Եկեղեցիին, հայ ժողովրդին և ամենայն հայոց ազատ Հայրենիքին համար։

Կեցցե՛ մեր Հայրենիքը՝ Սովետական երիտասարդ Հայաստանը։ Ապրին և օրհնյալ ըլլան բոլոր անոնք, որոնք իրենց կյանքը պիտի նվիրեն Հայրենիքին, ժողովրդին և Ս. Եկեղեցիին»։

*Հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով։*




# ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

## 1956 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՆԻՍՏԻՑ

*Գերագույն Հոգևոր խորհուրդը իր սույն նիստում զբաղվեց վերջերս Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռից ներս ստեղծված կացության վերաբերյալ հարցերով։*

## 1956 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻՑ

*Գերագույն Հոգևոր խորհուրդը իր սույն նիստում նորից զբաղվեց Երուսաղեմի խնդրով, այս հարցի վերաբերյալ նոր փաստաթղթերի և նամակագրական նյութերի հիման վրա։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Գերագույն Հոգևոր խորհրդի այս նիստում հայտնեց այն մասին, որ Ինքը Տ. Եղիշե արքեպիսկոպոսի հետ ունեցած խոսակցության ընթացքում նոյեմբերի 4-ին թելադրել է նրան, Հայ Եկեղեցու ընդհանուր շահերից ելնելով, հրաժարվել Ս. Աթոռում ունեցած իր պաշտոններից և չվերադառնալ առհասարակ Երուսաղեմ։*

*Տ. Եղիշե արքեպիսկոպոսը հիմնականում համաձայն է եղել Վեհափառ Հայրապետի թելադրության և խոստացել է որոշ ժամանակի համար քաշվել ամեն գործից։*

## 1956 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻՑ

*Գերագույն Հոգևոր խորհուրդը իր սույն նիստում գոհունակությամբ լսեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի մանրամասն հաղորդումը Երուսաղեմի Պատրիարքարանից ներս Սրբոց Հակոբյանց վանքի միաբանության մեջ տիրող ներկա կացության մասին։*

*Գերագույն Հոգևոր խորհրդի նույն նիստում լսվեց նաև Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի 11 էջից բաղկացած զեկուցագիրը (զեկուցող՝ Վերստուգիչ հանձնաժողովի անդամ Գրիգոր Բեքմեզյան)։*

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր Աթոռի Վեր-*

ստուգիչ հանձնաժողովը սույն թվականի նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 20-ը կատարեց Մայր Աթոռի 1956 թվականի հունվար — հունիս ամիսների տնտեսա-ֆինանսական գործունեության հերթական ստուգումը և դեկտեմբերի 11-ին այն ներկայացրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, լսելով 1956 թվականի առաջին կիսամյակի գործերի ստուգման արդյունքների մասին Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցագիրը (հաշվապահության, Հոգևոր Ճեմարանի, «Էջմիածին» ամսագրի, գրադարանի, պահեստ, հաշարանի), որոշեց հիմնականում հաստատել Վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, հանձնաժողովի դիտողություններով, նկատողություններով և առաջարկություններով հանդերձ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում քննեց նաև Ս. Գեղարդ վանքի ժամասաց Տ. Վաղարշակ քահանա Թադևոսյանի վանական անկարգապահության և անհնազանդության հարցը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով Տ. Վաղարշակ քահանան փոխադրվեց երեք ամսով ժամանակով։



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն ու քարոզիչն էր Անթիլիասի միաբան հոգեշնորհ Տ. Շահէ վարդապետ Աճէմյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։ Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների մի մեծ բազմություն։ Քարոզիչ հայր սուրբը վեր հանեց Մայր Հայրենիքում ծաղկող հայ մշակույթի նվաճումները, ծանրացավ Մայր Աթոռից, Հայրենիքից ստացած իր տպավորությունների վրա, պատմեց իր ականատեսի վկայությունները և իր ուրախությունն ու երախտագիտությունը հայտնեց հայ պետության հովանու տակ իր զարթոնքն ապրող հայ մշակույթի և հավատի մասին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 7-ին Մայր Աթոռից դեպի Մոսկվա մեկնեցին Վեհափառ Հայրապետի գահակալության առաջին տարեդարձի առթիվ ժամանած հյուրերը՝ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և Շահէ վարդապետ Աճէմյանը։ Հյուրերին ճանապարհեցին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և Մեսրոպ վարդապետ Անթարյանը։

Հյուրերը, երեք օր Մոսկվա մնալուց հետո նոյեմբերի 9-ին ճանապարհորդեցին դեպի Ցյուրիխ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, ժամը 2-ին, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դահլիճում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի նախագահությամբ կայացավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձին։ Պետական մեծ տոնի պատմական նշանակության մասին հանգամանորեն խոսեց Հոգևոր Ճեմարանի ֆրանսերեն լեզվի դասախոս պ. Գեղամ Շահինյանը։ Ապա խոսք առավ նաև Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հմայակ Սեդգարյանը, ծանրանալով Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի փոքր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին բերած բարիքների, ազգերի հավասարության և ինքնորոշման իրավունքի վրա։

Հանդիսավոր նիստին ներկա էին ողջ միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և վանքի պաշտոնեությունը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցվեց նորոգ հանգուցյալ Տ. Խորեն քահանա Շուշանյանի մահվան քառասունքի առթիվ։ Պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Հոգևոր Ճեմարանում սովորելու համար Սիրիայից և Լիբանանից եկած ուսանողների 6 հոգուց բաղկացած առաջին խումբը։

Բեյրութից ուսանողներին Մայր Աթոռ էր առաջնորդում Տանն Կիլիկիո միաբան հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Ցումուրթաճյանը։

Երևանի կայարանում ուխտավորաբար Մայր Աթոռ եկած Տ. Մեսրոպ վարդապետին և նոր ճեմարանականներին դիմավորեցին Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ Տ. Մեսրոպ

վարդապետ Անթարյանը, դասախոս տ. Արթուն Հատիտյանը, քարոզիչներ՝ Վարդապետ ավարտավորը և երկու ուսանողները։

Նոր ուսանողները վանքի արևմտյան դարպասի մոտ իրենց ավագ ընկերներից «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողությամբ առաջնորդվեցին Մայր Տաճար, որտեղ կատարեցին իրենց ուխտը, ապա քայլերթով՝ Վեհարան, ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ նրա Ս. Աջը համբուրելու և Հայրապետական օրհնությունն ստանալու համար։

Ճեմարանի դահլիճում, խանդավառ և ուրախ մթնոլորտի մեջ, ծափահարություններով ընդունվեցին նոր ուսանողները։ Հանուն տեսչության և ուսանողության, բարի գալստյան սրտագին խոսք ասաց Ճեմարանի փոխ-տեսուչ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, որին պատասխանեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Ցումուրթաճյանը, շնորհակալություն հայտնելով այդ սրտագին ընդունելության համար։

Պայմանական քննություններից հետո նոր ուսանողները բաժանվեցին համապատասխան դասարանների վրա։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Ընծայումն Ս. Աստվածածնի ի Տաճարն տոնի օրը, Հոգևոր Ճեմարանը փակ էր։ Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագից Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։ Սուրբ պատարագի արարողությունները երգեց հաջողությամբ Հոգևոր Ճեմարանի ուսանողների ուժերով կազմակերպված քառաձայն երգեցիկ խումբը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ԿԻՐԱԿԻ. Մայր Տաճարում մատուցվեց սուրբ պատարագ հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ։ Պատարագեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների մեծ բազմություն։ Պատարագիչն էր Հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղան։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ՇԱԲԱԹ ՕՐԸ՝ «Տօն Սրբոց Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթուղիմէոսի»։ Ազգային-եկեղեցական տոնի առթիվ փակ էր Հոգևոր Ճեմարանը։ Մայր Տաճարում Հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը այդ օր մատուցեց իր քահանայական անդրանիկ պատարագը։ Սուրբ պատարագի սրբազան երգեցողությունը կատարում էր Հոգևոր Ճեմարանի քառաձայն երգեցիկ խումբը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ։ Պատարագիչն էր Տանն Կիլիկիո միաբան Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Ցումուրթաճյանը, որը որպես ուխտավոր գտնվում է Մայր Աթոռում և Հայրենիքում։ Պատարագիչ հայր սուրբը քարոզեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծագման և հաստատման մասին, հանգամանորեն խոսեց մեր Եկեղեցու առաջին լուսավորիչներ Ս. Թադեոսի և Ս. Բարթուղիմեոսի առաքելական գործունեության վրա, ծանրանալով միաժամանակ քրիստոնեության արշալույսին հին աշխարհում տիրող բարոյական ապականությունների և մարդկային մտքի հուսահատ որոնումների մասին։ Հին աշխարհում գիտնականների և փիլիսոփաների իմաստասիրական սիստեմները, կրոնների խորհրդապաշտական ծիսակատարությունները չկարողացան հոգեպես խաղաղեցնել մարդկանց։ Քրիստոնեությունը մարդկությանը տվեց հոգեկան անդորր։ Քրիստոնեության լույսը ծագեց նաև Հայաստանի մեջ մեր առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս և Ս. Բարթուղիմեոս առաքյալների քարոզությամբ։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հավարտ սուրբ պատարագի, հանդիսավոր իրադրության մեջ կատարվեց Կառավարական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի կապակցությամբ։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով Հոգևոր Ճեմարան այցելեց Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Առաքելյանը։ Հարգելի պրոֆեսորը մի ամբողջ օր եղավ Ճեմարանում, ծանոթացավ Հոգևոր Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներին, ներկա եղավ այդ օրվա բոլոր դասերին, որոնցից ունեցավ դասախոսների և ուսանո-

ղության հետ, հետաքրքրվեց ուսանողության սննդի, ննջարանի, առողջապահական, կենցաղային հարցերով, արեց որոշ թելադրություններ և լավագույն տպավորություններով մեկնեց ճեմարանից։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պաշտվեց սուրբ պատարագ։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, պաշտոնական գործերով Բաքվից Մայր Աթոռ ժամանեց Ադրբեջանի և Թուրքեստանի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Տ. Տիրայր վարդապետին և զրույց ունեցավ նրա հետ թեմական կարևոր գործերի մասին։

Տ. Տիրայր վարդապետը իր թեմը մեկնեց ամսի 18-ին։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Շիրակի առաջնորդական փոխանորդին։

Տ. Կոմիտաս վարդապետը իր թեմը մեկնեց ամսի 20-ին։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռից մեկնեց Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Յումուրթաճյանը, որն ուղեկցել էր Սիրիայից և Լիբանանից Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան սովորելու համար ժամանող ուսանողներին։

Հայր սուրբին ճանապարհեցին հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհրուզյանը։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ խուռն բազմության ներկայության։ Պատարագեց և քարոզեց արժանապատիվ Ռուբեն քահանա Մարտիրոսյանը «Որ խոնարհեցուցանէ զանձն իւր՝ բարձրասցի» բնաբանով։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ժամանեց Վրաստանի թեմի առաջնորդի օգնական հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը թեմական գործերի առնչությամբ։

Հայր սուրբը իր թեմը վերադարձավ դեկտեմբերի 26-ին։

✿✿✿

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հոծ բազմության ներկայության մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը, որ և հանգամանորեն քարոզեց Ավագ տոների մասին։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Վեհափառ Հայրապետի հրամանով, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում կատարվեց քահանայական երեք նոր ձեռնադրություն, Մայր Աթոռի լուսարարապետ գերապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի շնորհաբաշխությամբ և հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ։

Վեհափառ Հայրապետը անձամբ քննելով քահանայացուների անձնավորությունը, արժանավորությունը և հոգևոր պատրաստությունը, տվեց Իր բարեհաճ արտոնությունը նրանց ձեռնադրության համար։

Նորընծաները՝ բարեշնորհ Պետրոս սարկավագ Ստեփանյանը, բարեշնորհ Վռամ սարկավագ Համամչյանը և բարեշնորհ Օննիկ սարկավագ Դեմիրճյանը ձեռնադրության ժամանակ փոխեցին իրենց ավազանի անունները և կոչվեցին Տ. Ստեփանոս քահանա Ստեփանյան, Տ. Արսեն քահանա Համամչյան և Տ. Գաբրիել քահանա Դեմիրճյան։

Նորընծաները իրենց քառասունքը անցկացրին Ս. Էջմիածնում և ապա նշանակվեցին համապատասխան աշխատանքի։
Թո՛ղ Աստված նրանց ուժ և կարողություն պարգևի լավագույնս կատարելու իրենց սրբազան սպաս՝ ծառայելու Հայ Եկեղեցուն և ժողովրդին։

Արժանապատիվ Տ. Սահակ քահանա Սահակյանը ծնվել է Թյուրքիայի Դարդանել քաղաքում 1896 թվականին։ Սովորել է տեղի ազգային վարժարանում։ 1914 թվականին, առաջին համաշխարհային պատերազմի օրերին ընտանիքով աքսորվում են Արաբիայի անապատները։ 1924 թվականին աքսորից վերադառնալով, հաստատվում է Հունաստանում։ Նույն թվականին ներգաղթել է Մայր Հայրենիք, որտեղ աշխատել է պետական զանազան հիմնարկներում, զբաղվելով միաժամանակ իր ինքնակրթությամբ և իր հոգևոր դաստիարակությամբ։ 1956 թվականի դեկտեմբերի 9-ին ձեռնադրվում է քահանա։

Արժանապատիվ Տ. Արսեն քահանա Համալյանը ծնվել է 1900 թվականին Կոստանդնուպոլսում։ 1912 թվականին ընտանիքով հաստատվում են Եգիպտոսի Կահիրե քաղաքում, որտեղ սովորում է Գալուստյան ազգային վարժարանում։ Մանկուց նրա սրտի ջերմ իղձն է եղել նվիրվել եկեղեցական ասպարեզի։ 1956 թվականի դեկտեմբերի 9-ին նա ձեռնադրվում է քահանա։

Արժանապատիվ Տ. Գարեգին քահանա Գևորգյանը ծնվել է Նիկոմիդիայի (Իզմիտի շրջան) Արսլանբեկ գյուղում։ 1914 թվականին ծննդավայրից աքսորվում է Դեյր-էզ-Զոր և 1918 թվականին վերադառնալով իր ծննդավայրը, սովորում է Չարխափան Ս. Աստվածածին եկեղեցուն կից դպրոցում։ 1922 թվականին ընտանիքով փոխադրվում են Հունաստան, ուր շարունակում է ուսումը, հաճախելով նաև դպրաց դասի եկեղեցական երաժշտության դասերին։ 1947 թվականին ներգաղթում է Հայաստան և աշխատելով մեկտեղ մասնակցում է մայրաքաղաքի եկեղեցիներում եկեղեցական արարողություններին և իր մեջ քահանայական կոչում զգալով, ձեռնադրվում է 1956 թվականի դեկտեմբերի 9-ին։

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Չեխոսլովակիայի լուսավորության աշխատողների ութ հոգուց բաղկացած պատվիրակությունը, որին գլխավորում էր Խորվաթիայի Գործադիր վեչեի անդամ Յանկո Միլոշը։
Հյուրերին ուղեկցում էին Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության և Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության աշխատողները։ Հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցա-հնագիտական թանգարանում։ Վերջում հյուրերը շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար և լավագույն տպավորություններով մեկնեցին Ս. Էջմիածնից։

***

ՆՈՒՅՆ ՕՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ այցելեց նաև Սովետական Միության զանազան քաղաքներից Երևանում կայացած բժշկական սեսիային մասնակցող բժիշկների և բժշկուհիների պատվիրակությունը։ Պատվիրակությունը Վեհարանում ներկայացավ Վեհափառ Հայրապետին։ Նորին Ս. Օծությունը պատվիրակության խնդրանքի վրա տվեց Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու մասին տեղեկություններ։ Վերջում պատվիրակության անդամները իրենց շնորհակալությունը հայտնեցին ջերմ ընդունելության համար և հրաժեշտ տվին Վեհափառ Հայրապետից։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեցին Սովետա-բելգիական բարեկամության ազգային կոմիտեի անդամ Էդմոնդ Ռեբեկերը և Սովետա-բելգիական ընկերության Լյեժի ֆեդերացիայի կոմիտեի անդամ Մորիս Ալլենը։ Նրանք ծանոթացան Ս. Էջմիածնի դարավոր հնություններին և իրենց հիացմունքը արտահայտեցին հայ մանրանկարչության և ճարտարապետության նվաճումների մասին։ Հյուրերը գոհ տպավորություններով մեկնեցին Երևան։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեցին բուլղարական և ռումինական մի խումբ գրողներ։ Նրանք եղան Մայր Տաճարում, ապա եկեղեցա-հնագիտական թանգարանում։ Հարգելի հյուրերը Վեհարանում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։ Մտերմական զրույցի ժամանակ գրողները պատմեցին իրենց տպավորությունների մասին Հայաստանից և Մայր Տաճարից։ Վեհափառ Հայրապետը ուրախությամբ պատասխանեց Հայ Եկեղե-

ցուն վերաբերյալ գրողների տված հարցերին։ Հյուրերը շնորհակալություն հայտնեցին սիրալիր ընդունելության համար և մեկնեցին լավագույն տպավորություններով։

***

*ՆՈՒՅՆ ՕՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ այցելեցին նաև չեխոսլովակյան մի խումբ նկարիչներ, որի կազմում էին նկարիչներ Լադիսլավ Չիմիցկին, քանդակագործ Լադիսլավ Նովակը և պրոֆ. Վացլավ Ժալուդը։ Մայր Տաճարի կառուցման թվականի և նրա ճարտարապետական առանձնահատկությունների մասին հանգամանորեն տեղեկություններ էր տալիս հյուր նկարիչներին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Արվեստագետները գոհ տպավորության տակ մեկնեցին Ս. Էջմիածնից։*

***

*ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեցին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից կոմպոզիտորներ Կուրցբախը և Գերհարդ Վոլգիմուրը։ Հյուրերը եղան Մայր Տաճարում, թանգարանում։ Արվեստագետներին բացատրություններ էր տալիս գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Հյուրերը առանձնապես հետաքրքրվեցին հայ ճարտարապետության նվաճումներով և Մայր Տաճարի պատմությամբ։*

***

*ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց նաև ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի Կորեական ընկերության պատվիրակությունը, Կորեայի գրողների միության նախագահի տեղակալ, ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի Կորեական ընկերության կենտրոնական վարչության անդամ Պակ Պխար Յանի գլխավորությամբ։ Պատվիրակությունը այցելեց Մայր Տաճարը և եկեղեցա-հնագիտական թանգարանը։*

***

*ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ այցելեց չեխոսլովակյան լրագրողների պատվիրակությունը, Չեմլե-դիլչեսկիե նովոստի թերթի գլխավոր խմբագիր Յարոսլավ Եմիգի գլխավորությամբ։ Հյուրերը ծանոթացան Մայր Տաճարի պատմության և ճարտարապետական առանձնահատկություններին։ Նրանք եղան նաև Տաճարին կից եկեղեցա-հնագիտական թանգարանում։*

***

*ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեցին չին գրողներ Չժան Եղին-ին, Գե Բի-չժուն և Յան Չժը, որոնք ՍՍՌՄ Սովետական գրողների միության հրավերով գտնվում են Սովետական Միությունում։ Հյուրերը ծանոթացան Մայր Տաճարի պատմությանը, եղան նաև եկեղեցա-հնագիտական թանգարանում։*

# ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի հրամանով, այս տարի, դեկտեմբերի 25-ին, երեքշաբթի օր, բացառիկ շուքով և հանդիսությամբ նշվեց նախավկա և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի տոնը Մայր Աթոռում։

Այդ օրը Մայր Աթոռի սարկավագների և Հոգևոր Ճեմարանի ուսանողության տոնն էր։

Օրվա եկեղեցական հանդիսությունները կազմակերպված և հանդիսավոր կերպով անցկացնելու համար, Մայր Աթոռի սարկավագները նախապատրաստական աշխատանքներ կատարեցին։ Սարկավագների ժողովը տոնի համար բուրվառակիրներ ընտրեց Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ Հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Անթարյանին և Մայր Աթոռի փոխ-լուսարարապետ Հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանին։ Օրվա պատարագիչ նշանակվեց Մայր Աթոռի դարբասարենկալ և հյուրընկալ Հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։ Իսկ երկու դասերի ավագ դպրապետներ նշանակվեցին Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տ. Ստեփանյանը և արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Ծիրինյանը։

Մայր Աթոռի սարկավագները, ըստ հարմարության, իրենց մեջ բաժանեցին Ս. Ստեփանոսի հիշատակին նվիրված շարականների կանոնի Օրհնության՝ «Նոր հրաշալի բարի Քրիստոսի» և Հարցի՝ «Ընդ երկնային հոգեղինաց դասուն» մեներգները։

Դեկտեմբերի 24-ին, երկուշաբթի օր, ժամը 5-ին սկսվեց երեկոյան ժամերգությունը։ Մայր Տաճարը զարդարված էր տոնականորեն։ Ավետավոր զանգերի ղողանջների տակ, եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետը իջավ Տաճար, նախագահելու Ս. Ստեփանոսի Նախատոնակի հանդիսություններին։

Մայր Աթոռի ողջ միաբանությունը, շրջապատած Վեհափառ Հայրապետին, մասնակցում էր Նախատոնակի հոգեթով արարողություններին։

Մայր Տաճարի հյուսիսային թևի Ս. Ստեփանոսի խորանի առաջ կատարվեց Նախատոնակ։ Հանդիսավոր, վեհ ու տպավորիչ հնչեց Ս. Ստեփանոսի հիշատակին նվիրված մեր հոգեզմայլ շարականների մեղեդին։ Հուզումով, ապրումով, խանդավառությամբ երգվեց Նախատոնակի ամբողջ երգեցողությունը։ Ու շարականների գեղեցիկ և պատկերավոր բառերի և զմայլելի երաժշտության միջով, բոլորի սրտերում, մի անգամ ևս կենդանացավ, պայծառացավ քրիստոնեական կրոնի աննկուն մարտիրոսի և առաջին նախավկա նախասարկավագ Ս. Ստեփանոսի խնկելի հիշատակը։

Դեկտեմբերի 25-ի երեքշաբթի առավոտ կանուխ, Մայր Տաճարում պաշտվում է հանդիսավոր առավոտյան ժամերգությունը։ Ներկա են ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ։ Օրհնության շարականից առաջ Մայր Տաճար է իջնում Վեհափառ Հայրապետը և նախագահում եկեղեցական հանդիսություններին։

Մայր Աթոռի բարեշնորհ սարկավագները այսօր ևս մեծ հաջողությամբ կատարում են երգեցողությունները։

Հատկապես Մայր Աթոռի հնավուրց կամարների տակ, այնքա՜ն ջերմությամբ, հայ հավատի հարազատությամբ, խրոխտ ու հաղթական հնչում է «Այսօր դասք»-ը։ Սարկավագների խումբն այն երգում է անթերի. Այդ հոգեթով եկեղեցական երաժշտության մեջ լսվում է բառերի տակ սպանվող մեծ նահատակ Ս. Ստեփանոսի հոգու արիությունը, մահն արհամարհելու խիզախությունը, քրիստոնեական հավատի սրբազան հուրը, կենսունակությունը և ապագայի նկատմամբ վառ հույսը։

«Փառք ի բարձունս»-ի պահն էր։ Սարկավագները Մայր Տաճարի հարավային ավանդատնից դուրս են գալիս զույգ-զույգ, բուրվառակիր Տ. Ներսես և Տ. Եղիշե վարդա-

պետների առաջնորդությամբ, սաղավարտ ի գլուխ, բուրվառներով և խնկի տապանակներով, և ըստ ավագության կարգի շարվում Ս. Ստեփանոսի խորանի առաջ։ Հուզիչ է պահը և գեղեցիկ՝ պատկերը։ Ս. Խորանի առաջ կանգնած, սարկավագները, հանդիսավոր ու ձանր, երգում են «Փառք ի բարձունս»-ը, ամբողջ եկեղեցում ներկա գտնվողների մասնակցությամբ։ Վերջում, Վեհափառ Հայրապետի օրհնության վրա, երբ անգամ խոնարհում են բոլորը միասին։

ժամը 11-ն է։ Սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։

Ճաշու գրքի ընթերցումից հետո, սարկավագները նորից շարվում են Ս. Ստեփանոսի խորանի առաջ։ Քարոզի պահն է։ Նրանք, շրջապատած Նորին Ս. Օծությանը, լսում են նրա հայրապետական խրատականը.

«Սիրելի՛ սարկավագներ,

Այսօր Ձեր օրն է, երբ մեր Ս. Եկեղեցին կփառավորե նշատակը Ս. Ստեփանոսին՝ Նախավկային և առաջին մարտիրոսին: Թե՛



Մայր Աթոռի սարկավագներր Ս. Ստեփանոսի տոնին

Առավոտյան եկեղեցական հանդիսությանց վերջին պահն է։ Սարկավագները միաբերան ու դաշն երգում են Մանկունքը՝ «Նախասարկավագ և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս»։

Այս խորին լռության մեջ լսվում է Վեհափառ Հայրապետի հուզումից թրթռացող ձայնը, երբ նա «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի միջոցով ողեկոչում է Ս. Ստեփանոսի հիշատակը, որպեսզի մեծ նահատակի աղով և հավատով զինվեն նաև իր որդիները, Մայր Աթոռի սարկավագ միաբանները։ Ամբողջ եկեղեցին, մի սիրտ և մի հոգի, իր «ամէն»-ներով ձայնակցում է Վեհափառ Հայրապետի սրտագին մաղթանքներին։

ևեկ երեկոյան, թե՛ այսօր սրբազան արարողություններ կատարեցինք, պանծացնելու համար Ստեփանոսը և աղոթելու համար, որ նա բարեխոս լինի մեզ համար: Պատահական չէ, որ քրիստոնեական այս հազարամյա Ս. Տաճարին մեջ մեր նախնիք կանգնեցուցեր են այս Ս. Սեղանը Ս. Ստեփանոսի հիշատակին: Որովհետև, թեև Տերը Հիսուս հիմնեց եկեղեցին որպես Աստված, բայց Ստեփանոս առաջինը եղավ այդ եկեղեցիին հիմքը ամրացնողը իբրև մարդ:

Եկեղեցին սուրբ հաստատություն մըն է, միաժամանակ աստվածային և մարդկային: Եվ Ստեփանոս առաջին մարդն է, որ իր կյանքը զոհեց, իր արյունը հեղեց և նահա-

տակվեցավ ի սեր Հիսուսի՝ Աստվածորդվույն, և այսպիսով առաջին քարը դրավ Քրիստոսի Եկեղեցիին:

Դուք մի՛ կարծեք, որ Հիսուսի խաչելությունեն և թաղումեն հետո, հին աշխարհի մարդիկ, Հիսուսի ժամանակակիցները, անմիջապես նոր հավատքը ընդունեցին: Ընդհակառակը, շատ քիչեր էին Հիսուսի աշակերտները և հետևորդները: Շատ շատեր, ամբոխները շատ աղոտ գաղափար մը ունեին Մեծ Գալիլեացիի խոսքին և Գողգոթայի ողբերգության մասին: Շատ քիչեր կհավատային Քրիստոսի հարության հրաշքին:

Աստվածային զոհին պետք եղավ միացնել նաև մարդու զոհաբերությունը, մարդկայնացնելու համար աստվածայինը և ճանապարհը բանալու մարդու աստվածացման:

Հանուն Հիսուսի աստվածային առաքելության զոհաբերվողներու շարքին մեջ առաջինը ըլլալու հավիտենական փառքը կպատկանի Ս. Ստեփանոսին:

Եվ մենք կխորհինք, թե Երուսաղեմեն հեռու ապրող մարդեր, երբ լսեցին Ս. Ստեփանոսի կամավոր նահատակության մասին, ցնցվեցան անոնց հոգիները և հավանաբար գոչեցին՝ եթե գտնվեր է մարդ մը, որ իր արյունն է նվիրեր Հիսուսի համար, ուրեմն իրավ որ Հիսուս Աստված է, ուրեմն իրավ է, որ հարյավ Քրիստոս:

Եվ ապա երկու—երեք հարյուր տարի շարունակ կտեսնենք, թե ինչպես շարան-շարան նոր Ստեփանոսներ իրենց նահատակությամբ վկաները եղան Քրիստոսի աստվածության և Անոր հրաշափառ հարության և իրենց արյունով սերմերը ցանեցին նոր և ճշմարիտ հավատքին, աշխարհի բոլոր ծագերու տակ: Ամեն մեկ սուրբի նահատակություն Հիսուսի կենդանությունը կվկայե:

Հայ ժողովուրդը առաջիններեն եղավ ընդունելու ավետիսը Նոր Կտակարանի: Եվ մինչև այսօր ալ կանգուն ենք մեր հավատքի վեմին վրա: Ավելին, այսօր, վերանորոգված ուժերով, սկսած ենք շարունակել մեր նախնյաց սուրբ գործը, Աստուծո գործը, նոր եռանդով, նոր կրակով, նոր հույսերով:

Դո՛ւք, սիրելի՝ ջերմեռանդ սարկավագներ, մեր կողքին պիտի աշխատիք այս սուրբ գործին համար, հավատքով և զորությամբ լեցուն, ինչպես Ս. Ստեփանոս:

Մենք այսօր Ձեզմե չենք պահանջեր, որ Ձեր արյունը զոհեք և նահատակվիք, սակայն մենք կսպասենք Ձեզմե, որ Ստեփանոսի անձնազոհության ոգին Ձեր սրտերուն մեջ առնեք, պահեք զայն և աճեցնեք, որպեսզի Ձեր աշխատանքը արդյունավետ և ստեղծարար ըլլա:

Եվ ինչպես որ Ստեփանոսի նահատակությունը ցնցեց հոգիները նույնիսկ թերահավատներուն և տարակուսողներուն, այնպես ալ մեր ժողովուրդը տեսնելով Ձեզ և Ձեր հավատքը, շոշափելով Ձեր հոգիի զորությունը և անձնվիրությունը, պիտի գոչե. ահա արդար հոգիներ, որոնք իրենց դալար կյանքը ընծա կբերեն բազմադարյան Հայ Եկեղեցիին. ուրեմն անիմանալի զորություն մը կա Քրիստոնեական կրոնին մեջ, և ճշմարտապես մեծ խորհուրդ մը, աստվածային խորհուրդ մը այն հազարամյա սուրբ քարերուն մեջ, որ երեկի մարմինը կկազմեն ամենայն հայոց լույս հավատքի վեմ սրբազնասուրբ Էջմիածնին:

Նվիրվեցե՛ք մեր Ս. Եկեղեցիին, նվիրվեցե՛ք հայ ժողովրդի հոգևոր շինության սուրբ գործին որպես զինվորյալ սպասավորներ: Թող լեցվին ու զորանան Ձեր սրտերը հավատքի հուրով, թող աճին Ձեր շնորհները և թող ծաղկի Ձեր կյանքի ծառը ի փառս Աստուծո և Հայաստանյայց Եկեղեցիին: «Օրհնեալ եղերուք ի Տեառնէ և ի Մէնջ»:

*Հանդիսությամբ շարունակվում է սուրբ պատարագը: Երգում է Հոգևոր Ճեմարանի երգեցիկ քառաձայն խումբը Տ. Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ:*

*Սուրբ պատարագի ավարտից հետո, Հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Եղիշե վարդապետները սարկավագներին առաջնորդում են Վեհարան, Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալու իրենց Ստեփանոսյան տոնի առթիվ:*

*Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին, խրատում է լինել Ս. Ստեփանոսի նման սպասավորներ Տիրոջ Ս. Տաճարում: Ապա սարկավագները սրտեռանդն երգում են Հայրապետական մաղթանքը: Խորապես հուզվում է Վեհափառ Հայրապետը և նորից օրհնում բոլորին:*

*Ժամը 3-ին վանքի ընդհանուր սեղանատանը տրվում է ճաշկերույթ ի պատիվ սարկավագների տոնին:*

*Ճաշին ներկա է Վեհափառ Հայրապետը և օրհնում է սուրբ սեղանը: Ներկա է և Վեհամայրը:*

*Հրավիրյալների թվումն են Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը և Մայր Աթոռի պաշտոնեությունը:*

*Ուրախ և խանդավառ մթնոլորտ է ստեղծվել սեղանների շուրջ: Վեհափառ Հայրապետը շրջապատված է Իր Մայր Աթոռի որդիներով: Ամենից շատ ուրախ են սարկավագները: Այսօր նրանց տոնն է. նրանց օրն է.*

*Ճաշին առաջինը խոսք է առնում գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և հանուն Մայր Աթոռի միաբանության շնորհավորում սարկավագների տոնը։ Հոգևոր Ճեմարանի տեսչության անունից, սարկավագներին սրտագինս շնորհավորում է փոխ-տեսուչ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը։ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների անունից ողջույնի և սրտագին շնորհավորության խոսք է ասում հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։ Ճեմարանի դասախոսական կազմի անունից սարկավագներին շնորհավորում է պ. Արթուն Հատիտյանը, իսկ վանքի պաշտոնեության անունից՝ Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հմայակ Սեդգարյանը։*

*Հոգևոր Ճեմարանի ուսանողության անունից սարկավագների տոնը շնորհավորում է Ա լսարանի ուսանող Բեյրութից նոր ժամանած Միրայր Ճերենճյանը.*

*«Վեհափա՛ռ Տեր և սիրելի՛ սարկավագ եղբայրներ.*

*Այսօրվան հոգեպարար ժամերգությանն ու պատարագին, և հիմա, այս ուրախ մթնոլորտին ներշնչված, վստահ եմ, որ ամեն մարդ կցանկա քանի մը խոսք ըսել մեր սարկավագ եղբայրներուն, անոնց տոնին առթիվ։*

*Այս րոպեին ինծի վիճակվեցավ այդ պատիվը Ճեմարանի ամբողջ աշակերտության կողմէ։ Իմ առաջին խոսքը պիտի ըլլար՝ իմ ավագ եղբայրներուն հիշեցնել շարականի սա խոսքը. «Միր մշակ անպարտելի Կաթողիկէ Եկեղեցւոյս։ Մեր առաջին մաղթանքն այն է, որ Դուք ըլլաք Եկեղեցվո քաջ մշակներ, որուն համար Դուք եկած եք հոս, այս նվիրական սուրբ հարկի տակ։*

*Փոքրիկները միշտ կնային մեծերուն, ուստի մենք, իբրև Ձեր փոքր եղբայրները, վստահ եղեք, որ միշտ Ձեր քայլերուն պիտի հետևինք։ Մեր նվիրվածությունը կախում ունի նաև Ձեր իբրալես քրիստոնյա ապրելու կերպեն և Ձեր քրիստոնեական կյանքեն։*

*Իվ այժմ, այս հանդիսավոր ժամին, կխնդրեմ Աստուծմե, որ Ձեզի տա ուժ, կարողություն և մանավանդ հավատք, որպեսզի դառնաք քաջ մշակներ անպարտելի։*

*Մեր երկրորդ մաղթանքը պիտի ըլլա Վեհափառ Հոր համար, որուն հովանավորությյան տակ կատարվեցավ այս շքեղ տոնակատարությունը։ Ինչպես քիչ առաջ խնդրեցի աղոթքիս մեջ, հիմա ալ կխնդրեմ Աստուծմե, որ Տերը երկար կյանք պարգևե Վեհափառ Հոր, առանց որու, վստահ եմ, որ այսպիսի ուրախ օրեր չէին ստեղծվեր։*

*Ուրեմն, հաջողություն կմաղթեմ Ձեզի, սարկավագ եղբայրներ, Ձեր առաջիկա տարիներու եկեղեցական գործունեության մեջ»։*

*Ճաշկերույթի վերջում, հանուն Մայր Աթոռի սարկավագների, խոսք առավ Ա լսարանի ուսանող բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհրուզյանը.*

*«Վեհափառ Տե՛ր.*

*Թեև դժվար է ինձ համար այս պահուս մըտքերս դասավորել և խոսել, բայց և այնպես ուզում եմ սարկավագ եղբայրներիս կողմից խորին ու խորին շնորհակալություն հայտնել նախ Ձերդ Վեհափառությանը, որ Դուք, չնայած Ձեր հոգնածությանը և զբաղվածությանը, բարեհաճեցիք գալ ու նախագահել մեր սեղանին և բաշխել մեզ Ձեր սուրբ օրհնությունը։ Շնորհակալություն նաև սրբազան հայրերին, միաբան եղբայրներին և բոլոր սեղանակիցներին, որոնք հարգելով մեզ, եկան և բերեցին իրենց հոգերուխ մաղթանքները։*

*Այսօրվա կատարված հանդիսությունը գալիս է մի անգամ ևս ապացուցելու, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ունի մի ավանդապահ ու արթուն Հայրապետ, որը միշտ սովորեցնում է պահել բոլոր հայրենավանդ օրենքներն ու սովորությունները։*

*Այո՛, մենք չպետք է շեղվենք մեր նախնիքների ավանդած սովորություններից և պետք է պինդ պահենք մեր եկեղեցական ավանդությունները, ազգային ու ժողովրդական սովորությունները։*

*Անկեղծությամբ պետք է խոստովանվեմ, որ երբ մենք, սարկավագներս, իմացանք, որ Վեհափառ Հայրապետը կարգադրել է մեծ շուքով և հանդիսավորությամբ տոնել Ս. Ստեփանոսի տոնը, ուրախացանք և հրճվեցինք, և ինչպես տեսնում եք, այսօր չափ ու սահման չկա մեր ուրախությանը։ Ուրախացանք, որովհետև հասկացանք մենք, որ Վեհափառ Հայրապետն ուզում է, ինչպես որ Ս. Ստեփանոսը լցված էր քրիստոնեական հավատով ու զորությամբ և մինչև վերջ մնալով նույն հավատին և տեսակետին, հալածվեց ու քարկոծվեց հանուն այդ սուրբ հավատի, մենք ևս նմանվենք նրան, մենք մեր հոգում մեծ տեղ տանք Ս. Ստեփանոսին, նրա հոգով ոգեորվենք, զորանանք ու առաջնորդվենք, հոգի, որը ցույց է տալիս հավատարմություն, անկեղծություն և սեր։*

*Այսօրվա այս պատիվը, որ տրվեց մեզ սարկավագներիս, ինչո՞վ կարող ենք հատուցել, եթե ոչ ասելով. «Հավատացե՛ք, Վեհափառ Տե՛ր, ինչպես Ս. Ստեփանոսը չշեղվեց Աստուծո ցույց տված ճանապարհից.*

այնպես էլ մենք՝ սարկավագներս, լցված Քրիստոսի սիրով, պետք չէ շեղվենք, հեռանանք նրա ցույց տված, բացած ճանապարհից։ Եվ այս ասում եմ ոչ թե միայն շրթունքներով, այլ սրտի ու հոգու թելադրությամբ. այդ պետք է ցույց տանք մեր հավատով, վարքով, գործով, մեր սիրով և նվիրվածությամբ Հայրենիքին, Եկեղեցուն և հայ ժողովրդի երջանկության շտեմարան, գերագույն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Վեհափառ Տե՛ր, այսօր մենք ամբողջ պատարագի ընթացքում վերացած աղոթում էինք, աղոթում էինք Ձեր արևշատության, գործերի հաջողության, Մայր Աթոռի անսասանության և աշխարհի խաղաղության համար։

Սիրելի սեղանակիցնե՛ր, աղոթում էինք, որ Վեհափառ Հայրապետի այսօրվա տոնի առթիվ մեզ՝ սարկավագներիս ուղղած խոսքը արևի ճառագայթի նման թափանցի մեր մտքի ու սրտի մեջ և մեր հոգիներն էլ ավելի բոցավառվեն ու զորանան, Ս. Ստեփանոսի հոգու նման, քրիստոնեական հավատով, շնորհքով և զորությամբ։

Բարեշնորհ Սարգիս սարկավագի այս շնորհակալական խոսքերից հետո, ծափահարությունների տակ խոսք առավ նաև Վեհափառ Հայրապետը, մի անգամ ևս շեշտեց Ս. Ստեփանոսի տոնի նշանակությունը, նրա նահատակության իմաստը Քրիստոնեական Եկեղեցու համար, հորդորեց սարկավագներին, ճեմարանի ուսանողության՝ իրենց սրտերում վառ պահել մեծ նահատակի պայծառ հիշատակը և ապա օրհնեց բոլորին։

«Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությունից հետո Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջացավ Ս. Ստեփանոսի տոնի հանդիսությունը Մայր Աթոռում։

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

*Հայաստանի Պետական երգեցիկ խումբը մի քանի տասնյակ տարիների պատմություն ունի։ Նա իր կատարողական բարձր արվեստով նվաճել է ոչ միայն Հայաստանի, այլև Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների երաժշտասեր հասարակության սերն ու հարգանքը։*



Հայաստանի Պետական երգեցիկ խումբը

*Այս տարի հունիսին Մոսկվայում հայկական արվեստի և գրականության տասնօրյակի օրերին հայ երգի և երաժշտության նվաճումները ցուցադրելու գործում, Հայաստանի Պետական երգեցիկ խումբը, պ. Արամ Տեր-Հովհաննիսյանի տաղանդավոր ղեկավարությամբ, կարողացավ հայ ժողովրդական երգի և երաժշտության հմայքով մի անգամ ևս թովել Մոսկվայի հայ և օտար երաժշտասեր հասարակության հոգին, և երգի թևերով փոխադրել նրանց Հայաստանի գեղածիծաղ դաշտերն ու արտերը, մեր գովասուն սարերն ու սաղարթախիտ անտառները, պայծառ ու ջինջ քաղաքներն ու գյուղերը։*

*Հայաստանի Պետական երգեցիկ խմբի ղեկավար պ. Ա. Տեր-Հովհաննիսյանը Մոսկվայից վերադառնալուց հետո ձեռնարկեց իր նոր ծրագրի՝ ժողովրդական խմբերգների հետ նաև առաջին անգամ լինելով հայ եկեղեցական երգերի համերգային ներկայացման շնորհակալ աշխատանքներին։ Մեր ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը կապված են եղել իրար։ Մեր եկեղեցական երգերի մեջ էլ հայ ժողովուրդը դրել է իր սիրտը, հավատը, ապագա լավագույն կյանքի իր երազը, իր վիշտը, իր բողոքը։ Հայ ժողովրդական և հոգևոր երգերը բխում են նույն ակունքից՝ հայ ժողովրդի սրտի*

խորքից, հոգու, ձգտումներից և հույզերից։ Նույն ժողովուրդն է ստեղծագործել թե՛ մեր գեղջուկ երգերը և թե՛ մեր հոգևոր բանաստեղծության սքանչելի նմուշները, որոնք իրենց գեղարվեստական բարձր արժեքով պատվավոր տեղ են գրավում համաշխարհային կրոնական երաժշտության պատմության մեջ։

Երկար ամիսների պատրաստության և լարված աշխատանքներից հետո, պ. Ա. Տեր-Հովհաննիսյանին հաջողվեց Երևանի Հայկական Ֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տալ առաջին եկեղեցական համերգը, որն արժանացավ ջերմ ընդունելության երաժշտասեր հասարակության կողմից։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի հրավերով և նախագահությամբ, Հայաստանի Պետական երգեցիկ խումբը, նոյեմբերի 15-ին, երեկոյան ունեցավ այս անգամ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դահլիճում Մայր Աթոռի միաբանության, Ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության և վանքի պաշտոնեության համար։

Երգեցիկ խումբը պ. Ա. Տեր-Հովհաննիսյանի ղեկավարությամբ համերգի առաջին մասում կատարեց ժողովրդական երգեր անմահ Կոմիտաս վարդապետի և Կարա-Մուրզայի երաժշտական ստեղծագործություններից։ Երգեցիկ խումբը մեծ հաջողությամբ կատարեց Կոմիտաս վարդապետի «Նուռն տառս և «Գնա, գնա», «Սարերի վրով գնաց» և «Էս գիշեր լուսը տեսա», «Փեսին գովքը», «Անչո՞ւ Բինգյոլը մտար», «Կուժանի երգը» ստեղծագործությունները, իսկ Կարա-Մուրզայի «Էսպս լինի», «Զինչ ու զինչ տամ», «Այլայլա» երգերը։

Համերգի երկրորդ մասում, խմբերգային արվեստի վարպետ պ. Արամ Տեր-Հովհաննիսյանի նոր մեկնաբանությամբ, Հայաստանի Պետական երգեցիկ խումբը դահլիճում հնչեցրեց, վեհ ու հանդիսավոր, հայ եկեղեցական երաժշտության հիասքանչ նմուշները՝ մեծ երաժիշտ Մակար Եկմալյանի «Հայր մեր», «Գովեա Երուսաղէմ», «Ցամենայնի», «Իշխանութիւնք» և «Սուրբ, Սուրբ», «Միայն Սուրբ» և «Ամէն. Հայր Սուրբ», և ապա Կոմիտաս վարդապետի «Ո՞վ զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական», «Տէր, ողորմեա» և «Հայր մեր» հոգևոր ստեղծագործությունները։

Համերգի տպավորությունը ավելի քան խանդավառ էր, ոգևորիչ, հոգեկան բավարարության զգացմունքով հագեցած։

Համերգի վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Պետական երգեցիկ խմբին, որոնց խմբի անդամներին, ղեկավարին, և բոլորին մաղթեց նորանոր հաջողություններ հայ երգի և երաժշտության բարձրացման բնագավառում։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ



# ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՌԱՖՖԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Աշխարհահռչակ դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը Մայր Հայրենիք էր ժամանել Վեհափառ Հայրապետի գովելի նախաձեռնությամբ և հրավերով։ Հայրենիք ժամանելուց հետո տաղանդավոր արվեստագետը իր համերգների նախօրյակին և թե այլ առիթներով հաճախ եղավ Վեհափառ Հայրապետի մոտ։ Այս այցելությունները միշտ էլ անցնում էին ջերմ ու խանդավառ մթնոլորտում և սրտագին զրույցներով։ Առանձնապես հիշատակության արժանի է Վեհարանում տեղի ունեցած նոյեմբերի 21-ի հանդիպումը։ Այդ հանդիպման ներկա էին դաշնակահարի հարգելի տիկինը, ծերունազարդ տատիկը (հանգուցյալ ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի այրին), ականավոր հայ երգահաններ Աշոտ Սաթյանը, Արնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը և ուրիշներ։ Նորին Ս. Օծությունը Վեհափառ Հայրապետը մտերմիկ խոսակցություններ և զրույցներ ունեցավ մեծանուն արվեստագետների հետ, ընդհանրապես երաժշտական աշխարհի և հայ երաժշտության, և մասնավորապես հայ եկեղեցական երաժշտության վերաբերյալ։ Երաժշտական զրույցի ժամանակ բոլոր արվեստագետներն էլ նշեցին մեր եկեղեցական երգերի վեհությունը և բարձր արվեստը։ Առանձնապես հուզիչ էր լսել Ռ. Պետրոսյանի շնորհակալական խոսքը ուղղված Վեհափառ Հայրապետի իրեն շնորհած Մայր Հայրենիքում հանդես գալու երջանիկ պատեհության համար։ Տաղանդավոր արվեստագետը այնքան էր հուզված, որ նա չկարողացավ ավարտել իր երախտագիտական խոսքը և բարձրաձայն արտասվեց... Նրա վարակիչ արտասուքը համակեց բոլորին։

Վեհափառ Հայրապետն էլ խորապես զգացված էր այնքան ջերմորեն արտահայտված զգացմունքներից։ Նա խոսեց նույնպիսի հուզմունքով։ Հաճելի էր միաժամանակ նկատել Վեհափառ Հայրապետի հոգեկան գոհունակությունն իր ժողովրդի տարագիր ռալց տաղանդավոր որդիներից մեկին իր բարձր արվեստը Հայրենիք բերելու և հարազատ ժողովրդին մատուցելու հնարավորություն տված լինելու առթիվ։ Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը, ինչպես միշտ, այսօր էլ շեշտեց, որ Ինքը քաջալերում ու սիրում է «իրավ» արվեստը, որը ժողովրդի հոգեկան կարողության և մշակութային արժանիքների ճշմարիտ արտահայտությունն է։ Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը Ռ. Պետրոսյանին բարեմաղթեց հաջողություններ իր այնքան սպասված համերգների ընթացքում։

Հարգելի հյուրերը հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից, իրենց իսկ վկայությամբ՝ խորունկ տպավորություններով, անմոռանալի հուշերով լիցքավորված ու հարստացած։

Հաջորդ օրն իսկ, նոյեմբերի 22-ին Երևանում սկսվեց Ռ. Պետրոսյանի փոթորկոտ համերգների շրջանը, որն ունեցավ արտակարգ հաջողություն։ Տաղանդավոր դաշնակահարը ամենախստապահանջ երաժշտագետներին իսկ հիացրեց իր երաժշտական տաղանդով, կատարողական բարձր արվեստով։ Շատերի համար ամենայն պարզությամբ հասկանալի դարձավ Բելգիայից մինչև Հարավային Ամերիկա, Հնդկաստանից մինչև Հյուսիսային Ամերիկա նրա արձանագրած համերգային հաղթանակների գաղտնիքը։

կատարողական անթերի վարպետությամբ, զարմանալիորեն զգայուն և նուրբ երաժշտականությամբ, որովհետ այնպիսի ներդաշնակ մի միասնություն են ստեղծում նրա նվագի մեջ, որ յուրահատուկ գրավչական է հանդիսանում նրա համերգների անընդմեջ հաջողության։ Պետրոսյանի նվագը հագեցված է մարդկային ամենանուրբ զգացմունքներով, դյուրազգաց հոգու քնարերգական զեղումներով ու քաղցրությամբ։

Խստապահանջ երաժշտագետների և երաժշտասեր հասարակայնության գնահատությամբ, Պետրոսյանի բազմիցս հանդես գալը Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում՝ մշակութային նշանակալից երևույթ էր։

Նրա համերգները փայլուն հաջողություններ արձանագրեցին նաև Թբիլիսիում։

Ռ. Պետրոսյանը նախքան իր վերադարձը Փարիզ, վերջին անգամ եղավ նորից Վեհափառ Հայրապետի մոտ, ստանալով Նրա օրհնությունը։ Տաղանդավոր ջութակահարը եղավ նաև Մայր Տաճար, աղոթք ասաց իր պապերի դարավոր խորանների առաջ ու մեկնեց՝ զարդարված իր ժողովրդի և Հայրենիքի սիրով և զգացմունքներով և նախնիների լույս հավատով։

Բարի ճանապա՜րհ, ենք մաղթում սիրելի արվեստագետին և հետագա նորանոր հաջողություններ ցանկանում նրան։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՇՃՅԱՆ

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

# ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ*

*Մելիտինեից Մեսրոպ Դերջանի Գինդ (ըստ Խորենացու Գնիթ) եպիսկոպոսին և մի քանի աշակերտների հետ առնելով դիմում է Գոլիս. կամ ըստ Խորենացու՝ Անատոլիոս սպարապետը Մեսրոպին ու Վարդան Մամիկոնյանին հանձնելով Դերջանի Գնիթ եպիսկոպոսին՝ պատվով ուղարկում է նրանց Գոլիս. «Տայ ցեպիսկոպոսն Դերջանու ցԳնիթ, և բարեփառութեամբ վնասս յուղարկէ»։*

*Մեսրոպի և իր ուղեկիցների ճանապարհորդական ծախսը վճարվում է կայսերական գանձից, ինչ որ մեծ պատվի նշան էր։ Այսպես պետք է հասկանալ Կորյունի «և եկեալ յանարգուսն դիմոսականս» բացատրությունը, որ պետք է ուղղել «և եկեալ յարքունեայն դիմոսականս», վերջին բառով հասկանալով պետական դրամ, ինչք. ծախսս. հմմտ. հուն. δημόσιος «կառավարական ծախսով» (ավելի ընդարձակ տե՛ս իմ «Արմատական բառարան»-ում դիմոս և դիմոսական բառերը)։ Ըստ այսմ անճիշտ եմ համարում Ցնորդյանի մեկնությունը (Կորյուն, էջ 35, ծան 532) իբր անարի «ռուկար, խեղճ, ռամիկ» և դիմոսական «ժողովուրդ»։ Նախ որ անարի բառը ոսկեդարյան չէ. երկրորդ՝ յանարուրդ բացառականը ո՞ր բառին է պատկանում. երրորդ՝ ի՞նչ է նշանակում «ռամիկ ժողովուրդը եկելով»[1]։*

*Մեսրոպի ճանապարհորդությունը եղավ ցամաքով՝ Փոքր-Ասիայից, ինչպես որ վերադարձի ժամանակ հատկապես հիշվում է, Ամեն տեղ մեծամեծ պատիվներ տեսավ Մեսրոպ, մինչև հասավ Կոստանդնուպոլիս՝ կայսերական մայրաքաղաքը։*

*Իսկույն լուր տրվեց արքունիք, թե Մեսրոպ իր աշակերտների հետ Հայաստանից ժամանել է. ընդունելություն նշանակվեց և Մեսրոպ ներկայացավ պալատ՝ Թեոդոս կայսեր, պալատական Ատտիկոս եպիսկոպոսին (պատրիարքին) և իշխաններին. «Զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն, և մտեալ առաջի պատուական աթոռոյն յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և Հայրապետին, որրոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին» (Կորյուն, էջ 17)։ Կայսրը հրամայեց Մեսրոպին մի ժամանակ մնալ մայրաքաղաքում, մինչև որ հարկավոր խորհրդակցությունները կատարվեին։ Զատկի մոտերն էր. Մեսրոպ մեծամեծ պատիվներ տեսավ եկեղեցուց, արքունիքից և քաղաքի նշանավոր իշխաններից։*

*Զատկից հետո խորհրդակցությունները վերջանալով, շնորհվեց կայսերական հրովարտակը, որով ըստ Խորենացու՝ նախ Մեսրոպին շնորհվում էր ակումիտ և եկկլեսիաստիկոս տիտղոսները։ Սրանցից առաջինը (հուն. ἀκοίμητος) նշանակում է անքուն (այսինքն անդադար աշխատող), իսկ երկրորդը (հուն. Ἐκκλησιαστικός) քարոզիչ, [illegible], երկուսն էլ տրվում էին նշանավոր և գործունյա կրոնավորներին։ Թեև ակումիտ տիտղոսի շնորհումը ըստ Կորյունի կատարվեց Հայաստանից մեկնելուց առաջ (և եկկլեսիաստիկոս տիտղոսն էլ անծանոթ է Կորյունին), բայց երևի պաշտոնական բաշխումը տեղի ունեցավ այս հրովարտակով.*

---

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № XI-ից, XII-ից, 1955 թվականի № № I-ից, II-ից, III-ից, IV-ից, IX-ից և 1956 թվականի № № I-ից, II-ից, IV—V-ից և VIII—IX-ից։

1. Թորոսյան, «Բազմավէպ», 1932 թ., էջ 7. Նույն «և եկեալ դիմոսականս» բառերը ուղղում է «և եկեալ ի Հռոմ՝ ի դեսպանս արքունականս», կամ «և կարգեալ դեսպանաց արքունականս», իսկ Աճէնյան («Հանդէս ամսօրեայ», 1935 թ., էջ 532)՝ «և եկեալ յԱնտիոք ի դեսպանս»։

Ակումբիտ տիտղոսի գործածության մասին խոսում են Ադոնց («Հանդէս ամսօրեայ», 1927 թ., էջ 400), Յևագրյան (Կորյուն, էջ 35) և Թորոսյան («Բազմավէպ», 1931 թ., էջ 471)։ Վերջինս մանրամասն պատմելով ակումիտ տիտղոսի ծագումը, ցույց է տալիս, որ դա գործածության մեջ սկսեց մտնել 441 թվից, և նույնիսկ եթե ընդունենք մի պահ, որ Մեսրոպի ժամանակ գործածական էր այն, հասարակ «ճգնավոր»-ից բարձր նշանակություն չունի և չի գործածվում իբր բարձր եկեղեցական տիտղոս։ Այս և այլ պատճառներ էլ ի նկատի ունենալով՝ կարծում է Թորոսյան, որ Կորյունի հիշյալ բառը սխալման արգասիք է և նույն տեղը պետք է ուղղել «վայելուչ մեծարանօք զսուրբն յա[illegible] յաղա[illegible]»։ Իսկ Peeters („Revue des études arméniennes», № 9, էջ 211) կարծում է, թե կայսրը Մեսրոպին և իր խումբը ուղարկեց Ակումբիտների վանքը՝ բնակության համար։ Այս վանքը նշանավոր էր իր բազմալեզու միաբաններով, և եթե չկային այնտեղ հայ միաբաններ, անշուշտ ասորիներ կլինեին։ Ստեփան Նազարյանն էլ («Հյուսիսափայլ», 1860 թ., էջ 246) ակումիտ բառը սրբագրում է ἐγχώριος «երկրացի մարդ, բնական», որ սակայն ոչինչ արժեք չունի։

6-րդ դարում ծագեց Ակումբիտ աղանդը, որի մասին Փափազյանի մոտ («Պատմ. եկեղ.», էջ 286) կարդում ենք. «Ընդ այն ժամանակս ծագեցաւ և մոլորութիւն Ակումբիտ կամ Անհանգիստ անուանեալ միայնակեցաց, որք յերիս դասս բաժանեալ՝ կարգաւ միմեանց զկնի զախ և զգիշեր անընդհատ հսկէին յօրհնութիւնս և ի փառաբանութիւնս Աստուծոյ։ Սակայն անկան ապա ի զմպատեհ և յանդգնեցին մոլորութիւնս, զի ոչ կամէին լսել և կամ դաւանել, թէ մի յԱնձանց Երրորդութեան մարմնացեալ իցէ, ծնեալ ի կուսէ և չարչարեալ»։

Անցնելով Եկղեսիաստիկոս բառին՝ Թորոսյան («Բազմավէպ», 1932 թ., էջ 9) գըտնում է, որ այս բառը նշանակում է պարզապես «եկեղեցական կամ ժողովական» և չի գործածվում իբրև տիտղոս։ Նա գտնում է, որ բառը պետք է ուղղել Եկղեսիկտիկոս, որ է հունարեն Ἐκκλησιαστικός: Սա բյուզանդական հունաց մեջ եկեղեցական աստիճան էր, որի պաշտոնն էր «1. Պաշտպան եկեղեցական իրավանց և կրոնի վարդապետության, հսկող եկեղեցական գանձերի և վանքերի կարգապահության, 2. Դատավոր խաղաղության կամ հաշտության՝ կրոնական վեճերի և խնդիրների մեջ»։ Այս տիտղոսը տրվում էր սըրբությամբ և իմաստությամբ օժտված նշանավոր եկեղեցականներին։ Այս տիտղոսը իրոք որ հարմար էր Մեսրոպին և անշուշտ Խորենացու մեջ նախապես այդպես էր գրված և հետո անծանոթ լինելու պատճառով ձևափոխվել և դարձել Եկղեսիաստիկոս, որ շատ ավելի գործածական և ծանոթ բառ էր։

Ավելի մեծ պատիվներ է տալիս Թովմա Արծրունին. «Կարգէ զսուրբ վարդապետն ընդ վարդապետութեան աթոռակալութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի և բազում և գլխաւոր վարդապետացն» (էջ 72)։ Կամ ավելի խոշոր բառերով՝ բառ Կիրակոս Գանձակեցու՝ «Նաև պատրիարքն Ատտիկոս և ամենայն ուխտ եկեղեցւոյն հանդերձ թագաւորաւն դրեցին զՄեսրոպ ընդ առաջին վարդապետս եկեղեցւոյ, ընդ Աթանասի և Գրիգորեանս, ընդ Բարսեղի և ընդ Յոհաննու Ոսկեբերանի» (էջ 18)։

Տիտղոսների բաշխումից հետո՝ բարձրագույնս հրամայվում էր արտոնել Մեսրոպի գործունեությունը Հունահայաստանում, թույլ տալ, որ հավաքի աշակերտներ, բաց անի դպրոցներ, հայերենի ուսումը տարածի, եկեղեցիներ հիմնի և այլն։ Հրամայվեց նաև, որ հունահայ դպրոցներում աշակերտների սննդի ծախսը վճարվի պետական հաշվով։

Այս բոլորից դուրս, Մեսրոպ պարտավոր էր հալածանք հանել բորբորիանոս կոչված աղանդավորների դեմ, որոնք սկսած էին տարածվել նաև Հայաստանի, և մասնավորապես Հունահայաստանի մեջ։

§ 5

Խորենացին պատմում է, թե Մեսրոպ ստացավ նաև երկու նամակ, մեկը Թեոդորոս կայսրից և մյուսը Ատտիկոս պատրիարքից։ Երկուսն էլ Սահակ կաթողիկոսի հասցեին։ Ահա այս նամակները.

Նամակ Ա

Թուղթ Թէոդոսի առ Սահակ

Ինքնակալ Թէոդոս Աւգոստոս և կայսր Հռովմայեցւոց, մեծի Սահակայ եպիսկոպոսի խնդալ։

Հրամայեալ մեր տեսանել զթուղթս, վերահասու եղաք գրելոցս առ ի քէն. և մեղադրեցաք յոյժ, զի ամենայն սրտիւ միտեցար զհետ հեթանոս թագաւորի, և մեզ և ոչ թղթով բաւականացար ծանօթանալ։ Նւ առաւել յոյժ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարս, որ ի մերում քաղաքիս, յԱսորեաց ոմանց խնդրէիր զիմաստից գիւտս։ Վասն որոյ հանեալ էաք ընդ մերով ծառայիւքդ արհամարհել զայդպիսի ուսմամբդ. բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, թէ կատարումն արուեստից ի շնորհաց վերնոյն եղև, գրեցաք զի ամենայն փութով ուսցին. և զքեզ պա-

տուով ընկալցին, որպէս զարդարև վարդապետ իւրեանց, ՚անգոյն արքեպիսկոպոսին Կեսարու, և դարմանք և ծախք յարքունուստ եղիցին։ Եւ հրամայեցաք քաղաք շինել յաշխարհիդ Հայոց՝ յապաւինութիւն ձեզ և մերոց զօրաց։ Եւ վասն քո արարաք ստրատելատ զՎարդան որդի որդիացելոյ քո, և յառաջին վարդապետսն գրեցաք զՄեսրոպ։ Ողջ լեր։

## Նամակ Բ

### Թուղթ Ատտիկայ առ Սահակ

*Ատտիկոս ինքնագլուխ եպիսկոպոս Կոստանդնուպոլսի, եղբօր սիրելւոյ աթոռակցի՝ Սահակայ եպիսկոպոսի Հայոց ի Տէր խնդալ։*

*Բազում գոհութիւն Աստուծոյ մատուցանեմք յաղագս քո բարեհամբաւութեանդ ի մէջ այդպիսի բարբարոս ազգի. այլ ապաստ ի մեղադրանաց ոչ թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զսիրելութիւն Գրիգորի և Ներսիսի երանելեաց քոց հարց։ Եւ առաւել ընդ այս զարմանամք, եթէ զիա՞րդ թողեր զաղբիւրն եկեղեցւոյ զհայր մեր սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ ռովաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի. ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա։ Եւ ձեր զանց զնովաւ արարեալ, կամեցայք ի սահմանական ջրոց զփափագ ծարաւոյն յագեցուցանել. մինչև Ամենակալին տեսեալ զանոսի աշխատութիւնն, բղխեաց ի ձեզ զշնորհս Հոգւոյն, ընդ որ այժմ ուրախ եմք։ Իսկ արդ հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի առեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր, և ազանգոյդ բորբորիտոնաց՝ կամ հաւանել, և կամ հալածել ի բումմէ վիճակէդ։ Եւ զառաքեալս ի քէն զՄեսրոպ ձեռնադրեցաք լինել եկղեսիաստիկոս։*

Խորենացու մեջ բերած հիշյալ երկու նամակները իրականության մեջ ամենևին չէին կարող գոյություն ունենալ և են միմիայն արդյունք երևակայության։ Այս ո՛չ թե միայն այն պատճառով, որ Կորյուն չի հիշում դրանք, կամ թե Խորենացին չէր կարող դրանք ձեռք բերել, այլ մանավանդ այն պատճառով, որ նրանց պարունակությունը հակառակ է պատմության։ Նամակները պատմում են, թե Մեսրոպ գրերի գյուտը հաջողեցնելու համար դիմեց զանազան ասորիների, և երբ նրանցից օգուտ չտեսավ, Աստված հրաշքով հայտնեց այդ գրերը։ Բայց այս պատմությունը, ինչպես արդեն գիտենք, Խորենացու հնարածն է։ Մեսրոպ չդիմեց զանազան ասորիների, այլ ինքը՝ իր աշակերտների հետ աշխատեց Եդեսիայում, և երբ կարիք զգաց դիմելու մի գեղագրի, ընդհակառակը զգուշացավ մի ասորու դիմելուց և հույն Հռոփանոսին դիմեց։ Հայերեն գրերը համարել հրաշքի կամ աստվածային հայտնության արդյունք՝ նույնպես Խորենացու հնարածն է։ Իրականությունը այն է, որ Մեսրոպ իր սեփական աշխատանքով հնարեց տառերը։ Ցավալի է, որ Տաղավարյան էլ (էջ 36) իբր ստույգ է ընդունում այս նամակները և դրանցից պատշաճ եզրակացություն հանում։ Իբր թե երբ Սահակ ու Մեսրոպ անցան Հունահայաստան՝ հայերեն գրերը տարածելու և հույները արգելեցին, այդ նրանից էր, որ կարծում էին, թե հայերեն տառերը ասորերեն այբուբենից են կազմված և ո՛չ թե հունականից։ Իսկ երբ լսեցին, թե աստվածային հայտնությամբ է տրված, իսկույն թույլատրեցին!!!։

Ատտիկոս պատրիարքը չէր կարող գրել Սահակին, թե բորբորիտոնների աղանդին «կա՛մ հավանիր և կամ հալածիր». եթե ինքը Ատտիկոս հակառակ էր այս աղանդին (և գիտենք, որ շատ հակառակ էր), անպատճառ պիտի գրեր հալածել, և երբեք հարաբերություն չունենալ նրանց հետ։ Գալով ժամանակի ոճին, Խորենացին դիտմամբ տվել է այդպիսի անքաղաքավար և արհամարհոտ գույն, որպեսզի հունական գոռոզության հետ պատշաճեցնելով՝ կեղծությունը ծածկի և ընթերցողին բնական ցույց տա։ Բայց հազիվ թե Թեոդոս, մանավանդ Ատտիկոս այդպիսի անվայել լեզու բանեցնեին այնպիսի մի բարձրաստիճան հայրապետի հետ, որ իրենց իշխանության տակ չէր և որի բարեկամությունը պիտի փնտրեին՝ իբրև հարևան քրիստոնյա մի մեծ ազգի հոգևոր պետի։ Ուրիշ նամակներ էլ ունենք Սահակին և Մեսրոպին ուղղված՝ հույն հոգևոր իշխանություններից, ոսկեդարյան հայերեն թարգմանությամբ (և ոչ թե Խորենացու լեզվով). այս անգամ հարազատ և վավերական, և այնտեղ տեսնվում է, թե ինչպիսի՜ պատկառելի վերաբերմունք է ցույց արվում այդ երկու մեծ անձնավորություններին։

Ասենք վերջապես, որ Վարդան Մամիկոնյանի ուղեկցությունը և այս առթիվ կայսրից ստացած ստրատելատության պաշտոնը բոլորովին ենթադրական է։ Խորենացին արել է այս բանը՝ բարձրացնելու համար Մամիկոնյանի աստիճանը. բայց Կորյունի պատմությունը ցույց է տալիս, որ Վարդան դեռ մինչև Սահակի մահը (438 թ.) չուներ այնպիսի նշանավոր աստիճան, ինչպես է ստրատելատությունը կամ ընդհանուր զորավարությունը, որ Սահակի մահից հետո ստացավ։ Եթե Վարդան ունենար այսպիսի բարձր մի պաշտոն և այն էլ ստացած հունաց կայսրից՝ Մեսրոպի հետ ուղեկցության ժամանակ, անկարելի էր, որ Կորյուն լռության մատներ ու չհիշա-

տակեր։ Կորյուն երկու անգամ առիթ է ունեցել ճշտիվ նշանակելու Վարդանի անձը. բայց ինչպե՞ս համեմատ կերպով։ Այսպես էջ 13՝ «Եւասել երանելոյն Սահակայ զՄամիկոնեան որեարն՝ ի վարժս վարդապետութեանն պարապեցուցեալ, որոյ տոհմին Վարդան անուն էր», որ և Վարդկան կոչէր։ Իսկ եթե այս համաձայն Վարդանի աշակերտության է վերաբերում, ահավասիկ մի ապիկը, երբ արդեն վաղուց Վարդան սպարապետության բարձրացած պիտի լիներ՝ բան Կորյունը։ «Հանդերձ աստուածասէր իշխանակիւք մերով, որ անուանեալ կոչէր Դատար, որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոյն յիշեցաք» (Կորյուն, էջ 25)։ Այս երկու համեմատներից պարզ է, որ դեռ մինչև Սահակի վախճանը Վարդան հասած չէր այդ պաշտոնին. ուստի և Կորյունի գրածը սխալ ենթադրության վրա է հիմնված միայն։

Տաքադալյան, իր Քննական պատմության մեջ (հատ. Գ, էջ 219) բննության ենթարկելով այս նամակները, հասնում է նույն եզրակացության։ Նա նկատում է, թե Թեոդոս կայսեր մեղադրանքները (թե ինչո՞ւ Սահակ մոռացել է ատրիններին և նույնիսկ մի թղթիկ չի գրել, թե ինչո՞ւ արհամարհել է Պոլսի իմաստուններին, որի համար կայսրն էլ իրավունք պիտի ունենար հրամայելու, որ հունահայերը արհամարհեին այդ գրերը, բայց որովհետև Աստուծու հրաշքով են գտնվել նրանք, ուստի ներելի է սովորել և այլն) չունեին ամենևին նշանակություն ի բերան Թէոդոսի։ Ավելի անտեղի են Ատտիկոսի խոսքերը Հովհան Ոսկեբերանի մասին։ Ատտիկոսը հայ էր, Սեբաստիա քաղաքից։ Ծնաց Պոլիս և կրոնական բարձր աստիճանի հասավ։ Նա հակառակորդ և թշնամի էր Հովհան Ոսկեբերանին, որին աքսորել տալով խլեց ձեռքից պատրիարքական աթոռը։ Ինչպե՞ս կարող էր այս մարդը ասել Ոսկեբերանի համար, թե «զի՞արդ թողեր զարդիւրն եկեղեցւոյ մերոյ սուրբ Յովհաննէս, որ ոչ միայն տիեզերական մայրաքաղաքիս, այլ սակաւ և ամենայն քրիստոնեայք և ընդհանուր աշխարհ ի նմանէ վարդապետեալ ուսանի. ուստի և Ոսկի բերան կոչեցին զնա»։ Այս խոսքերը կարող էր ասել ոչ թե իր անմիջական հաջորդն ու հակառակորդը, այլ շատ հետո մի մարդ, որի ժամանակ Ոսկեբերանը արդեն Հույն եկեղեցու սրբերի կարգն էր դասված։ Այս բանը տեղի ունեցավ 431 թվին, Պրոկղ պատրիարքի ձեռքով, որ նրա աշակերտ էր և վեցերորդ հաջորդը. նա էր, որ աքսորում չարաչար նեղությամբ մեռած Ոսկեբերանին մեծ պատվով փոխադրել տվեց Պոլիս (ընդարձակ տե՛ս Ալիշանի «Յուշիկք», հատ. Բ, էջ 96)։

## § 6

Մեսրոպ ստանալով կայսերական հրովարտակը, հրաժեշտի ողջույնը տվավ Թագավորին, պատրիարքին, եկեղեցականներին ու իշխաններին, և բոլոր իր ուղեկիցների հետ բարձրանալով կայսեր կողմից շնորհված արքունական կառքերը, ճանապարհ ընկավ դեպի Հունահայաստան։ Կորյուն պատմում է, թե Մեսրոպի վերադարձը ավելի մեծ շքով եղավ։ Նրանք բռնեցին արքունական մեծ պողոտան, որ այժմյա Սկյուտարի կամ Քաղկեդոնի (Դադրեյոց) կողմերից սկսելով՝ տանում էր մինչև Հայաստան։ Ճանապարհի վրա գտնված բոլոր քաղաքները հանդիպեց Մեսրոպ և ամեն տեղ գտավ փառավոր ընդունելություն, մինչև հասավ Անտիոք և ներկայացավ Արևելքի սպարապետ Անատոլիոսին, որին ներկայացրեց կայսերական տակերը (արքունի սրբազան հրովարտակը)։ Սպարապետը Մեսրոպի ձեռքով ընդունելով այդ հրովարտակը, իսկույն ձեռնարկեց կայսերական հրամանները գործադրելու։ Անմիջապես պատգամավորներ ուղարկեց Հունահայաստանի բոլոր գավառները, հրամայեց հավաքել հայ մանուկներ և տեղավորել նրանց զանազան հարմար վայրերում։ Բոլորի համար նշանակվեց ռոճիկ՝ արքունի հաշվով։ Մեսրոպ սկսեց ման գալ այդ քաղաքները, քարոզել, ուսուցանել և իրեն հանձնված աշակերտներին կրթել հայերենի ուսման մեջ։

Այնուհետև Մեսրոպ սկսեց քննել բորբորիտոնների աղանդը։ Նախ տեսնենք, թե ի՞նչ աղանդ է սա։

Չամչյան (հատ. Ա, էջ 765) ենթադրում է, թե բորբորիտոնները Լուսավորչի ժամանակից Հայաստանում մնացած օտարազգի և ոչ հայ կռապաշտներ էին, որոնց հետ հետո խառնվել էին նաև սակավաթիվ հայեր։ Այս աղանդավորները պաշտում էին տարրերը, ոմանք էլ արեգակը, և զրադաշտական մոգերից փոխառություններ էին կատարած. այս պատճառով էլ կոչվեցին Արևորդիք։

Ըստ Ի. Հարությունյանի (էջ 194) բորբորիտոնները գնոստիկական հերետիկոսների ամենաատելի աղանդավորներն էին։

Օրմանյան (Ազգապատում, էջ 297) համարում է, որ նույն էին նրանք, ինչ որ այլապես կոչված Մծղնեայք, հունարեն Եվխետյան կամ Մեսալյան։ Այս աղանդը ծագել է Ասորիքից։ Նրանք ամեն ծես ու պաշտամունք ավելորդ էին համարում և մեղքերի թողության համար մի աղոթք բավական էին համարում։ Ուղղափառները ասում էին նաև, թե նրանք ամեն տեսակ բռնություն, հափշտակություն և անիրավություն համարձակ գործում էին և հասարակ եղեռնագործի կերպարանք ստանում։

Կոնիբիր Հայագետը, իր «The Armenian church» աշխատության մեջ գտնում է, որ դրանք նեստորականներ էին։ Ֆնտգլյան (Կորյուն, էջ ԻԲ—ԻԱ) ավելի ընդարձակ քննելով այս խնդիրը, գտնում է, որ սխալ է Կոնիբիրի կարծիքը։ Նեստորականությունը գլուխ բարձրացրեց, երբ Նեստոր Պոլսի պատրիարքական աթոռը բարձրացավ (428 թ.)։ Իսկ 422—423 թվերին, երբ Մեսրոպ Պոլիս էր գնացել, դեռ այս աղանդը բորբոքված չէր։ Այս միջոցին հուզվող աղանդներն էին Արիոսականություն, Հոգեմարտություն, Պեղագյանները, Մանիքեականները և Փոտինյանները։ Արդարև Կորյուն խոսում է նեստորական աղանդի տարածման մասին էլ Հայաստանում, բայց բավական հետո, Սահակի մահից քիչ առաջ, շուրջ 435-ին։ Եթե այս վերջինը նույն լինեն առաջինի հետ, Կորյուն նեստորականների վրա երկրորդ անգամ խոսելիս անշուշտ «դոր ի վերնոյն յիշեցար» ասելու էր, ըստ իր սովորության (Ֆնտգլյան, էջ ԻԱ)։

Կորյուն խոսելով բարբարիանոսների մասին, կոչում է նրանց «դժպատեհ, կամակոր և ժանտագործ»։ Վերջին բառով Ֆնտգլյան հասկանում է «պղծագործ, պոռնկական», որի համար իբրև ապացույց է բերում հետևյալ վկայությունները.— Զժանդագործին Բահարու գիրքընկալութիւն յուտեացն (Կորյուն, էջ 9, տպ. 1894 թ., ասում է պոռնիկ Բահարի մասին). ժանդագործ երկիրն Սոդոմացւոց. Ագաթ., էջ 226. Յոչնչէ կարող էր առնել զլուսաւորսն... և ոչ ի ժանդագործութենէ (Եղնիկ, պատմելուց հետո, թե լուսավորները «ի մայրենի և ի բնական առականաց արարան»)։ Արդ՝ այս ժանդագործ, պղծագործ կամ պոռնկական ածականը տրվում է նաև մանիքեցիներին, ուստի Կորյունի բարբարիանոսները մանիքեցիներն են ըստ Ֆնտգլյանի, և կամ ըստ Մինգանա ասորագետի burburiani կոչված սակավածանոթ աղանդը՝ որ Վերին Միջագետք և այստեղից էլ Հայաստան տարածված էր և որի դեմ մի քանի տեղ գրել է Եփրեմ (տե՛ս Ֆնտգլյան, էջ 38)։

Լավագույն բացատրությունը տալիս է Թոփուզյան («Բազմավէպ», 1932 թ., էջ 7)։ Աղանդը կոչվում է borborianos կամ borboros (հունարեն βόρβορος՝ տիղմ, ցեխ բառից՝ իբր «տղմային, պղծագործ»)։ Այս աղանդը ծագել է առաջին դարի վերջերից. Հինգերորդ դարի սկիզբը այնքան աճել ու ծավալվել է Բյուզանդիոնում և շրջակայքում, և այնպիսի ահռելի քանդում ու ավերում է հասցրել բնակիչների մեջ, որ ժողովուրդը զզված ու վայրացած՝ բուռն բողոքներ է հասցրել մինչև կայսերական գահը։ Սրա վրա դուրս է եկել կայսերական խիստ հրաման՝ բնաջինջ անելու և պետության սահմաններից դուրս վտարելու նույն աղանդի հետևորդներին։ Նրանք էլ վտարվելով երկրից՝ անցան Եգիպտոս, Ասորիք, Միջագետք, Հայաստան և այլն։ Այս բանը պատահեց հենց Մեսրոպի ուղևորության միջոցին դեպի Պոլիս, որով և եղավ կայսերական պատշաճ կարգադրություն՝ հալածելու բորբորիանոսներին Հայաստանից։

Երբ Կորյուն ասում է սկսեց «քննել» աղանդը, պետք է հասկանալ անշուշտ, թե նա կանչեց մի առ մի այդ աղանդի հետևորդներին և նրանց քարոզիչներին, հարցափորձեց, թե իրոք հետևո՞ւմ են այդ աղանդին և որքան կարող էր ջանաց համոզելու և ուղղափառ քրիստոնեական վարդապետության դարձնելու։ Իսկ երբ անկարելի եղավ համոզել, ըստ Կորյունի «իբրև ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ», այն ժամանակ ձեռք առավ այն բռնի միջոցները, որոնք սովորական էին այն ժամանակ հերձվածողների դեմ հարուցված հալածանքների մեջ, այն է բանտարկություն, տանջանքներ, գելարաններ և ծեծ. «Առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ զաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, ի գելարանս» (Կորյուն, էջ 18)։ Իսկ երբ այս պատիժներն ու տանջանքներն էլ օգուտ չունեցան և հերձվածողները անխախտ մնացին իրենց համոզմունքի մեջ, Մեսրոպ՝ իհարկե քաղաքական իշխանության ձեռքով, դիմեց ավելի ծանր միջոցների. չարդում էին հերձվածողի այս կամ այն անդամը, դաղում էին ճակատը, մրում և այսպես խարանած դուրս էին վտարում երկրի սահմաններից (աքսորում). «իսկ յորժամ այնու ևս պակասեալք ի փրկութենէն գտանէին, խորտակեալս, ապա խանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորչէին»։

Այստեղ էլ Կոնիբիր՝ իր վերոհիշյալ աշխատության մեջ սխալվում է ըստ Ֆնտգլյանի (Կորյուն, էջ ԻԲ—ԻԳ և 39), ասելով, թե Մեսրոպ այդ աղանդավորներին ողջ-ողջ այրել է տվել։ Ֆնտգլյան ցույց է տալիս, որ Կոնիբիրը սխալ է հասկացել խանձեալ բառը, որ ոչ թե «այրել» է նշանակում, այլ «խանձել, տապել, խարանել, մարմնի վրա տաք երկաթով այրելով նշան անել»։ Այս նույն պատիժը սահմանվեց նաև Շահապիվանի ժողովում (446 թ.) կախարդների համար. «Որ յոկ դիւթէն և ոչ կախարդեն թէ՛ այր, թէ՛ կին ի դիւթութեան գացին՝ ժն կրկին դան արբցեն, խանձեսցին, մրեսցին, ոսկրաբեկցին, յարկանոց տարցին»։ Խարանումը նրա համար էր, որ ամեն մարդ տեսնի ու ճանաչի մեղապարտին։

Բարբարիանոսների հալածումից հետո, Մեսրոպ շարունակեց իր գործը, լայն չափերով տարածելով կրթությունն ու քարոզչությունը, և ժողովեց բազմաթիվ հունական եկեղեցական հայրերի գրքերը, ո՛չ թե հատկապես թարգմանելու համար, այլ կարդալու և իր քարոզների համար նյութեր քաղելու նպատակով, ինչպես որ Կորյուն էլ հատկապես հիշում է, թե այդ գրքերով ճոխացրեց իր վարդապետության խորությունը (Կորյուն, էջ 18)։

Նույն ժամանակները Մեսրոպ գտնում էր Բենիամին անունով մի ալվան քահանայի Մեսրոպ, որ ժողովրդի մեջ գիր ու գրականություն, և գրականության միջոցով ուսում և կրոն տարածելու ցանկությամբ լցված մի անձ էր, օգուտ քաղեց այս առիթից և նույն անձից օգտվելով՝ ուզեց հնարել ալվաններեն լեզվի համար սեփական այբուբեն։ Ինքը ալվաններեն լեզվին բոլորովին անծանոթ էր, բայց այնպիսի մի անձի համար, որ արդեն երկու լեզուների այբուբենն էր հնարած, դժվար չէր զանազան քննություններով երևան հանել ու անջատել նույն լեզվին սեփական ձայները։ Այսպես էլ արավ Մեսրոպ։ Նա հարցրեց, քննեց նույն Բենիամին քահանային, ալվաններեն լեզվից զանազան բառեր ձեռք առեց, և վերջապես կազմեց ալվաններեն այբուբենը (Կորյուն, էջ 18)[1]։

Ալվաններեն լեզվի գրերը հնարելուց հետո, արդեն Հունահայաստանի դպրոցական ու քարոզչական գործը վերջացրած լինելով, Մեսրոպ հրաժեշտ առեց եպիսկոպոսներին, իշխաններին և բոլոր եկեղեցականներին։ Իր ժողովրդի և եկեղեցիների ու դպրոցների վրա վերակացու նշանակեց իր աշակերտներից երկուսին, առաջինը Ենովք և երկրորդը Դանան. Այր կրոնավոր և յառաջադեմ յաւետարանական սպասաւորութեան։ Իսկ ինքը հետո առնելով իր բազմաթիվ գործակից աշակերտներին, ճանապարհ ընկավ դեպի Մեծ Հայք (Պարսկական Հայաստան)։ Հասավ Նորաքաղաք կամ Վաղարշապատ, ներկայացավ Սահակ կաթողիկոսին և Արտաշես թագավորին, որ շատ ժամանակ չէր գահ էր բարձրացել, պատմեց նրանց բոլոր այն գործերը, որ մեծ հաջողությամբ կատարել էր Հունահայաստանում, և հանգստություն առնելու համար մի քանի օր նույն քաղաքում դադար առնելուց հետո, այս անխոնջ գործիչը պատրաստություն սկսեց տեսնել, այս անգամ էլ դեպի Աղվանք երթալու։

[1] Ակինյան («Հանդէս Ամսօրեայ», 1935 թ., էջ 575) այս ալվաններին համարում է արևելյան գոթացիք և Մեսրոպին էլ արևելյան գոթերի այբուբենի հեղինակ։ Դեպքը տեղի ունեցած է Պոլսում։

Այս է ահա Մեսրոպի գործունեությունը Հունահայաստանում՝ Կորյունի հավատարիմ պատմության համաձայն։ Բայց Խորենացին, որ արդեն խառնակել էր սկսել այդ գործունեության նախնական մասերը, նույն խառնակությունը մինչև վերջն էլ տանում է։ Այսպես, երբ Մեսրոպ Պոլսից դառնում է Հունահայաստան, դեռ Սահակ այնտեղ էր, և ահա բոլոր իշխանները, զինվորները և նշանավոր մարդիկը, հավաքվում են Մեսրոպի և Սահակի մոտ, և այս երկու անձերը շատով սկսում են սովորեցնել նրանց։ Ինչպես տեսնում ենք, այստեղ մանուկների հավաքում չկա և փոխանակ մանուկների՝ իշխաններն և երևելի մարդիկն են աշակերտում, ինչ որ շատ տարօրինակ է։

Այս միջոցին պարսից Վռամ թագավորը տեսնելով, որ առանց հայ նախարարների հետ հաշտվելու՝ չի կարող կառավարել Հայաստանը, Ամատ ասպետի միջոցով հաշտություն է խնդրում։ Մի խումբ նախարարներ գալիս են Սահակի մոտ և խնդրում են, որ իր աթոռը դառնա և ցանկալի միաբանությունը հաստատի։ Սահակ համաձայնվում է. ուստի Մեսրոպին թողնում է Արևմտյան Հայաստանի վերակացու, նրան օգնական է տալիս Վարդան Մամիկոնյանի երկու եղբայրներին՝ իր Հմայակ և Համազասպյան թոռներին, հրամայում է քննել բորբորիտոնների աղանդը և կա՛մ համոզել կա՛մ խարազանով հալածել։ Իսկ ինքը անցնում է Այրարատ նահանգը։ Այնտեղ հավաքում է բոլոր նախարարազուններին, Ամատ ասպետին ու Վարդան Մամիկոնյանին, ուղարկում է պարսից պալատը, և այսպես երկու կողմերի միջև հաշտություն կնքելով՝ Վռամշապուհի որդին Արտաշեսը նշանակվում է Հայաստանի թագավոր։ Սրանից հետո տեղի է ունենում Կարին կամ Թեոդոսուպոլիս քաղաքի շինությունը՝ Անատոլիոսի ձեռքով՝ Թեոդոս կայսեր հրամանի համաձայն, իբրև թե հայոց պաշտպանության համար։ Իսկ Մեսրոպ դեռ Հայաստանում՝ Շաղգոմք անուն անտառապատ և հովանավոր տեղում շարունակում էր իր դասերը, մինչև «բովանդակեաց զվարդապետութիւնս առաջին առելոց խմբիցն» (երևի ուզում է ասել առաջին աշակերտական խումբը կարդացրեց վերջացրեց, բայց մյուսների մասին խոսք չկա)։ «Քանզի ոչ որպես արուեստ ուսուցանէր, այլ իբրև զհոգի առաքելաբար աշակերտելոցն տայր» (Խորենացի, Գ կ)։ Այնուհետև իր տեղը վերակացու թողնելով իր աշակերտներից մի քանիսին, ինչպես Ղևոնդին և Ենովքին Սպերում, Գնիթին Դերջանում, Դանանին Եկեղեացում, ինքը դարձավ Այրարատ և այնտեղից էլ Գողթն։

*Ինչպես տեսնում ենք, բոլոր գլխավոր դերերը Խորենացին Սահակին է տալիս, իսկ Մեսրոպ մի կրտսեր գործիչ է, որ ծառայում է միշտ Սահակին։ Իզուր Թեոդոս կայսրը այն տիտղոսները Սահակին չտվեց։ Այս բանը նորություն չէ մեզ համար։ Գալով աղվաններեն գրերին, որ Մեսրոպ հնարեց Հունահայաստանում, Խորենացին այնպես է փոփոխում հանգամանքները, որ առավել զարմանալի է։ Բայց այս, ինչպես Մեսրոպի ճանապարհորդության այլակերպության մասին պիտի խոսենք հետո։*

## § 7

*Գարագաշյան (Քննական պատմություն. հատ. Գ, էջ 216—218) Հունահայաստանի քարոզչության գործում գտնում է քաղաքագիտական վարմունք։ Կեսարիայի միտրոպոլիտները և Կոստանդնուպոլսի պատրիարքները իրար հետ մրցման մեջ էին կրոնական գերագահություն ձեռք բերելու համար։ Կոստանդնուպոլիսը կայսերական մայրաքաղաք լինելով՝ այնտեղ նստող պատրիարքներն էլ ամենքի վրա առաջնակարգ դիրք ուզում էին ունենալ. իսկ Կեսարիայի միտրոպոլիտները մերժում էին այս գերագահությունը և հատկապես Հայոց եկեղեցին իրենց իրավասության տակ էին ճանաչում։ Հունահայաստանի մեջ գործելու արգելքը հետևաբար Կեսարիայի միտրոպոլիտն էր հանել, և այն էլ աշխարհական իշխանության միջոցով։ Սահակ օգուտ քաղելով երկու մրցակիցների հակառակությունից, իբրև բարձրագույն ատյան՝ դիմեց կայսեր և պատրիարքին։ Այս երկուսի համար էլ Սահակի դիմումը՝ իբրև նշան հպատակության՝ հաճելի և շողոքորթիչ էր միանգամայն, մանավանդ պատրիարքին, որ թերևս սպասում էր այսպիսի մի առիթի, ցույց տալու համար իր վերին իշխանությունը Կեսարիայի միտրոպոլիտի վրա։ Ուստի սիրով ընդունեց Սահակի խնդիրը և ընդառաջեց և անշուշտ կայսեր առաջ էլ բարեխոսեց։*

*Հունահայաստանի քարոզչությունը ազգային տեսակետով մեծ օգուտ ունեցավ. սրանով Հայաստանից բաժանված գավառները գոնե լեզվով ու գրականությամբ նորից միացան մեծ ամբողջության հետ։*

## ԱՄՓՈՓՈՒՄ

1. Մեսրոպ ընդհանուր այցելություն է տալիս Հայաստանի գավառներին։— 2. Մինչև այն ժամանակ նա քարոզել էր Պարսկահայաստանում, այժմ մտնում է Հունահայաստան։— 3. Հունաց սպարապետը մեծ պատվով ընդունեց Մեսրոպին. բայց քարոզչության արտոնություն չէր կարող տալ մինչև կայսերական կարգադրություն ստանալը Պոլսից։— 4. Կայսերական հրավերով՝ Մեսրոպ իջնում է նախ Մելիտինե և այնտեղից գնում է Պոլիս. ներկայանում է Թեոդոս կայսեր և Ատտիկոս պատրիարքին. ստանալով տիտղոսներ և գործունեության ազատություն՝ վերադառնում է Հունահայաստան։— 5. Այս առթիվ Խորենացու մեջ բերած նամակագրությունը կայսեր, Ատտիկոսի և Սահակի միջև կեղծիք է։— 6. Մեսրոպ Հունահայաստանում էլ բաց է անում դպրոցներ, աշակերտներ հավաքում և հայ գրի ուսումը տարածում։ Հալածանք է հանում բորբորիտոնոս կոչված աղանդավորների դեմ։ Պատահեց Բենիամին անուն աղվան մի թարգմանչի և առիթից օգտվելով հնարեց աղվանների գրերը։— 7. Հունահայաստանի քարոզչությունը մի մեծ քայլ եղավ հայ ազգային ամբողջականության տեսակետով։

*ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.— Ընդհատում ենք մեծանուն հայագետի այս արժեքավոր աշխատության մաս առ մաս տպագրությունը, հետագայում Մայր Աթոռի տպարանում այն առանձին հատորով հրատարակելու մտադրությամբ։*

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

# ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*

*Հենց Հարուն-ար-Ռաշիդի ժամանակ հռչակվեց Աշոտ Մսակեր Բագրատունին, Սմբատ սպարապետի որդին, որի հայրը 774—775 թվականների ապստամբության ժամանակ զոհվել էր, մասամբ կաշառքով, մասամբ զենքի ուժով հաստատել իր իշխանությունը Հայաստանի հյուսիս-արևմտյան մարզերում՝ Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում։ 806 թվականին Հարուն-ար-Ռաշիդը Աշոտին նշանակեց Հայաստանի պետ, և այնուհետև նա հնարավորություն ստացավ ավելի մեծ հաջողությամբ շարունակել իր հետագա նվաճումները։*

*Բագրատունիների և, ընդհանրապես, հայ նախարարների համար նպաստավոր եղան նաև 809—813 թվականներին տեղի ունեցող այն համառ կռիվները, որ Հարուն-ար-Ռաշիդի՝ Մամուն և Էմին որդիները վարում էին գահաժառանգության համար։*

*Մի քանի տարուց հետո, երբ արդեն վերջացել էին հիշված երկպառակությունները, Արևելյան Անդրկովկասում բռնկվեց պարսկական ազանդավոր խուռրամյանների նոր խոշոր ապստամբությունը (816—837 թ. թ.) Բաբեկի առաջնորդությամբ։ Այդ անհեղ շարժումը կրում էր և՛ հասարակական և՛ ազատագրական բնույթ։ Ապստամբները պահանջում էին գույքային հավասարություն և ուզում էին տապալել արաբական խալիֆաների իշխանությունը ու վերականգնել նախկին պարսկական տիրապետությունը։*

*Հայկական նախարարությունները օգտագործեցին այդ ապստամբությունը իրենց շահագիտական նպատակների համար և, ամրացնելով իրենց քաղաքական դիրքերը, հնարավորություն ստացան գրավելու նոր հողեր ու նոր կալվածներ։*

*Այդպիսով, 9-րդ դարի քառասնական թվականների վերջին, հայ նախարարները, հատկապես Բագրատունիները, ոչ միայն վերականգնեցին իրենց նախկին հզորությունը, այլև դարձան ավելի ուժեղ, քան 8-րդ դարում Օմայանների ժամանակ։*

*Աշոտ Մսակերի մահվանից հետո (826 թ.) Բագրատունիների առանձին ճյուղերը իշխում էին ինչպես իրենց նախկին տիրապետության տակ եղած երկրամասերում, նույնպես և համարյա ամբողջ արևմտյան Անդրկովկասում։ 9-րդ դարի առաջին կեսի վերջում նրանք և Արծրունիները այնքան էին ուժեղացել, որ արդեն աշխատում էին վերականգնել լրիվ չափով իրենց արտոնությունները և լայնացնել իրենց քաղաքական իրավունքներն ու ներքին անկախությունը։*

*842—847 թվականներին, ալ-Վասիկ խալիֆայի ժամանակ, Հայաստանը գտնվում էր խռովահույզ և մշտական ապստամբական շարժումների պայմաններում։ Բագրատունիները, ինչպես և Արծրունիները, նկատի ունենալով խալիֆայության քաղաքական և ռազմական թուլացումը, ձգտում էին ազատագրվել արաբական տիրապետությունից և խալիֆայության պետական հարկերը վճարելուց։*

*Սակայն, սակայն, պարզվեց նրանց հույսերի վաղաժամ լինելը։ 847 թվականին խալիֆայության գահը բարձրացավ Մութավաքիլը (847—861 թ. թ.), որը ամրացրեց խա-*

* Շարունակված ամսագրի 1956 թվականի № № VI-ից, VII-ից և VIII—IX-ից։

լիֆայության խախտված դրությունը։ Եվ նրա ժամանակը զորեղացած հայկական նախարարությունների սանձահարումը դարձավ խալիֆայության գլխավոր նպատակներից մեկը։

849 թվականին Հայաստան էր ուղարկվել ուժեղ զորամասերով Աբուսեթ ոստիկանը, սակայն, խնդրել և պատժել հայ նախարարներին նա չկարողացավ, որովհետև Բագրատ Բագրատունին, որն այդ ժամանակ Հայաստանի պետն էր, և Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին, միանալով դուրս էին եկել նրա դեմ։ Նրանք ուղարկեցին Աբուսեթին պահանջվող հարկերը և պահանջեցին, որ նա չմտնի Հայաստանի սահմանները։

850 թվականին Բագրատը և Աշոտը գլխովին չարդեցին խալիֆայության զորքերը, որոնք ավերածության ու կողոպուտի էին մատնել Տարոնի և Վասպուրականի շրջանները։

Վրդովված լինելով այդ դեպքերի մասին ստացած տեղեկություններից, Մութավաքիլը Հայաստան ուղարկեց մեռած Աբուսեթի որդուն՝ Յուսուֆին։ 851 թվականին Յուսուֆը մեծ ու ընտիր զորքով մտավ Վասպուրական, Աշոտի հետ հաշտություն կնքեց և, ապահովելով իր թիկունքը, գնաց դեպի Խլաթ, որտեղ նա խաբեությամբ գերի բռնեց Բագրատին, շղթայեց նրան և ուղարկեց Մութավաքիլի աթոռանիստը՝ Սամառա։

Այնուհետև Հայաստան ուղարկվեցին շրջանային կառավարիչներ, որոնք ամենուրեք դաժան դատաստան տեսան։ Իսկ Տարոնում արաբական զորքերը վերցրին շատ գերիներ, որոնց նրանք ծախեցին չնչին գնով Սիրիայում և ուրիշ տեղերում։ Գարնանը նրանք պատրաստվում էին ավերածության ու սրի մատնել ամբողջ Հայաստանը, ենթադրում էին ոչնչացնել հայկական նախարարությունները ու երկրում հաստատել իրենց անմիջական տիրապետությունը։

Այժմ Հայաստանի դրությունը դառնում էր նույնքան աղետալի, ինչպես և 8-րդ դարի վերջում։ Վտանգ էր սպառնում ոչ միայն իշխող նախարարական դասին, այլև ամբողջ ժողովրդին։ Ուստի և նորից տարերային ձևով բռնկվեց ապստամբություն, որը, ինչպես և 774—775 թվականներին, կրում էր ազատագրական շարժման բնույթ։

Այդ ապստամբության գլխավոր մասնակիցներն էին Սասունի լեռնականները, ռամիկ գյուղացիները, որոնք հարձակվեցին արաբական զորքի վրա Հովնան Խութեցու առաջնորդությամբ։ Նրանք ոչնչացրին արաբական զորքը, սպանեցին իրեն՝ ոստիկան Յուսուֆին և ազատեցին գերիներին։

Սասունցի լեռնականների այդ հաղթական կռիվը ընդդեմ արաբական խալիֆայության զորքերի, որոնց նրանք քշեցին իրենց հայրենի երկրից, եղել է հայկական «Սասունցի Դավիթ» ժողովրդական վիպերգության հիմքերից մեկը։

852 թվականի մեծ ապստամբությունը, որ կրում էր համաժողովրդական-ազատագրական բնույթ, խեղդվեց անողոք դաժանությամբ։

Մութավաքիլ խալիֆան Հայաստան ուղարկեց 200.000 հոգուց բաղկացած թյուրքական ու արաբական զորքեր, նախկին գերի, խորամանկ ու դաժան թյուրք Բուղայի առաջնորդությամբ։

Բուղան սրի մատնեց և գերեց ու ավերեց ոչ միայն Հայաստանը, այլև Աղվանքն ու Վրաստանը։

Հայ նախարարները և ապստամբության ղեկավարները խարդախությամբ բռնվեցին ու բանտարկվեցին և ապա ուղարկվեցին Սամառա։ Բուղայի արշավանքից հետո, նախարարական Հայաստանը, որ ենթարկվել էր սոսկալի ավերածության, թվում էր, թե այլևս անկարող է լինելու ուշքի գալ և վերականգնվել։ Սակայն շուտով, ինչպես և 774—775 թվականների ապստամբությունից հետո, նա ոչ միայն վերականգնեց իր նախկին դիրքը, այլև հասավ իր տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի բուռն ու աննախընթաց ծաղկմանը։

9-րդ դարի երկրորդ կեսում սկսվեցին բյուզանդական կայսրերի հաղթական արշավանքները դեպի հարավ-արևմտյան Հայաստանին կից սահմանային շրջանները, և խալիֆայությունը, որ անընդհատ պարտություն էր կրում, հետզհետե թուլանում էր և գնում դեպի անկում։

867 թվականին բյուզանդական գահը բարձրացավ ազգով հայ, Մակեդոնիայից եկած, Բարսեղ Առաջինը (867—886 թ. թ.), որը կործանիչ հարվածներով ոչնչացրեց արևելյան սահմանների արաբական պաշտպանողական ամրացրած դիրքերը և կարողացավ մտնել Միջագետք։ Բյուզանդիայի այդ հաղթական հարձակման ժամանակ ֆեոդալական-նախարարական Հայաստանի կողմնորոշումը դեպի կումից պետությունները ստանում էր չափազանց կարևոր նշանակություն։ Բարսեղ Առաջինի հաղթությունը կլիներ լիակատար, եթե հայերը հարձակվեին արաբների աջ թևի վրա և օգնեին կայսրին մտնելու խալիֆայության կենտրոնական շրջանները։

Ուստի և զարմանալի չէ, որ արաբները ստիպված էին փոխել իրենց քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ և ճանաչեցին նրան թերև ինքնուրույն վասալական թագավորություն։ Դեռևս 862 թվականին

Աշոտ Բագրատունին, որ հետագայում կոչվեց Մեծ, ալ-Մուստաին խալիֆայի (862—866 թ. թ.) կողմից նշանակվել էր Հայաստանի պետ՝ «իշխանաց իշխան» տիտղոսով։ Հավատարիմ մնալով խալիֆայությանը և չեզոք՝ Բարսեղ Առաջինի հաղթական կռիվների ժամանակ, Աշոտը քսան և հինգ տարի մնաց «իշխանաց իշխան» (862—887 թ. թ.)։ Նրա ժամանակը Հայաստանը զորեղացավ թե՛ քաղաքականապես և թե՛ տնտեսապես։ Քառորդ դար կռվելուց հետո, 887—888 թվականին Մութամիդ խալիֆայից (870—892 թ. թ.) նա ստացավ թագ և թագավորի տիտղոս։

Խալիֆայության այդ արտաքուստ բարյացակամ քաղաքականությունը եղել էր, ինարկե, ստիպողաբար։ Հայաստանի վերամիավորումը, իրեն զորեղ թագավորություն, ցանկալի չէր ոչ խալիֆայությանը, ոչ Բյուզանդիային և ոչ հարևան ամիրայություններին։ Շուտով խալիֆայությունը և հարևան ամիրայությունները սկսեցին իրենք խրախուսել և նույնիսկ գրգռել խռովարար ֆեոդալներին՝ Հայաստանում ապստամբություններ առաջ բերելու համար։ Ուստի հասկանալի է, որ Բագրատունիների թագավորական տիտղոսը մնաց միայն իրեն տիտղոս, առանց բովանդակության։ 10-րդ դարում Հայաստանի և Անդրկովկասի բոլոր մեծ ֆեոդալները դարձան նույնպես «թագավոր»-ներ և ունեին նույնպիսի թագավորական թագ և հանդերձանք, ինչպես և Աշոտ Առաջինի հաջորդը։

Աշոտ Առաջինի մահից հետո գահը բարձրացավ նրա որդի Սմբատ Առաջինը (891—914 թ. թ.), որը, դաշն կնքելով Բյուզանդիայի հետ, ուզեց միացնել իր իշխանության տակ հայկական նախարարությունները և ստեղծել միացյալ ֆեոդալական պետություն։ Սակայն Սմբատի այդ փորձը հաջողություն չունեցավ։ Հայաստանի խոշոր ֆեոդալները օգնություն գտան հարևան ամիրաների մոտ, ոչ պակաս զորեղ, քան Բագրատունիները։ Շատ ուժեղ դիմադրություն ցույց տվին Բագրատունիների [illegible] Ադրբեջանի ամիրաները՝ Ավշինը և Յուսուֆը։

10-րդ դարի սկզբում Յուսուֆ ամիրան, որ իր կողմն էր գրավել Մուկտադիր խալիֆային և Գագիկ Արծրունուն, Բագրատունյան Հայաստանը մատնեց ավերածության և Սմբատ Առաջին թագավորը ենթարկվեց տանջանքների ու խաչվեց (914 թ.)։

Սմբատ Առաջինի վրա կատարված Յուսուֆի այդ դաժան դատաստանից ու անընդհատ տեղի ունեցած խառնակություններից, ապստամբություններից և երկրի անխնա ավերածություններից հետո, Հայաստանում 10-րդ դարի երկրորդ քառորդից սկսած, ավելի քան 100 տարի եղել է համեմատաբար խաղաղ։

Չունենալով գործուն մասնակցություն Բյուզանդիայի և արաբների կռիվներին և մնալով իրեն խալիֆայության վասալ, Բագրատունի թագավորները բարեկամական հարաբերություններ էին պահում միաժամանակ և՛ Բյուզանդիայի և՛ խալիֆայության հետ։ Նրանց տիրապետության տակ եղած մարզերում խաղաղությունը և հանգստությունը չէր խախտվել ոչ մեկի և ոչ մյուսի կողմից։

Բագրատունիների թագավորության անկախ զարգացման այդ ժամանակաշրջանը, որը շարունակվեց մինչև Սելջուկ թյուրքերի կողմից Հայաստանի գրավումը, հանդիսանում է երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման վերելքի ու քաղաքային կենտրոնների ծաղկման շրջան։

Տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի ծաղկումը երևում է նաև նրանից, որ ժամանակակից արաբական հեղինակները Հայաստանը համարում էին խալիֆայության ամենից հարուստ երկրներից մեկը։

Բագրատունյաց Հայաստանի հարստության և ընդհանուր տնտեսական վերելքի մասին կան մանրամասն տեղեկություններ նաև հայկական աղբյուրներում։

Հայաստանի նոր կուլտուր-տնտեսական վերելքի գլխավոր հիմքը եղել է, անշուշտ, միջազգային առևտուրը, որը սկսել էր այնտեղ նորից զարգանալ, սկսած 9-րդ դարից։

7—8-րդ դարերում արաբական խալիֆայության ռազմական ու քաղաքական զորեղ շրջանում և Բյուզանդիայի հետ տեղի ունեցող կատաղի կռիվների ընթացքում Հայաստանը եղել է, գլխավորապես, խալիֆայության ռազմական առաջապահը և միջազգային առևտուրը այնտեղ բոլորովին դադարել էր։

Տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմաններ նորից ստեղծվեցին 9-րդ դարում։

Շնորհիվ համաշխարհային գլխավոր ճանապարհներից մեկի վրա իր ունեցած արդելակող դիրքին, Բագրատունյաց Հայաստանը, որ Բյուզանդիայի հետ կապված էր բարեկամության պայմանագրով, և խալիֆայության հետ վասալական կապերով, ոչ միայն նորից ձեռք բերեց նշանակություն տարանցիկ առևտրի համար, այլև ինքը դարձավ չեզոք երկիր միջազգային աշխույժ առևտրի համար։

Կյանքի ապահովությունը և խաղաղությունը հանդիսանում էին իրեն նպաստավոր

նախադրյալներ երկրի տնտեսական վերակենդանացման և առաջադիմության համար։

Սակայն նրա տնտեսական զարգացման աճը և քաղաքային կենտրոնների ծաղկումը բացատրվում են գլխավորապես նրանով, որ Հայաստանը այդ ժամանակաշրջանում դարձել էր Մերձավոր Արևելքում միակ տարանցիկ ճանապարհը և միակ չեզոք երկիրը, ինչ որ հնարավորություն էր տալիս օժանդակելու միջազգային հարաբերություններին։

Այդ ժամանակվա նոր հիմնված քաղաքների՝ Անիի, Կարսի և Արծնի հարստության մասին, որոնք դառել էին խոշոր առևտրական կենտրոններ, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 11-րդ դարի հայ պատմիչ Արիստակես Լաստիվերտցին։

Անի քաղաքը, որը 10-րդ դարի երկրորդ կեսից դարձել էր Բագրատունիների մայրաքաղաքը, նա անվանում է «համաշխարհային հայտնի քաղաք»։

Արծն քաղաքի մասին, որը գտնվում էր Թեոդոսուպոլսից ոչ հեռու, հաղորդում է, որ նրա հարստությունները բերում էին «ծովով և ցամաքով»։ Նմանապես Կարսի բնակիչների ունևորությունը նկարագրելիս, նորից ընդգծում է, որ նրա հարստությունները կուտակված են եղել «ծովից ու ցամաքից»։

Այդ քաղաքների վրայով միջազգային առևտրի հիմնական տարանցիկ ճանապարհը գնում էր դեպի Տրապիզոն, որն այդ ժամանակաշրջանում եղել է Սև ծովի արևելյան մասի գլխավոր առևտրական կենտրոնը և որը միջազգային առևտրի մեջ խաղում էր բացառիկ դեր։

Մեզ հասած պատմական հուշարձանները հաստատում են, որ Բագրատունյաց Հայաստանի քաղաքների հարստացման գլխավոր աղբյուրը եղել է միջազգային տարանցիկ առևտուրը։

Հայաստանի տնտեսական վերակենդանացման հետևանքով, ստեղծվել էին նպաստավոր պայմաններ ֆեոդալական մշակույթի ծաղկման և մեծ շինարարության համար, գլխավորապես Բագրատունյաց մայրաքաղաք Անիում։ Հայաստանի, գերազանցորեն այն քաղաքները, որոնք գտնվում էին տարանցիկ գլխավոր ճանապարհի մոտ, հարստանում էին, շինվում էին և լայնանում։ Թագավորները և բոլոր ֆեոդալները մրցում էին իրար հետ իրենց շինած տաճարների, պալատների և այլ կառուցումների շքեղությամբ։ Հայկական ճարտարապետության պահպանված հուշարձանները վկայում են շինարարական տեխնիկայի զարգացման բարձր աստիճանի և հայ գեղարվեստագետ-ճարտարապետների բացառիկ ստեղծագործական ընդունակությունների մասին։

Հին հայկական արվեստի և ճարտարապետության զարգացման շրջան էր հանդիսանում 7-րդ դարը, որը համարվում է հայկական ճարտարապետության ոսկեդարը։ Հենց այդ ժամանակաշրջանումն է կառուցված Էջմիածնի մոտ բազմահարկ, կլոր Զվարթնոց տաճարը, որը հանդիսանում է հին տիպի հոյակապ կառուցումների վերածնունդը։ Այդ վեհ կառուցվածքի պահպանված փլատակները ապշեցնում են իրենց հոյակապ սյուների, խոյակների և զարդաքանդակների նուրբ գեղեցկությամբ և վկայում են նրա կառուցողների մեծ ստեղծագործական տաղանդի մասին։ Բագրատունյաց դարաշրջանում, նախկին շրջանում տեղի ունեցած քայքայումից ու լճացումից հետո, վերականգնվել էին մինչարաբական ժամանակի մշակութային ավանդները։ 10—11-րդ դարերում հետզհետե ստեղծվել էր ճարտարապետական նոր ոճ, որը զարգանալով 12—13-րդ դարերում կազմեց հայկական ճարտարապետության պատմության մեջ նոր դարաշրջան։

Բագրատունյաց Հայաստանի քաղաքական և տնտեսական զարգացման հետ զուգընթաց տեղի է ունեցել նաև գրականության զարգացումը։

Այդ շրջանի կարկառուն երկ է հանդիսանում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որը գրված է եղել 9-րդ դարում, մինչև Բագրատունիների թագավորության հաստատումը։ Հետագա դարերում Խորենացին դարձել է ամենից ժողովրդական և հեղինակավոր հայ պատմագիրը և համարվել է «Հայկական պատմության հայրը»։ Եվ հիրավի, չնայելով նրա տված տեղեկություններից շատերի անվավերականության, նրա գիրքը հանդիսանում է բացառիկ արժեքավոր պատմական աշխատություն, որովհետև այնտեղ, գրական աղբյուրների հետ զուգընթաց, օգտագործված են հին ժողովրդական վեպը և ժողովրդական բանահյուսությունը։ Այդ ժամանակաշրջանի մյուս պատմագիրները՝ Հովհաննես Դրասխանակերտցին, Թոմա Արծրունին, Ստեփանոս Տարոնեցին և ուրիշները եղել են Խորենացու մեծ ազդեցության տակ։ Հատկապես արժեքավոր է Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմություն»-ը, որը հանդիսանում է աղբյուր ներկա Ադրբեջանի հին պատմության։

Տվյալ ժամանակաշրջանում մեծ զարգացում ստացավ, բացի պատմական ու եկեղեցական գրականությունից, նաև գիտական գրականությունը՝ աշխարհագրական, փի-

սոփայական, քերականական, հռետորական և մեկնաբանական։ Խոշոր գիտական պատրաստություն ունեցող հեղինակ է եղել Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (11-րդ դ.), որը թարգմանել է հայերեն լեզվով Պղատոնի մի քանի աշխատություններ և Էվկլիդեսի «Երկրաչափություն»-ը։

Այդ դարաշրջանի բանաստեղծական գրականությունը, Բրյուսովի կարծիքով, արդեն պարունակում էր հետագա ուշ ժամանակների փարթամ ծաղկման սաղմերը, իսկ որոշ գծերում եղել է նույնիսկ չգերազանցված։

Այդ ժամանակաշրջանի խոշորագույն բանաստեղծ, որն ունեցել է հսկայական երևակայություն և նուրբ ոճ, եղել է Գրիգոր Նարեկացին (951—1003 թ. թ.), որն ստեղծել է, այսպես կոչված, բանաստեղծների նարեկյան դպրոցը։

Ուշագրավ են այն հանգամանքները, որ այդ ժամանակաշրջանում առաջ էին գալիս սոցիալական և գաղափարական տարբերակում։ Մի կողմից 11-րդ դարում ուժեղ զարգացում ստացավ եկեղեցական սխոլաստիկական գրականությունը միստիկական բովանդակությամբ, որը նախագուշակում էր ֆեոդալական հասարակարգի մոտակա անկումը, մյուս կողմից ծնունդ էր առնում ժողովրդական աշխարհիկ գրականությունը, որտեղ մարմնացում էին ստանում աշխատավոր մասսաների իղձերը և ձգտումները։

Բագրատունյաց Հայաստանի ֆեոդալական քաղաքների կուլտուրական դեմքը որոշված է զգալի մանրամասնությամբ Ն. Մառի սիստեմատիկ պեղումներում, որոնք կատարվել են 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբներում Անի քաղաքի տեղամասում։ Անիում գտնված իրերը առատ նյութ են տվել վերականգնելու այդ խոշոր առևտրական քաղաքի մշակութային կենցաղը, իր զարգացած արհեստագործական-արդյունաբերական կյանքով, իջևաններով, կամուրջներով, բաղնիքներով, ջրմուղներով և ուրիշ գեղեցիկ շենքերով և եկեղեցական ու աշխարհիկ բնույթ ունեցող կառուցումներով։ Արհեստագործական և գեղարվեստական-արհեստագործական արդյունաբերության արտադրանքը, որ գտնվել է պեղումների ժամանակ, ցայտուն կերպով ցույց է տալիս, որ Անի քաղաքի և Բագրատունյաց Հայաստանի մյուս քաղաքների կուլտուրական կյանքը գտնվել է զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, քան արևմտյան Եվրոպայի միջնադարյան քաղաքներում։ Բագրատունյաց Հայաստանի տնտեսական կյանքի և Հայաստանից արտահանվող իրերի մասին, մի քանի պատահական, սակայն շատ ուշագրավ տեղեկություններ կարելի է գտնել արաբական աշխարհագիրների և պատմագիրների աշխատություններում։

Տաբարիի պատմական աշխատության մեջ կա տեղեկություն, որ Հայաստանը իր հարկը արտահանում էր և ուղարկում Բաղդադ։ Այդ վկայությունը չափազանց կարևոր է, և ցույց է տալիս, որ Հայաստանի ֆեոդալական երկրագործական տնտեսությունը մտել է միջազգային առևտրական շրջանառության մեջ։

Իբրև արտահանության կարևոր ապրանք, արաբական հեղինակների մոտ հատկապես հաճախ հիշվում են Վանի և Սևանա լճերի և Արաքս ու Կուր գետերի ձկները։ Միջին դարերում չորացրած և աղը դրած ձուկը եղել է լայն սպառման նյութ ոչ միայն արևմտյան Եվրոպայում, այլև Արևելքում։

Շատ հետաքրքիր են արաբական աղբյուրների տեղեկությունները Հայաստանից շինարարական փայտի արտահանության մասին։ Կարելի է ենթադրել, որ Բագրատունյաց Հայաստանի անտառների տարածությունը ունեցել է զգալի չափեր։ Արաբական և հայկական աղբյուրները հիշում են նույնպես լեռնային արդյունաբերության մի շարք արտադրանքների մասին, որոնք արդյունահանվում էին Հայաստանում՝ արծաթ, պղինձ, բորակ, աղ, մկնդեղ, ձյութ, սնդիկ, պղնձարջասպ և արճիճ։

Քաղաքային արդյունաբերության և արհեստների՝ կավագործության, դարբնության, զինագործության, ոսկերչության, մանածագործության և ուրիշների զարգացման մասին վկայում են գտնված իրեղենները և գրական աղբյուրները։

Արդյունաբերության հիշված ճյուղերից ամենից մեծ նշանակություն է ունեցել մանածագործական արդյունաբերությունը, գլխավորապես մետաքսի, որից պատրաստված գործվածքները արտահանվել են խալիֆայության արևմտյան մարզերը և Բյուզանդիա։

Մանածագործական արդյունաբերության զարգացմանը նպաստում էին հանքային, բուսական և կոշենիլի ներկերը, որոնք մեծ քանակությամբ եղել են Հայաստանում։

Քաղաքների աճի և արդյունաբերության զարգացման կապակցությամբ հարց է առաջ գալիս այդ քաղաքների տիպի և ներքին կարգերի մասին։ Սակայն այդ հարցին, դժբախտաբար, չի կարելի հանգամանորեն պատասխանել, որովհետև նրանց ներքին կյանքի մասին տվյալներ մենք համարյա չունենք։

Համենայն դեպս, կասկածից դուրս է, որ Բագրատունյաց շրջանի քաղաքները, որոնք

պատկանում էին խոշոր ֆեոդալներին և դարձել էին նրանց սեփականությունը, գտնվում էին այդ ֆեոդալների իշխանության տակ և ունեին ինքնուրույն (ինքնիշխանական) վարչաձև։ Կառավարվում էին նրանք, ինչպես և նույն ժամանակաշրջանում արևմտյան եվրոպական քաղաքները, Բագրատունի թագավորների և այլ խոշոր ֆեոդալների կողմից նշանակված անձանց միջոցով։

Այդ քաղաքների տեղագրության մասին մեր տրամադրության տակ եղած տվյալները ցույց են տալիս, որ այդ քաղաքները, ինչպես և խալիֆայության արևելյան քաղաքները, ունեցել են ներքին մաս, այսպես կոչված շահրիստան, որը շրջապատված է եղել ուսպատ կոչվող արվեստաձևերի ամուր պատերով, իսկ շահրիստանի կենտրոնում եղել է նրա միջնաբերդը կամ ամրոցը։

Համաձայն աղբյուրների մի քանի ցուցմունքների, մանր և խոշոր քաղաքների բնակչության զգալի մասը բաղկացած է եղել հողագործական մանր ու խոշոր ազնվականությունից և քաղաքային բնակչությունից, որոնք ունեցել են իրենց այգիները, բանջարանոցները և հողային տնտեսությունը։ Խոշոր քաղաքները, որոնք ունեցել են գործոն մասնակցություն միջազգային առևտրում, միաժամանակ եղել են առևտրական ու արհեստագործական բնակչության կենտրոններ։

Բագրատունյաց Հայաստանի խոշոր քաղաքների բնակչության քանակի մասին (Դվին, Անի, Արծն) աղբյուրները տալիս են անուղղակի ցուցմունքներ։ Օրինակ, հայ պատմիչ Թովմա Արծրունին հաղորդում է, որ 893 թվականին, երկրաշարժի ժամանակ կոտորվել է ավելի քան 70.000 մարդ։ Բյուզանդական պատմագիր Գ. Կեդրինի հաղորդագրության համաձայն, 1049 թվականին սելջուկները Անին գրավելու և ավերելու ժամանակ ոչնչացրել են ավելի քան 110.000 մարդ։ Պատմիչների տվյալներով Անիում եղել է 100.000 բնակիչ և 10.000 տուն։

Մեջ բերված կլոր թվերը, իհարկե, վիճելի են, սակայն թույլ են տալիս ենթադրելու, որ Բագրատունյաց Հայաստանի խոշոր քաղաքների բնակչությունը զգալիորեն գերազանցել է միջնադարյան Եվրոպայի քաղաքների բնակչությունը և կազմել է, համանորեն, մոտավորապես 50-ից մինչև 100.000։

Ուշագրավ է, որ տվյալ ժամանակը, որ եղել է քաղաքների և առևտրի արագ զարգացման շրջան, եղել է նաև դրամական յայն շրջանառության շրջան, որը նպաստել է փողային-տնտեսական հարաբերությունների։ Հայկական արձանագրական տվյալներից կարելի է տեսնել, որ մթերային եկամուտը 10—11-րդ դարերում փոխվել էր դրամականի։ Բացի այդ, առևտրի ու արդյունաբերության զարգացման կապակցությամբ, այդ ժամանակաշրջանում Բագրատունյաց Հայաստանի քաղաքներում նկատվում է բնիկ հայերից հարուստ առևտրաարդյունաբերական դասի առաջացումը և զորեղացումը։

Հատկանշական է, որ քաղաքների զարգացումը և ապրանքային ու դրամական հարաբերությունների աճը, պետք է ասել, այստեղ ևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, երկրի սոցիալ-տնտեսական կյանքի որոշ տեղաշարժ։ Ըստ հիրավի, աղբյուրներից երևում է, որ ամենուրեք դրամային տնտեսության խորացման ընթացքը զուգակցվել է նաև Հայաստանում հիվանդոտ երևույթներով, որոնք առաջացել էին վաշխառուական դրամագլխի գործողության և ստորադաս բնակչության դաժան շահագործման հետևանքով։

Ն. Մառը իր Անիի մասին գրած կարևոր աշխատության մեջ ցույց է տվել, որ 11-րդ դարի առաջին կեսում ֆեոդալական Հայաստանի կյանքը իրենից ներկայացնում էր հակադրույթ (անտիթեզ)՝ աշխատավոր հայ բնակչության տնտեսական ճնշվածության և հարստությունների կուտակմանը տիրող դասակարգերի փոքրաքանակ անդամների ձեռքերում։

Ընկայական հարստությունների մասին, որ գտնվում էին թեկուզ միայն հոգևորականության ձեռքում, հետաքրքիր տեղեկություններ է տալիս Մատթեոս Ուռհայեցի պատմիչը։

Նկարագրելով Արծն քաղաքի ավերումը սելջուկյան Իբրահիմ և Կուտլումիշ զորավարների կողմից, Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ «բոռնալիսկոպոս Դավթակի գանձատունը գրավեց Իբրահիմը. նրա գանձերը բեռնեցին 40 ուղտերի վրա. նրա տնից դուրս էին գալիս արտերը՝ Երկնային համար ութը հարյուր դուռան, յուրաքանչյուրում վեց զույգ եզներ»։ Հակառակ ազնվականության, վաճառականների և հոգևորականության ունեւորությանն ու հարստությանը, Անիի աշխատավոր բնակչությունը, ինչպես ցույց են տալիս Անիի պեղումները, տեղավորված է եղել խղճուկ հյուղերում և քարքարոտ գետնում փորված որջերում։

Աշխատավոր բնակչության տնտեսական ծանր դրության մասին ցույց է տալիս, ի միջի այլոց, և այն, որ ըստ եղած տեղեկությունների, այդ ժամանակաշրջանում տեղի են ունեցել գյուղացիական ապստամբություններ (10-րդ դարի առաջին քառորդում)։

Հայ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, որը թշնամաբար է վերաբերվում դեպի ապստամբները, «Ստորին խավերը ուզում էին լինել ավելի ձեռնհաս, քան բարձր խավերը, և ծառաները Սողոմոնի նման մտածում էին այն մասին, որ ստրկները հագնեին տրեխներ, ման գային ոտով, իսկ իրենք նստեին փառահեղ ու տրոփող ձիերի վրա. նրանք հպարտացան, ամբարտավանացան և բարձրացրին մեծ ապստամբություն»։

Բացի ապստամբություններից, 10—11-րդ դարերում ստացել էր նաև թոնդրակեցի աղանդավորների կրոնական-սոցիալական շարժումը, որոնք խիստ քննադատության էին ենթարկում տիրող հավատի դավանանքը և ֆեոդալական եկեղեցու կազմակերպությունը։ Այդ աղանդի ուսմունքը, որի հետևողներն էին աշխատավոր աղքատ ժողովրդի լայն զանգվածները, պաշտպանում էր դեմոկրատական քրիստոնեությունը և այդ ժամանակվա պայմաններում հանդիսանում էր իբրև բողոք ոչ միայն պաշտոնական եկեղեցու, այլև տիրող դասակարգերի ճնշման դեմ։

Հայկական թոնդրակեցի և պավլիկյան աղանդավորները, որոնք ենթարկվում էին դաժան հալածանքների, պարբերաբար աքսորվում էին Բուլղարիա և այլ երկրներ, որտեղ նրանք, ինչպես ենթադրում է Ն. Մառը, «եթե չէին ձգել սերմեր, որոնց արգասիքը եղել են բոգոմոլությունը և ալբիգոյանությունը, համենայն դեպս առաջ են բերել նոր հուզումներ և իրենց արյան հոսանքով բեղմնավորել են հողը, ավելի երջանիկ եվրոպական բարենորոգիչների շարժման համար»։

10—11-րդ դարերում սոցիալական պայքարի ակնառու սրումը բացատրվում է, ըստ երևույթին, դրամա-տնտեսական հարաբերությունների խորացմամբ, գյուղացիներից պահանջվող դրամական տուրքերի ծանրության ավելացմամբ և վաշխառուական դրամագլխի խաղացած դերի սաստկացմամբ։

Քաղաքների արդյունաբերության և առևտրի աճը թեև հանգեցնում էր դասակարգային պայքարի սրմանը, սակայն, միաժամանակ նպաստում էր նոր սոցիալական ու տնտեսական հարաբերությունների առաջացմանը։ Եվ միանգամայն հնարավոր է, որ այդ նոր ուժերը ժամանակի ընթացքում առաջ էին բերելու ֆեոդալական կազմակերպության տապալումը, եթե այդ իրադրության զարգացումը չխափանվեր թյուրք-մոնղոլական արշավանքներում։

11-րդ դարի առաջին կեսում Բյուզանդիայի մերձավոր-արևելյան քաղաքականության մեջ տեղի ունեցավ սուր շրջադարձ։ Քառասնամյա համառ կռվից հետո Բյուզանդական պետությունը Արևմուտքում դրավեց Բուլղարական թագավորությունը և փոխեց իր քաղաքականությունը Ֆեոդալական Հայաստանի և Անդրկովկասի մանր թագավորությունների վերաբերմամբ։

Հանդես գալով գործուն կերպով Արևելքում, նա իր իշխանությանը ենթարկեց Վանա լճի շուրջը տեղավորված ամիրայությունները և հետզհետե մտցրեց կայսրության կազմի մեջ արևմտյան Հայաստանը, Վրաստանի մի մասը, Վասպուրականում՝ Արծրունիների թագավորությունը (1016 թ.), Անիի Բագրատունյաց թագավորությունը (1045 թ.) և Վանանդի մարզում՝ Կարսի Բագրատունիների թագավորությունը (1064 թ.)։

Հիշված բոլոր ֆեոդալական երկրներում նա անմիջապես ձեռք առավ միջոցներ հողագործական տիրող դասի և նրա զինվորական ուժի թուլացման վերաբերմամբ։ Միացված մարզերից հողագործական ազնվականությունը մասսաներով հեռացվեց, գլխավորապես դեպի Փոքր Ասիա և Կիլիկիա, որտեղ նրանք ստացան նոր հողեր և կալվածներ։ Բագրատունիների և նախարարությունների տեղական զինվորական ուժերը արձակվեցին և փոխարինվեցին կայսերական եկվոր զորքերով։ Եվ այնուհետև, երբ տիրող դասի ընդդիմությունը կոտրված էր, ամենուրեք մտցվեց Բյուզանդիայի կայսերական վարչական ղեկավարությունը։

Անիի Բագրատունիների թագավորությունը և Անի քաղաքը բյուզանդացիները գրավել էին 1045 թվականին, իսկ արդեն երեք տարուց հետո սելջուկյան հրոսակախմբերը, որոնք մտել էին Հայաստան Վասպուրականի կողմից, ավերեցին և քարուքանդ արին Վանա լճից հյուսիս գտնվող մարզերը։

Սելջուկների Հայաստանի վրա կատարած այդ արշավանքից հետո, որը սկզբնական շրջանում ուներ ավարառական ասպատակությունների բնույթ, արշավանքները պարբերաբար կրկնվում էին և ամեն անգամ թյուրք ոհմակները անխնա ավերում էին նոր և նոր շրջաններ ու իրենց հետ տանում հարուստ ավար և բազմաթիվ գերիներ։

Բյուզանդական կայսրությունը, որը պետք է պահեր սելջուկների գրոհները, չէր ցուցաբերում անհրաժեշտ ջանքեր իր հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանության համար։ Բացի այդ, Կոստանդին Մոնոմախոս (1042—1054 թ. թ.) և Կոստանդին Դուկաս (1059—1067 թ. թ.) բյուզանդական կայսրերը, կայսերական ֆինանսները բարելավելու նպատակով, կտրում էին զինվորական ռոճիկը և ամենուրեք կրճատում էին

գործի ցանակը։ Թույլ և անընդունակ բյուզանդական կառավարությունը մտահոգված էր ոչ այնքան իր երկրամասերի անվտանգության խնդրով, որքան հույն պաշտոնեության վերին խավերի շահերով, որը կատաղի պայքար էր մղում ընդդեմ հայ միաբնակների։

Ուստի և հասկանալի է դառնում, թե ինչու սուլթան Ալփասլանի ժամանակ (1063—1072 թ. թ.) սելջուկները առանց մեծ դժվարության կարողացան գրավել Հայաստանի լեռնային շրջանները և այնտեղից, իջնելով Փոքր Ասիա, հետզհետե Ալփասլանի հաջորդների ժամանակ հասան համարյա մինչև Կոստանդնուպոլսի դռները։

Սելջուկների արշավանքները ծանր հարված հասցրին Հայաստանի, առավելապես, կենտրոնական և հարավային շրջաններին։ Նրա տնտեսական և մշակութային զարգացումը ընդհատվեց, երկրի բարեկեցությունը ընկավ և բնակչությունը խիստ նվազեց։ Եվ դարձյալ, ինչպես և արաբական արշավանքների ժամանակ, երկրի մշակութային և տնտեսական հետադնացությունը և երկարատև լճացման դրությունն ու բուն Հայաստանի շինարարության ընդհատումը, ինչպես երևում է նորագույն հետազոտություններից, ընկնում է հենց այդ շրջանի վրա։ «Փնտրումներով մեր ժամանակը երևան հանված քարերի միջոցով,— գրում է Ն. Մառը,— կարդում ենք, որ 1061—1150 թվականներին բուն Հայաստանում շինարարությունը մարել էր»։

Սելջուկների կողմից Հայաստանը գրավելուց հետո, Հայկական թագավորությունը վերածնվեց Միջերկրական ծովի մոտ, Կիլիկյան Տավրոսյան լեռներում։

Բուն Հայաստանում կյանքի անտանելի պայմանները ստիպում էին հայերին գաղթել հարևան երկրները։ Շատ հայեր վերաբնակվեցին Միջերկրական ծովի առափնյա քաղաքներում և շրջաններում։ Այստեղ նրանք, գրավելով մի քանի բյուզանդական ամրոցներ, ամրացան Տավրոսյան լեռներում և հետզհետե միացրին իրենց տիրապետություններին Կիլիկիայի մերձակա շրջանները։

Կամաց-կամաց հունական այդ երկրամասերում առաջ եկան փոքր հայկական իշխանություններ, որոնցից առանձնապես զորեղացավ Ռուբենի (1080—1098 թ. թ.) և նրա հաջորդների կողմից հիմնադրված իշխանությունը։ Ռուբինյանները, որ ցույց էին տվել խաչակիրներին մեծ օգնություն, հաճախ կռվում էին Բյուզանդիայի դեմ, հենվելով իրենց հերթին խաչակիրների վրա։ Ժամանակի ընթացքում նրանք ենթարկեցին իրենց իշխանությանը հարևան իշխանությունները և դարձան Կիլիկյան հայկական թագավորության հիմնադիրները, որի մայրաքաղաքն էր սկզբնական շրջանում Տարսոնը, իսկ հետո՝ Սիսը։ Կիլիկյան թագավորությունը իր ծաղկման ամենաբարձր աստիճանին հասավ Լևոն Երկրորդի ժամանակ (1187—1219 թ. թ.), որ հանդիսավոր կերպով թագադրվեց Տարսոնում (1198 թվականի հունվարի 6-ին), իբրև Կիլիկյան Հայաստանի արքա։

Ռուբինյանների թագավորությունը, որ մշտական կապ էր պահպանում եվրոպական պետությունների հետ, գտնվում էր արևմտա-եվրոպական ֆեոդալիզմի ազդեցության տակ, բայց միաժամանակ պահում էր հին հայկական նախարարական ֆեոդալական կարգերի առանձնահատուկ գծերը։ Կիլիկյան թագավորությունը բաժանված էր կոմսությունների ու բարձր ազնվականության։ Այնտեղ եղել են նաև, ինչպես և արևմտա-եվրոպական երկրներում, ասպետների՝ հին հայկական ազատների, դաս, որոնք կոչվում էին ձիավորներ, և կախում ունեցող գյուղացիների ու ճորտերի դաս, որոնք կոչվում էին շինականներ և պարեկներ։ Հայ արքայի արքունիքում եղել են հետևյալ պաշտոնները՝ կանցլեր, որ կառավարում էր թագավորի դիվանը, զորապետ, որ կոչվում էր սպասալար, կապպելյան, սենեսկալ և այլն։

Միջերկրական երկրների տնտեսական աշխուժացումը, որ պայմանավորված էր խաչակիրների և իտալական քաղաքային հանրապետությունների մուսուլմանական Արևելքի հետ ունեցած կապերով, վերաբերում էր նաև Կիլիկյան թագավորությանը։ Արդեն 12-րդ դարում, առաջին խաչակրաց արշավանքից հետո (1096—1099 թ. թ.) սկսվեցին առևտրական հարաբերություններ Ջենովայի և Վենետիկի, Սիրիայի, Պաղեստինի ու Կիլիկիայի հետ։ Իսկ հետո, մոնղոլական դարաշրջանում, սկսած 13-րդ դարի երկրորդ կեսից, խիստ զարգացավ կարավանային առևտուրը, Կիլիկյան նավահանգիստ Այասի միջով Թավրիզի և Սուլթանիեի հետ։ Կիլիկիայի Այաս, Տարսոն և Ադանա քաղաքներում իտալական վաճառականները հիմնել էին գաղութներ և առևտրական գրասենյակներ։ Եվ այդպիսով, Կիլիկիայի հարուստ հայ վաճառականությունը, որն առևտրական կապեր ուներ բուն Հայաստանի և մուսուլմանական արևելյան երկրների հետ, ներգրավվել էր Արևմուտքի հետ տեղի ունեցող համաշխարհային առևտրի մեջ։

(Շարունակելի)

ԷՋՄԻԱԾԻՆ

Ա. ՍԱՀԻՆՅԱՆ
(ճարտարապետության թեկնածու)

# ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

*1955 թվականին Տաճարի ներսում կատարված հետազոտությունների ժամանակ, երբ շենքի վերականգնման կապակցությամբ հանվել էին գմբեթակիր չորս մույթերի և նրանցից սկզբնավորվող կամարների ծեփերը, պարզվեց, որ դեռ այսօր էլ պահպանվել է այդ կենտրոնագմբեթ հորինվածք ունեցող շենքի զգալի մասը։ Նույն տարվա հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ «Էջմիածին» ամսագրում հրապարակված գրության մեջ հայտնել էինք, որ այդ շենքից պահպանվել են բացի հիշյալ խարիսխներից, նաև համապատասխան մույթերը, մույթերի խոյակներից մի քանիսը, գմբեթակիր կամարները և հավանաբար, թեկուզ մեծ վերանորոգություններով ենթարկված, արտաքին պատերը[21]։ Այնուհետև նշվում է՝ «Թե հատակագծային ինչպիսի ճշգրիտ պատկեր կարող էր ունեցած լինել Վահան Մամիկոնյանի կառուցած շենքը (արտաքինից ուղղանկյո՞ւն, թե՞ խաչաձև), հավանաբար հնարավոր կլինի պարզել պեղումներից ստացված նյութերի մշակման ընթացքում[22]։*

*Այդ նյութերի մշակումը և հատկապես ընթացիկ տարվա (1956 թ.) պեղումների նոր նյութերը հնարավորություն են ընձեռում պարզել 5-րդ դարի վերջին Վահան Մամիկոնյանի վերակառուցած շենքի հատակագծային ճշգրիտ պատկերը և այդ կառուցվածքի տարածական-ծավալային հորինվածքի բնույթը։*

*Ինչպես հայտնի է, Էջմիածնի Մայր Տաճարի այժմյան՝ թե՛ ներսից և թե՛ դրսից խաչաձև հորինվածքը համարվում է 7-րդ դարի կեսերի կառուցվածք։ Ենթադրվում է, որ 5-րդ դարի վերջերին Վահան Մամիկոնյանի վերակառուցած տաճարը ունեցել է արտաքինից գրեթե քառակուսի տեսք, իսկ ներսից չորս սրահներ և նրանց անկյուններում մեկական սենյակներ (ավանդատներ)։ Եվ, որ 7-րդ դարի կեսերին Ներսես Գ կաթողիկոսը քանդել է 5-րդ դարի այդ արտաքինից քառանկյունի շենքի ներսի չորս սենյակները (ավանդատները) և սրահների ու այդ սրահների արտաքին պատերը պահելով, դրսից կցել նոր՝ բազմանիստ աբսիդներ ու ստացել այժմյան՝ թե՛ ներսից, թե՛ դրսից խաչաձև հորինվածքը[23]։*

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի № VIII—IX-ից։

21. «Էջմիածին», 1955 թ., № 8, էջ 26։

22. Նույն տեղում։

23. Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942 թ., հատ. II, էջ 226—227։

Պեղումների նյութերը ցույց են տալիս, որ Վահան Մամիկոնյանի ժամանակ վերակառուցված շենքը ունեցել է այլ ձև և նրա հատակագծային հորինվածքը հետագայում ոչ մի փոփոխության չի ենթարկվել։

Այսպես, երբ պարզվեց, որ Մայր Տաճարի այժմյան գմբեթակիր մույթերի տակ գտնվող կրկնակի խարիսխներից՝ վերևի վածքի մեջ ներգծված չորս աբսիդներ և աբսիդների անկյուններում սենյակներ, ապա գմբեթակիր մույթերի խարիսխների մշակված (պրոֆիլներ ունեցող) չորս ճակատներից երկուսականը պետք է գտնվեին այդ սենյակների և նրանց կից աբսիդների միացման հանգույցների պատերի մեջ։ Բնական է, որ շենքի սկզբնական կառուցողը



Մայր Տաճարի արևմտյան աբսիդի հարավային անկյան
խարիսխներ և հիմներ

խարիսխները պատկանել են Վահան Մամիկոնյանի ժամանակ ստեղծված շենքին, իսկ այդ խարիսխների խաչաձև կառուցվածքի չորս ճակատներն էլ մշակված են (պրոֆիլներ ունեն)։

Եթե Վահան Մամիկոնյանի վերակառուցած շենքը ունենար քառանկյան հորին- նման անիմաստ բան անել չէր կարող. որովհետև, ինչու պետք է գմբեթակիր մույթերի բոլոր խարիսխների չորս ճակատներն էլ մեծ ջանասիրությամբ մշակեին (ընդորում, հաճախ միևնույն բնույթի, բայց միմյանցից տարբեր քանդակված) և ապա անմիջապես նրանցից յուրաքանչյուրի երկու-

տկան ճակատները թաղեին հանդիպակաց պատերի զանգվածների մեջ։ Հասկանալի է, որ մենք այստեղ գործ ունենք անդամ կանգնած մույթերի խարիսխների հետ, որոնք ժամանակին չորս կողմից դիմվել են։ Նշանակում է՝ նրանց դիմաց պատեր, ա-ռանձնաբար և անկյունային սենյակներ չեն եղել։ Իսկ այդ ամենը անհնարին է դուրս-բերել։ Իսկ այդ ամենը անհնարին է պատկերացնել Թամանյան ձևի մեջ ներգծված չորս արփեներով և անկյունային սենյակներով նորմալ շենքի գոյությունը։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ ձև է ունեցել Վահան Մամիկոնյանի ժամանակաշրջանում վերակառուցված շենքը։

Ինչպես նշվեց, դեռ 1955 թվականի հետազոտությունների ժամանակ պարզվել էր, որ 5-րդ դարի վերջերին վերակառուցված շենքից պահպանվել են, բացի Ռիփսիմեի խարիսխներից, նաև համապատասխան մույթերը, մույթերի իմպոստներից մի քանիսը, գմբեթակիր կամարները և համանարար, թեկուզ մեծ վերանորոգությունների ենթարկված, արտաքին պատերը, այսինքն, Տաճարի այժմյան ողջ հորինվածքը, բացառությամբ արսիդների, արևելյան արսիդի երկու կողմերում գտնվող սենյակների (ավանդատների), թմբուկի և գմբեթի։

Սեբեոսի և Դրասխանակերտցու վկայություններից գիտենք, որ Տաճարը ունեցել է փայտաշեն գմբեթ և միայն 7-րդ դարի սկզբներին է այն վերաշինվել քարով[27]։

Այդ իսկ պատճառով, 5-րդ դարի շենքի ամբողջ հորինվածքը պարզելու համար, 1956 թվականի հետազոտական աշխատանքները տարվեցին միայն տաճարի արտաքին պատերի, արսիդների և ավանդատների ընդհանուր կառուցվածքների ու նրանց միացումների համապատասխան հանգույցների ուսումնասիրության ուղղությամբ։

Առաջին հերթին սկսվեց գմբեթակիր մույթերի տակին գտնվող վերնի, այսինքն 5-րդ դարի վերջերին կառուցված խարիսխներին համապատասխանող մույթերի ու Տաճարի արտաքին պատերի շինարարական կապի ուսումնասիրությունը։

5-րդ դարի վերջերին կառուցված մույթերը ունեն խաչաձև կտրվածք, այսինքն մույթերի չորս ճակատներից էլ սկզբնավորվել են կամարներ։ Հետևապես, մեկական կամարներ էլ սկզբնավորվել են մույթերի դեպի արտաքին պատերը ուղղված ճակատներից և այդ կամարներից յուրաքանչյուրը մեկ կրունկով հանգչելով մույթերի համապատասխան ճակատի նյութի վրա, մյուսով պետք է հանգչեր հանդիպակաց պատի կամ վերջինից ելնող որմնամույթի վրա։ Այստեղ պատից ելնում են որմնամույթեր և նրանց վրա էլ նստում են մույթերից սկզբնավորվող կամարների համապատասխան կրունկները։ Սակայն կարող է հարց առաջանալ, արդյո՞ք այդ պատերը և նրանցից ելնող որմնամույթերը ժամանակակից են մույթերի հիշյալ ճակատներին (հետևապես և 5-րդ դարի վերջերին ստեղծված ամբողջ մույթերին), թե՞ կառուցվել են մեկ այլ ժամանակ։

Հետազոտությունից պարզվում է, որ

ա) Արտաքին պատերի վրա գտնվող որմնամույթերի լայնությունները (0,86—0,88 մ.) համապատասխանում են ոչ թե անշատ կանգնած մույթերի համապատասխան ճակատների ներկայումս ունեցած լայնություններին (1,06—1,17 մ.), այլ այդ մույթերի այժմյան կառուցվածքների ներսում գտնվող 5-րդ դարի մույթերի համապատասխան ճակատների լայնություններին (0,86—0,97 մ.)[28]։ Ընդորում, եթե մի շարք տեղերում որմնամույթերից սկզբնավորվող կամարները գնում են և մույթերի այժմյան կառուցվածքների համապատասխան ճակատների վրա մի անկյունից կոնսոլաձև (աններդաշն ձևով) կախվում (հարավ-արևմտյան մույթի արևմտյան ճակատում, հյուսիս-արևելյան մույթի հյուսիսային ճակատում և մասամբ էլ հյուսիս-արևմտյան մույթի հյուսիսային ճակատում)[29], ապա նույն այդ կամարների ուղղությունները ճշտությամբ համընկնում են 5-րդ դարի խարիսխներին համապատասխանող մույթերի համապատասխան ճակատներին։ Այսինքն, որմնամույթերը և 5-րդ դարի խարիսխներին համապատասխանող մույթերի համապատասխան ճակատները կառուցված են ճիշտ միևնույն ուղղության վրա։

բ) Եթե որմնամույթերից սկզբնավորվող կամարների մեկական կրունկները գտնվում

27. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913, գլ. ԻԹ, էջ 141—142։— Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 74—75։

28. 1,06—1,17 մ. չափերը վերաբերում են այդ ճակատների մինչև 1955 թվականի վերակառուցումը գոյություն ունեցած լայնություններին։ 1955 թվականին անշատ կանգնած մույթերի նոր վերանորոգման հետևանքով բոլոր ճակատները, նույն թվում նաև դեպի որմնամույթերը ուղղված ճակատները ավելի լայնացվեցին։

29. Այդ անհարմար տեսքը վերացվել է 1955 թվականի վերանորոգումների ժամանակ, երբ մույթերի բոլոր ճակատների լայնությունները, սկզբնական լայնությունների համեմատությամբ, էլ ավելի մեծացվեցին։

են ճիշտ և ճիշտ որմնամույթերի ճակատնե-րի ուղղաձիգ հարթությունների ուղղություն-ների վրա, իսկ մյուս կրունկները նստում են մույթերի այժմյան կառուցվածքների հա-մապատասխան ճակատների ուղղաձիգ մա-կերեսներից բավական հեռ, ապա այս նույն կրունկները 5-րդ դարի մույթերի համապա-տասխան ճակատներում (որմնամույթերից ելնող կրունկների նման) նստում են ճիշտ ճակատի ուղղաձիգ հարթության ուղղության վրա։ Այսինքն, որմնամույթերը և 5-րդ դա-րի մույթերի համապատասխան ճակատնե-րը իրենց վրա հանգչող կամարների նկատ-մամբ ունեն միանման (նորմալ) դասավո-րություն (կառուցվածք)։

գ) Որոշակի ընդհանրություն գոյություն ունի մույթերի տակին գտնվող — վերևի՝ այսինքն 5-րդ դարի վերջերին կառուցված խարիսխների մշակումների բնույթի (ոճի) և արտաքին պատերի որմնամույթերի խա-րիսխների մշակումների բնույթի (ոճի) միջև։

դ) Արտաքին պատերը չնայած տարբեր ժամանակներում ենթարկվել են բազմաթիվ վերանորոգումների, այնուհանդերձ, հյուսի-սային պատի արևելյան մասում (դրսից) պահպանվել են հնագույն ճակտոնի քիվի մնացորդներ։ Քիվի պահող մասը մշակված է մոդուլյոններով, որպիսի ձևը գալով նա-խաքրիստոնեական շրջանից, հիմնականում բնորոշ է քրիստոնեական վաղ շրջանի կա-ռուցվածքներին։ Ճիշտ նման տեսք ունի, առնվազն 4-րդ դարի գործ հանդիսացող՝ Քասաղի բազիլիկայի արևմտյան ճակատի ճակտոնից պահպանված քիվը։ Կասկածից վեր է, որ էջմիածնի Մայր Տաճարի հյուսի-սային պատի վրա պահպանված ճակտոնի մնացորդները նույնպես հանդիսանում են քրիստոնեական վաղ շրջանի գործ, և ան-շուշտ պատկանել են 5-րդ դարի վերջերին վերակառուցված շենքին։ Նման տեսակետ են հայտնել նաև հուշարձանը տեղում տեսած բազմաթիվ այլ մասնագետներ (Դյուբուա, Թ. Թորամանյան և ուրիշներ)[30]։

Այսպիսով, թե՛ արտաքին պատերի որմ-նամույթերի և գմբեթակիր մույթերի տա-կին գտնվող 5-րդ դարի խարիսխներին հա-մապատասխանող մույթերի չափերը, թե՛ նրանց միմյանց նկատմամբ ունեցած դա-սավորությունը, թե՛ նրանց խարիսխների

30. Դյուբուան հանգամանորեն ծանոթ չլինելով շեն-քի սկզբնական կառուցվածքի հետագա հիմնովին վե-րակառուցմանը, այն համարում է նույնիսկ 4-րդ դա-րի գործ. իսկ ճարտարապետ Թ. Թորամանյանը գրում է. «Հյուսիսային պատի փոքր ֆրոնտոնները իմ կար-ծիքով պետք է համարել... Վահան Մամիկոնյանի շի-նածը...»— «Էջմիածնի Տաճարը», Թիֆլիս, 1910, էջ 16։



Մայր Տաճարի հյուսիսային աբսիդի արևելյան անկյան խարիսխը և հիմքերը

մշակման բնույթը (ոճը) և թե՛ հյուսիսային ճակատի վրա պահպանված հնագույն ճակ-տոնի քիվի մնացորդները ցույց են տալիս, որ Տաճարի արտաքին պատերի սկզբնական կառուցվածքները ու նրանցից ելնող որմ-նամույթերը ժամանակակից են այժմյան գմբեթակիր մույթերի տակին գտնվող 5-րդ դարի վերջին կառուցված խարիսխներին ու նրանց համապատասխան մույթերին:

Արդ, տեսնենք, շինարարական ի՛նչ կա-պակցության մեջ են գտնվում Տաճարի պա-տերի և աբսիդների կառուցվածքները։

ա) Տաճարի արտաքին պատերի և նրան-ցից դուրս ելնող՝ հարավային, հյուսիսային և արևմտյան աբսիդների ուղիղ սկզբների խարիսխների տակ գտնվում են սրբատաշ տուֆաքարից կառուցված հիմքերի երկու կամ երեք շարքեր (Տաճարի հարավային կե-սում հիմքերը ունեն երեք շարք, հյուսիսա-յին կեսում՝ երկու շարք), որոնցից վերևի շարքը անհամեմատ շատ ավելի լավ տաշ-ված։ Հիմքերի այդ շարքերը Տաճարի պա-տերի և աբսիդների միացման հանգույցնե-րում նույն մաքուր տաշված ճակատներով ուղիղ անկյունով շրջվում են դեպի աբսիդ-ների խորշերի ներսը, այնպես, որ աբսիդ-ների ուղիղ սկզբների, նրանց կից որմ-նամույթերի և արտաքին պատերի հիմ-

քերի կառուցվածքները կազմում են մի օրգանական ամբողջություն։

Արտաքին պատերի և աբսիդների միացման հանգույցներում, ինչպես պատի ներքևի, այնպես էլ հիմքի բոլոր շարքերում հետագա ոչ մի կցումների կամ այլ կարգի վերակառուցումների հետքեր չկան։

Այդ փաստը արձանագրված է նաև պեղումների ընթացքում հրավիրված մասնագիտական պաշտոնական հանձնաժողովի կողմից կազմված ակտի մեջ[31]։

բ) Արտաքին պատերի և հարավային, հյուսիսային ու արևմտյան աբսիդների միացման մեկ հանգույցից մինչև մյուս հանգույցը (աբսիդների մեկ ուղիղ սկզբից մինչև մյուս ուղիղ սկիզբը) ընկած տարածության վրա, արտաքին պատերի ուղղություններով ընթացող պատերի կամ հիմքերի հետքեր չկան[32]։ Ընդորում, եթե պատերի և աբսիդների հիմքերի ներքևի շարքերի քարերը իրենց բարձրությամբ մի մասով խորանում են մայր հողի (մանր գետաքարերով խառնված կավահողի շերտի) մեջ, այսինքն հիմքերի ներքևի քարերը շարելու համար, մայր հողը որոշ խորությամբ փորված է, ապա արտաքին պատերի և աբսիդների միացման մեկ հանգույցից մինչև մյուս հանգույցը ընկած տարածության վրա մայր հողը գտնվում է անաղարտ վիճակում։ Նշանակում է՝ այդ տարածության վրա արտաքին պատերի ու նրանց համապատասխան հիմքերի շարքերը չեն շարունակվել։

գ) Աբսիդների ուղիղ սկզբների խարիսխները ըստ կառուցվածքի օրգանական ամբողջություն են կազմում իրենց կից որմնամույթերի հետ և ամենայն հայկական ճարտարապետությանը բնորոշ բազմաթիվ մշակումներ, ըստ մշակման ընդհանուր բնույթի (ոճի), նման են ինչպես որմնամույթերի, այնպես էլ անշատ կանգնած մույթերի տակին գտնվող 5-րդ դարի վերջերին կառուցված խարիսխների մշակումների բնույթին (ոճին)։ Դժբախտաբար, աբսիդների ոչ բոլոր խարիսխներն են ամբողջական տեսքով պահպանված. այս տեսակետից գրեթե անաղարտ վիճակում են գտնվում հյուսիսային աբսիդի ուղիղ սկզբների խարիսխները, որոնցից հատկապես աբսիդի արևելյան հանգույցի խարիսխը այն աստիճան նման է Քասաղի բազիլիկայի 5-րդ դարի կառուցվածք համարվող աբսիդի և 5-րդ դարի վերջերին (478/9—493/4 թ. թ.) կառուցված Բոլնիսի Սիոնի (Վրացական ՍՍՌ) մույթերի խարիսխներին, որ կարելի է նույնիսկ միմյանց հետ շփոթել նրանց լուսանկարները։

Նշանակում է, արտաքին պատերի և աբսիդների միացման հանգույցների ներքևի շարքերի ու հիմքերի շինարարական օրգանական միասնությունը, պատերի և աբսիդների մանրամասների մշակման բնույթի (ոճի) ընդհանրությունը և աբսիդների մեկ ուղիղ սկզբից մինչև մյուս ուղիղ սկիզբը ընկած տարածության վրա — արտաքին պատերի ուղղություններով ընթացող պատերի կամ հիմքերի բացակայությունը ցույց են տալիս, որ Տաճարի արտաքին պատերը և նրանցից դուրս ելնող աբսիդները կազմում **ԵՆ՝ միաժամանակ ստեղծված մի միասնական կառուցվածք**։ Իսկ այժմյան անշատ կանգնած մույթերի կառուցվածքների ներսում գտնվող 5-րդ դարի վերջերին ստեղծված մույթերի և արտաքին պատերի — հետևապես և վերջինների հետ ամբողջություն կազմող աբսիդների — միասնությունը ցույց է տալիս, որ Էջմիածնի Մայր Տաճարի 5-րդ դարի վերջերին ստեղծված մույթերը, ար-

31. Հանձնաժողովի կազմի մեջ մտնում էին՝ հարավային աբսիդի ու նրա շրջապատի պեղումների ժամանակ՝ Երևանի քաղաքային նախագծային արվեստանոցի վարիչ ճարտարապետ Մ. Մազմանյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի ավագ գիտական աշխատակից, ճարտարապետության թեկնածու Ո. Մնացականյանը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հնագիտական սեկտորի ավագ գիտական աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանը, նույն սեկտորի ավագ գիտական աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Հ. Մարտիրոսյանը և տողերիս գրողը։

Հյուսիսային աբսիդի և նրա շրջապատի պեղումների ժամանակ՝ ճարտարապետ Մազմանյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և Ճարտարապետության գործերի կոմիտեի Հուշարձանների պահպանության բաժնի վարիչ, ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանը, ճարտարապետության թեկնածու Ո. Մնացականյանը և տողերիս գրողը։

Արևմտյան աբսիդի և նրան կից որմնամույթերի միացման հանգույցները որոշվեց բաց պահել մշտապես դիտելու համար, այդ իսկ պատճառով հատակը չփակվեց. բավարարվեցինք միայն լուսանկարահանումներով։ Հետագայում, տեխնիկական նկատառումներից ելնելով, նպատակահարմար համարվեց պահպանել միայն արևմտյան աբսիդի մեկ (հարավային) հանգույցը։

32. Հանձնաժողովների կազմած ակտերում, հարավային աբսիդի վերաբերյալ արձանագրված է. «Աբսիդի ուղիղ սկզբների հիմքերի ամբողջական ուղղությամբ, Տաճարի հարավային պատի հիմքերի շարունակությունը կազմող հիմքեր չկան»։ Հյուսիսային աբսիդի վերաբերյալ արձանագրված է. «Աբսիդի ուղիղ սկզբներն իրար միացնող ոչ մի պատ կամ հիմքեր չկան»։

տաջին պատերը և արսիդները (Հարավային, Հյուսիսային և արևմտյան)[33], ամբողջությամբ Համընկնում են 5-րդ դարի վերջերին ստեղծված մի միանական կառուցվածք:

Հետևապես, Էջմիածնի Մայր Տաճարի այժմյան խաչաձև հորինվածքը ոչ թե ստեղծվել է Ներսես Գ Կառուցողի ժամանակաշրջանում՝ 7-րդ դարի կեսերին, այլ նրանից դրեթե երկու դար առաջ, Վահան Մամիկոնյանի օրոք՝ 5-րդ դարի վերջին տասնամյակներում:



Մայր Տաճարի հյուսիսային ավանդատան արևելյան պատի տակից անցնող հնագույն ստիլոբատի մնացորդները

*ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.— Պեղումների ընթացքում պարզվեց, որ*

*ա) Հյուսիսային ավանդատան հիմքերը կառուցված են երկու շարք սև և բաց շագանակագույն տուֆաքարերից: Հիմքի բոլոր քարերը սրբատաշ են, որոնցից անկյունաքարերը տաշված են առավել մաքուր: Հիմքի ներքևի շարքի տակ գտնվում է 5—10 սանտիմետր հաստություն ունեցող կրաշաղախի շերտ, իսկ այդ ամենը տաճարի մյուս հատվածների հիմքերի նման դրված են կավահողով խառնված մանր գետնաքարերի համատարած բնական խճաշերտի վրա:*

---

33. *Արևելյան արսիդի պեղումները տեխնիկական պատճառներով հետաձգված են 1957 թվականին: Սակայն այդ հանգամանքը չի կարող որևիցե տարակուսանք առաջացնել կատարվող եզրակացությունների նկատմամբ, որովհետև, եթե արևելյան արսիդի ուղիղ անկյունների տակ, ինչպես կանգնած մույթերի նման գտնվեն երկնակի խարիսխներ, նշանակում է՝ արևելյան արսիդը հիմնադրված է դեռ 4-րդ դարից, եթե ունենա որմնամույթերի նման միակի խարիսխներ, նշանակում է արևելյան արսիդը ժամանակակից է 5-րդ դարի վերջերին ստեղծված շենքին: Իսկ եթե արևելյան արսիդը ունենա միայն մույթերի ներքևի խարիսխների տիպի խարիսխներ, ապա բացառված չէ, որ արսիդի ամբողջ կառուցվածքը հանդիսանա 4-րդ դարի գործ:*

բ) Ավանդատան հիմքերի բոլոր անկյունաքարերը մանրնդմեջ ագուցված են իրար և ընդհանրապես միացված միմյանց։ Ինչպես հիմքի, այնպես էլ պատի ներքևի՝ ձախից հիմքի, այնպես էլ պատի ներքևի՝ ձախից (որ համապատասխան մասի կառուցվածքում (որ համապատասխանաբար կարելի էր դիտել որմնաշարքերի միացումները), կցումների կամ կարկատանի հետքեր չկան։ Պատերի և հիմքերի բոլոր անկյունները ունեն ճիշտ 90°-ի անկյան կառուցվածք։

գ) Ավանդատան հիմքերից անմիջապես վեր գտնվող պատերի քարերը հիմքի քարերի համեմատությամբ ունեն ավելի նուրբ հանդգնություն, բոլոր պատերի քարերը թե՛ դաշտաշված. Բոլոր պատերի քարերը թե՛ հաղթահարվածության աստիճանով, թե՛ հաղթահարվածության աստիճանով հար և նման են միմյանց[34]։

դ) Հյուսիսային կողմից դեպի ավանդատուն բացվող դռան հատակը և Տաճարի բոլոր մուտքերի հատակները գտնվում են գրեթե նույն հորիզոնի վրա։ Ընդորում, նախկին ընդհանուր ավանդատուն բացվող դռան հատակը և Տաճարի նույն՝ հյուսիսային կողմում գտնվող մուտքի հատակը գտնվում են ճիշտ և ճիշտ մի հորիզոնի վրա։ Իսկ այդ բոլոր մուտքերի հատակները չնչին (մի քանի սանտիմետր) տարբերությամբ գտնվում են որմնամույթների խարիսխների ներքնասալիկների ներքևի (այսինքն տաճարի սկզբնական հատակի) հորիզոնի վրա։

ե) Ավանդատան հարավային և արևմտյան պատերի պարագծով ընթացող ատիլորատի մնացորդներ կամ որևէ աստիճանի հետքեր չկան։

զ) Ավանդատան այժմյան սալահատակից ներքև գոյություն ունեն միմյանցից տարբեր հեռավորության վրա դարձյալ երկու հատակ, որոնցից՝ մեկը կառուցված է թրծված աղյուսից, իսկ մյուսը տուֆաքարերի սալերից։ Տաճարից դեպի ավանդատուն բացվող դռան այժմյան հատակից 14 սանտիմետր ներքև գտնվում է աղյուսից պատրաստած հատակը, իսկ վերջինից 27,5 սանտիմետր ցած կառուցված է տուֆաշեն սալահատակը, որը գտնվում է Տաճարի 5-րդ դարի սալահատակի հորիզոնի վրա։ Ներքևի սալահատակի տակ, ավանդատան հարավային պատի արևելյան ծայրի մոտ, բացվեց հնագույն ջրհոր։ Ջրհորն ունի ուղղանկյուն կառուցվածք, բայց նրա պատերը զուգահեռ չեն ավանդատան պատերին։

Եթե ջրհորի հարավային պատի մի ծայրը գրեթե կպչում է ավանդատան պատին, ապա ջրհորի նույն պատի մյուս ծայրը զգալիորեն հեռանում է ավանդատան պատից։ Դատելով ջրհորի կառուցվածքից, թերևս կարելի է մտածել, որ այն գոյություն է ունեցել մինչև ավանդատան կառուցումը։ Բայց պատերի ոչ զուգահեռ կառուցվածքը կարող էր լինել նաև պատահականության հետևանք։ Հետևապես, թե ե՞րբ է սարքվել ջրհորը՝ առայժմ դժվար է ասել։

Ջրհորի գոյությունը ցույց է տալիս, որ ավանդատան հարավային պատը իսկապես ատիլորատ չի ունեցել, որովհետև ատիլորատի աստիճանները կարող էին փակել այն։

է) Ավանդատան արևելյան պատի դրսի (Թանգարանի հյուսիսային սենյակի) կողմից գոյություն է ունեցել բազմաստիճան ատիլորատ, որի աստիճանները շարվել են Թանգարանի հատակի կառուցման ժամանակ և մնացորդները առել վերջինիս սալահատակի տակ։ Պեղումների ժամանակ բացվեցին այդ ատիլորատի շարված աստիճանների մնացորդները և պատից 1,63 մետր հեռավորության վրա ատիլորատի ներքևի աստիճանը։ Աստիճանը ունի 0,32 մետր բարձրություն և 0,23...0,25 մետր խորություն և պահպանված է գրեթե անաղարտ վիճակում։ Այդ աստիճանի մաքուր տաշված հորիզոնական մակերեսի վրա պարզ երևում է նաև հաջորդ (ներքևից հաշված երկրորդ) աստիճանի քարերի շարվածքի տեղը։ Ճիշտ համանման պատկեր բացվեց արևելյան աբսիդի արևելյան պատի դրսի կողմից։ Պահպանվել են նաև ավանդատան արևելյան պատի արտաքին երեսի և աբսիդի համապատասխան պատի միացման հանգույցում, աբսիդի ատիլորատի ներքևի աստիճանի մնացորդները։

Այսպիսով, հյուսիսային ավանդատան թե՛ հիմքերի ու պատերի օրգանական միասնությունը Տաճարի համապատասխան պատերին ու նրանց հիմքերին, թե՛ ավանդատան ու Տաճարի սկզբնական սալահատակների կառուցման միանման բնույթը և միևնույն հորիզոնի վրա գտնվելու փաստը, թե՛ ավանդատան հարավային և արևմտյան պատերին կից ատիլորատի աստիճանների բացակայությունը, իսկ ավանդատան արևելյան պատի դրսի կողմից նրանց գոյությունն ու կապը արևելյան աբսիդի ատիլորատի հետ ակնառու ցույց են տալիս, որ ավանդատունը օրգանապես միացված է Տաճարին և վերջինիս հետ իբրև մի միասնական կառուցվածք հանդիսանում է միևնույն ժամանակի արգասիք։

Նշանակում է 5-րդ դարի վերջերին Տաճարի հետ մեկտեղ կառուցվել են նաև ավանդատները։

ՃԱՆԿԱՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ.— Մայր Տաճարի 1955 թվականի պեղումների ժամանակ

34. Ավանդատան պատերի քարերը (որոնցից հետագայում եղավ ծեփից ազատված մասում տեսնել միայն երկու շարք) փականներ չունեն։

մույթերի և պատերի հիմքերի ուսումնասիրության ընթացքում Տաճարի հարավային պատի արևմտյան հատվածի հիմքերի մոտ գտնվեց խճանկարի բաց-կանաչագույն ապակուց պատրաստված ոսկեզօծ մի խորանարդիկ։ Ինչպես նշվել էր դեռ 1955 թվականի պեղումների արդյունքների վերաբերյալ նույն թվականի «Էջմիածին» ամսագրում հրատարակված գրույցում, խճանկարի այդ խորանարդիկը հայտնաբերվել էր Տաճարի 5-րդ դարի կառուցվածքի տակ գտնվող առավել հնագույն շենքի՝ այսինքն Տաճարի սկզբնական կառուցվածքի հիմքերի հորիզոնի ուղղության վրա[36]։

Հյուսիսային ավանդատան մեջ խճանկարի մնացորդներ գտնվեցին սենյակի 5-րդ դարի սալահատակի ամբողջ մակերեսի տակ, սկսած հիմքերի վերևի եզրի հորիզոնի ուղղությունից մինչև ներքևի եզրի հորիզոնի ուղղությունը ներառյալ։ Ընդորում, սենյակի հիմքի ներքևի շարքի վերևի եզրի հորիզոնի ուղղությունից մինչև մայր հողը ընկած տարածության մեջ, խճանկարի խորանարդիկները հանդիպում էին անհամեմատ առավել առատությամբ։

Խճանկարի խորանարդիկները դուրս էին գալիս հողի և շինարարական մնացորդների՝ ավազի, պատերի ծեփի, հնագույն շենքի շա-



Հնագույն ֆիվի բեկոր գտնված Մայր Տաճարի հարավային աբսիդի հիմքերի մոտից

1956 թվականին, խճանկարի համանման խորանարդիկներ, դարձյալ ապակուց պատրաստած (ինչպես ոսկեզօծ, այնպես էլ կապույտ, կանաչ, դեղին և այլ գույների) գտնվում էին Տաճարի հարավային և հյուսիսային աբսիդների, նաև հյուսիս-արևելյան հատվածի հիմքերի տարբեր բարձրությունների ուղղությունների վրա, իսկ ապա, մեծ քանակությամբ հայտնաբերվեցին հյուսիսային ավանդատան մեջ և հյուսիս-արևելյան մույթից դեպի արևելյան աբսիդը ընկած տարածության վրա։

ղախի և կղմինդրի բազմաթիվ բեկորների հետ միախառնված վիճակում։ Սակայն, ավանդատան հարավ-արևմտյան անկյունում մայր հողից 40—50 սանտիմետր բարձրությամբ բացվեց միայն պատերի (թե՞ առաստաղի) ծեփի բեկորների հետ միախառնված խճանկարի շարդված մի խոշորագույն զանգված (շերտ), որը գրավելով 1.20×1.80 մետր տարածություն, հարավային և արևմտյան կողմերից ընդհուպ կպած էր ավանդատան հիմքի քարերին, իսկ արևելյան կողմից երիզված էր 0.37 մետր բարձրություն ունեցող տուֆաքարի ուղղաձիգ կերպով դրված երկու սալերով։

---

36. «Էջմիածին», 1955 թ., № 12, էջ 27։

Ակնհայտ է, որ խճանկարի մնացորդների այդ խոշորագույն շերտը անջատված էր խճանկարի նույն փռյրում գտնված մյուս մնացորդներից և թաղված էր առանձին։

Ավանդատան միայն այդ անկյունից գտնվեցին 8.000 խորանարդիկներ, իսկ անկյունի մնացած տարածություններից՝ 4.000 հատ։

Թերևս, խճանկարի այդ առանձին թաղված մնացորդները ժամանակին պատկերել են այնպիսի նկար (անդամ կամ ընդհանուր կոմպոզիցիայի մեջ), որը ինչ-ինչ պատճառներով ցարդելուց-ամփոփելուց հետո, այնուհանդերձ, գերադասել են նրա մնացորդները ամփոփել մի ինքնուրույն, որոշակի տեղում։

Չնայած սենյակի հատակի տակ սփռված մյուս խորանարդիկները թե՛ իրենց գույներով, թե՛ կառուցվածքով, թե՛ կառուցողական (հավարման) տեխնիկայով և թե՛ չափերով հար և նման են այդ առանձին տեղում գտնըված խորանարդիկներին, բայց և այնպես, դժվար է որոշակի ասել՝ նրանք պատկանել են այդ նույն նկարի՞ն, թե՞ հանդիսանում են մեկ ուրիշ մասի կամ միգուցե և այլ ավերված խճանկարի ցրիվ եկած մնացորդներ։

Խճանկարի այդ առանձին թաղված մնացորդները գտնվում են ավանդատան մեջ հայտնաբերված ջրհորից 20 սանտիմետր հեռավորության վրա։ Ինչպես վերը նշվեց, ջրհորի կառուցման ստույգ ժամանակը դժվար է ասել, սակայն, ակնհայտ է, որ ավանդատան կառուցումից հետո այն օգտագործվել է և նրա պատերը բարձրացված են եղել մինչև ավանդատան սկզբնական սալահատակի վերին հորիզոնին հավասար։ Հետագայում, երբ ինչ որ պատճառով ջրհորը դադարել է օգտագործվելուց, նրա մեջ աստիճանաբար սկսել են կուտակվել ոչ միայն սալահատակից վեր գտնվող փոշին ու այլ նյութեր (հող, քար, խեցեղենի կտորներ ու զանազան իրեր), այլ սալահատակի տակ գտնվող լիցքի որոշ մասը։

Ավանդատան հիմքերը մայր հողից մինչև սկզբնական սալահատակը ունեն երկու շարք բարձրություն (0,71 մետր). բնական է, նույն տեղում գտնվող ջրհորի պատերը ևս պետք է մայր հողից մինչև նույն սալահատակը ունենային նույն երկու շարքի բարձրությունը։ Սակայն պեղումների ժամանակ, երբ բացվեց ջրհորի կառուցվածքը, մայր հողից վերև բարձրացող նրա պատերից պահպանվել էր միայն ներքևի շարքի քարերի մի մասը, իսկ ներքևի շարքի քարերի մյուս մասը և վերևի շարքի քարերը չկային [36]։ Պակասող քարերից երեք հատ հանեցինք ջրհորից, որոնք ժամանակին պոկվել և ընկել էին հորի մեջ, իրենց հետ տանելով շրջապատի, այսինքն՝ սալահատակի տակ գոյություն ունեցող լիցքի որոշ մասը։ Այդ լիցքի հետ, ջրհորի մեջ էր թափվել նաև սալահատակի տակ գտնվող խճանկարի մնացորդների մի մասը։ Ջրհորի լիցքի վերևի շերտի մեկ մետր խորության վրա, խճանկարի խորանարդիկներ չկային, իսկ ներքևում որքան իջնում էինք խորը, ընդհուպ մինչև ջրի մակերեսը (որը գտնվում է ավանդատան այժմյան հատակից 2,80 մետր ցած), այնքան ավելի էր մեծանում նրանց քանակը։

Առավել շատ խորանարդիկներ դուրս եկան ջրի միջից։ Ջրհորի նեղ լինելու հետևանքով հնարավոր եղավ ջրի մակերեսից իջնել ներքև միայն 60—70 սանտիմետր, այնինչ խճանկարի մնացորդների շերտը իջնում է ավելի խոր [37], եթե ջրհորի խորությունը մոտավորապես լինի այնքան, որքան հյուսիսային աբսիդի տակ ներկայումս օգտագործվող ջրհորի խորությունը (5,60 մետր), ապա, պետք է ենթադրել, որ ավանդատան ջրհորի դեռևս չպեղված ավելի քան 2,0 մետր խորություն ունեցող լիցքում կարող են գտնվել խճանկարի ոչ քիչ մնացորդներ (խորանարդիկներ)։

Ջրհորի լիցքի ներքևի շերտերում խճանկարի մնացորդների առատ գոյությունը, իսկ վերևի շերտում նրա իսպառ բացակայությունը (չնայած վերևի շերտը նույնպես գտնվում է սալահատակի տակ եղած խճանկարի մնացորդների շերտի հորիզոնից շատ ավելի ցած), բացատրվում է հետևյալ կերպ։ Ջրհորում լիցքի սկզբնական շերտերի կուտակման ժամանակ, ինչպես տեսանք, սկսվում է ջըրհորի պատերի վերևի շարքերի աստիճանական քայքայումը և պատերից քարերը շրջվելով ներքև, իրենց հետ տանում են նաև խճանկարի մնացորդներով խառնված շրջապատի լիցքը։ Բնական է, որը կարող էր միանգամից լցվել և այդ ամենի վրա կուտակվել սալահատակի վերևից թափվող լիցքի նորանոր (առանց խճանկարի մնացորդներ պարունակող) շերտեր։

Ի դեպ, ջրհորի միջից դուրս եկած խճանկար մնացորդների վերևի շերտերում գտնըվեց կավից պատրաստված մեկ իրի (մոմակալի ?) բեկոր հետևյալ արձանագրությամբ.

«Ավ ս[ու]ր Բահանայք զմոմեղէնս յադաւրս յիշեց...»։ Յիշեց[էք] բառի «էք» մասնիկը չկա, հավանաբար իրի այդ մասի կտորվածքի հետ ընկել է։

36. Որոշվեց ջրհորի կառուցվածքը [illegible] պահպանել սալահատակի տակ և թաղել քար։ Փառերի այդ վիճակը կարելի է տեղում տեսնել։

37. Ձմռան ամիսներին ջրհորի ջրի մակերեսը զգալիորեն կիջնի. ենթադրվում է այդ ժամանակ շարունակել ջրհորի լիցքի մաքրումը։

Հնագրության (պալեոգրաֆիայի) մասնագետները (Կ. Ղաֆադարյան, Ա. Թարխուդարյան) գրերի ձևից ենթադրում են, որ այդ իրը կարող է հանդիսանալ 7-րդ դարի գործ*։

Ինչպես երևում է սալահատակի տակից խճանկարի մնացորդներ պարունակող լիցքին զուգընթաց, ջրհորն են թափվել ինչ որ իրեր նաև սալահատակի վերևից։ Նշանակում է, ջրհորի մեջ, 5-րդ դարի սալահատակի տակ գտնված նույն լիցքի նյութերի (խճանկարի մնացորդների) հետ մեկտեղ, միանգամայն հնարավոր է, որ հանդես գան նաև ավելի ուշ շրջանի նյութեր, նայած, թե ջրհորը երբ է դադարել օգտագործվելուց և նրա մեջ առաջացած լիցքը որքան ժամանակում է կուտակվել։

Խճանկարի մնացորդների մի խոշորագույն շերտ բացվեց նաև Տաճարի հյուսիս-արևելյան մույթից դեպի արևելյան աբսիդը ընկած տարածության վրա։ Այստեղ նույնպես, խճանկարի մնացորդները հանդես են գալիս Տաճարի 5-րդ դարի սալահատակի տակ գտնված շինարարական մնացորդների լիցքի հետ միախառնված։ Լիցքն սկսվում է հիմքերի վերևի եզրի հորիզոնի ուղղությունից և հիմքի ամբողջ խորությամբ իջնում է մինչև մայր հողը։ Իսկ աբսիդի բեմի առջև, մոտ 2 քառ. մ. տարածության վրա, խճանկարի մնացորդներով միախառնված լիցքն իջնում է մայր հողից ավելի ներքև։ Այս մասում լիցքն ունի 1,80 մետր խորություն, որի ներքևի եզրը գտնվում է այժմյան սալահատակից 2,72 մետր ցած։ Լիցքի տակ բացվեցին հորիզոնական ուղղությամբ միմյանց կողքի դրված տուֆաքարի երկու սալ։ Սալերը շարված են գետաքարերի վրա, իսկ վերջինները կիսով չափ ընկղմված են ջրի մեջ։

Ջուրը գտնվում է Տաճարի հյուսիսային աբսիդի առջևի և ավանդատան մեջ գտնվող



Մայր տաճարի հյուսիսային ավանդատան մեջ գտնված կավե իրի (մոմակալի?) բեկոր 7-րդ դարի արձանագրությամբ

1*. Նման գրերով արձանագրություններ գտնվել են նաև Դվինում կղմինդրների վրա, որոնցից մեկի վրա հիշատակված է «Ես Յովհաննէս վարդապետ ծառայ Սրբոյն Գրիգորի յաղագս յիշելոյ ի Տ[է]րէ» (Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 247։

շրջանների ջրերի մակերեսների հորիզոնի վրա և միացված է Տաճարի տակ գտնվող գետնաջրերին։ Սալահատակից մեկն ունի 0,12 մետր լայնություն և 0,66 մետր խորություն, իսկ մյուսն ունի 0,25 մետր լայնություն և 0,75 մետր մտնելով բեմի լիցքի տակ, գետնի շարունակվում է։ Հնարավոր չեղավ որոշել երկարության լրիվ չափը։

Թե ի՞նչ սալարաններ են դրանք, որոշակի պարզ է դառնալու մինչև արևելյան պարսպի ամբողջ մակերեսի պեղումները, որոնք պետք է ավարտվեն 1957 թվականի ժամանակաշրջանի աշխատանքներին զուգընթաց։ Դրանց հետ մեկտեղ գետնաշերտերի հետազոտման համար պատրաստած ցամաքեցման առանձնի (զոնդաժի) ինչ որ կառուցվածքի մնացորդներ հանդիպեցան, որոնցից այդտեղ թափված լիցքը մոտ 1 մետր խառնվելով պահում է բավական ընդարձակ տարածություն. իսկ որոշ մասն էլ դեռ մեծ ճակատով շարունակվում է մանել բեմի տակ։ Մի զույգ ինչ որ հնագույն գետնափոր անցքի (?) սալահատակի մնացորդ է, որի ներքևում գտնվող ջրերը, Տաճարի տակ գոյություն ունեցող մյուս գետնաջրերի հետ մեկտեղ, սկզբում եղել են ավելի ցած. իսկ հետագայում բարձրացել են վեր։

Ուրեմն Տաճարի այս մասում խճանկարների մնացորդներով միախառնված լիցքը սկըսվում է 5-րդ դարի սալահատակի ներքևի հորիզոնից և իջնելով մայր հողից ցած, հասնում ինչ որ հնագույն սալահատակի։ Լիցքի մեջ կան պատի (թե՞ առաստաղի) ծեփի մնացորդներ, հնագույն շենքի կրաշաղախի կտորներ, տուֆաքարի և մասնավորապես կղմինդրի բազմաթիվ բեկորներ։ Հաճախակի հանդիպում էին նաև խեցեղենի կտորներ։ Խճանկարի մնացորդները թափված են միմյանց վրա. խորանարդիկները դուրս էին գալիս մեծ քանակությամբ։ Դժբախտաբար հնարավոր չեղավ ամբողջը հավաքել, որովհետև զգալի մասը գտնվում էր բեմի տակ. իսկ բեմը, ինչպես նշվեց, պետք է պեղվի 1957 թվականին.

Այս տեղից հավաքվեց խճանկարի ավելի քան 5.000 խորանարդիկ։

Ինչպես ցույց են տալիս թե՛ ավանդատան մեջ և թե՛ այստեղ բացված խճանկարի մնացորդների շերտերը, խճանկարը ժամանակին ամբողջապես ավերված է եղել. մնացորդների մեջ չգտնվեցին նույնիսկ բեկորներ, որոնցից ինչ որ չափով, թեկուզ հեռավոր կերպով, հնարավոր լիներ պարզել նկարի բովանդակությունը կամ վերարտադրելի առանձին հատվածներ։

Արևելյան պարսպի առջև հնարավոր եղավ գտնել միայն ծեփի շաղախի կտորների վրա դեռևս կպած խճանկարի երիզից մինչև յոթ խորանարդիկ ունեցող առանձին բեկորներ, որոնք լիովին հնարավորություն են տալիս պարզել, ինչպես խճանկարի կառուցվածքում օգտագործված նյութերն ու նրանց բազմագունությունները, այնպես էլ խճանկարի հավաքման-կառուցողական տեխնիկան։

Այսպիսով Տաճարի բոլոր հատվածներում հայտնաբերված խճանկարի մնացորդները անխտիր գտնվում են 5-րդ դարի սալահատակի տակ գոյություն ունեցող շինարարական լիցքի մեջ, սկսած մույթերի հիմքերի վերին եզրի հորիզոնի ուղղությունից մինչև ներքևի եզրի հորիզոնի ուղղությունը ներառյալ։ Ընդ որում հյուսիսային ավանդատան մեջ խճանկարի մնացորդները գտնվում էին ավանդատան 5-րդ դարի սալահատակի ամբողջ մակերեսի տակ, ընդհուպ մինչև մայր հողը։

Ինչպես արդեն տեսանք, թե՛ Տաճարի, թե՛ ավանդատան հիմքերը կառուցված են սրբատաշ տուֆաքարից։ Իսկ այդ նշանակում է, որ հիմքերի կառուցման ժամանակ, հիմքերի ամբողջ պարագծով շրջապատի հողը հանվել է, որպեսզի հնարավորություն ստացվի շարել հիմքերի շարքերի քարերը և ապա հիմքերի կառուցումն ավարտելուց հետո նորից լցվել է այն։ Այդ լիցքը, հասկանալի է, պետք է լցվեր հիմքերի կառուցումից անմիջապես հետո։ Մի պահ ենթադրենք, որ այն լցվել է հիմքերի վրայից բարձրացվող պատերի մի մասի, կամ ամբողջի կառուցումից, կամ, ինչ որ երբեք հնարավոր չէ, նույնիսկ ամբողջ շենքի կառուցման բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո։ Միևնույն է, բոլոր դեպքերում այն պետք է լցված լիներ նույն 5-րդ դարում։ Բնական է, այդ լիցքի մեջ գոյություն ունեցած խճանկարի մնացորդները, նույնպես լիցքի հետ այդտեղ են լցվել 5-րդ դարում։ Հետևապես 5-րդ դարում խճանկարը գտնվել է արդեն ավերված վիճակում։

Ուրեմն Վահան Մամիկոնյանի օրոք կատարվող շինարարության ժամանակ, խճանկարն իբրև մի առավել հնագույն շենքի պատկանող մաս, արդեն ավերված վիճակում այդ նույն շենքի մնացորդների հետ միախառնըված, սփռված է եղել նոր կառուցվող շենքի հիմքերի շուրջ։

Խճանկարի խորանարդիկների մեջ ոսկեզօծ հատիկների անհամեմատ մեծ քանակությամբ գոյությունն աներկբայորեն ցույց է տալիս, որ խճանկարը ստեղծվել է քրիստոնեական շրջանում։ Նշանակում է, խճանկարը պատկանում է 5-րդ դարում Վահան Մամիկոնյանի կառուցած շենքից առաջ, նույն տեղում գոյություն ունեցած քրիստոնեական շրջանի մեկ այլ, առավել հնագույն շենքի։ Իսկ այդ շենքը, ինքնըստինքյան հասկանալի է, կարող էր լինել ոչ այլ ինչ, եթե ոչ Տրդատ

3-րդ Թագավորի և Գրիգոր Լուսավորչի ժամանակաշրջանում, 4-րդ դարի սկզբներին ստեղծված Մայր Տաճարի նախնական կառուցվածքը։

Թե ե՞րբ է խճանկարն ստեղծվել, առայժմ անհնարին է ստույգ ասել։ Խճանկարի մնացորդների մեջ գտնվող խորանարդիկների արտաքին մակերեսների չափերը (0,8—1,8 քառ. սմ., ոսկեզօծների մեջ հանդիպում են նաև ավելի փոքր չափերի խորանարդիկներ), օգտագործված գույները, գույների հարուստ երանգավորումը համապատասխանում են 4-րդ դարի կեսերից մինչև 6-րդ դարն ընկած ժամանակաշրջանի խճանկարային արվեստում օգտագործված խորանարդիկների չափերին, նրանց գույներին և երանգավորմանը[39]։

Եվ իրոք, հազիվ թե նման բարձր արվեստով կատարված խճանկարը ստեղծված լինի քրիստոնեական արվեստի սկզբնավորման առավել վաղ շրջանում. սակայն, միանգամայն հնարավոր է, որ էջմիածնում այն հանդես եկած լինի 4-րդ դարի կեսերից մինչև 5-րդ դարի առաջին կեսերն ընկած ժամանակամիջոցում, որովհետև 480-ական թվականներին նա արդեն ավերված է եղել։

Այսպիսով պեղումների նյութերը ցույց են տալիս, որ՝

1) էջմիածնի Մայր Տաճարի այժմյան գմբեթակիր մույթերի խարիսխների տակ գոյություն ունեն առավել հնագույն մի շենքի խարիսխներ։ Այդ խարիսխների կառուցվածքի ձևն ակնհայտ ցույց է տալիս, որ նրանք պատկանել են ոչ թե գմբեթակիր, այլ թաղակապ ծածկով բազիլիկայի կառուցվածքի։ Այդ բազիլիկայի կառուցվածքն է, որ ըստ Ագաթանգեղոսի մոտ հիշատակված վկայության, պետք է ստեղծված լիներ քրիստոնեական կրոնը Հայաստանում պետական հռչակվելու (301 թ.) առաջին տարիներին։

2) Հնագույն շենքի խարիսխների վրա դրված են նոր խարիսխներ, որոնք ըստ հորինվածքի պատկանում են գմբեթակիր շենքի, ըստ մշակման բնույթի (ոճի) հար և նման են 5-րդ դարի համանման ձևերի մշակումների բնույթին (ոճին), իսկ ներքևի խարիսխների նկատմամբ ունեցած դիրքով (կառուցվածքով) ճշտությամբ ներկայացնում են Ղազար Փարպեցու հաղորդած 5-րդ դարի վերջերի վերակառուցման պատկերը։

3) Ճարտարապետական-շինարարական նյութերը լիովին հաստատում են էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ ինչպես Ագաթանգեղոսի, այնպես էլ Ղազար Փարպեցու հաղորդած վկայությունների իսկությունը։

4) Մայր Տաճարի այժմյան խաչաձև հորինվածքը ստեղծվել է ոչ թե Ներսես Գ կաթողիկոսի ժամանակաշրջանում՝ 7-րդ դարի կեսերին, այլ նրանից գրեթե երկու դար առաջ, Վահան Մամիկոնյանի օրոք, 5-րդ դարի վերջին քառորդում։

5) Հայկական դասական ճարտարապետության մեջ կենտրոնագմբեթ խաչաձև կառուցվածքի հնագույն տիպը հանդիսանում է ոչ թե արտաքինից ուղղանկյուն, ներսից խաչաձև հորինվածքը (կոմպոզիցիան) այլ թե՛ դրսից, թե՛ ներսից խաչաձև կառուցվածք ունեցող հորինվածքը (էջմիածնի Մայր Տաճարը)։

Հետևապես էջմիածնի Մայր Տաճարի 5-րդ դարի հորինվածքը որոշակի ճշտումներ է մտցնում Հայաստանի կենտրոնագմբեթ խաչաձև կառուցվածքների տիպերի դասակարգման մեջ։

6) էջմիածնի Մայր Տաճարում հայտնաբերվեցին բարձր արվեստով կառուցված խոշոր ծավալի խճանկարի մնացորդներ։ Խճանկարը ստեղծվել է 4-րդ դարի կեսերից մինչև 5-րդ դարի կեսերն ընկած ժամանակամիջոցում և 480-ական թվականներին գտնվել է արդեն ավերված վիճակում։ էջմիածնի Մայր Տաճարի խճանկարը հանդիսացել է Հայաստանի քրիստոնեական վաղ շրջանի խճանկարային արվեստի առայժմ մեզ հայտնի ամենահնագույն օրինակը և ընդհանրապես քրիստոնեական արվեստի հնագույն նմուշներից մեկը։

Այս նյութերը ոչ միայն որոշակի լույս են սփռում էջմիածնի Մայր Տաճարի նախնական ձևի և նրա կրած հետագա ձևափոխությունների լուսաբանման վրա, այլև մեծագույն նշանակություն ունեն Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) քրիստոնեական վաղ շրջանի ճարտարապետական-շինարարական արվեստի մի շարք արմատական հարցերի ճշմարտացի ըմբռնման համար։

39. А. В. Виннер, Материалы и техника Мозаичной живописи, Москва, 1953, стр. 28—32.

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

(ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Պատմության ինստիտուտի գիտաշխատող)

# ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Այս դիտողությունները մեզ բերում են այն եզրակացության, որ Հիշատակարանը չի կարող վերաբերվել 1562 թվականին։ Մնում է միայն ընդունել, որ մի վրեպ է տեղի ունեցել նրա թվականի մեջ, որը նշանակված է հայկական տառերով՝ ՌԺԱ։ Այս երեք տառերից միջինը՝ Ժ-ն, մեր կարծիքով ավելորդ է։ Շատ հավանական է, որ Կամենեցյան տարեգրության կազմողը, որը մեր այս թվականներից շատ հեռու է ապրել, այլի վրիպման հետևանքով ինքն է ավելացրել այդ մի տառը՝ Հիշատակարանն իր սկզբնագրից ընդօրինակելիս, թեև հնարավոր է նաև, որ Հիշատակարանի հեղինակն ինքն էլ կատարած լինի այդպիսի մի սխալ՝ պարզապես ուշադրության և ձեռքի վրիպումով։ Գրչագրերով զբաղվողներին հայտնի են ձեռագրերից նմանօրինակ շատ դեպքեր[10]։ Ուստի պետք է սրբագրել թվականը և կարդալ ՌԱ, որ կլինի 1552։ Այսպիսով Հիշատակարանի բովանդակությունը առած կլինի իր տեղը և սրանով Կամենեցյան տարեգրության այս հատվածում մենք կունենանք մի ժամանակակից հիշատակություն այն այցելության մասին, որ Ստեփանոս Սալմաստեցին տվել է Լեհահայ գաղութին, Հռոմից վերադառնալիս։ Եվ արդեն հավանորեն այդ մասին, այսինքն կաթոլիկ Հռոմի ճանապարհի մասին են Հիշատակարանի այն խոսքերը, թե նա եկել է «առողջ և ճշմարիտ (!!!) ճանապարհով», այլապես այս բառերը՝ «առողջ» և «ճշմարիտ», որոնք զուտ բարոյական նկարագիր ունեն և բնավ չէն կարող գործածված լինել Պարսկաստանից կամ Թյուրքիայից դեպի Լեհաստան տանող ճանապարհների ապահովությունը ցույց տալու համար, կմնային անհասկանալի. և ըստ երևույթին ժամանակի քաղաքական երազանքներում տարվող Հիշատակագիրը, իրազեկ լինելով կաթողիկոսի ուղևորության շարժառիթին ու պարագաներին, այդ անորոշ, բայց շատ բնորոշ ու նշանակալից արտահայտությամբ բավականացել է արձանագրել պատմական իրողությունը, որի մասին հնարավոր չէր ավելին գրել մի հասարակ ձեռագրի հիշատակարանում։

Արդ, համադրելով այս Հիշատակարանի բովանդակությունը, որն, անտարակույս, Ստեփանոս Սալմաստեցուն է վերաբերում, այն իրողության հետ, թե Հիշատակարանում կաթողիկոսը կոչվում է Արընջեցի, մենք, իրոք, գալիս ենք այն համոզման, թե Ստեփանոս Սալմաստեցին և Ստեփանոս Արընջեցին միևնույն անձնավորությունն են։

Ստեփանոս Սալմաստեցին ո՞րտեղից առած պիտի լիներ այս Արընջեցի մականունը։

Ստեփանոս Սալմաստեցին, նախքան իր կաթողիկոսությունը, մի ժամանակ գտնվել և ուսուցել էր Մաղարթի Ս. Ստեփանոս վանքում։ Այդ մասին մենք գիտենք Էջմիածնի Գրիգոր ԺԱ Բյուզանդացի կաթողիկոսի 1541 թվակիր մի կոնդակից, որով նա վանքի միաբաններից Աթանաս վարդապետին առաջնորդ հաստատելով նույն վանքին, նրա

* Շարունակված ամսագրի 1956 թվականի № VIII—IX-ից։

10. Այսպիսի դեպքեր պատահում են նաև տպագիր գրքերում։ Օրինակ՝ Դուշանց թղթի 1690 թվականի վենետիկյան տպագրության ճակատում դրոշմված են տառով ՌՃԺԼԹ, որի մեջ Ժ. տառը ավելորդ է (Տե՛ս Հ. Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն», հատ. Ա, Վենետիկ, 1909, էջ 793։

մասին գրում է. «որ է սնեալ և վարժեալ ի Սուրբ Նախավկայի վանքն և ուսեալ էր դիմաստ կրթական ի ձեռն Ստեփաննոսի քաջ քարունապետի Սալմաստեցւոյ»[39]: Մագարթի վանքը, որը Նախիջևանի ամենահռչակավոր վանքն էր, գտնվում էր Արաքսի աջ ափին, Շամբի ձորում, իսկ Արաքսի ձախ ափից դեպի հյուսիս տարածվում էր Երնջակի գավառը, որի մի մասը այս վանքի թեմին էր պատկանում. իսկ վերջին դարերում Մագարթի վանքը նույնիսկ Երնջակի գավառի վանքերի մեջ էր հաշվվում: Այսպես ենք գտնում, օրինակ, Երևանի թեմի վանքերի այն ցուցակում, որ Մեսրոպ վարդապետ Սմբատյանցը կազմել է 1870 թվականին Գևորգ Դ-ի հրամանով[40]: Արդ, Ստեփանոս Սալմաստեցին պետք է Երնջակի այս նշանավոր վանքից ժառանգած լինի Արընջեցի մականունը: Այս շրջանում պատմական հին Երնջակ անունն արդեն աղճատվել էր: Հ. Ղ. Ալիշանը նշում է, որ «ոմն ի յետին դարուց գրչաց կոչէ և Արինջակ գաւառն. ոչ գիտեմ ըստ արտասանութեան եթէ սխալագրութեամբ»[41]: Երնջակ-ի Արինջակ դառնալը, իհարկե, ոչ սխալագրությամբ, այլ ըստ արտասանության էր, թյուրք-թաթարական ազդեցությամբ: Այսօր էլ տեղական ադրբեջանական բարբառով Երնջակ-ը կոչվում է Ալընջա[42], մի ձև, որ գտնում ենք դեռ առնվազն ԺԵ դարից օտար ուղեգիրների մոտ ևս: Վենետիկցի Ջոզաֆա Բարբարոն (ԺԵ դ.) ունի Ալընջա, Ալինջա[43]. Սպանիացի Ռույ Գոնզալեզ Կլավիխոյի (ԺԵ դ.) մոտ գտնում ենք Ալանջիկ[44] ձևով: Իտալական մի անանուն ուղևորի (ԺԶ դ.) մոտ գտնում ենք Ալանջա[45] ձևով և այլն: Ուրեմն, Ստեփանոս Սալմաստեցին, որը կոչվում էր և Կոստանդնուպոլսեցի, Երնջակի այս հետնադարյան Ալընջա, Ալինջա կոչումից առաջացած պիտի լիներ նաև հայկական ձևով Արընջեցի մականունը, իբր Ալընջեցի, ճիշտ այնպես, ինչպես համեմատվում է Արինջա(կ)—Ալինջա:

Ստեփանոսի այս Արընջեցի մականունը ձեռագրական հիշատակարաններից մի քանիսում ուղղագրված է Առընջեցի. անշուշտ մի կողմից ըստ այն կանոնի, թե ն-ից առաջ ր-ն փոխվում է ռ-ի, իսկ մյուս կողմից՝ արդեն ծանոթ Առինջ, Առինջեցի ձևի ազդեցության տակ.

Կարող է տպավորություն լինել այն մասին, թե մի հայտնի անձնավորություն, որպիսին էր Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը, կոչվեր զանազան անուններով: Բայց այդպիսի տպավորության դեմ խոսում են շատ դեպքեր: Այսպես, օրինակ, ձեռագրերից մեզ ծանոթ է մի տաղերգու, որն իր տաղերում իրեն անվանում է Աբրահամ Բաղիշեցի[46], ենթադրել տալով, թե ինքը ծննդով բաղիշեցի է: Այս անձը 1730—1734 թվականներին հայոց կաթողիկոս լինելով, երբեմն կոչվել է դարձյալ իր նախկին մականունով Բաղիշեցի[47], երբեմն նրան կոչել են Խոշաբեցի՝ ծննդով համարելով Վանի Խոշաբ գյուղից, Քրդիստանցի՝ համարելով, որ Խոշաբը Քրդիստանում է, Կորդվացի՝ համարելով, որ Քրդիստանը հայկական հին Կորդուքն է, և վերջապես նրան անվանել են Մշեցի, այն պատճառով, որ նա Մուշի Ս. Կարապետ վանքի առաջնորդն էր եղել նախքան իր կաթողիկոսությունը[48]: Կարծում ենք, որ այս օրինակը բավարար է:

Ի միջի այլոց ասենք, որ Սալմաստեցու և Արընջեցու տարբեր անձեր լինելն հաստատող ոչ մի փաստական տվյալ չկա: Դավրիժեցուց հետո, այս նպատակով մենք դիմել ենք նաև Սալմաստեցու ժամանակաշրջանը պարունակող մի քանի անտիպ գավազանագրքերի, որոնք սակայն ոչ մի նորություն չեն տալիս այս մասին, որովհետև նրանք բոլորն էլ կապ ունենալով Դավրիժեցու ցանկի հետ և կամ միմյանց հետ, առանձին են

39. Մեսրոպ արքեպիսկ. Սմբատյանց, «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակու և շրջակայից նորա», Թիֆլիս, 1904, էջ 414:

40. Նույն տեղում, էջ 487:

41. Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 370:

42. Հ. Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, անտարեթիվ, էջ 80:

43. Հ. Հակոբյան, «Ուղեգրություններ», հատ. Ա, Երևան, 1932, էջ 206: Այստեղ Բարբարոն Ալընջա անունը հիշել է որպես անձնանուն, որպես Երնջակի ամիրապետական (միրարական) վանքերի առաջնորդի անունը, իբր Ալընջեցի, այսինքն՝ Արընջեցի:

44. Նույն տեղում, էջ 116:

45. Նույն տեղում, էջ 325: Համա. նաև էջ 324, ծան. 1 և 2:

46. Տե՛ս Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 5954, էջ 5ա, 7ա, 70բ, 78ա, 78բ, 79բ և 82բ:

47. Աբրահամ Կոստանդնուպոլսեցին Դիոնիսիոս Արիոպագացու գործերի հայկական մեկնությունների ժողովածուն է կազմում 1733 թվականին, «ի հայրապետութեան Տեառն Աբրահամու Բաղիշեցւոյ» (տե՛ս Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 97): Գէորգ Մխլայիմի «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց» տպագիր գրքի ճակատում նշված է՝ «ի վեհապետութեան իմաստափառ և սրբազան Բաղիշեցի Տեառն Աբրահամու կաթուղիկոսին», տպ. Կոստանդնուպոլիս, 1734 թ.:

48. Հ. Ս. Ջամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, էջ 802:

նչում Ստեփանոս Սալմաստեցի և Ստեփանոս Արընչեցի։ Այսպես, օրինակ՝ Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարանի № 1721 ձեռագիրը, որ գրված է 1596 թվականին, այս մասում կես առ կես և բառ առ բառ նույնն է Դավրիժեցու հետ, և տեսակետը նրանից է փերցրել[49]. № 8184 ձեռագիրը, որ Դավրիժեցուն ժամանակակից Զաքար Ագուլեցու ինքնագիր ժամանակագրությունն է, պարունակում, ներկայացնում է միևնույն տվյալները[50]. № 1492 ձեռագիրը, որ Ավետիս Տիգրանակերտցու գավազանագիրքն է և գրված է 1715 թվականին, կազմըված է Դավրիժեցու ցանկի հետևողությամբ, բայց հեղինակը Դավրիժեցու տված թվական ցուցմունքները սխալ է մեկնաբանել այստեղ և, բառ այնմ, ցանկանալով նշել յուրաքանչյուր կաթողիկոսի գահակալության սկիզբն ու վերջը, Ստեփանոս Սալմաստեցուն դնում է 1541—1566 թվականներին, վերջին թիվը հիմնելով այն տվյալի վրա, թե հաջորդ 1567 թվականին Դավրիժեցու մոտ Ստեփանոս Արընչեցին է հիշատակվում. և այս ձևով նաև Ստեփանոս Արընչեցուն դնում է նա 1567—1575 թվականներին, վերջին թիվը հիմնելով այն բանի վրա, որ Դավրիժեցու մոտ հաջորդ 1576 թվականին նշված կաթողիկոսների շարքին այլևս չի գտնվում Ստեփանոս Արընչեցու անունը[51]. Սրանից որոշ չափով անկախ է երևում № 482 ձեռագիրը, որը Ստեփանոս Սալմաստեցու կաթողիկոսությունը դնում է 1511 թվականին, նրան տալով 16 տարի իշխանություն, իսկ Ստեփանոս Արընչեցու կաթողիկոսությունը դնում է 1575 թվականին, նրան տալով 2 տարի իշխանություն[52], բայց որքան էլ անկախ եղած լինի, կասկած չկա, որ այս գավազանագրքի անանուն հեղինակն էլ ձեռքի տակ որպես հիմք ունեցել է մի ցանկ այն տիպաձևով կազմված, ինչ տիպաձևով որ կազմըված է Դավրիժեցունը։ Այս գավազանագրքերը, որոնք ուշ ժամանակի աղբյուրներ են, փաստական ոչինչ չեն պարունակում այս մասին, թե Ստեփանոս Սալմաստեցին և Ստեփանոս Արընչեցին տարբեր անձեր եղած չլինեն։ Բայց Ստեփանոս Արընչեցու մասին, որպես առանձին կաթողիկոսի, տիրող կարծիքը այսպիսի գավազանագրքերի հետևողությամբ է առաջ եկել։ Մինչև տպագրված Չամչյանի և Ալիշանի նման պատմագիրները, որոնք առատ նյութ են օգտագործել իրենց աշխատությունների համար, այս կետում, այլ աղբյուրների չգոյության պատճառով, գավազանագրքերի ընձեռած այսպիսի աղոտ ցուցմունքները անտեսած չլինելու մտահոգությամբ է միայն, որ իրենց կազմած ցանկերի մեջ «Ստեփանոս Առընչեցի» անունը բաց կարգի տեղավորել են, իբրև առանձին կաթողիկոս, իբրև Ստեփանոս Զ. Չամչյանը ոչինչ չի ունեցել գրելու. Նրա մասին և միայն ասում է. «Տէր Ստեփանոս վեցերորդ՝ ամս Բ», և այդպես էլ անց է կացրել ժամանակագրական աղյուսակի մեջ[53]. Ալիշանը նույնպես նա բավականացել է իր գավազանացանկում նշելով այսպես. «Ստեփանոս Զ Առընչեցի, չիչի յԱռաքել, և յայլմէ ի ՌԺԶ Թուի»[54].

Արդ, ընդունելով այդ երկու անունների նույնությունը, մենք տեսնում ենք, որ 60-ական թվականներին շարունակվում է Սալմաստեցու կաթողիկոսության հիշատակությունը զանազան հիշատակարաններում.

1563 թվականի փետրվարին Թոման երեցը Լվովում ընդօրինակում է Պողոս առաքյալի թղթերը և Հովհաննեսի Հայտնությունը՝ «[ի] հայրապետութեան Տեառն Տէր Ստեփանոսի կաթողիկոսի Արընչեցւոյ»[55].

1564 թվականին Կաֆայում մի գրիչ հիշատակում է «Ստեփանոս»-ին, որպես ժամանակի կաթողիկոսի, ինչպես հաղորդում է Հ. Ղ. Ալիշանը[56].

1565 թվականին Մինաս Տիվրիկցին Լվովում ընդօրինակում է մի պարզատոմար «ի կաթողիկոսութեան Սուրբ Էջմիածնի, Տէր Ստեփանոսի Առնճեցւոյ»[57].

Նույն թվականին Մինաս նոտարը (Տիվրիկցի?) Լվովում ավարտում է ընդօրինակությունը Եփրեմ Ասորու քարոզների «[ի] հայրապետութեան Տէր Տէր Ստեփանոս կաթողիկոսին Առընչեցւոյ»[58].

49. «Կարգ և թիւք կաթողիկոսաց և այլք եղած», Հայկական ՍՍՌ Գիտ. մատեն.-ի ձեռ. № 1721, էջ 134բ—135ա։

50. Տե՛ս Զաքար Ագուլեցու ժամանակագրության էջ՝ կաթողիկոսների գավազանագիրքը. Հայկական ՍՍՌ Գիտ. մատեն.-ի ձեռ. № 8184, էջ 58բ։

51. Տե՛ս Ավետիս Տիգրանակերտցու «Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք», Հայկական ՍՍՌ Գիտ. մատեն.-ի ձեռ. № 1492, էջ 211բ—212ա։

52. «Մանաւոր ժամանակագրութիւն և գաւազանագիրք», Հայկական ՍՍՌ Գիտ. մատեն.-ի ձեռ. № 482, էջ 46բ—47ա։

53. Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, էջ 525. և Հավելվածում՝ էջ 97։

54. Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 281։

55. «Հանդէս ամսօրեայ», 1936 թ., էջ 568. Տե՛ս նաև „Revue des études arméniennes“ VII, 1927, p. 126, 129.

56. Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 280, ծան. 2։

57. Հ. Հ. Տաշյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մայրենեաց մատենադարանին ի Վիեննա», Վիեննա, 1891, էջ 33.

58. „Revue des études arméniennes“, I, 1920, p. 113.

1566 թվականին Կամենեցի հայոց Ս. Նիկողայոս եկեղեցու հիշատակարանում հիշվում է որպես հայոց կաթողիկոս «Տէր Ստեփանոս»-ը[59]։

1567 թվականին Տիվրիկցի մի գրիչ, որ հավանորեն վերոհիշյալ Մինաս Տիվրիկցին է, Լվովում ընդօրինակում է մի Սաղմոսարան «ի կաթողիկոսութեան Սուրբ Էջմիածնի Տէր Ստեփանոսի Աորնճեցւոյ»[60]։

Իսկ այս նույն թվականին արդեն Դավրիժեցին էլ էր հիշատակում Ստեփանոս Սալմաստեցուն։

Այսպիսով, ուրեմն, մենք համարում ենք իրողություն, որ Ստեփանոս Սալմաստեցին 1551—1552 թվականներից հետո դեռ երկար տարիներ գտնվել էր կաթողիկոսական աթոռի վրա, գուցե և ընդհատումներով, հակառակ չենք. իսկ ամեն պարագայի, մի բան միշտ անվիճելի է, այն, որ Դավրիժեցու մոտ հիշատակված 1557 թվականին, առնվազն այս թվականին, տակավին կենդանի էր Ստեփանոս Սալմաստեցին։ Այս մասին ավելորդ է երկարելը։ Ուստի, կանգ առնելով այստեղ, գանք այն խնդրին, թե ի՞նչ արժեք են ներկայացնում Ստեփանոս Սալմաստեցու Լվովում մեռած ու թաղված լինելուն վերաբերող տվյալները։

Մատենագրական վկայություններից՝ ԺԸ դարի հեղինակ Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրությունը ինքնին ոչ մի արժեք չի ներկայացնում այս մասին։ Ռոշքայի խոսքերն ուրիշ բան չեն, եթե ոչ տապանաքարի մեկնաբանությունը, որի համաձայն Ստեփանոս կաթողիկոսը «կամ ընկեցաւ յաթոռոյն, կամ իւրովի թողեալ, երթայ ի Հռոմ», և քանի որ Հռոմ է գնում և այնտեղից է գալիս, կաթոլիկ Ռոշքայի համար շատ բնական բան էր, որ կաթողիկոսը «կատարեալ զհնազանդութիւն և զուխտն իւր գայ ի Լէօպոլիս, ուր եհաս և մեռանի յայսմ ամի», այսինքն՝ 1551 թվականին, և այս բոլորը՝ «որպէս ցուցանէ դերեզմանաքարին նորա գիրն»[61]։ Ռոշքայի այս հատվածն, ուրեմն, որպես աղբյուր, դուրս է գալիս շարքից։

Իսկ մատենագրական մյուս վկայությունը, որ Կամենեցյան տարեգրությունն է տալիս, և Լվովի տապանաքարը իրենց ծագումով միևնույն ժամանակի և շարքի են պատկանում։

Ըստ Կամենեցյան տարեգրության, ինչպես գիտենք, Սալմաստեցին «եկն ի Յոանգիստանու ի Լով քաղաքն և անդ վաղճանեցաւ»[62]։

Չգիտենք, թե տարեգրությունը որտեղից է վերցրել այդ տեղեկությունը, բայց այս հարցի պատասխանը կարելի է որոնել այն հարցի մեջ, թե ինչպես է կազմվել Կամենեցյան տարեգրությունը որպես ամբողջություն։

Կամենեցյան տարեգրությունը կազմել են Կամենեցի ավագերեցները[63]։ Նրա առաջին մասի կազմող Հովհաննես քահանան ավագերեցություն է արել 29 տարի[64], սկսած 1577 թվականից[65], որով նա հեղինակն է միայն 1577—1605 թվականների շրջանի դեպքերի, ուստի 1577 թվականից առաջվա դեպքերը ուրիշ աղբյուրներից են։ Մի ուշադիր ակնարկ բավական է արդեն հաստատելու համար այդ։ Օրինակ՝ կրկնության դեպքերը։ Այսպես, խոսելով Մոլդավիայի դեպքերի մասին, 1560 տարեթվի տակ գրում է. «Ամն Տեսրոթ անուն յայտնեցաւ և այլն»[66], իսկ հաջորդ 1561 տարեթվի տակ նա սկսում է նորից նոր խոսել նույն Դեսպոտի մասին. «Ամն Տեսրոթ անուն դուրս յայտնեցաւ և այլն»[67]։ Այսպես նաև 1562 տարեթվի տակ գրված երկու տարբեր հատվածները, որոնք կրկնողաբար Կամենեցի լատին եպիսկոպոս Լենարտ Այունչովսկու մահվան մասին են խոսում[68]։ Կրկնությունները ցույց են տալիս, որ նույն տեղեկությունները քաղված են տարբեր տեղերից, գուցե տարբեր ժամանակներում, ուստի և տարբեր ձեռքերով։ Նույնը պիտի ասել Տարեգրության մեջ գտնվող հակասությունների մասին, որոնցից ամենագլխավորը հենց այն իսկ է, որ մինչև 1552 տարեթվի տակ, մեր կողմից խնդրո առարկա հատվածում, Ստեփանոս Սալմաստեցու մասին ասվում է, թե նա «եկն ի Յոանգիստանու ի Լով քաղաքն», մյուս կողմից 1562 տարեթվի տակ գրված է, թե «մինչև ցայժմ կաթողիկոս ի այս աշխարհս բնաւ ոք չէր տեսեալ», ինչպես տեսանք արդեն իր տեղում։ Հաշվի առնելով այս իրողությունը, մենք գտնում ենք, որ Ստեփանոս Սալմաստեցու՝ Լվովում մահացած լինելուն վերաբերող տեղեկությունը

59. Հ. Մ. Բժշկյան, «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 148։

60. Հ. Հ. Տաշյան «Ցուցակ հայերէն ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա», էջ 22։ Տե՛ս նաև «Կամենից», էջ 164։

61. «Կամենից», էջ 135։

62. Նույն տեղում, էջ 13։

63. Տե՛ս Ալիշանի տեղեկությունը, նույն տեղում, էջ 3։

64. Նույն տեղում, էջ 67։

65. Նույն տեղում, էջ 136։

66. Նույն տեղում էջ 19։

67. Նույն տեղում, էջ 23

68. Նույն տեղում, էջ 30։

Տարեգրությանում նույնպես ուրիշ աղբյուրից պիտի լինի։

Ըստ ինքյան զարմանալի ոչինչ չկա, եթե մենք փոխառություններ ենք գտնում 1577 թվականին գրել սկսող մի հեղինակի երկում, որի բովանդակությունը հասնում է առնվազն ԺԶ դարի վերջը։ Դա շատ էլ բնական է։ Սակայն այստեղ կա ուրիշ հարց։ Այստեղ նկատվող եկամուտ տարրերը արդյոք նույնինքն Հովհաննես քահանայի՝ կողմից կատարված փոխառություններն են, թե հետագայում մի այլ խմբագրողի կողմից կատարված ներմուծումներ։ Սա կարևոր պարագա է։

Ցամենեցյան տարեգրությունն տպագիր, ինչպես կա այսօր նա մեր տրամադրության տակ Հ. Ղ. Ալիշանի հրատարակությամբ, ինքնին շատ վստահելի հանգամանքներ չի ներկայացնում։ Նախ՝ բնագրի ձեռագիրը, որը Վենետիկի Մխիթարյան մատենադարանում է գտնվում, անմխիթար վիճակ ունի։ Բացի առաջին թերթից, պակասում են նաև միջից շատ թերթեր։ Նյութերը միշտ չեն հետևում ժամանակագրական ուղիղ կարգի, այլ ցրված են հոս ու տեղ, որով հրատարակիչն ստիպված է եղել ժամանակագրական դասավորում կատարել[69]։ Հետո՝ Տարեգրության ամբողջությունը մի շարք հայտնի և անհայտ հեղինակների գործ է։ Տեր Հովհաննեսից հետո ժամանակագրությունը, 1605—1611 թ. թ. շարունակել է մի անծանոթ ձեռք։ Ապա՝ թաթարերեն (ղփչաղերեն) լեզվով շարունակել են նույն Տեր Հովհաննեսի թոռներ Տեր Հակոբը և Տեր Օքսենտը 1611—1621 թ. թ.[70], որից հետո 25 տարվա մի բաց է մնացել, մինչև որ 1649—1652 թվականներին հայերեն լեզվով շարունակել են դարձյալ անծանոթ ձեռքեր։

Այս հանգամանքներում Տարեգրության առաջին մասում նշված օտար հատվածները կարող են որպես Հովհաննես քահանայի ձեռքով կատարված փոխառություններ լինել, նույնպես և ավելի հետագա շարունակողների ու խմբագրողների գործ լինել։ Դեռ ավելին։ Եթե հետագայում կարող են այլ ձեռքերի կողմից կատարված լինել մուծումներ, կարող են կատարված լինել նաև դիտումնավոր մուծումներ, իսկ որոշ նկատառումներ մեզ թույլ են տալիս շատ բարեմիտ չլինել այս խնդրում։ Այս խնդրում մեզ օգնության է գալիս ժամանակն ինքը։

Իրոք, լեհահայոց պատմության մեջ շատ հետաքրքիր է այն ժամանակաշրջանը, որին զուգադիպում է Ցամենեցյան տարեգրության վերջավորությունը, այն է ԺԷ դարի կեսերը։

Մինչև այս շրջանը Լեհաստանի հայ գաղութը Էջմիածնի կաթողիկոսության թեմ էր։ Լեհահայոց առաջնորդները, որոնք Լվովում էին նստում, ԺԴ դարից սկսած միշտ նշանակվում կամ հաստատվում էին Ամենայն Հայոց Կաթողիկոսներից և նրանց իրավասությանն էին ենթակա[71]։ Սակայն ԺԷ դարում արտակարգ դեպքեր ու փոփոխություններ են տեղի ունենում լեհահայոց կյանքում։ Դանք խռովություններ ամբողջ տասնամյակներով ալեկոծում են գաղութը։ Այդ խռովությունները սկսվում են 1626 թվականից, երբ Էջմիածնի նախկին կաթողիկոս Մելքիսեթ Գառնեցին, որը պարտատերերից հալածական Լեհաստան էր անցել, Լվովում Նիկոլ Թորոսովիչ անուն աբեղային լեհահայոց եպիսկոպոս ձեռնադրելով «տալ նմա առնել զդաւանութիւն աղաւաղ (այսինքն հռոմեական) հաւատոյ, ընդդէմ կամաց ժողովրդեանն, որ դեռ ևս հերձուածոց (այսինքն Հայոց Ազգային Եկեղեցու դավանությանն հետևող) էր»[72]։ Եվ այս Նիկոլը, որ հետո, 1630 թվականին հանդիսավորապես կրկնում է իր դավանությունը Լատին Եկեղեցու ներկայացուցիչների առաջ Լվովում[73], երկարամյա ու բազմատեսակ խռովություններով ու բռնություններով իր հոտին տառապեցնելուց հետո վերջնապես անջատում է իր թեմը Հայոց Ազգային Եկեղեցուց և ենթարկում նրան Հռոմեական Եկեղեցուն, տարածման ուղի հարթելով գաղութին։

Տեղը չէ այստեղ այդ տխուր դեպքերի մանրամասնության մեջ մտնել։ Նրանք ծանոթ են արդեն պատմաբաններին։ Այստեղ պետք է հիշենք միայն այն պարագան, որ այս երկարամյա պայքարի ընթացքում, պայքար, որին հետագայում Հռոմի Պրոպագանդայի լատին գործակալներն իրենց լծվեցին անձամբ, ընդդիմացող ժողովրդին համերաշխության բերելու համար միութենականներին հարկ եղավ բոլոր միջոցների հետ նաև շատ կարգով վարվել, որպեսզի նրան հաշտեցնեին կատարվող փոփոխության հետ։ Այս տեսակետից նրանց անհրաժեշտ էր գաղափարական ուժեղ պայքար, որի մեջ տոհմաբար լավ էին մարզված Հռոմի գործակալները։ Այսպես, նրանց տակտով, Հայկական Եկեղեցին ու թե հերետիկոսական

69. Հմմտ. Կամենեցի, էջ 7—8։

70. Հմմտ. նույն տեղում, էջ 3 և 67։

71. Ստեփան կաթողիկոսի [illegible] 1583 թվականին Գրիգոր եպիսկոպոսին Լվովի հայոց առաջին առաջնորդ է նշանակում, տե՛ս Ալիշան, էջ 5—8։

72. Նույն տեղում, էջ 132։

73. Նույն տեղում, էջ 155։

եկեղեցի էր, այլ հերձվածող (բաժանված) եկեղեցի, ինչ որ նշանակում էր, թե նա մի ժամանակ անդամ էր եղել Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու, որի կենտրոնը, ըստ նրանց, եղել է միշտ Հռոմը, և հետևաբար, նրանք պարտականություն էին համարում այս անջատված եկեղեցուն ամեն գնով վերամիավորել «ընդհանրական» (այսինքն Հռոմեական) եկեղեցու հետ[74]։ Այս էր առհասարակ հայոց մեջ ամբողջ հռոմեական քարոզչության առանցքը և դարձյալ այս գծով էր տարվում քարոզչությունը նաև լեհահայոց մեջ։ Ըստ ֆրանսիացի թեատինյան կրոնավոր Լուդովիկ Պիդուի, որը լեհահայոց համար նշանակված առաքելության և Լվովի հայոց պապական դպրանոցի ղեկավարն էր, Հայկական եկեղեցին Գրիգոր Լուսավորչից մինչև Ներսես Բ Աշտարակեցին (Դ—Զ դ. դ.) միության մեջ էր եղել Ընդհանրական եկեղեցու հետ[75], իսկ Վարդան Հունանյան արքեպիսկոպոսը, որ հետագայում Նիկոլին հաջորդեց Լվովի առաջնորդության մեջ, ասում էր, թե Հռոմում, Պրոպագանդայի դիվանում իրենց գտել են ամեն հայերի կողմից ուղված բազմաթիվ նամակներ «ի կաթողիկոսաց, եպիսկոպոսաց և յայլոց»[76]։ Այսպիսի ուսումն մեծ նշանակություն ուներ պատմական անցյալը ԺԷ դարում լեհահայոց մեջ տարվող նոր շարժման գաղափարական հիմնավորման համար։ Ըստ այդմ, ինչպես, շատ հայտնի մարդիկ էին բռնել Հռոմի ճանապարհը, սկսած կաթողիկոսներից, և դրանց մեջ չէ՞ր եղել նաև Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը։ Իսկ վերջինս Հռոմում գտնված միջոցին իր գործի հաջողության համար ստիպված էր եղել ստորագրել մի դավանագիր, ինչ որ անհավանական չէ,— որովհետև Հռոմում այդ անել էին տալիս նման պարագաներում,— այդ փաստաթուղթը նոր շարժման ղեկավարների ուշադրությունից վրիպած չէր լինի Պրոպագանդայի դիվանում. բայց առանց այն էլ, միևնույնն է, Ստեփանոսի Հռոմում եղած լինելու և ըստ Ֆլորենտյան ժողովի դավանության դավանություն տված (բանավո՞ր) լինելու վկայությունը կար ժամանակակից Գուալտեր Արետինոսի մոտ („dedit obedientiam PP Paulo III. et fecit confessionem suam iuxta eam, quae fuerat facta in Concilio Florentino tempore Eugenii IV")[77]։ Նրա Հռոմում և Լեհաստանում գտնված լինելու մասին կային նաև լեհահայ հիշատակարաններ[78]։

Այս հիման վրա լեհահայ նորադարձ գաղութի մեջ պետք է ստեղծված լիներ որոշ ավանդություն այն իմաստով, թե կաթոլիկությունը նորամուտ բան չէր ինչպես ընդհանրապես հայկական իրականության մեջ, նույնպես և լեհահայ կյանքում. թե էջմիածնի կաթողիկոսներից մեկը, Ստեփանոս Սալմաստեցին, Հռոմում պապին հնազանդություն հայտնելուց հետո եկել էր Լեհաստան. թե նա նույն այցելության ժամանակ մահացել էր Լվովում, ինչպես թվում էր երևա ժամանակի գրիչներից մեկի՝ Մշեցի Օհաննեսի հիշատակարանից։ Եվ ժամանակի ու պարագաների անհրաժեշտությամբ ստեղծված այս ավանդությունը նույնպիսի անհրաժեշտությամբ էլ կմուծվեր նաև, որպես գրավոր արձագանք, լեհահայոց Տարեգրության մեջ, որը հենց այդ ժամանակներում ստանում էր իր վերջնական խմբագրությունը իր այսօրվա ձևի մեջ։ Ահա այսպիսով մենք ուսումնավոր մուծում ենք համարում Կամենիցյան տարեգրության այդ հատվածը ԺԷ դարի մոլեռանդ կաթոլիկ խմբագրողների ձեռքով և ոչ երբեք նույնինքն Հովհաննես քահանայի ձեռքով կատարված փոխառություն, որպիսի իրողություն անհնարին է ենթադրել, քանի որ մենք այժմ ստույգ գիտենք, թե Ստեփանոս Սալմաստեցին չէր մահացել 1551 կամ 1552 թվականին Լվովում։

Մենք նույնը կասենք նաև տապանաքարի համար, որովհետև այստեղ է նաև Լվովի տապանաքարի ծնունդը։

Այժմ կարող ենք հարց տալ իրավամբ, թե ինչո՞ւ տապանագիրը չպիտի լիներ գոնե նաև հայերեն, կամ՝ այդ դամբանաքարի վրա կաթողիկոսն ինչո՞ւ պիտի քանդակվեր լատինական տարազով և ոչ թե հայկական, երբ մենք գիտենք, թե «հայք յայնժամ չէին հնազանդեալ Ս. Աթոռոյն Հռոմայ», ինչպես ասում է Ստեփանոս Ռոշքան, խոսելով 50-ական թվականներին տեղի ունեցած ու-

74. Հռոմեական եկեղեցին սեփականացնելով կաթոլիկ—«կաթողիկե» (լատիներեն catholica) անունը, որ նշանակում է «ընդհանրական», դրանով միշտ էլ շահագործել է և շահագործում է աշխարհի չորս ծագերում գտնվող քրիստոնյա հավատացյալների միամտությունը, այն իմաստով, որ իբր ինքը Քրիստոսի «Ընդհանրական եկեղեցին» է, հետևաբար Հռոմն էլ հանդիսանում է քրիստոնեության կենտրոնը։

75. «Թանի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1881, էջ 1—2։

76. «Կամենիցա», էջ 128։

77. S.-E. Assemanus, „Catalogus" etc., p. 60.

78. Խոսքը վերաբերում է Մշեցի Օհաննեսի հիշատակարաններին և այն հիշատակարանին, որը 1563 թվի տարեթվով մուծված է Կամենիցյան տարեգրության մեջ, ինչպես տեսանք վերևում։ Անշուշտ եղել են և ուրիշ հիշատակարաններ, որոնք չեն հասել մեզ։

բիչ խնդիրների մասին[79]։ Տարացի խնդիրը մանավանդ ծանրակշիռ է։ Ստեփանոս Սալմաստեցին որքան էլ նախանձախնդիր որոշ համաձայնության եկած լիներ Հռոմի հետ դավանական և ծիսական խնդիրների շուրջ, իր ունեցած ազնվության փաստերին զիջումներ անելով, և այդ զիջումների շարքին եթե նույնիսկ ընդունենք, որ նա պարտավորված լիներ պայմանների ժամանակ լատինական զգեստ կրելու,— բան հավանական չէ այդ,— այնուամենայնիվ աներևակայելի է, որ նա դեռ իր Աթոռը չվերադարձած և Հռոմի կողմից առաջարկված պայմանների մասին իր ազգի համաձայնությունը չառած, սկսած լիներ ճանապարհին իսկ ինքնատիպ կերպով գործադրել պայմանները։ Այս դժվարությունն այնքան է ուժգին, որքան մեզ հայտնի է, որ, օրինակ, ըստ վկայության Գալանոսի Աբետինոսի, նա դեռ Հռոմում գտնված ժամանակ, երբ նրան առաջարկվել էր ջուր խառնել բաժակի մեջ, նա դժվարացել էր ընդունել այդ և խոստացել էր, որ կաթողիկոսի հետագայում այդ մասին ձեռք բերել լուսավորիչների համաձայնությունը („et cum in Sacrificio Missae non misceret aquam vino, consensit, ut tum ipse, quam sibi subiecti episcopi XXVII. in futurum, iuxta morem Ecclesiae Romanae, vino aquam miscerent"[80]։ Ուրեմն և անհնարին է, որ նա լատինական եկեղեցական տարազի գործածության սկսած լիներ դեռ Հայաստան էլ չհասած, ուստի նաև անհնարին բան էր, որ եթե նույնիսկ նա Լվովում մնացած և թաղված լիներ և եթե նույն ժամանակին էլ նրա հոգակույտի վրա քար գնեցվեր, այդ քարի վրա հայերը նրան ներկայացնեին մի այնպիսի տարազով, որ նա չէր կարող կրել և չէր կրում։ Եվ սա արդեն ինքնին ընական ապացույց է այն բանի, որ այդ տապանաքարը չի կարող վերաբերվել Ստեփանոս Սալմաստեցուն և ԺԶ դարին։

Նյութական և հոգևոր մշակույթի ամեն մի հուշարձան, անկախ այն նպատակից, որին նվիրված է նա, իր ձևով արտահայտում է ա՛յն ժամանակը և ա՛յն միջավայրը, որոնց մեջ ծնունդ է առնում։ Այսպես և Լվովի տապանաքարը կարող է արտադրությունը լինել միայն ու միայն Նիկոլյան հեղաշրջման ավարտման շրջանի, ԺԷ դարի 60-ական թվականներից սկսած, երբ գաղութի կաթոլիկացման գործին առանձին թափ տրվեց նույնինքն լատինների ձեռքով և բռնի միջոցներով։ Թույլ տվի մի փոքր մանրամասնությունների մեջ մտնել։

Նախքան 60-ական թվականները Նիկոլ արքեպիսկոպոսի միջոցով կնքված միությունը պատիր ու խախուտ էր համարվում լատինների կողմից և այդպես էլ էր իրականում։ Միությունը իրական հիմքերի վրա դնելու համար Հռոմի Պրոպագանդան ենթատան է ուղարկում այսպես կոչված մի առաքելական միսիա, որը էլ է հասնում 1664 թվականի մայիսին։ Առաքելությունը բաղկացած էր երկու թեատինյան կրոնավորներից, որոնցից մեկը հայերին արդեն ծանոթ և լավ հայերենագետ իտալացի Հ. Կղեմես Գալանոսն էր, իսկ մյուսը՝ ֆրանսիացի Հ. Լուդովիկ Պիդուն, որը նույնպես հայերեն սովորել կարճ ժամանակում։ Սրանց պաշտոնն էր պապական դպրոցներ բանալ Լվովում 12 հայ աշակերտների համար և միաժամանակ հետևել, որ հայտարարված եկեղեցական միության սկզբունքները խստիվ կիրառվեն։ Առաքելության հզոր պաշտպաններ են հանդիսանում Մարիամ Լուդովիկե թագուհին, Լվովի լատին արքեպիսկոպոս Տառնովսկին, նրա տեղապահ Պյասեցկին, Կամենեցի եպիսկոպոս Լեշչինսկին, Դոմինիկյանների գավառապետ Հ. Անտոնինոս, պապական նվիրակ Պիգնատելլին, որին հետո հաջորդում են Մարեսկոտտին, Ներլին և այլն, և ուրիշներ։ Հռոմի Պրոպագանդան տարեկան 200 դահեկան թոշակ է նշանակում Նիկոլին՝ նրան հլու գործիք դարձնելու համար իր գործակալների ձեռքին։ Շատ հետաքրքրական են այս մասին այն գրավոր ընդարձակ տեղեկությունները, որ թողել են մեզ նույնինքն Հ. Պիդուն իտալերեն լեզվով, և մի ուրիշ անանուն հեղինակ, որը հավանորեն նույն միսիայի անդամներից մեկն է եղել, լատիներեն լեզվով[81]։ Ըստ այս հիշատակարանների՝ Գալանոսն ու Պիդուն սկսում են գործել տիրաբար։ Նրանց առաջին գործն է լինում բռնությամբ և սպառնալիքով հարկադրել, որ հայոց եկեղեցիներում պատարագը մատուցվի ջրախառն բաժակով, ըստ լատինական արարողության, որին սկզբում հանձնառու է լինում Նիկոլն ինքը միայն, չուզելով ստիպել ուրիշ ոչ ոքի[82]։ Սակայն քարոզիչները նրանից պահանջում են «այդ ի գործ ածել» գործն սկսենալ. տրամադրել հանձնել եկեղեցեացն գրա-

79. «Կամենից», էջ 136։

80. S. E. Assemanus, „Catalogus" etc. p. 90. Համեմ. Հ. Մ. Չամչյան, «Պատմություն Հայոց», հատ. Գ, էջ 619։

81. Այդ հիշատակարանների հայերեն թարգմանությունը տե՛ս «Բանք միութեան Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ», Ս. Պետերբուրգ, 1884։

82. Նույն տեղում, էջ 36։

վում հերետիկոսութեան և զմոլորութիւնս, որ յայտնապէս հակառակ են սուրբ միութեան Եկեղեցւոյ, և եթէ ոչ համաձայնեսցի՝ հարկիմք արգելուլ զեկուցանել արքայական Մեծութեանն՝ թէ կեղծեալ է միութիւնսն»[83]: Եվ այս ծանր վեճը լուծվում է լատինների կատարյալ հաղթանակով. երբ 1665 թվականի հունվարին նրանք Նիկոլի անունով և բանադրանքի սպառնալիքով բոլոր քահանաներին հարկադրում են պատարագ մատուցել լատինական արարողությամբ[84]: Այնուհետև պատարագի մեջ մուծվում է պապի անվան հիշատակությունը. անխնա սրբագրություններ են կատարվում Պատարագամատույցի մեջ, «Հավատամքի»-ի մեջ, Ժամագրքի, Մաշտոցի և Հայսմավուրքի մեջ. կատարվում են մի քանի ծիսական-սովորութական կարգի ուղղումներ և այլն. և այս բոլորը՝ Նիկոլի միջոցով և անունով[85]. «Սկսաք այսպէս առ սակաւ սակաւ ուղղագրել ըստ կարգի, որպէս և առնեմք իսկ մինչև ցայսօր. թէպէտ և չեն մեր ակնկալութիւնք աւարտելոյ զայն առանց հայերէն տպարանին»,— գրում էր Պիդուն 1668 թվականին[86]: Հալածվում էին այն անձերը, որոնք հայտնի ընդդիմադիրներ էին հանդիսանում առաքելության գործունեությանը. Օրինակ՝ Հակոբ Բրոսկի քահանան, որ Նիկոլի խոստովանահայրն էր, Տանովսկու և Պյասեցկու ջանքերով արտաքսվում է Լեհաստանի սահմաններից 1661 թվականին[87]. Նույնպես խիստ հալածանքի է ենթարկվում Էջմիածնի նվիրակ Պողոս վարդապետ Եվդոկիացին 1665 թվականին, հարկադրվելով հեռանալ Լեհաստանից[88]:

Այսպես սկսվեց և այսպես էլ շարունակվեց առաքելության գործունեությունը: Նիկոլը ստիպվեց միշտ էլ նրանց ակամա կամակատարը լինել, որքան էլ անհեթեթ լիներ այդ, այն վախով, «զի մի գթաշական կորուսցէ»[89]: Գալանոսի մահից հետո, որ տեղի ունեցավ 1666 թվականի մայիսին, Հռոմից ուղարկվեցին հետզհետե ուրիշներ, որոնց հետ, և առաքելության պաշտպանների աջակցությամբ, Պիդուն շարունակեց գործել նույն եռանդով ու համառությամբ, ամեն ինչ անելով Նիկոլի անունով ու հրամանով և ինքը մնալով միշտ վարագույրի ետև, ժողովրդին չգրգռելու համար: Սակայն խոր տարաձայնություններ երբեք էլ պակաս չէին ըստ սովորականին նաև նույնինքն Նիկոլի և Պիդուի միջև, այնպես որ, ի վերջո անհրաժեշտ էր դարձել մեկուսացնել Նիկոլին եւ և պապական նվիրակ Մարեսկոտտիի հրավերով 1664 թվականի հոկտեմբերին ուղարկվել էր նա Հռոմ[90], որից հետո աշխատում էին, որ այլևս նա չվերադառնար: Նիկոլի մասին Հռոմի Պրոպագանդայի կատարած ստուգումից պարզվում էր, որ Լվովի լատինաց հոգևոր վարչությունում «գրեթե թէ ամենեքեան հաւան էին ընդ արգելումն, մանաւանդ բարեպաշտոն Տարնովսկի, որոյ զձեռսն ի կուրծս եդեալ՝ պնդեաց. թէ անհրաժեշտ իցէ պահել արգելուլ զարքեպիսկոպոսն ի Հռոմ»[91], իսկ մյուս կողմից Պիդուն և ընկերներն աշխատում էին «զի ըստ կարի արգելլիցին ժողովրդեանն, որպէս զի մի առաքեսցեն թուղթս ի Հռոմ և խնդրեսցեն զդարձ արքեպիսկոպոսին. ...Վասն այսորիկ օգնութեամբ փոխանորդին մեծաւ ճարտարութեամբ զգործն կատարեցին և բազում անգամ խափան եղեն ժողովրդեանն, ցրուելով զժողովս նոցա զառանձնականսն և զհրապարակականսն»[92]: Միայն 1674 թվականին է, որ Նիկոլին թույլատրվեց վերադառնալ Լեհաստան, նրան հանձնառու դարձնելով մի շարք պայմանների, որոնցով այլևս արմատապես ապահովվում էր կաթոլիկությունը Լեհաստանի հայերի մեջ:

Մեր կարծիքով հենց այս ժամանակի և միջավայրի ծնունդ է այն ամբողջովին լատինական հատկանիշներով դամբանաքարը, որ գտնվում է Լվովում: Այն շրջանում, երբ Հռոմի լատին գործակալներն իրենց ձեռքն էին առել լեհահայերի ազգային-հոգևոր գործերը, բռնի տիրել էին բոլոր եկեղեցիներին, տիրաբար տնօրինում էին ամեն ինչ՝ բացահայտ լատինացման ոգիով, մի կողմից համոզելով և ազդելով ընդդիմացող ժողովրդին, իսկ մյուս կողմից բռնադատելով ու հալածելով նրան, այս շրջանում, ուրեմն, կաթոլիկական պրոպագանդան հղացել ու կենսագործել էր Լվովի հայոց արքեպիսկոպոսական աթոռանիստ եկեղեցում միմական հուշարձան կանգնելու գաղափարը մի հուշարձան՝ անհրաժեշտ հատկանիշերով, իր տարած պայքարի գաղափարական հիմնավորման նպատակով Ստեփանոս Սալմաստեցու անվան շուրջ ստեղծված ավանդությունն ամրապնդելու և հավերժացնելու համար: Կոփվել էր քարը, նրա վրա գեղեցկորեն քանդակվել էր հայոց կաթողիկոսի կերպարը լատինական եկեղեցական տարազով և փորվել էր լատինական փառավոր արձա-

83. Նույն տեղում, էջ 37:
84. Նույն տեղում, էջ 38—39:
85. Նույն տեղում, էջ 39—40 և 165:
86. Նույն տեղում, էջ 41:
87. Նույն տեղում, էջ 37 և 164:
88. Նույն տեղում, էջ 44—45 և 46—48:
89. Նույն տեղում, էջ 163:
90. Նույն տեղում, էջ 113 և 204:
91. Նույն տեղում, էջ 206:
92. Նույն տեղում, էջ 207:

նագրությունը։ Նրա պատմական հիմքերը նույն հիմքերն էին, որ տալիս Կամենեցյան տարեգրության համաձայն ամիսի. Այստեղ թվականը՝ 1551՝ արդեն տառացի համեղ պատասխան է իր աղբյուրին՝ Միջնի Օհանիսուկի հիշատակարանին, մինչ Տարեգրության համաձայն թվականն էր 1562 թվականի հունվարի 14-ը, բնարկե մի որևէ հաշվով, որ մեզ անհայտ է։

Իսկ թե ինչ կարող էինք ասել Լվովի տապանաքարի և նրա հետ միասին Կամենեցյան տարեգրության խնդրո առարկա համաձայն ծագման մասին, այն բանից հետո, երբ մի շարք փաստեր մեզ ասում են, թե հիշյալ թվականներին Ստեփանոս Սալմաստեցին չէր մահացել Լվովում և չէր թաղվել այնտեղ։

Այս հիման վրա, Ստեփանոս Սալմաստեցու անունով Լվովում գտնվող տապանաքարը հանդիսանում է պատմական կեղծիք[93], որը շփոթության աղբյուր է եղել մեր օրերում հայ պատմագիտության մեջ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության համար, հայ ազատագրական շարժումների նախնական շրջանի պատմության կապակցությամբ։ Այդ պատմական կեղծիքի առաջին զոհը հենց լեհահայոց ժամանակագիրն է եղել ԺԷ դարի առաջին կեսին՝ Ստեփանոս Ռոշքան, որ ամբողջովին գրավոր աղբյուրների հիման վրա է կազմել իր համառոտ ժամանակագրությունը, այս տապանաքարից բացի ոչ մի հնարան չի ունեցել Սալմաստեցու մասին իր հաղորդած տեղեկությունների համար, ինչպես տեսանք արդեն. և այս հանգամանքը նաև ցույց է տալիս, թե այդ ժամանակ Լվովից արդեն դադրած է եղել Մչեցի Օհանիսուկի ձեռագիրը, որից անշուշտ օգտված կլիներ նա ոչ միայն Սալմաստեցուն վերաբերող տեղեկություններում, այլ նաև Գրիգոր Վարագեցուն, եթե տեսած լիներ այդ։

***

Ամփոփելով մեր ասածները, Ստեփանոս Սալմաստեցու 1551 կամ 1552 թվականին Լվովում մեռած և թաղված լինելու խնդրի կապակցությամբ առաջ քաշված ուղղակի և հարակից հարցերի քննությամբ, մենք ստանում ենք հետևյալ եզրակացությունները.

1. Ստեփանոս Սալմաստեցին Հռոմից վերադարձին չի մահացել Լվովում 1551 կամ 1552 թվականին, այլ հիշատակվում է որպես Հայոց կաթողիկոս, ինչպես 50-ական, այնպես և 60-ական թվականներին։

2. Այն տապանաքարը, որ գտնվում է Լվովում նրա անունով, հետագայի գործ է, մի կեղծիք, որի հեղինակներն անվանապես անծանոթ են մեզ։ Բայց

3. Նկատի առնելով այդ տապանաքարի ներկայացրած հատկանիշները, որոնք զուտ լատինական են, գտնում ենք, որ կեղծիքի հեղինակները ԺԷ դարի երկրորդ կեսում Հռոմից Լեհաստան ուղարկված Պրոպագանդայի լատին գործակալներն են և կամ նրանց հայազգի գործակիցները։

4. Ստեփանոս Սալմաստեցին և Ստեփանոս Արբնեցին միևնույն անձն է։

5. Ստեփանոս Սալմաստեցին Հռոմ գնալիս իր հետ ունեցել է հետևյալ անձերին. Զաքարիա եպիսկոպոս, Դավիթ վարդապետ, Գրիգոր վարդապետ Վարագեցի, որ Ստեփանոսի աշակերտն էր, և Լուսիկ սարկավագ։

6. Ստեփանոս Սալմաստեցին 1552 թվականի վերջերին գտնվում էր Լեհաստանում, այնպես որ նույն տարվա Հրեշտակապետաց տոնին, որ նոյեմբերի 19-ին էր ընկնում, նա գալիս է Կամենեց, հայ գաղութին այցելելու, այնտեղ մնում է մինչև Ծննդյան տոնը, այսինքն՝ 1553 թվականի հունվարի 6-ը, որից հետո գնալով Լվով, նորից է վերադառնում Կամենեց։

7. Ստեփանոս Սալմաստեցին 1555 թվականին դեռ, —և կամ, եթե երբևիցե հեռացել էր այնտեղից՝ նորից,— գտնվում էր Լվովում, որտեղ նա առաջնորդության թափուր աթոռի համար նույն թվականի ապրիլի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրում իր աշակերտ Գրիգոր վարդապետ Վարագեցուն։

8. Ստեփանոս Սալմաստեցին, կենդանի լինելով 1562 թվականին և շարունակելով իր կաթողիկոսությունը, որպես աթոռակից Միքայել Սեբաստացու, չէր կարող անմասն եղած լինել այդ թվականին Միքայելի ղեկավարությամբ կատարված ձեռնարկման մեջ, հետևաբար հայ ազատագրական շարժման առաջին երկու ձեռնարկումները պետք է օրգանապես կապված լինեին միմյանց հետ, հանդիսանալով մեկը մյուսի շարունակումն ու զարգացումը, Ստեփանոս Սալմաստեցու գլխավորությամբ և մասնակցությամբ։

93. Պրոֆ. Հ. Աճառյանը ժամանակին չտալով մեր այս կարծիքի արձագանքը լինելու՝ «Ախալյան»-ից է, թե թարերն էլ են կեղծում բառերով (տե՛ս նրա «Հայոց անձնանունների բառարան», հատ. Դ, Երևան, 1948 թ., էջ 674), առանց հիշատակելու մեր անունը։

Հ. ԹՈՒՐՇՅԱՆ

# ՀԱՅ-ՀԱԲԵՇԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Վենետիկի մխիթարյանների «Բազմավէպ» ամսագրում 1847 թվականին (էջ 182 և շար.) տպված է մի հետաքրքիր բանաստեղծություն, որ Վենետիկ քաղաքի գովքն է հյուսում։ Խմբագրությունն իր տված ծանոթագրության մեջ նշում է, որ բանաստեղծությունը գրվել է 1500—1600 թվականների միջև։ Մեզ համար ուշագրավն այն է, որ բանաստեղծությունը գրողն ապրել է 16-րդ դարում և որ նա իրեն անվանում է Խաչատուր երեց Հաբեշացի։*

*Պատմության կողմից արձանագրված առաջին պաշտոնական նվիրակը, որին Հայ Եկեղեցին ուղարկել է Հաբեշստան, եղել է Գրիգոր եպիսկոպոսը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից։ Գրիգոր եպիսկոպոսը Հաբեշստան և ապա Հնդկաստան է մեկնել 1652 թվականին։ Նրա այդ նվիրակության մասին հաղորդում են Մեսրոպ Թաղիադյանը («Պատմութիւն հին Հնդկաստանի» աշխատության 3-րդ գրքի 7-րդ գլխում) և Աստվածատուր եպիսկոպոս Հովհաննեսյանը («Պատմութիւն Երուսաղէմի», էջ 343)։ Երուսաղեմի պատմագիրը գրում է. «Գրիգոր եպիսկոպոս ոմն շրջեալ քարոզութեամբ յաշխարհ Եթովպիոյ մինչ ի Մուխա եկն անդուստ ի Քողի (Գոա, Հնդկաստան) և քարոզութեամբ իւրով հաստատեաց զամենեսեան ի դաւանութիւն հայոց և ասորւոց»։*

*Գրիգոր եպիսկոպոսից մի երկու տասնամյակ հետո Հաբեշստան այցելություն է կատարել Հովհաննես արքեպիսկոպոս Աղթամարցին (Թութունջին), որը թողել է իր ժլատ ուղեգրությունը։ Կարապետ եպիսկոպոսի հայտնաբերած այդ ուղեգրությունն ակադեմիկոսներ Բ. Տուրաևը և Ն. Մառը ծանոթագրություններով լույս են ընծայել «Христианский Вестник» ամսագրում (1914 թ., էջ 6—10)։ Նույն ուղեգրության մասին հետաքրքիր ուսումնասիրություն է գրել արևմտահայ հայտնի բանասեր Ա. Ալպոյաճյանը («Առաքելութիւն ի Հապէշստան ԺԷ դարուն», Կահիրե, 1946 թ.)։*

*Երկու դար հետո 1867—1868 թվականներին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրության խնդրանքով Հաբեշստան է մեկնել հայկական եկեղեցական հատուկ պատվիրակություն (Իսահակ արքեպիսկոպոս Թաբերդցի, Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիչյան և Եզեկիել սարկավագ)՝ անգլիացիների հետ գժտված Թեոդորոս Երկրորդ Նեգուս-Նեգեշտիի հետ բանակցելու և անգլիացի կալանավորներին ազատելու նպատակով։ Հայ եկեղեցական պատվիրակության այս ուղևորությունն իր ժամանակի կարևոր իրադարձություններից մեկն է եղել։ Պատվիրակության անդամ Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիչյանը (պոլսեցի) գրի է առել իր հուշերը՝ «Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշիստան» խորագրով երկու հատորի մեջ (Երուսաղեմ, 1871 թ.), որ թարգմանվել է նաև անգլերենի, ֆրանսերենի և ապա գերմաներենի և աչքի ընկնող տեղ է գրավում հաբեշագիտության մեջ։*

*Մեր դարի սկզբին Ադդիս-Աբեբա է ուղարկվել որպես Եթովպիո հայոց հոգևոր հովիվ Տ. Մկրտիչ քահանա Չլղատյանը, որի Ադդիս-Աբեբա ժամանումը մանրամասն նկարագրվել է ժամանակի հայ մամուլում, մասնավորապես «Արարատ» ամսագրում (1905 թ., էջ 532, 619, 819)։*

*Ադդիս-Աբեբայի նորակառույց հայ եկեղեցին օծելու համար 1928 թվականին Հաբեշստան է ուղևորվել Կոստանդնուպոլսի Պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը, որն իր ուղևորությունը գրի է առել և հրատարակել («Ուղևորութիւն յԵթովպիա», Կոստանդնուպոլիս, 1930)։*

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի № № IV—V-ից, VI-ից և VIII—IX-ից։

***

Ռուսական հաբեշագիտության հիմնադիր պրոֆ. Վ. Վ. Բոլոտովը զբաղվել է նաև հայ-հաբեշական եկեղեցական հարաբերությունների հարցով և տասնձին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում մեզ այդ հարցի վերաբերյալ։ Նրա աշակերտ հաբեշագետ ակադեմիկոս Բ. Տուրաևը մտադրել էր հատուկ աշխատություն գրել հայ-հաբեշական հարաբերությունների մասին, և իր այդ նպատակն իրագործելու համար 1910 թվականին նա ժամանում է Էջմիածին, որտեղ ուսումնասիրում է Մատենադարանի հաբեշերեն ձեռագրերը։ Պետերբուրգ վերադառնալուն ակադեմիկոս Տուրաևը Արևելագիտական ընկերությունում հատուկ զեկուցում է կարդում հայ-հաբեշական եկեղեցական հարաբերությունների մասին։ Նրա այդ զեկուցումը 1912 թվականին լույս է տեսել առանձին հատվածով վերնագրով. «Հայ-հաբեշական հարաբերություններից։ Փաստեր։ Էջմիածնի Մատենադարանի եթովպերեն պատառիկները։ Աղոթքներ և եթովպերեն ձեռագրերում Ս. Գրիգոր Լուսավորչին վերագրված դավանությունները»։

Ակադեմիկոս Տուրաևի 17 էջանոց այս փոքրածավալ աշխատության մեջ կարդում ենք.

«Հաբեշական եկեղեցու վրա Հայ եկեղեցու ազդեցությունը մենք կարող ենք նկատել մեկ արձանագրված փաստից։

Լեբնա Դենգելի թագավորության շրջանի համառոտ ժամանակագրության մեջ 1539 թվականի մասին կարդում ենք. «Այդ ժամանակ Զատկի հարցում սկսված հակաճառությունների հետևանքով տարաձայնություն ծագեց ամբողջ եթովպական ժողովրդի մեջ։ Ոմանք ասում էին, թե Զատիկը պետք է տոնվի միազյի 18-ին (ապրիլի 13-ին), իսկ նրանք, որոնք գիտեին տերունական կարգը, համաձայն էին թագավորի հետ և հրեական Պասեքը տոնեցին միազյի 10-ին, իսկ քրիստոնեական Զատիկը՝ 11-ին (ապրիլի 6-ին)»։

Պրոֆ. Վ. Վ. Բոլոտովն ապացուցել է, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հայկական հայտնի Ծռազատիկին, որը նշված տարին ընկնում էր ապրիլի 6-ին և ըստ Դյուլորիեի, եթովպացիները Երուսաղեմում իրոք որ Պասեքը կատարում էին հայերի հետ։ Եգիպտոսում և Հաբեշստանում Զատիկը միշտ էլ տոնում էին ուղղափառների հետ և հիշյալ դեպքը, թվում է, միակն է, երբ գտնվել են հայկական սովորույթին հետևող կողմնակիցներ, սովորույթ, որն առաջ ընդհանուր միարնակյան էր։ Հաբեշստանի աստվածաբանական գրականության մեջ նույնպես կան տեղեր, որոնք նրան կապում են Հայաստանի հետ։ Բայց դրանք արդեն վերաբերում են միջնորդ թարգմանություններին և, համենայն դեպս, դեռևս ստուգման կարիք ունեն։ Դրանց թվում կարելի է դասել ա) Հիսուս Քրիստոսի աստվածության մասին՝ ընդդեմ հրեից, որ վերագրվում է Ս. Գրիգոր Լուսավորչին և մտնում է եթովպական «Սինոդոս» կանոնագրքում. բ) Հատվածներ Ս. Գրիգորի դավանություններից, որ մտել են «Հայրերի Հավատ» դավանաբանական ժողովածուի մեջ. գ) Ս. Գրիգորին վերագրված դավանություն, որ գտնվել է Միաբանների ձեռագրերի մեջ՝ Անեցյան տոնին և լի օրերը կատարելու համար. սա հին է և պարունակում է շատ հին մասեր, որոնք նրան մերձեցնում են առաքելական որոշումների դավանության հետ. դ) Հատվածներ «Հայաստանի արքեպիսկոպոս Եփիփանիոսի դավանաբանական գրություններից», որոնք զետեղված են միևնույն «Հայրերի Հավատ» միարնակյան դավանաբանական ժողովածուի մեջ։ Այս ամենը վերաբերում է թարգմանական գրականությանը, մեծ մասամբ արաբերենից, և կատարված է ոչ շուտ քան 16-րդ դարի վերջերը։ Ավելի վաղ շրջանին է վերաբերում եթովպական Սինաքսարի թարգմանությունը, որի մեջ Ս. Գրիգորը և նրա շարքը աչքի ընկնող տեղ են գրավում։ Մասկարամի 19-ին (սեպտեմբերի 16-ին) նշված է Ս. Գրիգորի հիշատակի կատարումը, ինչպես նաև 29-ին և 30-ին նշված է հիշատակի կատարումը կին նահատակներ Արսիմայի և Ագաթիայի, որոնք համապատասխանում են Ս. Հռիփսիմեին ու Ս. Գայանեին. Բացի դրանից, Ս. Գրիգոր Լուսավորիչը, «Մարտիրոս առանց արյան հեղման», նշված է տախսասի 15-ին (դեկտեմբերի 11-ին), ինչպես մենք այդ գտնում ենք ղպտիների մոտ... Բացի դրանից, եթովպական գրականության մեջ կա Ս. Գրիգորի ավելի ընդարձակ վարքը, որ զետեղված է «Մարտիրոսների սխրագործությունները» ժողովածուի մեջ, որը գրի է առնվել 14-րդ դարի վերջերին կամ թե 15-րդ դարի սկզբին. դրա աղբյուրը Ագաթանգեղոսի արաբական թարգմանությունն է, սակայն շարադրանքը շատ ավելի սեղմ է։

Երբ հավատանք Բոլոտովին, եթովպական գրականությունն իր գործիչների մեջ ունեցել է հայ արքա Գեորգին, որը մոտավորապես 1440 թվականին «Լույսի օրհնություն» խորագրով փառաբանություն է գրել ի պատիվ Տիրամոր։ Դա ամենասիրված և ամենատարածված օրհներգություններից մեկն է, որն, ըստ որում, աչքի է ընկնում ոճի մաքրությամբ, մի բան, որ կարող է չկապվել հեղինակի օտար ծագման հետ...։ Բայց Զոտամ-

*քերը կարծիք է հայտնում, որ այդ Գեորգը նույն այն թարգմանիչն է, որ Ավետարանի չարչարանաց գլուխների վերաբերյալ հայ Գեորգ Սաղամանթիի մեկնությունները թարգմանել է եթովպերենի։*

*Երբ Պետերբուրգի էրմիտաժն ստանում է «Կույսի օրհներգությունը» երկի եթովպերեն ձեռագիրը, ակադեմիկոս Տուրաևը, նկարագրելով այդ ձեռագիրը, գալիս է այն եզրակացության, որ աբբա Գեորգը հայ էր։*

*Հաբեշ ուխտավորների մինչև Էջմիածին հասնելու անժխտելի ապացույցը հաբեշերեն ձեռագրերի առկայությունն է Էջմիածնի նախկին ձեռագրատանը, իսկ այժմ՝ Հայկական ՍՍՌ Երևանի Պետական մատենադարանում։ Տարակույս լինել չի կարող, որ այդ հաբեշերեն ձեռագրերը բերել են հաբեշ ուխտավորները։ Մեր պատմագրության մեջ վկայություն է պահպանվել այն մասին, որ 15-րդ դարի առաջին քառորդում Հայաստան եկած հաբեշ երկու քահանաներ վերադարձին զոհվել են Խիզանում։ Ստեփանոս վարդապետի վկայաբանության մեջ հաբեշ երկու քահանաների նահատակության մասին կարդում ենք. «Արդ առաջնորդութեամբ Սուրբ Հոգւոյն և սիրով Որդւոյն Միածնի և նախախնամութեամբ Հօրն Երկնաւորի եկեալ յաշխարհէն իւրեանց և եկին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և կատարեցին զուխտս իւրեանց և հասեալ երկիրս Հայոց շրջէին ի վանորայս։ Եւ յետոյ եկեալ ի քաղաքն Խիզան և անդ նահատակեցան ի ձեռաց այլազգեացն։ Զոր եկեալ քրիստոնէիցն բարձին զմարմին երկուց սուրբ քահանայիցն հաբաշ մարտիրոսացն և տարեալ ամփոփեցին ի վանքն Բարեձորի ՊՀ (1421) թուականին Հայոց»[19]։*

*Սակայն դավանակցության հիման վրա հաստատված եկեղեցական հարաբերությունները, փոխադարձ այցելությունները հող են նախապատրաստել* նաև կազմակերպչական հարաբերություններ հաստատելու համար երկու եկեղեցիների միջև:

*Հայ-հաբեշական եկեղեցական* կազմակերպական առնչությունների *մասին առաջին վկայությունը թողել է Հ. Ղևոնդ Ալիշանը.*

«...Երովպիա. ի սմա նշանաւոր է ի յետին դարս եկեղեցական յարնչութիւն հայոց, փոխանակ հաղորդակցաց դրան եգիպտացւոց վերատեսուչ եկեղեցւոյ ընծայելով եւրոպացւոց»[20]:

*Դժվար է որոշակի բան հասկանալ այս ժլատ տողերից։ Ալիշանը իր հիշատակած հետաքրքիր փաստերի աղբյուրները մատնացույց անելու սովորությունը չունի։ Ակադեմիկոս Բ. Տուրաևի հիշատակած զեկուցման մեջ կա այսպիսի մի հետաքրքիր տեղեկություն, որը կարող է որոշ լույս սփռել Ալիշանի հաղորդած տեղեկության վրա.*

*«17-րդ դարի վերջերին, Հովհաննես Թագավորի օրով (1667—1682 թ. թ.— Հ. Ի.), երբ «ֆրանկները» վերջնականապես վտարվել էին Եթովպիայից, այնտեղ մենք տեսնում ենք նույնիսկ հայ եպիսկոպոս, որն ապրում էր այնտեղ ավելի քան մեկ տարի և վայելում թագավորի սերը։ Այդ եպիսկոպոսը հետագայում Փարիզում իր մի բարեկամ հայ վաճառականի հաղորդել էր, որ նեգուսը Յակոբիկյան Պատրիարքարանի ուղարկած քահանայապետների տգիտությունից և կոպտությունից դժգոհ, պատրաստ էր բանակցություններ սկսել հայերից առաջնորդ ստանալու համար։ Այդ պատճառով էլ հոգևորականությունն սկսում է խեթ նայել հայ եպիսկոպոսին և նրան կասկածել բարձր նվիրապետական ոտնձգություններ կատարելու մեջ։ Այդ եպիսկոպոսն էլ հաղորդել էր, որ «Հաբեշական թագավորի մոտ ծառայում էր մի հայ տեխնիկ, որը տեղացիներին վառոդ պատրաստել էր սովորեցնում»։ Հարգելի ակադեմիկոսն էլ սակայն մատնացույց չի անում այս խիստ արժեքավոր տեղեկության աղբյուրը։ Պետք է նկատել, որ երբ ակադեմիկոս Բ. Տուրաևը գրում էր այս տողերը, դեռևս Կարապետ եպիսկոպոսը չէր գտել Հովհաննես արքեպիսկոպոսի ուղեգրությունը, որի հրատարակությանը նա մասնակցում է երկու տարի հետո։ Ամենայն հավանականությամբ, Նեգուս-Նեգեստի Հովհաննեսի մոտ յուրընկալված հայ հոգևորականը Հովհաննես արքեպիսկոպոս Աղթամարցին է, որովհետև՝ «զի ոչ կարացի կեալ վասն վշտացուցանելոյ զմեզ քահանային յաղագս հարցափորձի օրինաց մերոց և հաւատոյ համարս»,— գանգատվում է Հովհաննես արքեպիսկոպոսն իր համառոտ ուղեգրության մեջ։ Նմանօրինակ պատկեր, իրադրություն մենք տեսնում ենք 19-րդ դարում, երբ հայկական եկեղեցական պատվիրակություն այցի էր գնացել Հաբեշստան։*

*«Որսինին Թե.— հաղորդում է Սափրիչյանը.— նույն տարին գերաշնորհ Իսահակ արրադանը և նվաստս Ըսար-Ամսյա եկած ժամանակնիս լուր մը տարածվեցավ, թե Թեոդորոս Թագավորը խիստ առաջնորդեն և անոնց ազգեն ձանձրացած ըլլալով, դրութեամբ խնդրած ըլլա սուրբ Երուսաղեմի հայոց պատրիարքեն, որ եպիսկոպոս առաջնորդ մը իրեն ղրկե, որպես զի խալակոց անունը ջնջվի Հաբեշիստանեն։ Իվ արդարև այս լուրը Ագուետ Սեկամին Հայնինքն Դյուռ*

19. Հ. Մանանդյան և Հ. Աճառյան. «Հայոց նոր վկաները», էջ 241։

20. Հ. Ղ. Ալիշան, «Սիսական», էջ 471։

եկեղեցու կողմից ուղարկված Հաբեշական կրոնապետը) այլ յանկով յուր բանակի մեջ, և արդեն հուսահատությունը մեկ կողմն և զարգիական ախտը մյուս կողմն յուր անձը մաշած ըլլալով, ավելի ցավ մը կըլլա, կըսեն, իրեն մեր հոն երթալը»[21] (ընդգծումն իմն է — Հ. Թ.)։

Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիչյանը, որպես հայ եկեղեցական պատվիրակության երկրորդ անդամ, Հաբեշստան այցելել է 1867—1868 թվականներին, երբ Հաբեշ տաղանդավոր նեգուս-նեգեստի Թեոդորոս Երկրորդը անգլիական արշավանքի ժամանակ գրեթե մենակ մնացած, ճարահատյալ ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին։ Թեոդորոսի այս ողբերգության մեջ խիստ բացառական դեր խաղաց ո՛չ միայն ղպտի աբունա Սելամին, այլև ղպտիների պատրիարքը, որն Ալեքսանդրիայից ծպտյալ ժամանել էր Հաբեշստանի սահմանագլուխը և ցանկանում էր իր հեղինակությամբ Թեոդորոսին ծնկի բերել անգլիացիների առաջ։

Հաբեշները չէին կարող զոհ լինել Ղպտի եկեղեցու գերիշխանությանը։

Նման պայմաններում, երբ օրակարգում դրված էր նաև միասնական Հաբեշստան ստեղծելու հարցը, անհրաժեշտ էր գտնել գոնե չեզոք մի աբունա։

Հայկական եկեղեցական պատվիրակությունը անգլիացի գերյալներին ազատելու նպատակով Հաբեշստան ժամանեց Հաբեշըստանի համար պատմականորեն հույժ կարևոր, բայց խառն ժամանակաշրջանում (1867—1868 թ. թ.), երբ ազգահավաքման և միասնական Հաբեշստան ստեղծելու հետ միաժամանակ դրված էր թե՛ նոր նեգուս-նեգեստի գահ բարձրանալու և թե՛ նոր աբունա ընտրելու հարցը։ Վախճանվել էր ղպտի աբունա Սելամին, իսկ ղպտի աբունաների դեմ ընդհանուր դժգոհություն էր առաջացել։

«Ժամանակ ժամանակ,— գրում է Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիչյանը, — թե՛ Ռաս-Ալիին և թե՛ Թեկրիի Ուպիե իշխանին որով մեր Սրբազան Պատրիարքին գրություններ և մարդիկներ գալով առաջնորդ խնդրած են, բայց անոնց խնդիրքը դանց առնված են թե՛ ճանապարհի վտանգներուն և թե՛ այս երկրիս միշտ խռովության և պատերազմի մեջ ըլլալուն պատճառավ։ Այժմու Թեոդորոս թագավորն ալ անկե 15 տարի առաջ առաջնորդ եպիսկոպոս մը խնդրեց մեր Սրբազան Պատրիարքեն, բայց նա պատասխանեց. թե Հաբեշու եր-

21. Տիմոթեոս ծ. վրդ. Սափրիչյան, «Երկամյա պանդխտություն ի Հաբեշիստան», Երուսաղեմ, 1871 թ., հատ. Բ, էջ 118։

կրին առաջնորդական իրավասությունը Աղեքսանդրիո կաթողիկոսին կվերաբերի. մենք չենք ուզեր անոր այս իրավունքը հափշտակել, անիկա խեղճ է, թող անոր հասույթանեն 10.000 թալեր իրավունքը և առաջնորդ մը խնդրեն՝ եթե Աբունա Սելամին մեռած է»[22]։

Շատ ավելի մտերմական հարաբերություններ են հաստատվում հայկական եկեղեցական պատվիրակության երկու անդամների և ապագա նեգուս-նեգեստների՝ Դեջազմաչ Քասսայի (Յոհաննես Չորրորդ, 1868—1889) և Շոայի երիտասարդ իշխան Մենելիքի միջև (1889—1913 թ. թ.), որոնց ևս տալիս են նույն մերժողական պատասխանը։ Հայ կրոնավորները մտերմական խորհուրդներ են տալիս ապագա Դեջազմաչ Քասսային, որն ակնածությամբ լսում է նրանց, «գլուխը ծռած և աչքերը գետնի գետին դարձուցած՝ խորին ուշադրությամբ»։ Այա ավելացնում է. «Տված խորհուրդներեն ընդունեցի սրտանց... Աստված ինչ որ կամեցեր է ինձի համար, հաճելի է ինձի, և եթե ձեր սուրբ աղոթից օժանդակությամբը թագավորական իշխանություն տալու ըլլա ինձի Աստված, գիտցած եղեք, որ արքայական թագը ձեզմե պիտի ընդունիմ»[23]։

Բայց Հայ եկեղեցին չի ունեցել երբեք դավանաբանական փաստարկություններ դավանակից բոլոր եկեղեցիների՝ Հաբեշական, Ղպտական, Ասորական եկեղեցիների նկատմամբ և չի միջամտել նրանց ներքին գործերին։ Հայ եկեղեցին բավարարվել է միայն իր բարոյական գերադասության հանաչմամբ։ Նրա այս բարոյական գերադասությունը վառ կերպով երևան եկավ նաև այն միացյալ ժողովում, որին հայ կրոնավորները մասնակցեցին Ալեքսանդրիայից ուղարկված նորընտիր ղպտի աբունայի հետ։ Հիշյալ հանդիպումը և ժողովը տեղի ունեցավ նույն 1868 թվականին, Ահմարա քաղաքում։ Ահա թե ինչ է հաղորդում Տիմոթեոս ծայրագույն վարդապետ Սափրիչյանն այդ հանդիպման և ժողովի մասին.

«...Սիրով և ողջագուրմամբ ընդունեցինք զինքը (Նոր աբունային)..., մասնավոր խոսակցության մեջ պետք եղած տեղեկությունները հաղորդեցինք իրեն։ Գովությամբ պատմեցինք Տաճազմաչ-Քասսայի կրոնասիրությունը, քրիստոնեական բարի զգացմունքները, ընտիր եկեղեցականները պատվելը...»։

«Հետ այսօրին ժողովը կազմեցավ, ուր ներկա գտնվեցան աբունային հետ եղող հրավիրակ հոգևոր կարգավորները և ուրիշ կարգավորներ՝ քառասունի չափ անձինք։ Ժո-

22. Նույն տեղում, հատ. Ա, էջ 83։

23. Նույն տեղում, էջ 144—145։

ղովույն մեջ առարկություն եղավ մեր կողմեն քահանայից տգիտությունը. որոնք առանց օրինավոր ձեռնադրության հինգ հարյուրը մեկեն քահանա կկոչվին. առանց նայելու անոնց վարքն ու բարքը. գիտությունն ու արժանավորությունը։ Խոստովանեցավ սպունան ալ ասոր ապօրինավորությունը և հայտնեց. որ այսուհետև չպիտի ընդունի ինքը ձեռք դնել մեկուն վրա՝ առանց ընդունելու կանխավ ժողովրդյան հաճությունն ու վկայությունը։ Դարձյալ առարկեցինք Սուրբ Եկեղեցվո յոթը խորհրդոց խափանումն ու անոնց զեղծումները. պատմելով ժողովույն մեջ ինչ որ աչոք տեսեր և ականջոք լսեր էինք։ Զարմացավ սպունան և դժվարությամբ հավատաց մեր բառերուն, ու հարցուց ժողովականներուն, թե ստո՞ւյգ են այս զեղծումները՝ թե ոչ։ Չկրցին ուրանալ անոնք. բայց զիրենք ալ անմեղադիր ընելու համար. նախորդ առաջնորդներուն վրա դրին բոլոր հանցանքը. «Անոնք. ըսին, իրենց հոգևոր պաշտոնին մեջ թույլ գտնված են. ժողովուրդին չեն սորվեցուցած. մենք անոնց լեզուն չենք գիտեր. անոնք ալ մեր լեզվին ծանոթ չըլլալով՝ անմիջական խոսակցությունները դժվարացած են, և հետզհետե սկսած է զեղծումները եկեղեցվո մեջ, և անկե ժողովրդոց բարուց ու վարուց ալ անցած է։ Մանավանդ թե հավելցուցին, մեկ առաջնորդ մը Հաբեշստանի բոլոր երկրին ի՞նչ օգուտ կրնա ընել. և ի՞նչ կարգ կանոն կրնա մտցնել ու սորվեցնել։— Այս պատասխանները թերևս իրավացի ըլլալով՝ սպունան ձայն չհանեց. բայց երբ լսեց անիկա. որ եկեղեցյաց մեջ կանթեղ մը և լույս չի վառիր. ալ չկրնալով համբերել՝ դարձավ ըսավ. «Ասոր ի՞նչ ունիք ըսելիք. միթե ատոնց ալ պատճառ առաջնորդնե՞րն են»։ Հետո մեղմացնելով յուր ձայնը՝ դարձավ մեզի ու բոլոր ժողովականներուն ըսավ. «Աստուծով այս դայթակղելի կանոնազանցությունները և զեղծումները կշտկվին. երբ տեղերնիս հասնելու ըլլանք. ընդհանուր ժողով մը կկազմենք և հետզհետե բարեկարգություններ կհաստատենք»[24]։

24. Տիմոթեոս Ծ. վրդ. Սափրիչյան, «Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշիստան», հատ. Բ, էջ 148—149։

Անգլիացիների տված հրացանով և անգլիական զորքով Նեգուս-Նեգեշտի դարձած Կասսան (Հովհաննես Չորրորդը— 1865—1889 թ. թ.) անգլիացիների համար էլ զոհվեց Սուդանի մահմեդականների դեմ մղած պատերազմում։ Նրա մահից հետո Նեգուս-Նեգեշտի տիտղոսին տիրացավ Շոայի իշխան Մենելիքը՝ Մենելիք Երկրորդ անունով։ Մենելիքը Հաբեշստանի պատմության նշանավոր միապետներից մեկն է։ Նա իրեն շրջապատել էր նաև խորհրդական հայերով, որոնց նվիրվածությանը վստահ էր։ Մեծ բարեկամությամբ նա կապված էր սեբաստացի Գողոս Մարգարյանին, որը հավասարապես մասնակից էր եղել Մենելիքի թե՛ պատանեկան տարիների փորձություններին և թե՛ շահահասության շրջանի փառքին ու պատվին մասնակից եղավ։ Գողոս Մարգարյանը խրախուսեց Ադդիս-Աբեբա կառուցելու միտքը և մասնակցեց նոր մայրաքաղաքի վայրի ընտրմանն ու կառուցմանը։ Մենելիքի աջակիցը ռազմական գործում հանդիսացավ արաբկիրցի Սարգիս Թերզյանը, որն անձնուրացությամբ ծառայեց Մենելիքին բարձրացնելու գործին։ Ադուայի հայտնի ճակատամարտում (1896 թվականի փետրվարի 29) հաբեշների տարած փառավոր հաղթանակի մեջ իր մեծ բաժինն ունի Սարգիս Թերզյանը, որը կարողացել էր, օգտագործելով ֆրանս-իտալական հակամարտությունը, ֆրանսիական զենքով նախապես զինել հաբեշական բանակը։ Արտասահմանյան մամուլն անգամ իր ժամանակին նշել էր Սարգիս Թերզյանի ծառայությունները հաբեշական բանակը զինելու գործում, Թերզյանին անվանելով «հաբեշական Բիսմարկ»։

Մենելիք Երկրորդի օրով նորից հարուցվում է հայ-հաբեշական եկեղեցական հարաբերություններին կազմակերպական ուղղություն տալու հարցը։ Մենելիքի գահաժառանգ Ռաս Մաքոնենը, Ադուայի հերոսներից մեկը. Ֆրանսիա կատարած այցելության ժամանակ Մարսելում արևմտահայ հայտնի հասարակական գործիչ Մինաս Չերազին ասում է.

«Եթովպական Եկեղեցին և Հայ Եկեղեցին քույրեր են։ Հայերը մեր բարեկամներն են»[25]։

25. «Բազմավէպ», 1905 թ., էջ 182։

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ԳԼԱՁՈՐԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՎԱՐԴԱՆ ՄՈՄԻԿԸ*

«Այլակերպություն» (էջ 5բ, տե՛ս նկ. 4)։ Միակ տեսարանն է հրաշքի, որը դուրս է գալիս «Քրիստոսի չարչարանաց պատմության» սահմաններից։ Հրաշագործ Քրիստոսը ներկայացված է կենտրոնում, կողքերից Մովսես և Եղիա մարգարեներն են, նրանց տակ, ներքևից, գետնի վրա ընկած են երեք առաքյալները՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը։

Այստեղ հրաշալին է այն, որ Մոմիկը Քրիստոսին պատկերել է առանց մորուքի, չէ՞ որ Քրիստոսը այլակերպվելով պետք էր փոխվեր և դեմքով։ Հենց այդ էլ ընդգծված է նկարչի կողմից։ Մոմիկի մոտ Քրիստոսը ոչ միայն առանց մորուքի է, այլ նաև արձակված մազերով, և Նրա դեմքը ավելի շուտ կանացի է, քան թե առնական։ Քրիստոսի կերպարի այսպիսի մեկնաբանությունը մեզ առաջին անգամն է հանդիպում։ Այն հենվում է մասամբ Ղուկասի ավետարանի տվյալների վրա, որտեղ ասված է. «...**Եղև տեսիլ Երեսաց Նորա** (այսինքն Հիսուս-Քրիստոսի— **Ա. Ա.**) **այլակերպ** և փոխեցավ հանդերձ Նորա և եղև սպիտակ փայլուն» (Ղուկ., Թ 29։ Ընդգծումները մերն են— Ա. Ա.)[19]։

Այսպիսով, նկատելի է, որ նկարիչ Մոմիկը, ինչպես այս, նույնպես և մյուս տեսարանների վրա աշխատելիս, գերազանցապես հիմնվել է այն տեղեկությունների վրա, որոնք կենսական նշանակություն ունեն հիմնական հերոսների կերպարի առավել պատկերավոր արտահայտման համար, ըստ որում ձգտել է այդ բոլորը տալ կարճ լեզվով։ Մոմիկի մոտ դժվար է որևէ ավելորդ, երկրորդական բան գտնել. Նրա հորինվածքներում կառուցվածքները ամենուրեք պարզ են, չկա կերպարանքների բազմաքանակություն, ճարտարապետական կառուցվածքների ու այլ առարկաների որևէ ավելորդ ծանրաբեռնվածություն։ Նույնիսկ այն տեսարաններում, որտեղ մարդկանց թիվը գործողության ընթացքում հասցված է առավելագույնի (Մոմիկի մոտ Համբարձման տեսարանում մինչև 17 է), նկարիչը, մարդկային կերպարանքների հմուտ տեղադրման շնորհիվ, հասնում է մեծ միասնականության և համախմբվածության։ Օրինակի համար, վերցնենք մի բազմամարդ տեսարան՝ աշակերտների հետ Քրիստոսի հանդիսավոր «Մուտքը Երուսաղեմ» (էջ 6ա, տե՛ս նկ. 5), որին ողջունում են ողջ բնակիչները։ Այս տեսարանում հորինվածքի ամբողջ իմաստը կերպարանքների հանդարտ շարժումն արտահայտելու մեջ է։ Այդ շարժումն ավելի է ընդգծվում ընթացող ավանակի պատկերմամբ։ Ավանակի ոտքերի տակ իր շապիկը փռող պատանին և Քրիստոսին դիմավորելու դուրս

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի № VIII—IX-ից։

19. Մյուս երկու ավետարաններում (Մատթեոսի և Մարկոսի) նշված է միայն վերջին երևույթը՝ հագուստի փոփոխությունը։

նկած ծերունու կերպարանքը՝ մեկնած ձեռքով, որով կարծես թե դիտողների ուշադրությունը ուղղվում է դեպի բացված քաղաքային դարպասների կողմը, նույնպես ընդգծում են կերպարանքների շարժումը։ Արմավենին, Երուսաղեմի խորհրդանիշը, որը հանդես է գալիս ամենաառաջին եզրին, առջևի կերպարանքների լուսապսակները, որոնք ծածկում են հետևի կերպարանքների մի մասի գլուխները, ինչպես և ճարտարապետական կառուցվածքների երևացող գմբեթները խորացնում են ամբողջ հորինվածքի տարածականությունը։ Պետք է նկատել, որ տվյալ մանրանկարի մեջ, ինչպես և «Տյառնընդառաջ»-ի ու «Ավետման» տեսարաններում, մասամբ նաև «Ծննդյան»-ի տեսարանում, (էջ 7բ, տե՛ս նկ. 6), ճարտարապետական բնանկարը կարծես թե կրկնակի դեր է կատարում. այն ոչ միայն ծառայում է մագաղաթի գեղազարդման համար, այլ նաև համապատասխանում է բովանդակությանը։

Չի կարելի ասել, թե նկարիչ Մոմիկի աշխատանքներում բոլոր կերպարանքները կառուցված են անխախտելի համամասնություններով։ Նրա մոտ քիչ չեն մարդակազմական և այլ խեղաթյուրումները։ Այսպես, «Տյառնընդառաջ»-ի տեսարանում մենք տեսնում ենք մեծագլուխ ծերունի Սիմեոնին, «Մուտք



Նկար 4.— Այլակերպություն



Նկար 5.— Մուտք Երուսաղեմ

Երուսաղեմ» տեսարանում ավանակը ավելի շատ հիշեցնում է ձի, իսկ «Ծննդյան»-ի մեջ Քրիստոսը ներկայացված է մեծ մարմնով և շատ երկարացված ձեռքերով և այլն։ Կարելի է կարծել, որ վերջին տեսարանում նկարիչը թվում է, թե գիտակցաբար է նահանջել նկարի ճշգրտությունից, ավելի ուժեղ ընդգծելու համար Քրիստոսի կերպարի համոզականությունը։ Այլ կերպ ասած, իր մանրանկարներում նկարիչը աչքի առաջ է ունեցել գլխավորապես գեղանկարչական խնդիրներ. Ահա թե ինչու նրա մոտ հաջող է լուծված ռելիեֆային հորինվածքը, տարածականությունը, ծավալը, ինչպես և հարուստ երանգապնակի ներդաշնակությունը։

Առավել հասուն հորինվածքների լուծումների թվին են պատկանում նաև «Ողբը» և «Քրիստոսի Հարությունն ու Հայտնությունը» մանրանկարչական «որմանկարները» (էջ 9բ, 10ա, տե՛ս նկ. 7 և 8)։

Առաջին մանրանկարը ննջեցյալի վրա կատարվող ողբի տեսարանն է, որտեղ հուզված մարդկանց խումբը շրջապատել է Քրիստոսի հանգարտ ձգված մարմինը։ Հորինվածքի կենտրոնում գտնվում է որդուն հրաժեշտ տվող Տիրամայրը, նստած Նրա գլխավերևը։ Տիրամայրը խոնարհված է սիրելի Որ-



Սխեմա 4.— «Մուտք Երուսաղեմ» մանրանկարի շարժման սխեման (տե՛ս նկար 5)

դու մարմնի վրա. հանգստություն արտահայտող հայացքը զամված նրա դեմքին։ Մոր արտաքուստ հանգստությանը, նրա անմռունչ վշտին նկարիչը հակադրել է հուսահատ լացող աշակերտների և հենց նոր հայտնված կանանց կոծը։

Երկրորդ՝ «Քրիստոսի Հարությունն ու Հայտնությունը» մանրանկարում երկու տեսարաններն էլ մտահղացված են որպես մի միասնական ամբողջություն, որտեղ երևույթներից մեկը հանդիսանում է մյուսի անմիջական շարունակությունը։

Այդ մանրանկարի կառուցվածքը բխում է չորրորդ ավետարանի վկայությունից, որտեղ նկարագրվում է, թե ինչպես Մարիամ Մագթաղինացին մոտենում գերեզմանը. «տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս. զի նստէին մի ի սնարից՝ և մի յանոտից՝ ուր կայր մարմինն Յիսուսի»։ Այնուհետև ասվում է, թե ինչպես Մարիամը «դարձաւ ի թիկունս կոյս. և տեսանէ զՅիսուս զի կայր։ Եւ ո՛չ գիտէր թէ Յիսուս իցէ» (Յովհ., Ի 12 և 14)։ Նկարիչ Մոմիկը պատկերել է հենց այդ վերջին՝ վայրկենապես անցնող գործողությունը, երբ թվում է, թե որտեղից որ է ահա պետք է խախտվի. երբ Հիսուսը կոչի Մարիամին և վերջինս ճանաչի ուսուցչին[27]։ Եվ իրոք. այդ տեսարանում հարությունն առած Քրիստոսը կենդանի փոխհարաբերության մեջ է Մարիամի հետ։

Ինչպես «Ողբ»-ի, այնպես և «Հարություն»-ի հորինվածքները մասնատված են միանգամայն յուրօրինակ ձևով։ Այդ տեսարաններում, առավելապես առաջինում, կարծես հանրագումարի է բերվում Քրիստոսի երկրային կյանքի ամբողջ պատմությունը՝ նրա կյանքի ամենադրամատիկ միջադեպը։

Նկարիչը երկու տեսարաններն էլ կառուցել է յուրատեսակ ձևով։ «Հարություն» հորինվածքի մեջ առկա են երկու համաչափ հավասարակշռված խմբեր. դագաղի կափարիչի վրա նստած հրեշտակները կազմում են մի խումբը, իսկ կանայք ու Քրիստոսը՝ մյուս խումբը։ Սակայն չնայած այդ բաժանմանը, երկու խմբերն էլ միավորված են մի ամբողջության մեջ, որովհետև հրեշտակների և Մարիամի ամբողջ ուշադրությունը զամված է հայտնված Քրիստոսի վրա, որը դրված է մանրանկարի իմաստային, տրամաբանական կենտրոնում։

«Ողբ»-ը չի բաժանվում ինքնուրույն կերպարանքների. նրանք, ընդհակառակը, կապված են դրամատիկական մի միասնական հանգույցով, որտեղ բացակայում է հորինվածքի որևէ «հավասարակշռություն»։



Նկար 6.— Ոտնլվա

27. Տե՛ս Ավետարան Յովհաննու, Ի, 15—17։

Երկու մանրանկարներում էլ կերպարանքների տեղադրությունը՝ ստեղծված բազմահրադրայնության հիմունքով, տրված է կարծես գործողության ընթացքով և նրա մասնակիցների փոխհարաբերությամբ։ «Ողբ»-ի մեջ նյակենտր հանդիսանում է դագաղը Քրիստոսի մարմնի հետ՝ առաջին գծի վրա դրված հանգարտ հորիզոնականը, որը և ընդգծում է եղելության ամբողջ կարևորությունը և կենտրոնացնում է ուշադրությունը այդ տեսարանի հերոսի վրա։ Երկրորդ գծի վրա տեղադրված են Աստվածամայրը, Քրիստոսի աշակերտներից մեկը՝ Հովհաննեսը, Մարիամը, որոնց հետևից երևում է կանանցից մի ուրիշը. սգացողների խմբին եզրափակում են պատը և երկու թռչող հրեշտակները։ Գրեթե նույնը նկատվում է «Հարության» հորինվածքի մեջ, միայն այն փոփոխություններով, որոնք թելադրված են դեպքերի ընթացքով։ «Հարության» տեսարանում նյակենտր այս դեպքում հանդիսանում է ոչ թե դատարկ դագաղը, թեև այն նույնպես առաջին գծի վրա է ներկայացված, այլ ինքը՝ հարություն առած Քրիստոսը։

Եթե ներկայացվի մանրանկարի սխեմատիկ կառուցվածքը, այն դեպքում կարելի էր գծել կերպարանքների տեղադրության տարածության վրա՝ գրամատիկական



Նկար 8.— Քրիստոսի Հարությունն ու Հայտնությունը



Նկար 7.— Ողբ

գործողությամբ հաղեցված և թատերական ընմադրությունների նմանությամբ։ Այդ ընմադրությունը նկարիչը ստեղծել է նկատի ունենալով բեմահարթակը, որը կարծես թե փոխարինում է եկեղեցական բեմին[21]։

Շատ աղքատ են տեղեկությունները միջնադարյան հայկական ներկայացումների մասին, որպեսզի հնարավոր լիներ ուսումնասիրել թատրոնում և գեղանկարչության մեջ կրկնվող մոտիվները։ Հայտնի է միայն, որ թատրոնի և գեղանկարչության միջև անմիջական կապ է եղել, իսկ Կոգենի հետազոտության համաձայն, «Միջնադարյան թատրոնը իր գեղարվեստական զարգացման մեջ ընթացել է նույն ուղիով, ինչ որ գեղանկարչությունը»[22]։

Միջնադարյան Հայաստանի կիրառական և թատերական արվեստների համադրությունը պետք է հատուկ ուսումնասիրության առար-

21. Տե՛ս Георг Гоян, 2000-летие армянского театра, М. изд. «Искусство», 1952, том 2, էջ 136.

22. М. В. Алпатов, Итальянское искусство эпохи Данте и Джотто. Истоки реализма в искусстве Западной Европы, М.-Л., изд. «Искусство», 1939, էջ 150, 222.



Նկար 9.— Տիրոջ Համբարձումը

կա տաճար։ Այդ երկու ավետարանի մեջ նկատվում է սերտ կապ, որի մասին խոսվում է Գևորգ Գոյանի «Հայկական թատրոնի 2000-ամյակը» մենագրական աշխատանքի մեջ։

Մեր համոզմամբ նկարիչ Մոմիկը «Ամպ» և «Հարություն» մանրանկարներում երևում է, ունեցել պատարագի ձևի բեմադրության մտքերը։ Հնարավոր է, որ նկարիչը մյուս տեսարանների համար էլ օգտվել է նույն աղբյուրից։ Մատենադարանում՝ հիշենք «Ավետումը», «Ծննդյան», «Տյառնընդառաջը» և հնարավոր է նաև «Երուսաղեմ մուտքը»[25]. Ընտրված երկու մանրանկարները հիշեցնում են որպես թե բեմահարթակի վրա կատարվող գործողություն, ընդգծված խորությամբ, որտեղ կերպարանները տեղադրված են կարծես թե բեմադրողի կողմից։ Այդ մանրանկարների բեմադրությունը բացահայտ անցողիկ է, որտեղ նկատելի են բեմահարթակ մտնող կերպարանները. առաջին դեպքում, ձախից գանգուղ ներս են մտնում սուրբ կանայք, իսկ երկրորդ դեպքում, ավելի ընդ-

25. Այն մասին, որ առաջին երեք տեսարանները և... են բեմականացված ձևեր, տե՛ս պրոֆ. Գ. Գոյանի հիշված աշխատությունը, հատ. 2-րդ, էջ 142, 146 և 164։

գծված զարդմամբ, Քրիստոսը։ Հնարավոր է, որ այս պատկերները եղած լինեն թատերական ներկայացումների նկարներ[24]։

Մեզ թվում է, որ Մոմիկը կարող էր տեսած լինել նման բեմականացված ձևեր (Կիլիկիայում գտնված ժամանակ. այդպիսի ձևեր կատարվել են գուցե հենց Գլաձորում), որի արձագանքներն են այդ գեղարվեստական մանրանկարները՝ ասեղնագործական վերամշակմամբ ներկայացված։ Այդ պատճառով է, մենք առանձնահատուկ ուշադրություն ենք հրավիրում 1302 թվականի ավետարանի Մոմիկի գեղարվեստական ասեղնագործությունների վրա, հատկապես «Ամպ» և «Հարություն» տեսարանների վրա, որոնք շատ հետաքրքրական են միջնադարյան հայկական պատարագի մատուցման պատմության ուսումնասիրության համար։

Այդ տեսարանների («Ամպ» և «Հարություն») տարածական բնույթով հիմնավորված է հատկապես պատարագի մատուցման ձևերի



Նկար 10.— Հոգեգալուստ

24. Այդպիսի պատկերների մասին խոսում է պրոֆ. Գ. Գոյանը, նկատի ունենալով մի շարք այլ տեսարաններ ուրիշ նկարիչների մոտ։ Տե՛ս նրա հիշված աշխատությունը, հատ. 2-րդ, էջ 138։

պատկերմամբ. ճիշտ է, այդ աշխատանքների մեջ չի պահպանված հնանկարի սկզբունքը, բայց նկարիչ Մոմիկը, կարելի է ասել, արդեն մասամբ է տարածական չափերով կերպարանքների տեղադրությունը տարբեր մակարդակների վրա հատուկ աշխուժություն է ներմուծում հորինվածքի մեջ: Դրանք ունեն հորինվածքների իրենց առանցքը: Այսպես օրինակ, երկրորդ տեսարանում, որպեսզի լավ ցույց տրվի Քրիստոսի դատարկ գագաղը, հորիզոնական գիծը բարձրացված է վեր, պահպանված է ծրագրայնությունը: Նկարիչ Մոմիկի մոտ նկատվում է խորություն, որտեղ կարելի է հաշվել մինչև 5—6 պլաններ («Սգը», «Հարություն»), որը այդ տեսակետից բարձրագույն քանակն է ոչ միայն Գլաձորյան դպրոցի նկարիչների ստեղծագործության մեջ, այլ նաև այդ ժամանակաշրջանի ուրիշ վարպետների գործերի մեջ և դա պատահական չէ, քանի որ նա, որպես քանդակագործ, ուներ տարածական խորության լավ ընկալում:

Ի հակադրություն «Ավետում», «Տյառնընդառաջ», «Խաչելություն» և այլ տեսարանների ուղղահայաց կառուցվածքի սկզբունքի, ընդարձակ մանրանկարներում գերակշռող նշանակություն ունեն հորիզոնականները, որոնց շնորհիվ պատկերված կերպարանքները



Նկար 12.— Հակոբոս առաքյալ



Նկար 11.— Պրոխորոնին թելադրող Հովհաննես ավետարանիչը

ընկալվում են որպես գետնի վրա ամուր կանգնած, ոչ հարթ, այլ ծավալուն մարմիններ. դրանք ունեն համապատասխան լուսաստվերային հարդարում: Քրիստոսի սպիտակ մարմնի հորիզոնական գծին առաջին մանրանկարում և դատարկ դագաղին՝ երկրորդ մանրանկարում համապատասխանում է ընմահարթակի հորիզոնականը՝ բեմը և հետևի պատը, որն այստեղ հետնածածկի կամ նախաբեմի վարագույրի դեր է կատարում: Այս մանրանկարների հորինվածքներում, որտեղ չկա կերպարանքների կենտրոնական տեղադրություն, կարծես թե ակնարկվում է վերևի և ներքևի՝ «երկնքի» ու «երկրի» նյութական բաժանումը: Վերևում տեղավորված են թեթև կերպարանքները՝ թռչող հրեշտակները, և ապա ուղիղ հանդիսականների դիմաց՝ դագաղն է Քրիստոսի մարմնով, դրված ծանր քառանկյունի քարե սեղանի վրա[25]: Մանրանկարի վերին կեսի չեզոք ոսկե ֆոնը իր խտությամբ կարծես փոխարինում է տարածական միջավայրը, որի ընկալումն ուժեղացվում է հրեշտակների թռիչքով:

25. Տե՛ս Георг Гоян, 2000-летие армянского театра, том 2, էջ 150—152.



Նկար 13.— Պողոս առաքյալ

Խորության զգեստը «Այլ» և «Հարության» մանրանկարներում ընդգծված են նաև շրջանակաձև ձևավորմամբ, որը կարևոր է հակադրել բուն պատկերներին։

Հարության տված Քրիստոսի կերպարանը անզավարելով շրջանակի հինգ եզրին, բեմի աջ մասի ծայրին՝ նրա ամբողջ դիրքը, ոտքերի դրությունը, աջ ձեռքի շարժումը և գլխի փոքր ինչ թեքվածքը ուժեղացնում են այն տպավորությունը, թե շրջանակից այն կողմ գնա պահվում են զորեղ ամենքը։

Հատկապես Մոմիկի գրչագործից հանդիսացող այս մանրանկարները, բառացիորեն հիշեցնում օրնանկարները. Հրաշալի են նաև իրենց ընտրված ներդաշնակ գույներով։ Նկարչին հատուկ երանգավորման տիրապետող է մուգ-կանաչ թանկ գույնը։ Նման արտահայտություն ներկի թափված է այդ հրաշալի մանրանկարչին արմանկարների վրայից («Տիրոջ Համբարձումը» և «Հոգեգալուստը»—էջ 11բ, 12ա, տե՛ս նկ. 9 և 10)։ Մանրանկարների հորինվածները արված են կենտրոնաձիգ կառուցվածքով, ուժեղ արտահայտված աղդումնայնց դիրքով։

Առաջին պատկերի մեջ նկարիչը Քրիստոսին ներկայացրել է նստած՝ ձվաձև լուսապսակի մեջ, ձախ ձեռքում բռնած բացված փաթեթը, իսկ աջ ձեռքով օրհնում է մատներով. վերի մասում են թռչում երկու հրեշտակներ։ Ներքևում, գետնի վրա, տաճարների աշխատավորված խմբերի միջակը, նակառով։ Հանդիսավոր դիրքով պատկերված է կանգնած Տիրամայրը։ Երկու ձգված հրեշտակախմբերը դարձել են դեպի տաճարյաները, իրը թե բացատրում են նրանց երևույթը։ Ի հակադրություն հանդիսա կանգնած Մարիամի, նրանց դեմքերին կարդում ենք տարտափ և խուճապ՝ Քրիստոսի անսպասելի հայտնության առթիվ, արտաքուստ արտահայտված ուժեղ շարժումներով։

Երկրորդ մանրանկարի մեջ, ցանցաձև խորքի վրա, որը մենք տեսել ենք «Այլակերպության» տեսարանում, նույնպես տաճարների մեջ կանգնած է Մարիամը բարեպաշտ բարձրացված ձեռքերով, ծածկված քողով ինչպես «Տյառնընդառաջի» տեսարանում։ Նա իր կերպարանքով դարձել է ձախ կողմը, իսկ գլուխը ուղղված է Սուրբ Հոգու կողմը, որն աղավնու կերպարանքով երկնային ճառագայթներից իջնում է դեպի խումբը։ Առաքյալների ուշադրությունը նույնպես դարձված է դեպի վեր, իրենց նոր թագավորության խոստացողին տեսնելու հույսով։



Նկար 14.—Հովհաննես ավետարանի խորանը

Վերոհիշյալ երկու մանրանկարները բաղկացած են երկու կեսերից՝ վերևի և ներքևի, որոնք սակայն չեն մեկուսացված մեկը մյուսից, այլ կապված են իրար հետ։

Նկարիչ Մոմիկի մոտ շատ լավ են տրված Քրիստոսի և հատկապես Աստվածամոր կերպարները։ Առաջինը ներկայացնում է հանդարտ վեհություն, իսկ երկրորդը ներկայացնում է, Ն. Պ. Կոնդակովի խոսքերով ասած, «հարություն առած Փրկչի կողմից երկրի վրա թողնված եկեղեցու կերպարը»[26]։

Օրանտի սովորական տիպը, ինչպես «Ագոլթո»-ի կերպարը «Տիրոջ համբարձման» հորինվածքում, փոխարինված է այստեղ Աստվածամոր օրիգինալ տիպով, որը կանգնած է կրծքի առաջ տարածած ձեռքերով, ըստ Ն. Պ. Կոնդակովի, յուրահատուկ է միմիայն 11—12-րդ դարերին[27] և հանդիսանում է Հարության կամ Հարույցյալի կերպարը[28]։ Հայկական մանրանկարչության մեջ այս կերպարը հանդիպում ենք նաև ավելի ուշ, 13—14-րդ դարերում։

Նկարիչ Մոմիկի մոտ Տիրամայրը երիտասարդ կին է, դեմքի մտահոգ արտահայտությամբ։ Նրա մոտ, ինչպես և Քրիստոսի մոտ, ավելի քան արտահայտիչ են աչքերը, որոնց խորացված բիբերը հայացքին տալիս են զսպված մտահայեցողություն։ Եթե Քրիստոսը խոշոր կառուցվածքով տղամարդ է, ապա Մարիամը փոքր, միջին հասակի արևելյան ցայտուն գծերով կին է. Նա ունի մի փոքր երկարացված ձվաձև դեմք, ունքերը կանոնավոր գծված են, քիթը նուրբ է, փոքրիկ շրթունքներ ունի և մեծ, լայն, սև աչքեր։ Ինչպես Քրիստոսի, այնպես և Մարիամի կերպարները թույլ են տալիս դատել մանրանկարիչ Մոմիկի գեղարվեստական նուրբ վարպետության մասին։ Պետք է ասել, որ Մոմիկի մանրանկարները ընդհանրապես կոլորիտի տեսակետից այքի են ընկնում մեծ ներդաշնակությամբ։ Նկարչի մոտ առանձին հերոսները և ուրիշ գործող անձինք ունեն իրենց հատուկ գունային լուծումները, որոնց համաձայն, գրեթե առանց սխալվելու, կարելի է տարբերել առանձին անձնավորությունները. այսպես օրինակ, Մարիամն ունի շուշանագույն քող և կապույտ պատմուճան, Հովսեփը՝ կապույտ թիկնոց, Քրիստոսի զգեստը պայծառ կարմրա-շուշանագույն երանգ ունի, Պետրոսը կապույտ թիկնոցի և շուշանագույն պատմուճանի մեջ է և այլն։



Նկար 13.— Պետրոս առաքյալի առաջին թղթի խորանը

Ավետարանական տոների շարքի սյուժետավոր մանրանկարներից բացի «Ստեփանոս Օրբելյանի ավետարանը» պարունակում է իր մեջ Հովհաննես ավետարանչի և Պրոխորիոսի պատկերները տիտղոսաթերթով, ինչպես նաև Հակոբոս և Պետրոս առաքյալներին, վերջինս նույնպես իր տիտղոսաթերթով, ինչպես ֆիգուրային պատկերումների մեջ գլխավորապես ուշադրությունը բևեռված է կերպարանքների վրա իրենց շարժումներով և դիմագծերի արտահայտչականությամբ։

«Պրոխորիոսին թելադրող Հովհաննես Ավետարանիչը» պատկերի մեջ (տե՛ս էջ 14ր, նկ. 11), Հովհաննեսի դրությունը արտահայտիչ է, իսկ Պրոխորիոս գրիչը համեստ և պարտաճանաչ մարդու տեսք ունի։

Մոմիկն այդ հորինվածքի մեջ ներմուծել է նման մանրանկարներում քիչ հանդիպող ճարտարապետական խորք, որի շնորհիվ հավասարակշռություն է ձեռք բերված «երկրային» և «երկնային» մասերի միջև. այսինքն՝ Հովհաննեսի և Պրոխորիոսի մի կողմից, Աստվածային Աջի մյուս կողմից։

Առաքյալ-գրիչների ներկայացնելու համար նկարիչ Մոմիկը տվել է բոլորովին այլ լու-

26. Н. П. Кондаков, Иконография Богоматери, СПБ, 1914. т. I. էջ 206.
27. Н. П. Кондаков, Иконография Богоматери, Петроград, 1915. т. II. էջ 357.
28. Տե՛ս նույն տեղում, էջ 358։

ծում։ Հակոբոսը, դիմանկարային գծերով արտահայտված, ունի ամբողջովին մտահոգված, ինքնախորասուզված տեսք (էջ 254բ, տե՛ս նկ. 12)։ Թույլ է ներկայացված Պետրոսը, որի դեմքը, ծալված ներքին ձևերի հետ, հիշեցնում է թատերական դիմակ (էջ 264բ, տե՛ս նկ. 13)։

Ի միջի այլոց, այդ մանրանկարներում նկատվում է նույն երևույթը, ինչ որ շատ ուրիշ մանրանկարներում. ճարտարապետությունը պայմանավորված է մարդկային կերպարանքով։ Այսպես, «Ավետման» մեջ Հակոբոս տաճարային սրահներով մանրանկարի ճարտարապետական խորքը ընդգծում է տվյալ կերպարանքի արտահայտությունը։ Եթե «Ավետման» մեջ ճարտարապետական կառուցվածքը իր երկարացված համամասնություններով համապատասխանում է Մարիամի սլացիկ կերպարանքին, ապա այստեղ, Հակոբոս առաքյալի մանրանկարում համապատասխանում է լայնատարած նստած գրիչի կերպարանքին։ Այդ ճարտարապետական բնանկարը՝ երկու սյուներով և կամարաձև ծածկոցով, սրանկյուն [illegible] մաներով և սոխաձև գմբեթներ վերևից, նկարչի սիրած ձևերն են, որոնք նա օգտագործել է դեռևս Կեռան թագուհու 1283 թվականի ավետարանի մանրանկարներում։ Ընդհանրապես ճարտարապետության փոխադարձ կապը մարդկային կերպարանքների հետ նկարիչ Մոմիկի մոտ նկատվում է նրա այլ մանրանկարներում, օրինակ «Տյառնընդառաջ», «Մուտք Երուսաղեմ», «Ոտնլվա», այսինքն այն մանրանկարներում, որոնք ճարտարապետական խորք ունեն։ Ամբողջ էջ գրավեցնող խորաններ ունեցողները բացահայտորեն զանազանվում են իրարից։ Հովհաննեսի ավետարանի Ո ձևի խորանի վրա (էջ 15ա, տե՛ս նկ. 14), որտեղ հրաշալիորեն դրոշմված են արծիվը կիսանդրու տարածված թևերը, համաչափ են խորանի վերին հրապարակին, օրիգինալ է մի գլխագիր տառը, բաղկացած ավետարանիչների խորհրդանիշներից, որտեղ աչքի են զարնում արծիվը իր հպարտ տեսքով և հավանաբար դիմակ հանդիսացող մարդկային դեմքը։ Ինքնատիպ են և ոսկով [illegible] գծված դրամական նշանները։ Դրամներից մնացած նման «հետքերը», որոնք անկասկած կիլիկյան են, գոյություն ունեն 1265 թվականի կիլիկյան ձեռագրերում (Երուսաղեմ, № 1956, էջ 12ա)[20] և նկարիչ Թորոս վարդապետի մոտ (1314 թվականի ավետարանի պատառիկ, Երևանի Պետական մատենադարան, № 0150)։

«Պետրոս առաքյալի առաջին թուղթ»-ի մանրանկարի խորանի վրա (էջ 205ա, տե՛ս նկ. 15) արված է զարդաքանդակված խորան, որի վրա տեղավորված են երկու սիրամարգեր, բարդ հանգուցված վզերով, կիսալուսնաձև պոչի փետուրներով։ Նման սիրամարգեր հայտնի չեն 13-րդ դարի կիլիկյան ձեռագրերում։ Լուսանցքի գեղազարդման մեջ աչքի ընկնող շատ գեղեցիկ մեծ սկահակը, որը հիշեցնում է հին սկահակները, նույնպես հանդիպում է կիլիկյան ձեռագրերում։ Ինչպես տեսնում ենք, այս զարդարանները, ինչպես և ուրիշները, առանձնապես Կեռան թագուհու 1283 թվականի ավետարանի մանրանկարները խոսում են այն մասին, որ կիլիկյան գեղարվեստական ձեռագրերը արտացոլվել են Մոմիկի ստեղծագործության մեջ (ինչպես և Գլաձորի դպրոցի մյուս նկարիչների) գլխավորապես զարդանկարային մոտիվների մեջ։ Մոմիկի վրձինի վարպետության և հասունության համար ոչ պակաս նշանակություն է ունեցել կիլիկյան մանրանկարների տեխնիկական կատարելագործությունը՝ նրանց հարուստ և որակավոր ներկերով ու ոսկով, բայց հիմնականում նկարիչ Մոմիկի մանրանկարչությունը ձգտում է դեպի Մեծ Հայքի գեղանկարչության ակունքները, ինչպես և դեպի մերձավոր Արևելքի, առաջին հերթին Սիրիայի հին արվեստը։

Այսպիսով Ստեփանոս Օրբելյանի ավետարանում մենք տեսանք Քրիստոսի կյանքը շարքից ավետարանական դեպքերի հետևողական շարադրանքը, և այդ բոլորը կտրուկ լեզվով, որտեղ մեծ ուշադրություն է դարձված մանրանկարներին, քան թե զարդանկարներին, գլխազարդերին, գլխագրերին և այլն։ Այդ երևում է և նրանից, որ նկարիչ Մոմիկի մոտ գրեթե բացակայում են տիտղոսաթերթերը սովորական խորաններով, որոնք նրա մոտ փոխարինված են ամեն մի ավետարանի սկզբում փոքրիկ քառանկյունիներով 1×2 սմ. չափով, օրինակ՝ Մարկոսի ավետարանի սկզբում, կամ Ղուկասի և մյուսների (էջ 141ա, 152ա)։ Ճիշտ է, Մոմիկի մոտ գլխագրերը քիչ են, բայց եղածները կատարված են վարպետությամբ։ Վերցնենք, օրինակ, «Պ» տառը 205ա էջի վրա, որը կառուցված է ձկան և արագիլի պատկերներով։ Համեմատաբար շատ ուշադրություն է դարձված լուսանցքների գեղազարդմանը, որոնք մեծ մասամբ ունեն բուսական մոտիվներ, երբեմն թռչուններով (էջ 134ա, 280ա և ուրիշները), կամ պատահում են

20. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ Հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Բ, Նյու-Յորք, 1943, էջ 21։

սկահակ-կժեր ծաղիկներով (էջ 66ա), արմավենիներ՝ մասամբ ոճավորված (էջ 49բ), խաղողի որթ ողկույզներով (էջ 59ա), սկահակ երկու ձկներով և երեք հացով (էջ 63ա), զանգակատուն՝ տրված նկարչի սիրված մոտիվներով (էջ 43բ, 75ա, 81բ) և այլն և այլն, այսինքն այնպիսի նկարազարդումներ, որոնք հաճախ խորհրդանշանի նշանակություն ունեն։ Նկարիչը մանրամասներով բացահայտում է բնագրում նկարագրվող ամբողջ տեսարանի իմաստը։ Այս եղանակը, ինչպես հայտնի է, լայն տարածում էր գտել Կիլիկիայի հանրահայտ վարպետ Սարգիս Պիծակի աշխատանքներում[31]։

Մոմիկի նկարչության պատկերագրության եղանակը, որը կազմում է հիմնականում իր արևելյան ոճի բնութագրող գիծը, իր առանձին թելերով ձգվում է դեպի 989 թվականի Էջմիածնի նշանավոր ավետարանը, այսինքն կարելի է ասել, որ այդ աշխատությունում առկա է Սյունիքի գեղարվեստական ավանդությունների շարունակությունն ու հետագա զարգացումը։

***

Ամփոփելով մեր ասածը, պետք է նշել, որ նկարիչ Մոմիկի ուժը գլխավորապես դրսևորվել է մարդկային կերպարանքների վերարտադրության ասպարեզում։ Նա մեծ ուշադրություն է դարձրել մանրանկարներին և, ընդհակառակն, ավելի քիչ՝ գեղազարդման մյուս տեսակներին։ Այդ առավելապես նկատելի է «Ստեփանոս Օրբելյանի ավետարանում»։ Այդ նշանավոր ձեռագիրը վկայում է, որ նկարչի ուշադրությունը կենտրոնացված է եղել սյուժետային մանրանկարների վրա, որոնց ոճական կառուցվածքը ընթացել է գեղանկարչական ճանապարհով։ Մոմիկի վարպետությունը արտահայտվում է գեղանկարչական կերպարի կառուցվածքի մեջ, նոր հորինվածքների և տարածական լուծումների մեջ։ Դա անկասկած վկայում է մանրանկարչության հետագա զարգացման մասին։ Ճիշտ է, նրա աշխատանքներում կարելի է նկատել նոր, ռեալիստական տարրերի հետ միասին նաև հին գծեր, բայց դրանք ավելի շատ հաղթահարվում են առողջ մտահղացումներով։ Մոմիկի արվեստը աչքի է ընկնում կատարելությամբ և արտահայտչականությամբ։ Նրա մանրանկարները տարբերվում են ինչպես ձևի, ծավալի, այնպես և գունային գամմայի հաջողակ հաղորդմամբ։ Նրա մարդկային կերպարները հագեցված են դրամատիզմով և հոգեկան խորությամբ («Ողբը», «Ոտնալվան», «Հարությունը», «Համբարձումը»)։

Ճարտարապետական կառուցվածքները վերարտադրված են ո՛չ թե որպես մտացածին կուտակումներ, այլ բնական շենքերի տեսքով, ըստ որում հաշվի է առնված նրանց համաչափությունը մարդկային կերպարանքներին համեմատ։ Դրա հետ միասին ճարտարապետական խորքը ընդգծում է կերպարանքների դիրքը։

Նկարիչ Մոմիկը յուրացրել է «հեռանկարային մտածողության» հասարակ, տարրական հիմքերը, որը սկզբում հանդես է եկել զուտ ինքնաբերաբար։ Նրա մոտ տարածությունը, ոչ միշտ լցված մարդկանցով և առարկաներով, ունի հորինվածքային նշանակություն։ Նա չի վախենում, իր ժամանակակից մի շարք նկարիչների նման, թողնել բաց տարածություն։ Այնպիսի տեսարաններ, որպիսին «Ողբն» է կամ «Հարությունը», կկորցնեին ներգործության ուժը, եթե նրանց վերին մասը լրացված լիներ։

Նկարիչ Մոմիկի համար հիմնական սկզբնաղբյուր է ծառայել ավանդական պատկերագրությունը։ Բայց Մոմիկը այն մեկնաբանել է իր ձևով. նա երբեմն պատկերագրությանը, շարականների հիման վրա, տվել է բոլորովին նոր բովանդակություն, որտեղ տեղ են գտել ռեալիստական գծեր, նույնիսկ ամբողջ մոտիվներ՝ վերցված շրջապատող իրականությունից։

Նկարիչ Մոմիկի մանրանկարները, հատկապես «Ստեփանոս Օրբելյանի ավետարան»-ինը, չնայած նրանց չափերի շատ փոքր լինելուն, գեղանկարչության, ծավալային հորինվածքի և հարուստ ներկապնակի շնորհիվ, հիշեցնում են որմնանկարչությունը։

Գլաձորյան դպրոցի մանրանկարչության հիմնադիր Մոմիկի ստեղծագործությունը ցույց է տալիս այն ուղին, որ անցել է հանձին այդ վարպետի Գլաձորի ամբողջ գեղարվեստական մշակույթը, իր գոյության ավելի քան երկու տասնամյակների ընթացքում։

---

31. Sirarpi Der Nersessian. Armenia and Byzantine empire. A brief study of armenian art and civilization", Cambridge, Massachussetts. Harvard university press, 1947, p. 130.

32. Տե՛ս „Manuscrits arméniens illustrés des XII-e, XIII-e et XIV-e siècles de la Bibliothèque des pères Mekhitharistes de Venise" աշխատությունը, Paris. 1936.

# ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

## ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

### (Մահվան 100-ամյակի առթիվ)

*Հոկտեմբերի 1-ին, Վրաստանի Ախալցխա քաղաքի հայ հավատացյալների գլխավորությամբ, խանդավառ մթնոլորտում, մեծաշուք հանդիսավորությամբ նշվեց Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու մահվան 100-ամյակը։*

*Այդ հանդիսություններին նախագահելու համար, Վրաստանի հայոց թեմական խորհուրդը սեպտեմբերի 28-ին Ախալցխա ուղարկեց հատուկ պատգամավորություն, թեմակալ առաջնորդ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանի գլխավորությամբ։ Սրբազանին ուղեկցում էին առաջնորդի օգնական հոգեշնորհ Տ. Վահան աբեղա Գալամդարյանը, թեմական խորհրդի ծերունազարդ անդամ Շահեն-Սիմոնը և Թբիլիսիի եկեղեցական երգչախումբը։*

*Ախալցխայի կայարանում պատգամավորությանը դիմավորեցին եկեղեցական խորհուրդը, քահանայական դասը և ժողովրդի հոծ բազմությունը։ Առաջնորդ սրբազանը «Հրաշափառ»-ով մուտք գործեց քաղաքի Ս. Լուսավորիչ եկեղեցին և նախագահեց կիրակամտի ժամերգությանը։*

*Սեպտեմբերի 30-ին, կիրակի, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Տ. Վահան աբեղա Գալամդարյանը և քարոզեց օրվա տոնի և նրա խորհրդի մասին։ Տաճարը լիքն էր հավատացյալներով։*

*Հոկտեմբերի 1-ին, երկուշաբթի առավոտյան, պատվիրակությունն այցելեց Ծուղրութ գյուղը։ Ծուղրութի Ս. Սիոն մեծ եկեղեցում, կառուցված 1852 թվականին, հավաքված հավատացյալներին ողջունեց գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը և հաղորդեց Վեհափառ Հայրապետի ջերմ ողջույնները։*

*Պատգամավորության ճանապարհի ամբողջ երկայնքով, Ծուղրութցիները ծառերի թարմ ճյուղեր և ծաղիկներ էին փռել, որպես սիրո արտահայտություն հավատացյալ ժողովրդի կողմից դեպի Հայ Եկեղեցին, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու նրա ազգընտիր Վեհափառ Գահակալը։ Վարդան սրբազանը, խորապես հուզված, խոստացավ Ծուղրութի հայ հավատացյալների որդիական զգացմունքների թարգմանը հանդիսանալ Վեհափառ Հայրապետի մոտ։ Սրբազանը օրհնեց ժողովրդին և հրաժեշտ առավ լավագույն տպավորություններով։*

*Նույն օրը պատվիրակությունը վերադարձավ Ախալցխա և գնաց գերեզմանատուն. ուր գերաշնորհ Տ. Վարդան սրբազանի հանդիսապետությամբ, մեծ հայրենասեր և իր ժողովրդի բարօրության համար այնքան շատ բարիքներով իր հիշատակը զարդարած Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գերեզմանի վրա կատարվեց հոգեհանգիստ։*

*Հանգուցյալ արքազանի գերեզմանի վրա խոսեցին գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս և պ. Ճաղան-Սիմոնը, ոգեկոչելով հիշատակը մեծ հայրենասեր եկեղեցականի։ Ապա խոսք առնելով, Հոգեշնորհ Տ. Վահան աբեղան՝ առավելապես ծանրանալով Կարապետ արքեպիսկոպոսի կյանքի և գործունեության հիմնական և կարևոր շրջանների վրա, ներկայացնելով նրան իբրև իր հոտի հավատար, անձնդիր հովիվ, իբրև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մարտիկ և Հայրենյաց պաշտպան, մեր օրերի նոր Մովսես, որ ազատեց իր ժողովրդին։*

*Հոգեշնորհ Տ. Վահան աբեղան եզրափակեց. «Այս սուրբ գերեզմանի տակ հանգչում են ձեր պապերի ազատարարի՝ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու նշխարները, ձեր արտահայտությամբ՝ ձեր պապերին ազատողի, փրկչի, մեծ սրբի աճյունը։ Նրա 76-ամյա կյանքի շրջանի եռանդուն գործունեությունը, անձնվեր ժողովրդասիրությունը և հայրենասիրությունը թող միշտ ներշնչեն ձեզ եկեղեցասիրության, հայրենասիրության նույն զգացմունքներն ու գաղափարները։ Կարապետ արքեպիսկոպոսի հիշատակը լավագույնս պահելու ձևը այն է, որ դուք էլ սիրեք ձեր եկեղեցին, ձեր ժողովուրդը այնպես, ինչպես նա էր սիրում»։*



Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու գերեզմանը Ախալցխայի հայկական գերեզմանոցում

°°°

*Հանգուցյալ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին, ավազանի անունով Հովհաննես, ծնվել է 1779 թվականի մայիսի 18-ին և մահացել 1856 թվականին։ Նա դեռևս 10 տարեկան էր, երբ ժանտախտից մահանում են նրա հայրը՝ Գրիգորը և փոքր եղբայրը՝ Մկրտիչը, իսկ մայրը՝ Արեգնազը գնում է ուրիշ մարդու։ Հովհաննեսը մատնվում է թշվառ վիճակի։ Նրա խորթ հայրը, խեղճ որբից խլած ժառանգության դիմաց, իբրև փոխհատուցում, նրան տալիս է մետաքսագործ վարպետ Մահտեսի Հակոբի մոտ աշակերտության, որպեսզի նա արհեստ սովորի, իր համար մի կտոր հաց ճարի։ Սակայն փոքրիկ Հովհաննեսին խորթ էր այդ միջավայրը։ Արդեն 12 տարեկան հասակում նա թողնում է արհեստանոցն ու իր վարպետի տունը և գնում քաղաք. հայոց*

առաջնորդ Տ. Միքայել արքեպիսկոպոսի մոտ իբրև փոքրավոր ծառայելու։ Արքեպիսկոպոսի մոտ Հովհաննեսը սովորում է մայրենի լեզվով կարդալ ու գրել, և պարապելով իր մեծավորի գրքերից, իր բնական աշխատությամբ [illegible] է [illegible]։ Մի քանի տարի ծառայելով Միքայել արքեպիսկոպոսի մոտ, Հովհաննեսն իր [illegible] և [illegible] դառնում է առաջնորդի սիրելին։ Արքեպիսկոպոսը Հովհաննեսի մոտ տեսնելով սեր և ընդունա-կություն դեպի ուսումը, 1788 թվականին նրան իր ծախսով ուղարկում է Կոստանդնուպոլիս, որտեղ նա սովորում է բժշկություն, ճարտասանություն, աստվածաբանություն և թյուրքերեն լեզու։

1795 թվականին, [illegible], Հովհաննեսը վերադարձավ իր բարերարի մոտ։ Առաջնորդը 1801 թվականին Անին քաղաքի Ս. Գևորգ եկեղեցում ձեռնադրում է նրան վարդապետ, վերանվանելով նրան Տ. Կարապետ։ Արքեպիսկոպոսը և [illegible]-

դուն վարդապետ նշանակված է «ընդհանուր կառավարիչ» Անիի և Էջմիածնի վիճակների եկեղեցիների բոլոր կալվածների վրա։ Կարապետ վարդապետը իր [illegible] և [illegible] կառավարությամբ գրավում է ժողովրդի սերն ու համակրանքը։ 1808 թվականի օգոստոսի 21-ին նա նշանակված է առաջնորդ, և իր առաջին գործն է լինում [illegible] վանքերի [illegible] վիճակը, [illegible] կարգ ու կանոն, կազմակերպել իր [illegible]։



Հայկական եկեղեցու [illegible] գերեզմանի վրա

1811 թվականի նոյեմբերի 2-ին, Կարապետ վարդապետը Եփրեմ կաթողիկոսից ձեռնադրվում է եպիսկոպոս [illegible] արքության պատվով։

Ս. Էջմիածնից վերադառնալուց հետո Կարապետ արքեպիսկոպոսը [illegible] ժամանակ կազմակերպում է կարոտյալներին [illegible] գործը և արժանանում է ժողովրդի բարձր [illegible] ու [illegible]։ [illegible] ժողովրդի ու մարդկանց մեջ ծագած [illegible]

վեճ կամ տարաձայնություն իր խաղաղ լուծումն էր ստանում Կարապետ արքեպիսկոպոսի կողմից։

Իր նեղությունների և վշտի մասին Կարապետ արքեպիսկոպոսը նշել է Ախալցխայի հավատացյալ հայ հասարակության հղած թղթերի մեջ։

Վախճանվելուց մի քանի օր առաջ, մայիսի 23-ին, նա գրում է. «Նախնիք ձեր և հարք գիտէին քաջ և բազումք ի ձէնջ, որք գիտեն և ականատես եղեալ են ինքեանք, խոստովանեցին, զի ես որքանեաց վշտաց և տառապանաց տարի յերկրէն Սամանեան յերեւոյ յայնժամեան խառնակարոյ ժամանակաց, թշնամեաց քրիստոնեական արեան գնեալ մերս Ս. Եկեղեցւոյ։ Քանի՞ քանիցս յառնեան անողորմ ասպարապետաց նոցին և վեզիրաց մահու չափ կրեցի դառնութիւնս ըստ պարտաւորութեան իմում ի սէր սիրելեաց իմոց և որդւոցդ հարազատից»[1]։

Միքայել արքեպիսկոպոսի օրոք Էջմիածնի և Ակնա վանքերից ու եկեղեցիներից շատերը անցել էին թյուրքերի ձեռքը, պետական կամ մասնավոր պարտքերի դիմաց։ Կարապետ արքեպիսկոպոսն անում էր ամեն հնարավորը, այդ վանքերն ու եկեղեցիները ետ վերցնելու համար։ Նա կարողանում է պարտքից ազատել Էջմիածնի Ս. Առաքածին (Կարմիր) վանքը և մի քանի այլ նշանավոր ուխտատեղիներ, վերանորոգում և պարսպապատում է Ս. Լուսավորիչ և Ս. Խաչ վանքերը, որոնք վնասված և խիստ քայքայված էին։

Լինելով ուսյալ հոգևորական, Կարապետ արքեպիսկոպոսը լավ էր հասկանում կրթության հարկն ու կարիքը ժողովրդի համար։ Նա գիտեր նաև, որ հոգևորականների բարեկրթությամբ պետք կազմել ու կոփել դպրոցում, ուստի Էջմիածնում հիմնում է Կարապետյան անունով դպրոցը։ Այդ այն ժամանակ էր, երբ Թյուրքիայում դպրոցները խիստ սակավ էին, իսկ Էջմիածնում չկար և ոչ մի թյուրքական դպրոց։

Կարապետ արքեպիսկոպոսի հիմնած դպրոցը շատ մեծ դեր է խաղացել Էջմիածնի հայ ժողովրդի լուսավորական, քաղաքական կյանքում։ Այդ դպրոցը պահվում էր եկեղեցիների հասույթներից գոյացած գումարներով, իսկ ուսմանը ղեկավարում էին այն ժամանակվա երևելի հայկաբանները, որոնց Կարապետ արքեպիսկոպոսը հրավիրել էր Կոստանդնուպոլսից։ Դրանք էին Հովհաննես (Արդար) վարժապետը, Շերիմյան Գրիգոր պատվելին, Կարապետ վարժապետ Վանեցին, Տեր-Հովհաննիսյան Գրիգոր պատվելին և Կարապետ Չմշկյանը։

[1] «Փորձ», 1878 թ., էջ 173։

Կարապետ արքեպիսկոպոսը դպրոցասեր էր և անում էր ամեն հնարավոր բան ազգի բոլոր մանուկներին և պատանիներին ընդգրկելու համար ուսման մեջ։ Այդ նպատակի համար նա հարուստներին հորդոր էր կարդում, իսկ չքավորների զավակներին դպրոց էր գրավում նվերներով և դրամական օգնությամբ։

Հատկանշական է, որ նա իր տանը պահում, կերակրում և ուսման էր տալիս տարեկան 40 աշակերտ, որոնց ծնողները չքավոր էին։ Այս ուղղությամբ Կարապետ արքեպիսկոպոսը հետագայում աշխատել նաև Ախալցխայում։

Երբ սկսվում է 1828 թվականի ռուս-թյուրքական պատերազմը, թյուրքերը միտք են հղանում սրի քաշել հայերին, որպեսզի նրանք չանցնեն ռուսների կողմը։

Կարապետ արքեպիսկոպոսին հայտնի էր, որ թյուրքերը որոշել են իրեն և հայերին սպանել։ Նա մի օր կանչվում է փաշայի պալատ։ Մտնելով պալատ և սովորական ողջույնը տալուց հետո, Կարապետ արքեպիսկոպոսը մնում է ոտքի վրա և սպասում լսել իր հանցանքը և փաշաների վճիռը։ Կարապետ սրբազանը և հայերը մեղադրվում էին պետության դեմ դավադրություն կազմակերպելու մեջ։ Այդ իսկ պատճառով էլ զինվորական խորհուրդը որոշել է հայերի համատարած կոտորած կազմակերպել, նախապես սպանելով Կարապետ արքեպիսկոպոսին, որն իր ժողովրդին այնպես է կրթել։

Բայց զինվորական խորհուրդը ժամանակավորապես փոխում է իր որոշումը և բոլոր հայերին ուղարկում պետական տարապարհակ աշխատանքի, խրամներ փորելու։ Ուստի հրամայում են, որ Կարապետ արքեպիսկոպոսը հավաքի իր ժողովրդին և քաղաքի ու Ս. Նշան լեռան շուրջը խրամ փորեն։

Կարապետ արքեպիսկոպոսը հեռանում է փաշայի պալատից և երկու ժամից հետո Էջմիածնի ամբողջ աշխարհականությունը, բացի կանանցից, ծերերից, երեխաներից ու տկարներից, բահ, բրի, փետատ ձեռներն առած, նշանակված տեղերում խրամ էին փորում, պատնեշներ կառուցում։ Իսկ Կարապետ սրբազանը, ժամկոչի շորեր հագած, աշխատում էր իր ժողովրդի հետ։ Խեղճ հայ ժողովուրդը, թողած իր առևտուրը, տունն ու տեղը, ամեն առավոտ գնում էր ծանր աշխատանքի ու յարագին երգում իր վիշտը.

Բահ, բրի, փետատներ գիզվեցան,
Մեծ ու փոքր հիվանդացան.
Թե չլինեի սուրբ օրհնություն,
Ամենքի հայն էր գոռում.
Արի՛, եղբայր, փորենք խրամ...։

Երամները վերցնելուց մի քանի օր հետո, ռուսները առնելով Ախալցխայն, Կարսը, Բայազետը և նրա շրջանները, գրավելով Կարինը, մոտենում են Էրզրումին։ Կարապետ արքեպիսկոպոսը Էջմիածնից ստանում է Եփրեմ կաթողիկոսի գրությունը, որով պատվիրում էր կազմակերպել ժողովուրդը և օգնել ռուսներին, երբ նրանք կմտնեն Էրզրումին։

Ռուսաց զորքերը 1829 թվականին գրավում են Կարսը և մտնում Էրզրումին։ Թուրք փաշաները ու մոլլաները հրահրում են մահմեդականների կրոնական մոլեռանդությունը Հայերի դեմ։

Այդ օրերին Կարապետ արքեպիսկոպոսը մի գրություն է կազմում՝ ուղղված Պասկևիչին, որի մեջ նկարագրելով քրիստոնյաների վիճակը, [illegible] Այդ գրությունը շատ է օգնում ռուսներին։ Ս. նույն քնան(?) փոքրով ռուսները գրավում են Էրզրումը։ Հայերը զերծ են մնում թուրքերի կոտորածներից։ Կարապետ սրբազանը, վերցրած և մի թիկնած, խաչը ձեռքին, դիմավորում է Պասկևիչին, օրհնում հաղթողներին և գրկախառնվում նրանց հետ։

Ազատվելու համար թուրքերի հալածանքներից, Պասկևիչի հետ խորհրդակցելով և նրա միջոցով ստանալով ռուսական կառավարության համաձայնությունը, Կարապետ արքեպիսկոպոսը հրավեր կարդաց իր ժողովրդին գաղթել Ռուսաստան։ Հրավերն ընդունվեց խանդավառությամբ։

1830 թվականի մայիսի 10-ին, իրենց սիրելի առաջնորդի չորրորդ համարված 90.000 հայեր, այր և կին, երիտասարդ, ծեր ու մանուկ (որոնց հետ միանում է դարսեցիների 3.000-անոց խումբը), Էրզրումից մեկնում են դեպի Հողն ռուսաց, իրենց ետևում թողնելով դարերի այն անլուր չարչարանքներն ու հալածանքները, որ նրանք կրել էին օսմանյան տիրապետության ներքո։

Ութսուն հազարից ավելի էրզրումցիներ կրելով հանդերձանք և ապրուստի միջոցներ, այդ ընթացքին բազմությունը յաթ ամառվա հասավ ռուսական հողը, Կարապագցիների խումբը մնաց Ալեքսանդրապոլում (Լենինականում) և նրա շրջանում, իսկ մի մասը՝ Ախալքալաքում և նրա շրջանում (Ջավախք), իսկ շուրջ 2.800 ընտանիք կամ 6—7.000 հոգի իրենց բնակավայր ընտրեցին Ախալցխան։

Կարապետ արքեպիսկոպոսը, իբրև մի նոր Մովսես, առաջնորդում է իր ժողովրդին դեպի Ավետյաց Երկիրը։ Ու՛ հանապարհին և թե՛ իրենց նոր բնակավայրում գաղթողները ստացան ռուսաց կառավարության նյութական օգնությունը։ Ախալցխայում հաստատված հայերը 1831 թվականին ստացան 380.000 ռուբլի դրամ իբրև նվեր և 150.000 ռուբլի էլ փոխարինաբար։ Գաղթողներին բաժանվեց հաց, ցորեն և այլ կենսամթերք, իսկ արհեստավորներին՝ մետաքս, բամբակ, երկաթ և այլ նյութեր ու գործիքներ, փայտեղեն՝ բնակարաններ շինելու համար, սերմացու՝ ցանքի համար։

Ռուսական օգնության հետ նորաբնակներին տրվում են մի շարք արտոնություններ, բարեկեցիկ կյանք ստեղծելու համար։

Կարապետ արքեպիսկոպոսը ձեռք է բերում կալվածներ, նրանց հասույթով հոգալու համար նոր բացվելիք դպրոցների և աղքատանոցի ծախսերը։ Գյուղերում եկեղեցիներ են բացվում։ Սրբազանը հիմնադրում է Ախալքալաքի Ս. Մեսրոպյան ուսումնարանը, ցորենի ամբարանոցը և աղքատանոցը, ապա 1842 թվականին՝ Ախալցխայի Կարապետյան բնդարձակ ուսումնարանը, որտեղ ռուսաց լեզուն առաջին անգամ ավանդվում է հայ մանուկներին։

1837 թվականի հունվարին Կարապետ արքեպիսկոպոսը Հովհաննես Կարբեցու կողմից նշանակվում է Վրաստանի և Իմերեթի թեմակալ առաջնորդ։

Կարապետ արքեպիսկոպոսը ինչպես գործունյա, այնքան էլ համեստ էր։ Նա պատվով և սրբությամբ է կատարել իր պարտքը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հանդեպ։ Երախտապետ հայ ժողովուրդը իր օրտում միշտ թարմ կպահի ինքնատիպ հայրենասեր հոգևորականի նվիրական հիշատակը։

«Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»։

---

2. Այս թվի մասին Գ. Գևորգկյանը հայտնում է, որ եղել է 8.900 ընտանիք կամ 45.000 հոգի։ Գ. Օզ. Հովհաննիսյանը՝ [illegible] հոգի, Գ. Ջաղարյանը՝ 14.000 ընտանիք կամ 90.000 հոգի։ Այս մասին կա նաև Արտաշես Ասրիեյանցի հոդվածը «Լումաբարակի»-ի 1973 Թ. № 3-ի 43-րդ էջում։

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԹԵՄՈՒՄ

(Խոհեր և տպավորություններ)

Անջինջ ու միշտ պայծառ պիտի մնա իմ հիշողության մեջ ամառային այն խաղաղ երեկոն, երբ Վեհարանի պարտեզում ունկնդրում էի Վեհափառ Հայրապետի խրատական խոսքերին, Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի առաջնորդի պաշտոնը ստանձնելու համար։

«Ահավասիկ հունձը բազում են և մշակք սակավք։ Գնացեք և մխիթարեցեք մեր ժողովրդին, որ կարոտ է Ս. Էջմիածնի և մեր քաղցր Հայրենիքի սիրով ու կարոտով։ Տարեք անոնց Մեր հայրական օրհնությունները ու սիրավանդ ողջույնները։ Տեր ընդ քեզ»։

Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելուց և օրհնությունն ստանալուց հետո, հրաժեշտ առի, ապա իջա Մայր Տաճար, ուր ծունկի եկա և աղոթեցի Իջման Ս. Սեղանի առջև իմ ապագա գործի հաջողության համար։

Լի հավատով ու հույսով ես ճանապարհ ընկա։ Վանքի ինքնաշարժը սուրնթաց տանում էր ինձ վերջին անգամ Երևանի լուսավոր ողորկ փողոցներով։ Մոտենում են բաժանման վերջին վայրկյանները։ Որքա՜ն քաղցր ու կարոտալի է դառնում այդ պահերին ամեն ինչ։ Ես ամուր փարվել եմ Երևանին, հայրենի անուշաբույր հողին, նրա դարավոր սրբություններին, բոլորին, ամեն ինչին ու ջերմաջերմ համբույրներ դրոշմում։ Չեմ ուզում բաժանվել ոչ մեկից։ Բայց կոչման ձայնը ինձ զգաստացնում է և շոգեկառքը խլում է ինձ և տանում հեռո՜ւ, հեռո՜ւ։

Նոր-Նախիջևանի և Դոնի-Ռոստովի միջև ներկայումս տարբերություն չկա. առաջինը երկրորդի շրջաններից մեկն է։ Ըստ պաշտոնական տվյալներով այստեղ հաշվվում է մոտ 20.000 հայություն։ Կան երկու եկեղեցիներ. մեկը Ս. Գրիգոր Լուսավորիչ, որն ավելի հին է (երկուսն էլ արձանագրություն չունեն), կառուցված 18-րդ դարում, իսկ մյուսը՝ Ս. Հովհաննես Կարապետ, նոր է և աչքի է ընկնում հայկական ճարտարապետության հատուկ ոճական իր առանձնահատկություններով։ Պատարագեցի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցում և քարոզեցի։ Ներկա էին բազմաթիվ հավատացյալներ։ Մատաղներ արվեցին, պատրաստվեցին ճոխ սեղաններ բոլորի համար։

Ապա այցելեցի Արմավիր քաղաքը, ուր ապրում է շուրջ 5.000 հայություն։ Արմավիրցիների պատմությունը շատ հին չէ։ Նրանց մի մասը արևմտահայեր են և հաստատված են այստեղ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, իսկ հիմնական մասը տեղացիներ են, որոնց նախնիները տեղափոխվել և բերվել են այստեղ լեռնաբնակ չերքեզների միջից, շնորհիվ իրենց հայրենասեր առաջին հոգևոր հովվի՝ Կարապետ վարդապետ Արծիվյանի։ Արմավիրցիները իրենց երախտագետ հովվին թաղել են սուրբ եկեղեցու բակում և սրբությամբ են պահում նրա հիշատակը։ Շիրիմի վրա կարդացվում է հետևյալ արձանագրությունը.

«Առաքինաշնորհ Կարապետ վարդապետ Շահգուլ-բուն ընդ վիճակաւ սորա լի աւուրբ պատուական ցեղիւ ի չէրքեզս սննդեան ծայրագունից։ Սա զատ ախոյան հաւատոյ կայսրութեան ճշմարիտ։ Ջանիւ սորա ի վաղեմն իւր հոգւոյն, փոխանակ անուան յեռանդեան կաց ընդդէմ չարեաց ազգի բազմաշխատ գլխաւոն իւր կենաց. գերեզման գերեզմանի Նախիջևանի ի-

յառակ մնացի, անմոռաց սերնդոց Արմա-ւայ ծաղկազանց: Վախճանեալ 102 ամաց յ-3 օգոստոսի. .... 1856 ամի....» (կետերի տեղերը ջարդված են)։

Չերքեզահայերը միայն չերքեզերեն և ռուսերեն լեզուներով են խոսում, իսկ մնացած հայերը՝ հայերենով։ Ունեն մի մեծ աղյուսաշեն եկեղեցի (մոտ 100 տարվա, առանց արձանագրության)։ Տասնյակ կիլոմետրեր հեռվից երևում են եկեղեցու երկնամուխ գմբեթները։ Եկեղեցին դրսից և ներսից նորոգված է, կոկիկ և մաքուր։

Արմավիրում ես պատարագեցի և քարոզեցի նախ Լուսավորչի տոնի վերաբերյալ, իսկ երկրորդ անգամին՝ Ս. Էջմիածնի մասին։ Ներկա էր հավատացյալների մեծ բազմություն, ավելի շատ չերքեզախոս հայերից։ Անսահման եղավ վերջիններիս ուրախությունը, երբ մի քանի բառերով թարգմանեցի քարոզիս բովանդակությունը ռուսերեն։ Ես առաջին անգամն էի տեսնում նման հայերի, որոնք, մոռանալով իրենց մայրենի լեզուն և մի շարք ազգային սովորություններ, դեռ զարմանալի չափով պահպանում էին հայ շունչն ու հոգին՝ շնորհիվ միայն Լուսավորչի սուրբ հավատի։

Շարունակելով հովվական այցելությունս, հասա Մեծ Սալա գյուղը, Դոնի-Ռոստովից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա։ Գյուղում կա շուրջ 400 հայ ընտանիք։ Գյուղի եզրին, մի գեղեցիկ բարձրավանդակի վրա, կանգնել է Ս. Աստվածածին հոյակապ եկեղեցին։ Հեռվից այն գեղեցիկ է, վեհ, տպավորիչ։ Ներքնապես այդ սքանչելի եկեղեցին կարիք ունի վերանորոգության։

Կիրակի օր պատարագեցի և քարոզեցի Ս. Էջմիածնի մասին։ Այստեղ էլ հայերը խոսում են Նոր-Նախիջևանի խրթին բարբառով։

Պատարագեցի և քարոզեցի նաև Նոր-Նախիջևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում։ Սուրբ պատարագին ներկա էր մեծ բազմություն, շուրջ 1.000 հոգի։ Պատարագի երգեցողությունները հաջողությամբ կատարեց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու քառաձայն խումբը։ Սուրբ պատարագից հետո ես հետաքրքրվեցի երգչախմբի կյանքով և պատմությամբ։ Պարզվեց, որ երգչախմբի բոլոր անդամներն էլ երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետի նախիջևանցի նախկին աշակերտներից էին։ Ես գտնվում էի հանգուցյալ ու սիրելի Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի ծննդավայրում, ուր նա երկար տարիներ կրթել ու դաստիարակել է սերունդներ։ Նոր-նախիջևանցիները առանձին հպարտությամբ էին խոսում «իրենց Կաթողիկոսի» մասին։ Նրանք ցանկություն էին հայտնում, որ հանգուցյալ Հայրապետի տապանաքարի վրա «Հայրենասեր» բառին [illegible] պետք է ավելացնել նաև «Նոր-Նախիջևանցի»։

Սուրբ պատարագից հետո տրվեց պաշտոնական ընդհանուր սեղան, ուր կենացներ առաջարկվեցին Վեհափառ Հայրապետի արևշատության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավիտենականության և Մայր Հայրենիքի հզորության համար։ Խմբովին երգեցինք «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը։ Խորունկ հուզմունքից շատերը արտասվում էին։ Արտասուքներ էին հոսում նաև իմ աչքերից։ Ս. Էջմիածինը եղել և մնում է ամեն հայի ուրախության սկիզբը։

Հաջորդ օրը այցելեցի Չալթըր գյուղը, որը Դոնի-Ռոստովից մոտ 25 կիլոմետր հեռավորության վրա է գտնվում։ Գյուղը հայկական է, ուր ապրում է 1.800 ընտանիք։ Խոսակցական լեզուն է Նոր-Նախիջևանի բարբառը։ Գեղեցիկ է Ս. Համբարձում եկեղեցին, երկնի մովի մեջ մխրճված իր [illegible] գըմբեթով։ Եկեղեցին արձանագրություն չունի։ Սուրբ պատարագի մատուցմամբ և բանին կենաց քարոզությամբ մխիթարեցի նաև այս գյուղի հավատացյալներին։

Նույն օրը եղա նաև հարևան Թոփթի գյուղում, ուր կա 400 հայ ընտանիք։

Չալթրի, Մեծ Սալայի, Թոփթիի, Օրջոնիկիձեի և Արմավիրի եկեղեցիները աչքի են ընկնում իրենց ճարտարապետական առանձնահատկություններով, ինքնատիպությամբ և հայկական ոճի հարազատությամբ։ Դրանք անգին բեկորներ են մեր դասական ճարտարապետության։

Իմ հովվական երկրորդ շրջագայությամբ ընդգրկեց Կրասնոդարը, Գրոզնին, Կզլյարը, Աստրախանը, Օրջոնիկիձեն, Բուդյոնովսկը, Կիսլովոդսկը, Պյատիգորսկը, Ստավրոպոլը, Մոզդոկը և Եղեսիան։ Ամենուրեք պատարագում էի և քարոզում, գտնում ջերմ և սրտագին ընդունելություն։ Հիշյալ վայրերի հայությունը գաղթել է զանազան տեղերից, մեծ մասամբ արևմտահայեր և ղարաբաղցիներ են, որոնք հարազատ են մնացել իրենց ազգային ավանդություններին և սովորություններին։

Ես մխիթարությամբ պետք է նշեմ, որ թեմիս հայության սրտում կենդանի է հավատի անսասան հուրը, սերը դեպի Ս. Էջմիածին, Մայրենի Եկեղեցին և Ամենայն Հայոց Հայրապետությունը։ Միայն ժողովրդի մեջ մտնելուց հետո համոզվեցի, թե որչափ մեծ ակնկալություններ ունի տակավին հայ ժողովուրդը իր անձնվեր հոգևորականությունից, և թե որպիսի մեծ առաքելություն ունի կատարելու հայ հոգևորականն իր հարազատ ժողովրդի համար։

*Ես իմ հովվական այցելությունից վերադարձա հոգեպես բավարարված, ոգևորված և խանդավառ։*

*Մեծ եղավ ուրախությունս, երբ, վերադառնալով իմ հովվական շրջագայությունից, գրասեղանիս վրա հավաքված նամակների մեջ գտա Վեհափառ Հայրապետի հետևյալ սրբատառ նամակը.*

*«Մեծ գոհունակությամբ կարդացինք Ձեր երկու շահեկան նամակները Ձեր գործունեության մասին։ Շատ ուրախ ենք մանավանդ, որ խանդավառված եք Ձեր պաշտոնով և Ձեր աշխատանքներով։ Գործի հաջողության առաջին գրավականն է այդ։ Ձեր մեջ կտեսնենք ներշնչված հոգևորականի մը հոգին, որ անտարակույս կգիտակցի իր առաքելության մեծ կարևորության՝ հօգուտ ժողովրդին և Հայրենիքին։ Շարունակեցեք Ձեր գործը այնպես, ինչպես սկսեր եք՝ սիրով, լրջությամբ և համարձակությամբ։ Եվ գրեցեք Մեզ հաճախ։*

*Այո՛, սիրելի Վեհափա՛ռ, Ձեր իմաստուն առաջնորդությամբ, կշարունակենք մեր աստվածահաճո գործը, հօգուտ հայ ժողովրդին և Հայրենիքին։*

ԲԱԲԿԵՆ Ն. ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# ԱԴՐԲԵՋԱՆԻ ԹԵՄՆ ԱՅՍՕՐ

Մեր ներքին թեմերի մեջ Ադրբեջանի թեմը բազմամարդ և հին թեմերից մեկն է։

Ադրբեջանի թեմի մեջ մտնում են Նախիջևանի, Ագուլիսի, Լեռնային Ղարաբաղի, Շամախու, Նուխիի, Գանձակի, Անդրկասպյան երկրների (Տաշքենդ, Սամարղանդ, Աշխաբադ, Մեր. Չարջարաղ, Անդիջան, Կոկանդ) շրջանները։

Ադրբեջանի կենտրոնն ու սիրտն է հանդիսանում Ադրբեջանի մայրաքաղաք հռչակավոր Բաքուն, որտեղ ապրում է մոտ 250.000 հայություն և ուր նստում է թեմի առաջնորդը։

Բաքվում համախմբված են նաև թեմի եկեղեցական կազմակերպությունները։ Թեմի եկեղեցական կազմակերպչական կյանքը դրված է առողջ հիմքերի վրա, շնորհիվ Ադրբեջանի բարեխնամ կառավարության բարյացակամության և եկեղեցական մարմինների շրջահայաց և իմաստուն ղեկավարության ու համերաշխ գործունեության։

Ադրբեջանի թեմը հարուստ է նշանավոր ու պատմական վանքերով, ուխտատեղիներով, որոնցից հիշենք Ս. Սարգսի, Ջալալ (Ս. Աստվածածին), Նոշկա, Մանասսի, Ամարասի, Գանձասարի, Ամենափրկիչ, Խաթրա կամ Խաթրավանքը, Դադի, Երից Մանկանց, Սադիանի, Ս. Թովմայի վանքերը։

Բաքվի եկեղեցիների մեջ նշանավոր է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան առաջնորդանիստ եկեղեցին, որ գտնվում է քաղաքի ամենակենտրոնական փողոցում և կառուցված է 1863—1869 թվականներին, և ուր պաշտոնավարում են 5 քահանա հայրեր։ Բաքվում ազգային-եկեղեցական կյանքը ղեկավարվում է թեմակալ առաջնորդի նախագահության տակ հինգ հոգուց բաղկացած թեմական խորհրդի կողմից։

Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունից հետո, Վեհափառ Հայրապետի հրահանգով և թելադրությամբ, ներքին բոլոր թեմերը՝ Ադրբեջանի, Վրաստանի, Շիրակի, Դոն-Նախիջևանի, Մոսկվայի, վերակազմակերպվեցին։ Ամեն թեմում նշանակվեց թեմակալ առաջնորդ և առաջնորդական փոխանորդ, ընտրվեցին թեմական եկեղեցական խորհուրդներ և թեմերի եկեղեցական-կազմակերպչական կյանքը ընթացավ կանոնավոր։

Ադրբեջանի նախկին թեմակալ առաջնորդ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյանը, իր առաջացյալ տարիքի պատճառով, 1956 թվականի հուլիսին հրաժարվեց իր առաջնորդական պաշտոնից և Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով առաջնորդական տեղապահ նշանակվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբաններից ճեմարանավարտ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, որը ձեռնարկեց իր հովվական պաշտոնին, երիտասարդական կորովով և նվիրումով։

Այսօր Ադրբեջանի թեմը գտնվում է իր եկեղեցական կազմակերպչական ճանապարհի վրա, շնորհիվ ձեռք առնված կազմակերպչական աշխատանքների և առաջնորդական տեղապահ Տ. Տիրայր վարդապետի և թեմական խորհրդի համերաշխ գործունեության և հավատացյալների սրտաբուխ և սրտագին աջակցության։

Վերջին երկու տարում Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում և շրջափակում կատարվեցին մի շարք վերանորոգչական աշխատանքներ։ Եկեղեցում անցկացվեց գազաջեռուցման սիստեմ։ Ընդերկրյա ջրատար խողովակների միջոցով հոսուն ջուր բերվեց եկեղեցի՝ հավատացյալների լումաներով և նվիրատվությամբ։

Մոտ օրերս կձեռնարկվի եկեղեցու բակի պարսպապատումը սրբատաշ քարերով. եկեղեցին կունենա նաև իր կարիքների համար սեփական շենք 10 սենյակից բաղկացած.

Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում անխափան և ամեն օր պաշտվում է առավոտյան և երեկոյան ժամերգություն. կիրակի և տոն օրերին՝ սուրբ պատարագ, բանին կենաց քարոզությամբ։ Հաճախ քարոզում է առաջնորդական տեղապահ՝ հայր սուրբը։ Հերթով քարոզում են նաև քահանա



Կիրովաբադի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին

հայրերը, մխիթարելով հավատացյալներին և դաստիարակելով քրիստոնեական սուրբ կրոնի սրբազան սկզբունքներով և հայեցի, քրիստոնեական շնչով։ Եկեղեցին միշտ լիքն է լինում հավատացյալներով, որոնցից շատերը տոն օրերին սուրբ հաղորդության են ստանում և պահում են գուրգուրանքով մեր ազգային-եկեղեցական դարավոր ավանդությունները ու սովորությունները։ Բաքվի հավատացյալները, հավատարիմ իրենց պապենական սովորություններին և առաքինությանց, իրենց սրտաբուխ նվերներով շեն ու պայծառ են պահում նախնյաց հավատի սրբազան հուրը իրենց սրտերում։

Այս երկու գեղեցիկ սուրբգրական նկարներ, վերջերս նվիրված բարեպաշտ Արսեն Մեսրոպյանի կողմից ի հիշատակ իր հանգուցյալ ծնողների։ Նկարներից մեկը ներկայացնում է «Վերջին ընթրիքը», իսկ մյուսը՝ «Քրիստոս հավատացյալների մեջ»։ Այս հավատացյալ նկարիչ արվեստագիտուհի Թամարա Սաթյանը մեծ սիրով վերանորոգում է եկեղեցու հին նկարները՝ «Մովսես մարգարեն», «Քրիստոսի հարությունը» և «Հիսուս խաչի վրա»։ Սաթյանների ընտանիքը տաղանդավոր արվեստագետների ընտանիք է։ Նկարչուհու եղբայրները անվանի երաժիշտներ են, իսկ ինքը իր սրտի խորունկ զգացմունքներն արտահայտում է վրձինի միջոցով, անվճար աշխատանքով, հանուն բոլոր հայ քույրերի և հավատացյալ մայրերի, դեպի հայ հավատացյալ ժողովրդի մայր ու ծնող Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին։ Եվ Թամարա Սաթյանը միակը չէ իր հավատացյալ քույրերի մեջ, որոնք իրենց սրտի նվերը, ձեռքի շնորհը ի սպաս են դրել Ս. Եկեղեցու պայծառության գործին։

Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում երկար տարիներից ի վեր ապրում և ծառայում է Սարգսյան կույս Նունեն։ Վերջերս նա լանջախաչով պարգևատրվեց Վեհափառ Հայրապետի կողմից։ Նորին Ս. Օծության բարեհաճ կարգադրությամբ կույս Նունեն թոշակ է ստանում Մայր Աթոռից։

Պատշաճ ու համեստորեն կահավորված են առաջնորդարանի, քարտուղարության և հաշվապահության գրասենյակները։

Տ. Տիրայր վարդապետի ջանքերով վերակազմակերպվել և մեծացել է եկեղեցու երգչախումբը հավատացյալ երիտասարդ ուժերով, որոնք մեծ սիրով և ոգևորությամբ են մասնակցում փորձերին և ջերմեռանդությամբ կատարում են սուրբ պատարագի սրբազան արարողությունը։

Առաջնորդական տեղապահ Հայր սուրբը այցելեց նաև Գանձասարի և Ամարասի վանքերը, որոնք գտնվում են Արցախյան լեռներում ու բարձրավանդակներում, ուր Հայի անունն ու հավատը կա ամեն մամռապատ քարի վրա, բազմաթիվ եկեղեցիների, վանքերի ու մատուռների արձանագրությունների վրա։

Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետը ամեն տեղ իր հետ տարավ Ս. Էջմիածնի հազա-



Առաջնորդական տեղապահ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը Բաքվի քահանաների և եկեղեցական խորհրդի անդամների հետ

Առաջնորդական տեղապահ Հայր սուրբի կարևորագույն ձեռնարկումներից մեկն է նաև նրա կատարած թեմական այցելությունը այս աշնան օրերին՝ հոկտեմբերի 24-ին, դեպի Գանձակ և Ղարաբաղ։ Ղարաբաղի հավատացյալ ժողովրդի համար մխիթարության առիթ հանդիսացավ նորաբաց եկեղեցում կատարված հանդիսավոր սուրբ պատարագն ու քարոզը։ Տ. Տիրայր վարդապետը հավատացյալներին հաղորդեց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունը և հորդորեց աչքի լույսի պես պահել մեր սուրբ հավատն ու ավանդությունները։ Այդ օրը Մարտակերտի և շրջակա հայ գյուղերի համար ուխտագնացության օր էր։ Մարտակերտում կա քահանա և եկեղեցական խորհուրդ։ Եկեղեցում ամեն օր կատարվում է կանոնավոր ժամերգություն։

րամյա սրբությունների օրհնությունն ու Վեհափառ Հայրապետի ողջույնն ու օրհնությունները իր հավատացյալ ժողովրդին։

Չի անցնի երկար ժամանակ, երբ Ամարասի և Գանձասարի պատմական վանքերի դռները նորից կբացվեն հայ աղոթավորների առջև։

Առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետը հաճախ մեկնում է նաև Կիրովաբադ, հոգեպես մխիթարելու հայ հավատացյալ ժողովրդին։ Կիրովաբադի (Հին Գանձակի) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Անդրկովկասի հայ եկեղեցիների մեջ նշանավոր է իր ճարտարապետական առանձնահատկություններով, գեղեցկությամբ և մեծությամբ։

Եկեղեցին կառուցվել է քաղաքի վերի թաղում, ուր հայ բնակչությունը բազմամարդ է։

Եկեղեցին կառուցված է չորս սյուների վրա, գեղեցիկ ու վեհ է իր արտաքին տեսքով, յարձրաշեն, ընդարձակ։ Երեք ու մեծադիր են լուսամուտներն ու դռները։ Եկեղեցին ունի երկու դուռ, արևմտյան և հյուսիսային կողմերից։ Դռներից յուրաքանչյուրն ունի փոքր գավիթ։ Տաճարի երկարությունն է 30,5 մետր, իսկ լայնությունը՝ 19,70 մետր։

Արևելյան պատի վրա կա հետևյալ արձանագրությունը. «Շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ հիմնեցաւ սուրբ տաճարս ի 14-ն սեպտեմբերի 1853 ամի և յետ աւարտելոյն տրող ջարեպաշտ ժողովրդոց Գանձակայ ի կայսրութեան ամենայն ռուսաց Ալեքսանդր Բ. և ի հայրապետութեան Գէորգ Դ. Օծաւ յ-9-ն նոյեմբերի 1869 ամի ի սրբազան Մակար արքեպիսկոպոսէ առաջնորդի Վրաստանի և Իմերէթի և անուանեցաւ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցի յանուն Սրբոյն Գրիգորի մեծի Հայրապետին Ազգիս: Հիմնարկեցաւ սուրբ տաճարս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի 1853 ամի և աւարտեցաւ 1869 ամի:

Եկեղեցին ունի և շրջապարիսպ, որ շինված է սրբատաշ քարերով։

Այժմ Կիրովաբադի եկեղեցում պաշտոնավարում են երեք քահանաներ։

Կիրովաբադում ապրում է մոտավորապես 70.000 հայություն։

Վերջերս ամբողջությամբ ասֆալտապատ վեց նաև եկեղեցու բակը։

Կիրովաբադ քաղաքի մոտ գտնվում են նաև երկու նշանավոր ուխտավայրեր՝ մեկը քաղաքից դուրս հարավային մասում՝ Ս. Աստվածածնի ուխտավայրը, որը և կոչվում է «Զլոլյաք», իսկ երկրորդը՝ քաղաքից դուրս, հյուսիսային մասում, Ս. Սարգսի անվան։

Առաջնորդական տեղապահ Տ. Տիրայր վարդապետը, որպես հարազատ միաբան Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կարգ ու կանոնի նախանձախնդիր հոգևորական, կարճ ժամանակում կազմակերպեց Ադրբեջանի թեմի ազգային-եկեղեցական կյանքը, ուրախություն և մխիթարություն պատճառելով Բաքվի հավատացյալներին և գոհունակություն՝ Վեհափառ Հայրապետին։



Նկարչուհի Թամարա Սարյանը Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում վերանորոգում է Քրիստոսի Հարության նկարը

Այսուհետև ես, Բաքվի հայ հավատացյալները, համախմբված իրենց Մայր Եկեղեցու փրկարար հովանու տակ, նախկնյաց նախանձախնդրությամբ և բարեպաշտությամբ, կաշխատեն վառ պահել իրենց սրտերում և Բաքվի հայ համայնքում մեր քրիստոնեական սուրբ հավատի դարավոր սրբությունները, ավանդությունները, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հանդեպ սերը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա արժանավոր Գահակալի՝ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ երախտագիտությունն ու հավատարմությունը։



# ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Կ. ՂՈՒԼԱՆՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆ ԱՅՍՕՐ

Էջմիածնում, նրա հիմնադրման սկզբից, վառվեց լուսատու այն ջահը, որ դարեր շարունակ մնաց անշեջ, առաջնորդելով հայ ժողովրդին և լուսավորելով նրա ուղին։

Լուսատու այդ ջահը գիրն ու դպրությունն էր, որ մտցրեց Հայաստանում անմահ Մեսրոպ Մաշտոցը, և որի կենտրոնն էր Էջմիածինը։ Նրա նվիրական կամարների տակ հյուրընկալություն և ապաստան էին գտնում հայ առաջադեմ մտքի և գրչի մշակները, նրանց ստեղծագործությունը՝ մագաղաթի վրա գրված երկերը, սրբությամբ պահվում էին Մայր Տաճարի մատենադարանում, ընդօրինակվում էին և տարածվում երկրի հեռավոր անկյուններում։

Առաջին գրավոր տեղեկությունը Էջմիածնի մատենադարանի մասին տալիս է իր հռչակավոր Թղթում Ղազար Փարպեցին, որը մի ժամանակ, Վահան Մամիկոնյանի օրով, Էջմիածնի Կաթողիկեի փակակալն էր։

Էջմիածնի օրինակին միշտ հետևել են Հայաստանի մյուս վանքերը, իրենց շուրջը համախմբելով գիտնականներին և գրողներին և հիմնելով հարուստ գրադարաններ։

Երկրի խաղաղ զարգացման ժամանակներում գրադարանները հարստանում էին նորանոր գրքերով, հայ և հարևան ժողովուրդների գիտնականների և գրողների գործերով։ Բայց գալիս էին պատերազմների և արհավիրքների տարիները, երբ տակն ու վրա էր լինում երկրի տնտեսությունը, երբ աշխարհակալների բյուրավոր ասպատակողները ողողում էին հայոց աշխարհը, կրակի էին մատնվում մշակույթի կենտրոնները և անդարձ կորչում էին հայ հանճարի թանկարժեք հուշարձանները։ Այսպես էր արաբների, սելջուկների, մոնղոլների ավերիչ արշավանքների ժամանակ, երբ կրակի ճարակ դարձան վանական գրադարանները իրենց հազարավոր ընտիր ձեռագրերով։

Բայց և արհավիրքների պահին, երբ շառաչում էր սուրը և հարյուրավոր գյուղեր ու ավաններ մոխիր էին դառնում, հարազատ և հավատարիմ ձեռքերը թշնամու անխնա հարվածներից փրկում էին հայ ժողովրդի գանձերը և խնամքով պահում մագաղաթները և գրքերը թաքստոցներում կամ տանում հեռավոր ապահով վայրեր։ Երբ անցնում էին պատերազմի տարիները, երբ երկիրը խաղաղվում էր և հայ ժողովուրդը, մի կողմ թողած սուրը և վահանը, վերսկսում էր իր ստեղծագործական խաղաղ աշխատանքը, ծաղկում էին և մշակույթի կենտրոնները, խոր պահեստներից՝ և թաքստոցներից դուրս էին հանվում մագաղաթները և գրքերը և վերստին իրենց տեղը գրավում վանքերի վերանորոգված գրադարաններում։

Մեր բոլոր նշանավոր վանքերը՝ Սաղմոսավանքը, Գեղարդը, Մշո Ս. Կարապետը, Տաթևը, Հաղբատը, Սանահինը, Վարագը, Կտուց անապատը, Աղթամարը, Հովհաննավանքը, Սեբաստիայի Ս. Նշանը, Սևանավանքը, Հռոմկլան և ուրիշ բազմաթիվ վանքեր ունեցել են հարուստ գրադարաններ։

Երբ 15-րդ դարում Էջմիածնում վերստին հաստատվեց Կաթողիկոսական Աթոռը, Հայաստանի զանազան վանքերից, նաև Կիլիկիայից, Մայր Աթոռ բերվեցին ընտիր ձեռագրեր։ Այդպիսով լրացվեց և վերանորոգվեց Էջմիածնի աշխարհահռչակ Մատենադարանը։

Մատենադարանը գնալով հարստացավ դարերի ընթացքում այնտեղ կուտակվեցին

մագաղաթի և թղթի վրա գրված բազմաթիվ ձեռագրեր, վավերագրեր, պաշտոնական և դիվանագիտական նշանակություն ունեցող գրություններ հայ և օտար լեզուներով։

Աճում էր ձեռագրերի քանակը, իսկ ձեռագրատան շենքը մնում էր նույնը, նա միանգամայն անհամապատասխան էր ձեռագրեր պահելու ժամանակակից պահանջներին։ Խոնավության և այլ պայմանների ազդեցության տակ շատ ձեռագրեր վարակվել էին բորբոսային սունկով և առաջ էր եկել քայքայման երևույթ։



Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի նորակառույց շենքը

Սովետական Հայաստանի կառավարությունը որոշեց պետական հովանավորությամբ շրջապատել հայ ժողովրդի մշակույթի այդ մեծագույն գանձերը։ Մատենադարանը տեղափոխվեց Էջմիածնից Երևան, Հանրային գրադարանի նորակառույց շենքը։ Ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ ձեռագրերի պահպանման և Մատենադարանում՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական ձեռագրատանը գիտա-հետազոտական աշխատանքներ ծավալելու համար։

Ամեն մի նոր ստացվող ձեռագիր, գիրք փաստաթուղթ նախօրոք հանձնվում է Մատենադարանի վերականգնման բաժին և ախտահանվում։ Սնկերը և այլ մանրէները, որոնք վնասակար ազդեցություն ունեն մագաղաթի և թղթի վրա, ոչնչացվում են։ Կան ձեռագրեր, որոնք կորցրել են իրենց նախկին կազմվածքը։ Այդպիսի ձեռագրերը վերանորոգվում են ամրացնող լուծույթի օգնությամբ։ Այն ձեռագրերը, որոնք կազմ չունեն, կազմվում են։ Այնուհետև բոլոր ձեռագրերը մանրամասն ցուցակագրվում են և տեղ գրավում Ձեռագրատան պահարաններում։

Մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատվելը Մատենադարանն ունէր 4.060 հայերեն ձեռագիր։ Ներկայումս հայերեն ձեռագրերի քանակը հասել է 10.000-ի։ Մեծ չափով ավելացել է վերջին 36 տարվա ընթացքում ձեռագիր պատառիկների և ձեռագիր պահպանակների թիվը, հասնելով մոտ 4.000-ի։ Զգալիորեն աճել է Մատենադարանում պահվող օտար լեզուներով ձեռագրերի, փաստաթղթերի, անտիպ գրքերի քանակը։ Մատենադարանն ունի 7.000 ձեռագիր արաբերեն, պարսկերեն, հունարեն, լատիներեն, հաբեշերեն, ասորերեն, հնդկերեն, վրացերեն, սլավոներեն և այլ լեզուներով։

Տարեցտարի Մատենադարանն ավելացնում է իր ձեռագրերի ֆոնդը։ Ստացվել և ստացվում են հայերեն և այլ լեզուներով գրված ձեռագրեր և արխիվային նյութեր։ Միայն վերջին երկու տարվա ընթացքում նվիրաբերության և գնման ճանապարհով ձեռք են բերվել 230 հայերեն ձեռագրեր, մոտ հարյուր ձեռագրեր օտար լեզուներով, բազմաթիվ արխիվային փաստաթղթեր։ Ձե-

ակտերը և փաստաթղթերը ձեռք են բերվել Երևանում, Թավրիզում, Աստրախանում, Թեոդոսիայում, Լենինականում և Սովետական Միության այլ քաղաքներում։

Սփյուռքում ապրող հայերը նույնպես մեծ ուշադրություն են նվիրում Մատենադարանին և հարստացնում նրա Ձեռագրատունը։ Հազվագյուտ ձեռագրեր են ստացվել Եվրոպայի հայկական ամենահին գաղութներից մեկից՝ Ռումինիայից։ Փարիզից փոխադրվել են արժեքավոր ձեռագրեր։ Դրանցից մեկը նկարազարդված է Սարգիս Պիծակի ձեռքով։ Այդպիսով Մատենադարանում պահվող Պիծակի ձեռքով նկարազարդված ձեռագրերի թիվը հասնում է տասնմեկի։

Ձեռագրատան պահեստներում են մեր մշակույթի այն հազվագյուտ անկրկնելի նմուշները, որ փրկվել են ժամանակի ավերից, ազդեցությունից և արյունալի պատերազմների կրակից։

Այստեղ է ամենահին ձեռագիր Ավետարանը, որ ընդօրինակված է 887 թվականին Սահակ Վանանդեցու ձեռքով և գիտության մեջ հայտնի է որպես Լազարյան Ավետարան՝ անունով այն պատճառով, որ նա երկար ժամանակ պահվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում։

Այստեղ են այն մարդկանց գործերը, որոնց անունները սիրելի և նվիրական են հայ ժողովրդի համար— հայ փիլիսոփաների, մաթեմատիկոսների, պատմաբանների, բժիշկների, նկարիչների, աշխարհագետների, բանաստեղծների գործերը։ Դարերի խորքից մեզ հետ են խոսում մեր լուսավոր դեմքերը՝ Ագաթանգեղոսը և Խորենացին, Կորյունը, Եղիշեն և Փարպեցին, Սեբեոսը, Անանիա Շիրակացին, Հովհաննես Իմաստասերը, Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը, Նարեկացին ու Շնորհալին, Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին, Հովհան Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին։

Միջնադարյան գրիչները արտատել են հին օրինակներից և մեզ հասցրել մեր գիտնականների աշխատությունները սկսած 5-րդ դարի քառասունական թվականներից։ Մատենադարանում են պահվում Կորյունի աշխատության «Վարք Մաշտոցի» վեց ձեռագրերը, Եղիշեի Վարդանանց պատմության 17 ձեռագրերը, թվաբանության հնագույն դասագիրքը աշխարհում, որ կազմել է 7-րդ դարում հայ խոշորագույն գիտնական Անանիա Շիրակացին։

1184 թվականին Մխիթար Գոշը գրեց իր հայտնի Դատաստանագիրքը։ Մատենադարանում պահվում են Դատաստանագրքի 20 ձեռագիր օրինակներ։ Նրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լուծել իրավագիտական այդ հազվագյուտ աղբյուրի մի շարք հոդվածներ։

Անհնարին է մեկ առ մեկ թվել ու գնահատել այն հարստությունը, որ ամփոփված է Ձեռագրատան գեղեցիկ և հարմար դարակներում։

Բացի հայ գիտնականների աշխատություններից, Մատենադարանն ունի հունարենից հայերեն թարգմանված հույն գիտնականների գործեր։ Կան այնպիսի երկեր, որոնց բնագրերը կորել են և մնացել է հայերեն թարգմանությունը միայն. դրանց թվումն են Զենոն Ստոյիկի, Եվսեբիոս Կեսարացու, Տիմոթեոս Կուզի, Թեոն Ալեքսանդրացու, Փիլոն Եբրայեցու աշխատությունները։

13-րդ դարում լատիներենից հայերեն է թարգմանվել Անտիոքի իշխանության օրինագիրքը։ Օրինագրքի բնագիրը լատիներեն լեզվով կորել է, մնացել է նրա հայերեն թարգմանությունը։

Հիշենք այստեղ և այն համեստ գրիչներին, որոնք ավետարանների և այլ գրքերի վերջում գրել են պատմական նշանակություն ունեցող հիշատակարաններ։ Մենք ունենք 513 հիշատակարան 14-րդ դարից և 850 հիշատակարան 15-րդ դարի առաջին կեսից։

Գիտա-հետազոտական աշխատանքների համար մեծ արժեք ունեն պահպանակները, որ սովորաբար լինում են ձեռագրերի սկզբում և վերջում։ Պահպանակները կազմըվում էին ձեռագրերի թերթերից։ Հաճախ նրանք ավելի կարևոր են, քան բուն ձեռագիրը։ Մատենադարանում կան այնպիսի պահպանակներ, որոնք ունեն հոյակապ մանրանկարներ կամ եղել են պատմիչների ձեռագրեր։ Մի պահպանակ, որ մնացել է 9—10-րդ դարերից, հանված է Ագաթանգեղոսի պատմությունից, մի ուրիշ պահպանակ կազմում է 5—7-րդ դարի Ավետարանի մաս։

Ոչ պակաս արժեքավոր են հին ձեռագրերի պատառիկները։ Մատենադարանի աշխատակից Ա. Քոլանջյանը գիտականորեն նկարագրել է պատառիկների ժողովածուն, որի մեջ կան հատվածներ Ագաթանգեղոսից, Խորենացուց, Եղիշեից և այլ հեղինակներից։ Այդ հատվածները օգտակար են հիշյալ հեղինակների բնագրերը ճշտելու համար։

Մատենադարանի ձեռագիր նյութերի վրա աշխատում են ոչ միայն Սովետական Հայաստանի գիտական հիմնարկությունների՝ Մատենադարանի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, Պետական համալսարանի և գիտա-հետազոտական ինստիտուտների աշխատակիցները, այլև Սովետական Միության զանազան քաղաքներից Մատենադարան գործուղվող գիտական աշխատակիցներ։

Մատենադարանի նյութերի հիման վրա սովետական շրջանում հրատարակվել են 300-ից ավելի բնագրեր, ուսումնասիրություններ և հոդվածներ։ Պաշտպանվել են բազմաթիվ դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ։ Հրատարակված աշխատություններից թվում են պրոֆ.-դոկտոր. Ա. Գ. Աբրահամյանի «Շիրակացու մատենագրությունը» ուսումնասիրությունը. «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» Լ. Ս. Խաչիկյանի աշխատության երկու ստվար հատորները, Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստը» և ուրիշ գրքեր։ Ընթացիկ 1956 թվականին Մատենադարանը հրատարակել «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» հայերեն, պարսկերեն և ռուսերեն լեզուներով։ Աշխատության հեղինակն է պատմական գիտությունների թեկնածու Հ. Փափազյանը, որը պատրաստում է գրքի երկրորդ պրակը։ Շուտով լույս կտեսնեն «Բանբեր Մատենադարանի» երկրորդ գիրքը և «Միջնադարյան հայկական ժողովրդական երգեր» ժողովածուն, որ կազմել է բանասեր Ա. Մնացականյանը։

Ամառը սակ է Եղիշեի Վարդանանց պատերազմի սիստեմատիկ հրատարակությունը մեծ հասած բոլոր ձեռագրերի համեմատությամբ, որ կատարել է պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը։

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Նորայր Պողարյանի աշխատությամբ լույս կտեսնի հայկական «Ցարմունի Ասման» աշխարհիկ բովանդակությամբ սրբմում։

Լայնանում և խորանում է գիտահետազոտական ուսումնասիրությունների բնագավառը։ Հայտնաբերվում են նոր տվյալներ հայ ժողովրդի սոցիալական, տնտեսական, քաղաքական կյանքի պատմության մասին։

Լարված ուշադրությամբ ուսումնասիրում են մեր գիտնականները հայ գյուղացիության ազատագրության պայքարի պատմությունը և նրա իրավական դրության պատմությունը զանազան շրջաններում։ Պրոֆ. Սուրեն Հակոբյանը պատրաստում է «Հայ գյուղացիության պատմությունը»։ Գիտական աշխատող Վազգեն Հակոբյանը աշխատում է Մատենադարանում պահվող ձեռագիր կանոնագրքերի ուսումնասիրման և հրատարակման վրա։

Հարուստ և շատ հետաքրքիր նյութեր են պարունակում Մատենադարանում պահվող փաստաթղթերը հայ-հնդկական փոխհարաբերությունների և հայ գաղթավայրերի մասին։ Այդ թեմայի վրա է աշխատում Սոֆիկ Աբրահամյանը։

Պրոֆ.-դոկտ. Ա. Գ. Աբրահամյանը պատրաստում է հայ հնագրության ընդարձակ



Մատենադարանի հնագույն ձեռագրերից մի պատառիկ

ձեռնարկը։ Լույս տեսավ նրա «Հովհաննես Իմաստասեր» աշխատությունը, որ կազմված է Իմաստասերի ձեռագրերի ուսումնասիրման հիման վրա։

Խոշոր աշխատանք է կատարվում և հայ մանրանկարչության ուսումնասիրման ասպարեզում։ Բացի ուսումնասիրություններից կատարվում են նաև բազմաթիվ ընդօրինակություններ։ Երիտասարդ գիտական աշխատողներ Լևոն Ազարյանը և Արամ Ավետիսյանը միջնադարյան մանրանկարչության ուսումնասիրման հարցերին են նվիրել իրենց ապագայում պաշտպանելիք թեկնածուական դիսերտացիաները։

1957 թվականին Մատենադարանը տպագրության կհանձնի պրոֆ. Մելիք-Օհանջանյանի 13-րդ դարի հայ ականավոր գործիչ և պատմագիր Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» աշխատության համահավաք բնագիրը, կազմված Ձեռագրատանը պահվող 28 բնագրերի համեմատության հիման վրա։

Նույն 1957 թվականին տպագրության կհանձնվի Արիստոտելի «Կատեգորիաներ»

աշխատության 6-րդ դարի անանուն աշխատության մեկնությունը։ Այդ աշխատությունը լույս կտեսնի հայերեն և ռուսերեն լեզուներով։ Աշխատությունը հրատարակության համար պատրաստել է փիլիսոփայական գիտության դոկտոր Վ. Չալոյանը։

Մեծ գուրգուրանքով և խնամքով են պահվում Մատենադարանում գտնվող հայ մշակույթի անգին գանձերը՝ մագաղաթները, գրքերը, փաստաթղթերը։ Սակայն այն հարմարությունները, որ ստեղծված են նրանց պահպանման համար, որքան չեն բավարարում գիտական աճող պահանջներին։

Սովետական Հայաստանի կառավարության որոշումով մայրաքաղաքի ամենագեղեցիկ վայրերից մեկում՝ Հաղթանակի ալանջում կառուցվել է և 1957 թվականին օգտագործման կհանձնվի Մատենադարանի նոր հոյակապ շենքը։ Ստեղծվել են բոլոր պայմանները հայ ժողովրդի գանձերի անվնաս պահպանման և ուսումնասիրության համար։ Նոր շենքում կան գեղեցիկ, լուսավոր դահլիճներ և գիտության կաբինետներ։ Ձեռագրատունը ապահովված է լինելու ջերմաստիճանի հարաբերական խոնավության տատանումներից։

Շենքի նախագիծը պատկանում է ճարտարապետ Մ. Գրիգորյանին։ Նա ստեղծագործորեն պահպանել է հին հայկական ճարտարապետության լավագույն ավանդությունները։

Հաղթանակի պողոտայից բարձրացող Մատենադարանի նորակառույց շենքը յուրահատուկ մի հուշարձան պետք է հանդիսանա մեր մեծանուն և բազմաշխատ գրիչներին, որոնք տնտեսական և քաղաքական աննպաստ պայմաններում ստեղծագործել, ընդօրինակել և մեզ են հասցրել մեր ժողովրդի մշակույթի գանձերը։



# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

## ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(Էջմիածնի տպարանին հանգանակության առիթով)

*...Մեր պատմությունը հարուստ է ազգային գիտակցությունը կերտող ու անշեջ պահող ներշնչումի, հպարտության, արիության և անձնազոհության աղբյուրներով։*

*...Բովանդակ հայության համար չկա սրբավայր մը, տաճար մը, Աթոռ մը, որ այս Ազգին զավակներուն մեջ, ջերմեռանդ հավատացյալեն մինչև զազր քրիստոնյան կամ նույնիսկ սկեպտիկը, հուզումի և գուրգուրանքի, ակնածանքի և խանդակաթ սիրո ալիքներ չհարուցանե, որքան Էջմիածնի անունը։*

*Ինչպես Արարատի ամպանիստ ու ահեղ զանգվածը, տարերքի կատաղությունը արհամարհող իր երկնաբերձ գագաթով, դարերով խորհրդանիշը եղած է մեր Հայրենիքին, որ այսօր կծաղկի ու կշենանա, ակնարկը միշտ անոր կատարի բարձունքին հառած, նույնպես ալ Էջմիածինը եղած է մեր հոգեկան աշխարհին ամրոցը, նվաճումները, ըղձանքներն ու վերթռիչքի սլացքները մարմնավորող ամրոցը։*

*Հայաստանի սրտին մեջ մեր ճակատագրին երկու պահակներն եղած են, դեմ առ դեմ կանգնած, բնության այդ հսկան և մարդուն ձեռքով կերտված այդ անկործանելի կոթողը։*

*...Տեսլապաշտ ու վսեմ նկարագիր մը ունի մեր Եկեղեցիին հաստատման պատմությունը։ Քրիստոս Ինք իսկ է անոր հիմնադիրը, երբ լուսեղեն սյունի մը մեջ, երկնային անհամար հրաշեն զորքերու թափորի մը շրջապատված, ոսկեգագաթեից մրճիկ-ի մը նման կայանա և ձեռքին Ոսկի Ուռը (ոսկեղեն ճյուղը) գետին զարնելով, Գրիգոր Լուսավորչի կպատվիրե հոն շինել հայության Մայր Տաճարը, Շողակաթ Ս. Էջմիածինը, Տաճարը, որ, ըստ Ագաթանգեղոսի, պիտի ըլլար Հայ Ազգին «Վեմն Հաստատութեան, անշարժութեան, և դայն առաջնորդող լոյսին հրեղէն»։*

*...Ս. Էջմիածնի և Գրիգոր Լուսավորչի անունները հայության կրոնական զգացումին, հոգեոր կյանքին, բարոյական նկարագրին խորհրդանիշներն եղեր են հնուց ի վեր։*

*Հովհաննես Երզնկացին, 13-րդ դարուն, երբ մեր երկիրը բարբարոսներու եղած է մոնղոլական տիրապետության տակ, անոր տառապահար ժողովուրդը կգոտեպնդե շեշտելով. թե ինչ աղետներու ալ որ դանվինք, մեր Ազգին ու Եկեղեցիին միությունը անքակտելի կմնա։ Կըսե. «Մի՛ է հայրն մեր, մի՛ և միակրոն Ազգն Հայոց և ի միոյ ծնեալ բազմութիւն պատուկաց ծնանի»։ Եվ Առաքել Դավրիժեցի պատմիչը, 17-րդ դարուն, ազգային համապարփակ զգացում մը կխտացնե պատմագիրի մը պես կուռ իր սա խոսքին մեջ. «Ի վերայ Աթոռոյն և Էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կայանայ կանգն...*

Մեր Եկեղեցիին Գլուխին հանդէպ հաւատարմութիւնը, մեր ազգային և կրօնական ինքնութեան պահպանման նախանձախնդրութիւնը դարերու խորերէն եկող աւանդութիւն մը չէ միայն, այլ բոլոր անոնց համար, որ ամրապինդ կամակցութեամբ մը կ'ուզեն հաստատել Ս. Էջմիածնի և Անոր Գահակալին հմայքն ու հեղինակութիւնը։

...Էջմիածնով ներկայացող և գլխաւորուող Հայաստանեայց Եկեղեցին, իր համբուրելի-րին մարդկային, յայնական և աւետարանական սիրով թաթախուն գաղափարներով, իր արարողութեանց, ծեսերուն ու երգեցողութիւններուն գեղարուեստական, բանաստեղծական նկարագրով, հոգեկան լիացումի աղբիւր մը եղեր է մեզի համար ամէն դարերէ ի վեր։

Ան միանգամայն եղեր է մեր մտաւոր յառաջդիմութեան, մեր մշակոյթին միակ դարբնոցը, պահապանն ու գանձարանը, մինչև նոր ժամանակներու մէջ։ Մեր մատենագրութեան ակիզբը Եկեղեցին է դրեր. եկեղեցականներ, որոնք վանականներ են եղեր, մեր գրական ոսկի ժառանգութեան վաստակաւորները, և երբ այսօր 20.000-ի չափ հայ ձեռագրեր կան աշխարհի մէջ, որ հայ հանճարը կներկայանան իր բազմաթիւ երեսներով — պատմութեան, իմաստասիրութեան, աստուածաբանութեան, բանաստեղծութեան, գիտութեան, գրչագրութեան և նկարչագրութեան մի արուեստ և այլն — այդ ձեռագրերը ամբողջ կազմուած են Հայաստանի հարիւրաւոր վանքերուն մութ խցիկներուն մէջ ապրող մեր սուրբ հայրերուն, որոնք Ազգին ու Եկեղեցիին սիրոյ կրակովը կայրէին միշտ։

Մեր Ազգին գոյութեան հզօր մէկ հենարանն է Հայաստանեայց Եկեղեցին, կենդանի և կենարար ուժ մը անոր համար, և այդպէս ալ պիտի շարունակէ մնալ, ցորքան կպահէ իր կուռ միութիւնը, Էջմիածնի անսասան հիմերուն վրայ։

Այս օրերս շատ կգրուի Հայրապետական Աթոռներու տեղափոխութեանց մասին, մեր պատմութեան մէջ, յանկայն հանեցնել ու պնդել, թէ Էջմիածին, իբրև վայր, անընդմիջայ դեր մը չէ ունեցած մեր Եկեղեցիին ղեկավարութեան մէջ։ Սխալ է այս տեսակէտը։ Մեր կաթողիկոսները ժամանակաւոր կերպով իրենց բնակարանները հաստատած են Հայաստանի զանազան մայրաքաղաքներուն մէջ, Դվին, Անի, Հռոմկլա, Սիս և այլն, մեր թագաւորներուն հետ միասին գտնուելու կամ ծանրակշիռ վտանգներու առջև Եկեղեցին անգլուխ չձգելու համար, բայց ուր որ ալ գացած են, միշտ իրենց բուն աթոռանիստին և մեր հաւատքին առաջին սրբավայրն ու հաւերժական ներշնչարանը Էջմիածինն են նկատած։ Եվ Էջմիածնի դերը ո՛չ թէ լոկ եղած է զգացական, իրեն հանդէպ սիրոյ և գորգուրանքի այդ արտահայտութեամբ, այլ դրական, շինիչ, գաղափարապաշտական հարցերու մէջ իր վճռական կերպարանքով, նոյնիսկ ի բացակայութեան Կաթողիկոսին։

... Ոչ, կարելի չէ որևէ կերպով անջատել Հայաստանեայց Եկեղեցիին վէմն ու Գերագոյն Աթոռ հանդիսացող Ս. Էջմիածինը հայութեան սրտին մէջ։ Կարելի չէ մթագնել ու նուազեցնել անոր Աթոռակալին՝ Ամենայն Հայոց Հայրապետին հանդէպ դարերէ ի վեր ցոյց տրուած լիակատար հաւատարմութեան, անվերապահ մեծարանքի և սիրոյ համազգային զգացումները, քանի որ անոր համար է, որ Հայ Եկեղեցիին կամարներուն տակ միշտ հնչեր է մեր նախնիքներուն սրբազան պատգամը. «Աստուածարեալ Քահանայապետ, որ աստուածատուր զօրութեամբ անձամբ ինքնիշխան գլուխ Եկեղեցւոյ ես կարգեալ»։

Ժողովուրդներու կյանքին մէջ բացարձակ արժէքներ կան, — և մեզի համար Էջմիածինն այդ արժէքներէն մէկն է, — որոնց պահպանութեան համար իրենց ամբողջական միակամութեամբ է, որ մարդերու զանգուածները ազգ մը կըլլան։

∗∗∗

Ամենայն Հայոց շնորհազարդ Հայրապետը, արժանաւոր հայորդը ազգանուէր Գէորգ Զ հոգելոյս Կաթողիկոսին, մեծ եռանդով ու լաւատեսութեամբ լծուած է Հայաստանեայց Եկեղեցին զօրացնելու և պայծառացնելու աշխատանքին։ Երիտասարդ, խոհուն, բարձր զարգացումի տէր, հեզ ու սրբակրօն, Ան Իր ամենօրեայ պաշտամունքին առարկան ըրած է մեր աննման Մայրենի Եկեղեցին, խորապէս գիտակից իր երկնատուր կոչումին։

Արտասահմանի հայ գաղութներուն Իր հովուական այցելութեան մեծիմաստ դէպքը անօրինակ ոգևորութիւն մը ստեղծեց մեր ժողովուրդին մէջ, սրտերը բարձրացուց, ջերմացուց ամեն տեղ։ Պզտիկ բան չէր, մեր ցիրուցան բեկորներուն համար, միևնոյն ժամ, սիրալիր, երանաւէտ զգացումներով ողողուիլ՝ իր Հայրապետին կենդանի անձը տեսնելով ու Անոր օրհնաձայն բարբառին ունկնդրելով։

Ու Իր խօսքը հայրական զօրաւոր փեղուն կոչ մը եղաւ Իր բոլոր զաւակներուն անխտիր, որպէսզի անոնք հայուն բարի համբաւը անաղարտ պահեն հյուրընկալ ազնիւ երկիրներու մէջ, իրենց ներքին վէճերուն վերջ տան զգաստութեամբ, ազգին միութիւնը չխախտեն և բոլորուին իրենց Մայրենի Եկեղեցիին շուրջ։

ութե, անհուսորեն ցավալի պարագայի մը մեջ, Իր եռանդագին ջանքերը, իրավախոհական Իր իմաստուն տնօրինությունները, այս ամիսներով համբերատար սպասումը՝ ապարդյուն մնացին, ազոր ահեղ պատասխանատվությունը կիյնա ուրիշներու վրա, որոնք մեր պատմության դատաստանին պիտի կոչվին։

Իր Ս. Աթոռը վերադարձավ Ան հաղթական, Սփյուռքի բովանդակ հայության հորդացող սերը, անոր ամբողջ եպիսկոպոսական դասուն անվարան ու անվերապահ հպատակությունն ու հավատարմությունը տանելով Իրեն հետ։ Վերադարձավ մեծ ազգի մը Եկեղեցվո Գլուխին՝ Քենթրբերիի Արքեպիսկոպոսին եղբայրական մեծարանքին առարկա ըլլալե վերջ, ազգին բոլոր զավակներուն, ամեն հարանվանության պատկանող, ընդհանուր հիացումովն ու գուրգուրանքովը շրջապատված։

Վեհափառ Հայրապետը մեր եկեղեցին վերաբերյալ Իր ծրագրերով մեծապես խանդավառած էր Սփյուռքի հայությունը, և այսօր անոնք իրականանալու ճամբուն մեջ մտած են։

Էջմիածնի Մայր Տաճարին թանկարժեք որմանկարները, հայ արվեստի շքեղ արտադրությունները, վերանորոգված են Հայաստանի կառավարության հոգածությամբ ու հատկացուցած մեծագումար վարկերով, և ասիկա շատոնց ծանոթ է արդեն ընթերցողներուն։ Գիտենք նաև, թե կարգ մը հիմնական աշխատանքներ դեռ կշարունակվին տեղացին, ինչպես Տաճարին մարմարապատումի հոյակապ գործը։

Նորին Ս. Օծությունը վերջերս բերկրանքով հայտարարեց, թե կառավարության կողմե Ս. Աթոռին պիտի վերադարձվին վանքին այն բոլոր շենքերն ու կալվածները, որոնք ցարդ անոր տրամադրության ներքև չէին գտնվեր։ Նույնպես մեծ գոհունակությամբ հաղորդեց, թե այս տարի բազմաթիվ եկեղեցիներ պիտի վերաբացվին Հայաստանի մեջ և դրացի երկիրներու հայաշատ վայրերը։

Ինչպես կտեսնվի, բարենպաստ պայմաններու տակ Հայաստանյայց Եկեղեցին վերածաղկումի նոր շրջան մը կսկսի Մայր Հայրենիքին մեջ, Ս. Աթոռին հովանիին տակ։

Վեհափառ Կաթողիկոսին մտահոգության միակ առարկան, ներկայիս, եկեղեցիի մշակներու, կրոնավորներու պակասն է, զոր ոգի ի բռին լրացնելու կաշխատի։ Այս պատճառով, վերաքննության ենթարկված է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին ծրագիրը, անոր ուսմանց մակարդակը ավելի բարձրացուցած և անոր տեսչության պաշտոնին հրավիրված է ձեռնհաս եկեղեցական մը՝ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալուստյան։ Ճեմարանի սաներուն թիվը, որ 40-ի մոտ է ներկայիս, պիտի հասնի մինչև 100-ի, և ավելորդ է ծանրանալ, թե երբ մեկ քանի տարիեն այս խոշոր խումբը, կրոնագիտական բարձրագույն ուսմամբ պատրաստված, հայ եկեղեցվո ավանդություններով սպառազեն, ազգային ոգիով և մշակույթով տոգորուն, իր կոչումին նվիրականության գիտակցությամբ սկսի մեր ժողովրդին ծառայել՝ որքան անգնահատելի բարիք մը պիտի ըլլա ադիկա։

Ճեմարանը, սակայն, ու նաև Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանը, անհրաժեշտ պետքը կզգան նյութական կարգ մը դյուրությանց, և ատոնց գլուխը կգտնվի կանոնավոր տպարան մը ունենալու ստիպողականությունը։

Ոչ միայն Ճեմարանին ուսումնական կարիքներուն, այլև ժողովրդին կրոնական դաստիարակության համար Վեհափառը մտադրած է բազմաթիվ հրատարակություններ կատարել, լույս ընծայելով նաև Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանությունը։ Եվ այս գեղեցիկ ու անհետաձգելի առաջադրությունները կարելի պիտի ըլլա իրականացնել միայն Ս. Աթոռին մեջ արդիական ամեն առավելություններ ներկայացնող տպարան մը ունենալով։

«Էջմիածին» ամսագիրը, Հայրապետանոցին պաշտոնաթերթը, հապաղումներով ու զանազան դժվարություններով լույս կտեսնե ներկա պայմաններուն մեջ։ Ինչպես հայտարարած է, Վեհափառ Հայրապետին բուռն փափագն է այդ ամսագիրը հրատարակել ավելի կանոնավորությամբ, ավելի խոշոր տպաքանակով և ավելի ճոխ բովանդակությամբ։

Անոնք, որ կկարդան «Էջմիածին» հանդեսը, իր այժմու վիճակին մեջ արդեն 50—60 էջերով, հոգեկան գոհացումի և մտավորական հետաքրքրության իրական աղբյուրներ կգտնեն անոր մեջ։ Մեր Եկեղեցվո կյանքին և Մայր Աթոռի գործունեության վերաբերյալ հաղորդագրություններե զատ, զուտ կրոնական հոդվածներ մեծագույն տեղը կգրավեն հոն, ու անոնք շատ անգամ ստորագրված են Ճեմարանի սաներուն կողմե, խոր համոզումով, հմտությամբ և գրելու տաղանդով, ինչ որ մխիթարական խոստում մըն է, թե իրենց կոչումին արժանի նոր մշակներ կհասնին։ Ամսագրին մասնավոր արժեք մը կուտան պատմական, բանասիրական ու հնագիտական սքանչելի ուսումնասիրությունները, զորս հոն կհրատարակեն մեր մշակույթին ճշմարիտ պաշտամունքը ունեցող Հայաստանի անքնաջան ու ներհուն գիտնականները։

Այս գրավիչ բովանդակությամբ կներկայանա այժմ «Էջմիածին» ամսագիրը, և կըր-

նանք երեւակայել, թէ ի՛նչ թանկագին ծա-
ռայութիւն մը պիտի բերէ ան, ծրագրը-
ւած ձեռնարկով, երբ Մայր Աթոռ իր հա-
րուստ տպարանը ունենայ։

Թերթերու մէջ կարդացինք, թէ Վեհափառ Հայրապետին պատասխանման ղրկուած միջոցին, քանի մը գաղութներ իրենց տպարանները խոստացած են։ Անոր եկեղեցականութեան պատրաստութեան համար։ Այսպէս, Միլան, Մանչեսթր, Մարսէյ, Փարիզ, հանձն առած են նորոգութեան ծախքերը Հայաստանի կարգ մը քաղաքներու, մեր ճարտարապետական յուշարձաններու, որոնք մեր եկեղեցական նմուշներն են ու պատմութեան նուիրական յուշարձաններն են։

Նորին Ս. Օծութեան ամերիկահայութեան բաժին հանած է Էջմիածնի տպարանին գործան պատրաստականութեան։ Այս նպատակով կազմուած հանձնախումբը, գլխաւորութեամբ Տիար Երուանդ Աղաթոնեանի, ամիսներէ ի վեր անդուլ կերպով աշխատակից է խմբով, թէ իր ջանքերը չխնայելով հայրենասիրութեամբ ամեն հայու կեդրոնին։ Հայրենակցական քանի մը միութիւններ, ազգային հաստատութիւններ և բարերար անհատներ, փայլուն թէ համեստ գիրքերու տէր, սիրով կատարած են կամ հանձն առած են կատարել իրենց պարտքը։

Այս ամիս և նոյեմբերին, տպարանի ձեռնարկին հանգանակն ու հանգանակութիւնները անոր պիտի ունենան բազմաթիւ վայրերու մէջ Ամերիկահայ գաղութին պատմութեան տպագրանութեան, գեղարուեստութեան, ազգային յուշ հանդէսներ խոր հանդիսութեան շքեղ ատենայեանները տուած է, ամեն անգամ որ ճգնաժամային կացութիւն մը տեղի գտնուած էր։

Էջմիածնի տպարանին համար անհրաժեշտ նկատուած 120.000 դոլարի գումարը գոյացնել շատ կենսական գործ մըն է, որուն գոհացում տալը պատիւ խնդիր մը պէտք է նկատենք մեզի համար։

Ամերիկահայութիւնը համոզուած է, այս գործունէութիւնը պարզեն Հայաստանեայց Եկեղեցւոյ համերժութեան կենդանի արտահայտութիւնը և գործերն ի վեր անոր միակ խորհրդանիշը եղող Ս. Էջմիածնի Աթոռին շնորհացած ու սրբազան Պատճառին։

Գ. ՆԻՐԱԳՈՅԵԱՆ

(Բոստոն. «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ. 21 Նոյեմբերի 1956 թ.)

## ՆՊԱՏԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

Ճիշդ տարի մը առաջ Էջմիածին գումարւած Ազգային-Եկեղեցական ժողովին մէջ, ուղղելով Վեհափառի բարի ակնարկին գիմաց, Ազգին ու Եկեղեցիին փառքին համար աշխատավորել գիտցող հոգևոր և աշխարհական մարդիկ, իրրև պարտականութիւն և նվիրագործութիւն, գործքա տալու ավանդական սովորութիւնը համերժացնելու մտումով, «Մայր Աթոռին համար տպարան մը հաստատենք» ձայնեցին միաբերան։

Այդպէս ձայնողները Ամերիկայի հայութեան պատւի խումբն էր, որ կարտասանէին արդարև։ Եվ անոնց այդ խոստումը հանձնրվեցավ հետագրաֆիկերուն՝ ի լուր աշխարհացրիվ հայերուն։ Իմացողներ ցնծացին և իրենց ուրախութեան մասնակից բրին իրենց բարեկամները, իրենց դրացիները։

Ուրեմն նպատակ մըն էր, որ կծանուցվէր, վսեմ նպատակ մը, որուն պիտի հավատար, որուն համար հարկավ պիտի զոհարերեր մեր ցեղին սա կարեւոր մասնիկը, որ կանչվի Ամերիկայի հայութիւն...։

— Որո՞ւն, որքա՞ն պետք է բերել մեր բնծան հօգուտ Մայր Աթոռի տպարանին։

Եվ կկրկնվին, կրագմապատկվին այս կանչերը...։ Կապչիր, կ՚իմանար հայտնարերված այդ ոգիին վրա, կ՚ըմբիր...։

— Այրի՛ք հայ աղբրտիք, հազար ազրի՛ք։

Առտուն կանուխ հազիվ գրասենյակ իջած, հեռախոսի ձայն մը խանդադին կըսէ.

— Երեկ Գեղերոսնի փողրաթիվ հայեր 2.000 դոլար նվիրեցին Մայր Աթոռի տպարանին համար։

«Որանի՜ անոնց, որ հիշատակ մ՚ունին ի Սիոն».— կարտասանեն մեր շրթները...։ Ահա՛ առաջին փայլուն օրինակը, ապացույցն իսկ նպատակի մը իրագործման։ Ահա՛ հաւատարմութեան և նվիրումի ոգին, զոր առաքինի, ավանդապաշտ մեր ժողովուրդը կուզէ, կփափագի իրեն տրված ամեն առիթներով այսպէս ցույց տալ յուսավորչահաստատ Ս. Աթոռին, որուն վերև դարե ի դար վառ կմնա այն սրբալույս կանթեղը, որ կլուսավորե հայ մարդոց հոգիները ամեն տեղ։

Ցաթորյա ձեր նոյնանման խանդերան հաճախանքեն արդշիս հոսակավին, ու նույն ծանոթ, սակայն այս անգամ արտախութեան զգայութենէն զօրացող ձայնը կըսէ.

— Նյու-Արքի ափ մը հայեր 2.000 դոլար նվիրեցին երեկ Մայր Աթոռին....։

Ունինք արդեն հիմա ձեր սեղանին վրա մեսրոպյան տառերով լրագիրներ, ուր բարձրաձայն կկարդաք նվիրատվությունները հիմնադրամներու, հայրենակցական միությունները, անհատ հայերու....

— Մալաթիացի, խարբերդցի հայեր բերած են մեծաքանակ նվերներ Մայր Աթոռին համար և չմշկածագցի, շապին-գարահիսարցի հայերու փոքրիկ ընծաներուն վրա, կհավատամ, պիտի բերել ուզեն իրենց նվերները սեբաստացի, տիգրանակերտցի, պոլսեցի, զմյուռնացի և ամեն տեղացի հայեր....։

⁂

Առեր եք ձեր ծունկերուն վրա մեծադիր նկարը Ս. Էջմիածնա Մայր Տաճարին։ Կգիտեք այդ հրաշակերտ կառույցը հնադարյան։ Ձեր մտքին, ձեր լեզվին վրա կուգան կանգ առնել անունները շինարար, ստեղծագործող, սքանչելատիպ հայրապետներուն, որոնք մտածեր, բաներ ու տառապեր են Հայ Եկեղեցվո պայծառության համար։ Անոնց հորինած աղոթքներն ու շարականները բառ առ բառ, տող առ տող հիմա կարձակվին ձեր լեզվեն։

Դարերը իրենց հողմերովն ու սարսուռներով, իրենց կրակե լեզվակներովն ու արյան գետակներովը անգամ չեն կրցած սասանեցնել Հայ Եկեղեցին։ Այդ իրողության գիտակցությունը կամրապնդե հայուն մեջ հավատքը, որ Վաղարշապատի լլրանց վրա և Ավարայրի դաշտին մեջ ավանդվեցավ ռազմիկ ու ազատասեր մեր պապերուն։

Անոնցմե մնացած թանկագին ժառանգներեն մեծասքանչ կոթողն է այս օրվան Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, ուր, լուսավորչահաստատ Գահին վրա բազմած կտեսնենք Մեծ Հավատավորը, որուն սրբատառ պատգամները կներշնչեն, կոգեորեն համայն աշխարհի հայությունը։ Չուսյ, սակայն անկեղծ ու խանդակաթ հրավերները Անոր կարագացնեն կթոտ քայլերը հայ ցեղի զավակներուն՝ ուխտի երթալու ի Մայր Աթոռ, ծնրադրելու, երկրպագելու այն սեղանին առջև, ուր իրենց հետ և իրենց կուշտին պիտի զգան ներկայությունը մեծագործ Վեհափառներուն։

Նպատակ մըն է ուրեմն, որուն իրագործումին համար ամերիկահայության կոչ եղած է Սրբազան Հայրապետին կողմե։ Լավ գիտենք, որ վաղը երբ իրականանա այդ նպատակը, Մայր Աթոռի տպարանի մամուլներուն թավալումին հետ պիտի դեզ առ դեզ, գիրք առ գիրք սեղաններուն վրա կուտակվին էջերը այն ծավալուն գրքերուն, որոնք պիտի գործածվին Հայ Եկեղեցվո մեջ ի մխիթարություն հայ հավատացյալներուն։

— Պիտի հաջողի մեր այս նպատակը, մեր քույրերուն և եղբայրներուն զոհաբերության շնորհիվ։

— Ամերիկայի հայությունը հուսախաբ պիտի չընե Վեհափառ Հայրապետը, ես ադոր կհավատամ։

Այս ինչքա՛ն հավատք, այս ինչքա՛ն անկեղծություն և ինչքա՛ն ինքնավստահություն հավաքելով հանձնած ես այս տղուն, Տե՛ր, որ կկոչվի Աղաճանյան Երվանդ, որուն թիկնեղ, ամուր ուսերուն վրա հաճեր ես դնել Մայր Աթոռի տպարանի սարքվածքին համար բացված արշավին շատ ծանր, բայց հաճելի պարտականությունը։

Տո՛ւր, Տե՛ր, ուժ, տո՛ւր կամք (մանավանդ սեր ու գործակցություն) բոլոր Երվանդներուն, որոնք պիտի ուզեն ամեն գնով սրբագնագույն այս նպատակը տանիլ ի հանգրվան։

Ս. ՄԱՆՎԵԼՅԱՆ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 26 նոյեմբերի 1956 թ.)

## ՆՈՐ ՄԱՏՌԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՖԻԱՅՈՒՄ

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետին ուղղված դեկտեմբեր 9 թվակիր պաշտոնական մի նամակով, Սոֆիայի հայոց եկեղեցական խորհուրդը ուրախությամբ տեղեկացնում է Վեհափառ Հայրապետին, որ վերջերս, խանդավառ մթնոլորտում և բարեպաշտ հավատացյալների ներկայությամբ, հանդիսավորապես կատարվել է Սոֆիայի հայոց գերեզմանատան մեջ հայ մատռան հիմնարկեքի արարողությունը։

Մատռան հիմնարկեքի օրհնության մասնակցել են Սոֆիայի քահանայական դասը, դպրաց դասը, գլխավորությամբ ավագերեց արժանապատիվ Տ. Վահան քահանա Փափազյանի։ Այս ուրախ առթիվ ներկա էին նաև Պլովդիվից հատկապես հրավիրված

Պլովդիվի ավագերեց և կրոնական խորհըրդի ատենապետ արժանապատիվ Տ. Գևորգ քահանա Սարյանը և Կոլարովգրադից հրավիրված արժանապատիվ Տ. Գարեգին քահանա Տյուլկերյանը։ Հավատացյալներին՝ համախմբվել Հայ Եկեղեցու և առաջնորդարանի շուրջ, միասնական ուժերով և համագործակցությամբ աշխատել, ի շահ թեմի ազգային-եկեղեցական կյանքի և հօգուտ հայ ժողովրդի։



Սոֆիայի հայոց գերեզմանատան մատրան հիմնարկեքի արարողությունը

*Մատրան հիմնարկեքի օրհնությունը կատարելուց հետո, եկեղեցական խորհրդի ատենապետ պ. Հայրապետ Գույումճյանը կարդացել է գրավոր մի ուղերձ, այդ առթիվ շնորհակալություն հայտնելով Բուլղար բարեխնամ կառավարության, և կոչ է արել հայ*

*Նոր մատրան շենքը արդեն բավականին բարձրացել է։ Սոֆիայի առաջնորդարանը, ազգային-եկեղեցական մարմինները որոշել են մեծ շուքով և հանդիսավորությամբ կատարել մատրան նավակատիքի և օծման հանդիսությունները։*



# ԴԵՐԵՆԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ



Դեկտեմբերի 6-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, ութսունամյա հասակում, վախճանվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ, Հայաստանի Սովետական գրողների միության նախագահության և վարչության անդամ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գեղարվեստական խոսքի մեծ վարպետ Դերենիկ Կարապետի Դեմիրճյանը:

Դերենիկ Դեմիրճյանը իրավամբ ճանաչվել և մեծարվել է որպես հայ բանաստեղծության և գեղարվեստական արձակի լավագույն ներկայացուցիչներից մեկը, ավելի քան իր վաթսուն տարվա գրական վաստակով։

Հայ ընթերցող հասարակությունը միշտ էլ դուրգուրանքով ու հարաճուն համակրանքով է շրջապատել իր սիրելի վարպետին։ Դե-

ճյանի ստեղծագործությունը զարգացել է մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի հետ զուգընթացաբար, ավելի ու ավելի՝ իրականության խորունկ ճանաչումով և ապրված է եղել առավել հայրենասիրությամբ:

Դեմիրճյանը, հայրենի գրականության մատուցած իր ծառայությունների համար, պարգևատրվել է պետական շքանշաններով. 1930 թվականին նա պարգևատրված է Լենինի շքանշանով, իսկ 1949 և 1956 թվականներին՝ Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով:

Դեմիրճյանի մահը մեծ կորուստ է հայ գրականության համար:

Մեծանուն գրողի թաղումը կատարվեց համազգային վշտի և սգի մեջ: Դագաղը դրվեց Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում. Դեկտեմբերի 8-ին, սգո մեղեդիների հնչյունների տակ, հայ ժողովուրդը տողանցեց մեծանուն գրողի դագաղի առաջ, մատուցելով նրան իր վերջին հարգանքը: Սգո հսկայական թափորով մեծանուն գրողի դագաղը առաջնորդվեց Պանթեոն, որտեղ, հրաժեշտի խոսքերից հետո, Դերենիկ Դեմիրճյանի մարմինը ամփոփվեց գերեզմանում:

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի անունից թաղման հանդեսին ներկա գտնվեց Հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մուշեղ վարդապետների գլխավորությամբ մի պատվիրակություն, որը հանուն Վեհափառ Հայրապետի գեղեցիկ ծաղկեպսակ դրեց դագաղի վրա:

Մեծանուն գրողի մահվան առթիվ Վեհափառ Հայրապետը ուղղեց հետևյալ ցավակցական գրությունը.

«Այսօր, երբ սգակիր հայ ժողովուրդը հողին է հանձնում մարմինը իր տաղանդավոր, բազմավաստակ զավակներից մեկի՝ մեծ վիպասան Դերենիկ Դեմիրճյանի, Մենք ևս վշտահար, հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, գալիս ենք մեր հարգանքը մատուցելու աղոթելով, որ Տերը խաղաղությամբ ընդունի հանգուցյալի հոգին և նրա անուն հիշատակն ու բազմերախտ գործը մնան հավիտյան լուսավոր և անթառամ ի փառս հայ ստեղծագործ հանճարի»:

Հավիտենական հանգի՜ստ մեծ գրողի վաստակավոր հոգուն:



# ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Անուններ կան, ժողովրդի համար հարազատ ու ընտանի անուններ, որոնք մահվամբ մոռացության տրվելու փոխարեն, ավելի են ջերմանում։ Մեր ժողովուրդն ունի իր անունները, որոնց հանդեպ տածում է անսահման սեր ու երախտագիտություն։ Նրանց շարքում բացարձակ վստահությունն ու իրավունքն ունենք ավելացնելու Դերենիկ Դեմիրճյանի պսակավոր անունը։

Մահացավ նա, և մեր երախտապարտ ժողովուրդը տվեց նրան իր վերջին հրաժեշտը հուզումով և արտասուքով։ Ժողովրդի արցունքը ճիշտ գնահատելու համար, պետք է արժեորել գիտենանք սուգը, որով պայմանավորված է նա։ Այժմ այդ սուգը Դեմիրճյանն է իր տրտում մահով։

Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թվականին Ախալքալաքում։ Նախնական կրթությունը տեղի ծխական դպրոցում ստանալուց հետո, 1892 թվականին ընդունվում է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Ուսանողական տարիներին իսկ «Տարազ» և «Մուրճ» ամսագրերում տպագրվում են նրա առաջին բանաստեղծությունները։ Ճեմարանի լրիվ դասընթացը չավարտած, ուսումը շարունակում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտում է 1897 թվականին։ Դժվարին պայմանների մեջ է անցկացնում իր կյանքը։ Նրա երգերի առաջին ժողովածուն լույս է տեսնում 1899 թվականին։ 1905 թվականին մեկնում է Շվեյցարիա, սովորում է Ժնևի համալսարանում։ 1910 թվականին վերադառնում է Թիֆլիս և զբաղվում ուսուցչությամբ։ 1920 թվականին փոխադրվում է Երևան, որտեղ ապրում է իր ստեղծագործական կյանքը մինչև խորին ծերություն և մահ։

Դերենիկ Դեմիրճյանը մեր գրականության մեծ մշակն է։ Շատ վաղուց նա բերել է իր բրտինքն ու վաստակը, և իր առանձնահատուկ թարմությամբ ու բույրով կենդանացրել է իր ածուն հայ գրականության ընդարձակ անդաստանի մեջ։

Նա իր անդրանիկ խոսքն ասել է չափածո երգով։ Նա բանաստեղծ էր դյուրազգաց երիտասարդի սրտով ու ավյունով, և որպես այդպիսին նա ունեցել է իր տրտում մտորումները, իր մատղաշ մատները սահեցրել է մարդկային դողդոջուն ապրումների և հույզերի ստեղնաշարի վրա։ Իրեն հատուկ վայելչությամբ ու խոհականությամբ դաշնավորել է իր երգերը, որոնց մեջ կա կարեկցող ու գուրգուրող սրտի թախիծ, կա տարտամ տխրություն, և կան մանավանդ խորհող մարդու աներազ որոնումներ։ Նրա բանաստեղծությունները հուզում են առանձնապես այն ժամանակ, երբ բանաստեղծի միտքն ու հոգին պատվում են «մարդ» և «կյանք» տանջանքների շուրջ ու կազմում են իրենց ուրույն եզրակացությունը։

Ահա մի քանի տող նրա երգերից.

Մի՛ լար, մի՛ թացիր աչերդ,
Աշխրհիդ լույսն ափսոս է, կանցնի,
Մի՛ մխիր, վարդ գարուն հասակդ.
Մի օր է, վառ մայիս, կանցնի...։

...Էս կյանքն էլ հեքիաթ է էսպես,
Մի՛ շտապիր, մի՛ տանջվիր, կանցնի...։

Դժվար է նրա երգերի մեջ անջատել վշտի խորությունը և ձևը, մանավանդ դժվար է նրան անուն տալ։ Հուսահատությո՞ւն է դա, թե՞ պարզապես մարդասիրական հույսերի աղոտ թևաթափումը։ Ես կասեի և՛ այս, և՛ այն։

Հայ ժողովրդի ողբերգական անցյալը և այդ անցյալում հայ ժողովրդի ցուցաբերած հերոսական պայքարն ու տոկունությունը Դերենիկ Դեմիրճյանի հոգուն խոսել են նրա ստեղծագործական կյանքի առաջին իսկ տարիներին։ «Լենկթիմուր» պոեմը այդ վկայությունն է բերում մեզ։ Այնտեղ կա մեր ժողովրդի դառնագին տառապանքը, հոշոտումը, կսկիծը, Լենկ-Թիմուր կոչված վայրագ բռնակալի Հայաստան կատարած արշավանքի պատճառով։

Ընդգծելին այս պոեմի գաղափարական արժեքների մեջ բանաստեղծի ունեցած վստահությունն է իր ժողովրդի ուժի և վերջնական հաղթանակի նկատմամբ.

Քանի գիշերներ եկել են անցել
Ու սուրի պես Հայոց Աշխարհի՜ց…
Երթան ու չգան անցած գիշերներ,
Կանցնի այս մեկն էլ Հայոց
Աշխարհի՜ց…

Այս գիտակցությունը անհրաժեշտություն էր այն օրերին, երբ հայ ժողովուրդը ապրում էր իր հերթական մեծ ծանր ողբերգը: Կոտորն էր հայ ժողովրդի ժամանակը և մարդիկ չար՝ հայ ժողովրդի հանդեպ: Հուսահատությունը ընդհանուր էր, անկումից դուրս գալու հնարավորները մշուշված էին:

Այս դաժանի արվեստը չունի իր անփոխարեն երանգները չեն, բայց ունի իր նմանօրինակները ընդհանրապես:

Դերենիկ Դեմիրճյանը չափածո խոսքով է, որ պիտի ներկայանար մեր գրականության պատմության և մեր ժողովրդի կյանքին: Արձակագրությունը եղավ այն մատանքին, որով նա բառ առ բառ, խոհանքով ու հույզերով, արժեք առ արժեք մատուցվեց գրական աշխարհին, անցնելով ազգային սահմաններից շատ ավելի հեռուն:

Նախքան 1920 թվականը տպագրվեցին Դեմիրճյանի մի քանի պատմվածքները, որոնք որոշակի կերպով վկայեցին հեղինակի տաղանդը և նշեցին նրա հաջողության ուղիները: Այդ պատմվածքները նյութ ունեին ժամանակակից հայ կյանքի տարբեր հանգրվանները և այդ հանգրվանների մեջ առած և առնող մարդկանց տարբեր խմբերը: Այդ կյանքի բնորոշ հատկությունը խայտաբղետությունն է, միաժամանակ՝ մի քիչ գորշ և բավականաչափ աղքատ…: «Ավելորդներ»-ի ավելորդությունը, նրանց դառնագին ողբերգությունը, հարազատ ժողովրդի տառապալից առօրյան մի կողմից, մյուս կողմից ամեն գույնի գգացմունքների առուծախը բախվում են այդ պատմվածքների մեջ և գեղարվեստական պատկերավորում ստանալով ստեղծում են կյանքի կենդանի թատերաբեմ, որտեղ յուրաքանչյուրն ունի իր դերն ու տեղը: Պատմվածքներն ունեն հետևյալ անունները. «Ավելորդը», «Ջութակ և սրինգ», «Անփականություն», «Առա-Խոսքը», «Ժպիտը»:

Դերենիկ Դեմիրճյանը իր հարազատ ժողովրդի հետ միասին ունեցավ իր ստեղծագործական կյանքի բեկման շրջանը, երբ Հայրենի հողի վրա ստեղծվեցին նոր կարգ ու ձև, նոր իրավունքներ ու պայմաններ: Գրողը կողմնորոշվեց ճիշտ և արագ: Նոր մարդիկ նրա շուրջը վերակառուցում էին իրենց կյանքը, հոգեբանությունը, կոփում էին իրենց իղձերն ու տրամադրությունները, որդեգրում էին նոր մտայնություն, կազմում էին իրենց ուրույն գիտակցությունը: Այս բոլոր «փոխել» գրողի հայացքի և սրտի առաջ անտես լինել չէին կարող: Գրողը չէր կարող վերլուծության չենթարկել կյանքի և մարդկանց այդ արմատական հեղաշրջումը: Եվ ահա լույս են տեսնում Դեմիրճյանի նոր պատմվածքները իրենց բազմաթիվ առանձնահատկություններով: Այդ պատմվածքների մեջ կա կյանքի այս կամ այն տիպական կողմը և կա տիպական մարդ իր ներաշխարհով, իր հոգեբանությամբ և իր հույզերով: Տաղանդավոր գրողը հմուտ վարպետությամբ ծաղկաքաղ է արել այդ կյանքի նորաստեղծ բազմերանգ ծաղկանոցներից և փնջելով համարածը, ստեղծել է իր բուրումնավետ ծաղկեփունջը: Դեմիրճյանի այս շրջանի գրական ստեղծագործությունը իր բազմազան նյութով ու բովանդակությամբ կարելի է բնութագրել որպես նկարագրերի և հոգեբանությանց ճշմարտացի ու ամբողջական բացահայտում: Նա կարողանում է արվեստագետի նրբությամբ տալ կյանքի փոքր ու մեծ փայլփլումների պատկերը, նկարագրերի և բնավորությանց բազմազան դերի ճշգրիտ վերարտադրությունը:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներն էին: Տագնապը համատարածական է, ժամանակը՝ մռայլ: Մարդիկ ալեկոծ ապրումների և խորհրդածությունների մեջ են, պայքարում են պրկված մկաններով: Հայ ժողովուրդն էլ ավեց իր կարելին վերջնական հաղթանակի համար: Զինվորագրվեց հայ աշխատավորը, ուսուցիչը, բժիշկը, ինժեները, զինվորագրվեց նաև հայ գրողը, այդ թվում և Դերենիկ Դեմիրճյանը: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նոր ու տարբեր երանգ է ստանում Դեմիրճյանի ստեղծագործությունը: Նա հայրենասեր քաղաքացու ազնիվ գիտակցությամբ վերցրեց գրիչը և իր սրտի արյունով գրեց հայրենաշունչ ստեղծագործություններ, որոնց մեջ գովերգվում էին ժողովրդական հայրենասիրությունը, ժողովրդի համարական ուժը, թշնամուն տալու դիմադրության անհրաժեշտությունը և հաղթանակի նկատմամբ պայծառ հավատը («Երջանկավածի ավանդը», «Անխուսափելին», «Վերադարձ», «Մնողները»):

Դերենիկ Դեմիրճյանի պատմվածքների արվեստը ինքնուրույն է և բարձր: Կառուցվածքը կուռ, վարպետորեն կերտված: Հեղինակը կարողացել է իր հերոսների անհատականությունը ակնբախ դարձնել, կարողացել է հոգիների մեջ սողոսկել և գտնել տիպականը:

Դեմիրճյանը բազմաժանր գրող էր: Նա դրամատիկ բանաստեղծությունների, հերոսապատում պոեմի, հոգեբանական և խոհական պատմվածքների հեղինակ չէ միայն:

Նրա բեղմնավոր գրչի երկունքն են նաև մի շարք թատերգություններ, որոնց նյութը հայ ժողովրդի պատմական անցյալն է, ժողովրդական ստեղծագործության ակունքներից քաղված դրվագներ և ժամանակակից կյանքը («Ֆոսֆորային շողը», «Կապուտանը», «Նապոլեոն Կորկոտյանը», «Քաջ Նազար», «Երկիր Հայրենի»)։ Պետք է ընդգծել առանձնապես վերջին երկուսի արժեքը։ «Քաջ Նազար»-ը հայ ժողովրդի իմաստուն և սպանիչ քրքիջն է բոլոր այն բախտախնդիրների հասցեին, որոնք պատահականությունների բերումով ժողովուրդ ղեկավարելու բախտ են ունենում, ժողովրդի տառապանքների և թափվող արյան հանդեպ ցուցաբերելով անզգամություն և բութ հոգի։ «Քաջ Նազար»-ը միաժամանակ ժողովրդի խորունկ իմաստության և հաղթող ուժի հաստատումն է։ Այստեղ հեղինակը իր յուրահատուկ ծաղրը զուգորդել է ժողովրդականի հետ, ստեղծելով գեղարվեստական լիապես հաջողված այս ստեղծագործությունը։

«Երկիր Հայրենի» պատմական դրամայի մեջ պատկերված է հայ ժողովրդի անձնուրաց պայքարը նենգամիտ հույների դեմ, նյութը վերցված է Բագրատունյաց թագավոր Գագիկ Բ-ի կյանքից (11-րդ դար)։ Այս դրամայի մեջ գեղարվեստական ճշմարտացիությամբ վերարտադրվում է մեր պատմական անցյալը իր բնորոշ կողմերով, մարդկանցով։ Հուզիչ է մանավանդ պարզ մարդկանց, շինարար վարպետների, հասարակ ժողովրդի հայրենասիրությունը, անձնուրաց պայքարը։ «Երկիր Հայրենի» դրաման մինչ այսօր մնում է հայ բեմի վրա, հայրենասիրական լիցք հաղորդելով հանդիսատեսներին։

Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործությունների փառապսակը սակայն «Վարդանանք» պատմական վեպն է, որտեղ վիպասանի տաղանդը հանդես է գալիս իր բոլոր երանգներով։ Պատմավեպի գաղափարական բովանդակությունը հայրենասիրությունն է և անձնուրաց պայքարը հանուն հայ հողի, հայ հոգու ազատության։ 451 թվականին ամեն կողմից և ամեն կերպ շղթայված հայ ժողովուրդը կռվի ելավ պարսիկ բռնակալության դեմ և վճռեց իր արյունով շահել իր ազատությունը, սրբագործել Հայրենի Հողը, անաղարտ պահել մայրենի լեզուն և պապենական հավատը։ Ազգային արժանապատվության ինքնագիտակցությունը մարտիրոսության մղեց մեր ժողովուրդը, որը նախընտրեց գիտակցված մահը ստրուկի կյանքից։

Բարձր է «Վարդանանք» վեպի արվեստը։ Արտակարգ գրական վարպետությամբ է գրված նա։ Կերպարների տիպականացումը պսակված է հաջողությամբ, յուրաքանչյուր մարդ ունի իր անհատականությունը։ Հակադիր բնավորությունների բնորոշ գծերը զգալի են առաջին իսկ տպավորություններից։ Բացասական տրամադրությունների և գործունեության տեր մարդիկ ունեն նույնչափ զորավոր նկարագիր, ինչքան այդ առկա է դրական կերպարների, ժողովրդական հերոսների մոտ։ Հակադիր տրամադրությունների և մարդկանց միջև տեղի ունեցած բախումները ուժգին են, բայց խորապես համոզիչ։ Պատմավեպի լեզուն հարուստ է, ինքնատիպ և կենդանի։ Ոճը գունեղ է, ճկուն և փարթամ։

Հազա՜ր ափսոս, որ անավարտ մնաց մեծանուն գրողի «Մեսրոպ Մաշտոց» պատմավեպը։

Այս է գրականության մեծ մշակ և խոսքի մեծ վարպետ Դերենիկ Դեմիրճյանի հոյակապ ստեղծագործությունների համառոտ ուրվագիծը։

Դերենիկ Դեմիրճյանի գրական ողջ ստեղծագործությունն իր արժանի տեղն է գրավում հայ դպրության ոսկյա գանձարանում։

ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ



# ՀԱՆԳԻՍՏ
# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԽՈՐԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ
## (1872—1956)



Դեկտեմբերի 2-ի գիշերը, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, ի Տեր հանգավ Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։

Հանգուցյալը ծնվել է 1872 թվականին Վան քաղաքում։ Մանուկ հասակից զրկվելով ծնողներից, սովորում է Վարագա վանքի գիշերօթիկ հոգևոր դպրոցը, որն ավարտելուց հետո երկար տարիներ զբաղվում է ուսուցչությամբ։ Համաշխարհային առաջին պատերազմի օրերին նա հազարավոր հայերի հետ գաղթում է Հայաստան և բնակություն հաստատում Երևանում, որտեղ ձեռնարկում է հայ որբ մանուկների հավաքագրման շնորհակալ աշխատանքին։ 1919 թվականին Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի ձեռամբ նա ձեռնադրվում է քահանա Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վրա։ Երկար տարիներ նա եղել է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Զորավոր եկեղեցիների ավագերեցը, հավատացյալ ժողովրդի սիրված հովիվը։

1940 թվականից սկսած հանգուցյալը պաշտոնավարում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում։

Տ. Խորեն ավագ քահանան աչքի էր ընկնում իր եկեղեցական հմտությամբ և ծառայասիրությամբ ու սիրով դեպի Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը։

Հանգուցյալը իր ունեցած սեփական եկեղեցական գրքերն ու սպասները կտակել է Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցուն։

Դեկտեմբերի 5-ին պատարագից և հանգուցյալի վերջին օծումը կատարեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Մարմինը ամփոփվեց Ս. Գայանեի վանքի գավթում։

Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանի մահը մեծ կորուստ է Մայր Աթոռի համար։ Նա մեր լավագույն ու սիրված քահանաներից էր, քաջահմուտ եկեղեցական երգեցողության, նախանձախնդիր և Մայր Աթոռի պայծառության նվիրված ազնիվ հոգևորական։ Նրա խնկելի հիշատակը միշտ վառ կմնա իր հավատացյալ ժողովրդի սրտում և Մայր Աթոռի միաբանության հոգում։

Հավիտենական հանգի՜ստ իր հոգուն։

Յիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի։

# ՀԱՆԳԻՍՏ
# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ
## (1888—1956)



Նոյեմբերի 16-ին, Լենինականում, իր բնակարանում վախճանվեց Ս. Աստվածածին եկեղեցու ծխատեր արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Գևորգյանը։

Հանգուցյալ Տ. Գևորգ ավագ քահանա Գևորգյանը ծնվել է 1888 թվականին Աղինի շրջանի Սառնաղբյուր գյուղում։ Հանգուցյալի հայրը՝ Ղազար Գևորգյան, մասնավոր հոգածություն է ցուցաբերել փոքրիկ Համազասպի հանդեպ, նրա մեջ տեսնելով հոգևորականի կոչում և նվիրում։ Նա իր նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում. Իր քաղցրահնչյուն ձայնի և հոգևորական ասպարեզի հանդեպ ցույց տված նվիրման շնորհիվ սիրելի դառնալով իր հայրենակիցներին, Երջանկահիշատակ Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի կարգադրությամբ 1916 թվականին քահանա է ձեռնադրվում իր գյուղի համար, որտեղ քահանայագործում է մինչև 1928 թվականը։ 1928 թվականից հետո Թբիլիսիի առաջնորդարանի կարգադրությամբ 12 տարի քահանայագործում է Կախեթի եկեղեցում, արժանանալով հավատացյալների հարգանքին։

1940—1947 թվականներին պաշտոնավարում է Թբիլիսիում։ Երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի կարգադրությամբ 1947 թվականին ծխատեր քահանա է նշանակվում Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում, որտեղ քահանայագործում է մինչև իր մահը։

Հոգելույս Տ. Գևորգ Զ Հայրապետը, գնահատելով Տ. Գևորգ քահանայի անձնվեր ծառայությունը Հայ եկեղեցուն և ժողովրդին, լանջախաչ էր շնորհել նրան, իսկ Նորին Ս. Օծություն Տ. Վազգեն Ա Հայրապետը, ներկա տարվա հունիս ամսին, հայրապետական կոնդակով ավագ քահանայության պատվին էր արժանացրել հանգուցյալին։

Տ. Գևորգ քահանայի մահով մեր քահանայական դասը կորցնում է մի արժանավոր և իր կոչման գիտակ հոգևորական։ Շիրակցի հավատացյալների սրտում միշտ կենդանի կմնա իրենց հոգևոր հովվի՝ լուսահոգի Տ. Գևորգ քահանա Գևորգյանի պայծառ անունն ու հիշատակը։

Հավիտենական հանգի՛ստ իր աճյունին և խաղաղությո՛ւն իր հոգուն։

# ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ

Արտերկրի Սփյուռքի մի շարք թերթերում երևաց մի հաղորդագրություն այն մասին, որ նոյեմբերի 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Լիբանան են մեկնած գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը՝ հատուկ առաքելությամբ:

Այս առթիվ Մայր Աթոռի դիվանատունը լիազորված է պաշտոնապես հայտարարելու, որ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և հոգեշնորհ Տ. Շահե վարդապետ Աճեմյանը նոյեմբերի 9-ին Մոսկվայից մեկնել են դեպի Ցյուրիխ և նրանք ոչ մի հանձնարարություն չեն ունեցել ոչ մի հարցի կապակցությամբ՝ հանուն Վեհափառ Հայրապետի բանակցություններ վարելու Լիբանանում կամ այլուր:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ

5 հունվարի 1956 թ.
Էջմիածին

# ՑԱՆԿ

## «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1956 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

### I. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ


Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և պետական անձնավորությունների միջև փոխանակված ողջույնի հեռագրերը. I՝ 3։

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի պատգամները թեմակալ առաջնորդներին և առաջնորդական տեղապահներին, հոգևոր դասուն, թեմական և եկեղեցական խորհուրդներին, հայրենասիրական, բարեսիրական կազմակերպություններին ու բոլոր հավատացյալներին և Վեհափառ Հայրապետի անունով ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները. I՝ 12

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի պատգամները Կոստանդնուպոլսի Պատրիարքության, Կիլիկիո Կաթողիկոսության և Երուսաղեմի Պատրիարքության և Վեհափառ Հայրապետի անունով ստացված շնորհավորական հեռագրերը. I՝ 6։

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և քույր եկեղեցիների պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները. I՝ 7։

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի անդրանիկ կոնդակը. II՝ 3։

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի արտասահմանյան ուղևորությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձի կապակցությամբ ուղարկված հեռագրերը. IV—V՝ 20։

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության առաջին տարեդարձի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով ստացված շնորհավորական հեռագրերն ու գրությունները. X՝ 6։

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի պատասխանները իր գահակալության առաջին տարեդարձի առթիվ ստացված շնորհավորական հեռագրերին ու գրություններին. X՝ 10։

Անթիլիասի իրադարձությունների կապակցությամբ փոխանակված հեռագրեր. VIII—IX՝ 12։

Անթիլիասի վերջին իրադարձությունների կապակցությամբ փոխանակված հեռագրեր. VII՝ 11։

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանական ընդհանուր ժողովի դիվանի հեռագիրը Վեհափառ Հայրապետին. X՝ 22։

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանի մահվան առթիվ փոխանակված հեռագրեր. X՝ 62։

Լիբանանում տեղի ունեցած երկրաշարժի առիթով փոխանակված հեռագրեր. IV—V՝ 17։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36-րդ տարեդարձի կապակցությամբ փոխանակված հեռագրեր. XI—XII՝ 13։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 39-րդ տարեդարձի կապակցությամբ փոխանակված հեռագրեր. XI—XII՝ 13։

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրության առնչությամբ փոխանակված հեռագրեր. VI՝ 8։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը, գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանին Անգլիայի Հայոց Հայրապետական պատվիրակ նշանակելու մասին. VIII—IX՝ 3։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիսնամյա հոբելյանի առիթով. VI՝ 3։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարիչ-պատվիրակ պարոն Վահան Մալեզյանի ութսունհինգամյա հոբելյանի առիթով. VII՝ 7։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանին արքության պատիվ շնորհելու առիթով. VII՝ 3։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հյուսիսային Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության. XI—XII՝ 3։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանին արքության պատիվ շնորհելու մասին. XI—XII՝ 6։

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հեռագիրը Լիբանանի Հանրապետության Նախագահ պ. Քամիլ Շամունին Անթիլիասի վերջին իրադարձությունների առնչությամբ. VIII—IX՝ 10։

ՍՍՀՄ Մինիստրների Սովետին կից Կրոնական պաշտամունքների խորհրդի Նախագահ Իվան Վասիլիևիչ Պոլյանսկու մահվան առթիվ փոխանակված հեռագրեր. X՝ 21։

Վեհափառ Հայրապետի հեռագիրը Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին՝ պատրիարքական ընտրության հարցի կապակցությամբ. XI—XII՝ 17։

Տ. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի մահվան առթիվ փոխանակված հեռագրեր. IV—V՝ 15։

Փրկչի Ս. Հարության տոնի առիթով Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի շնորհավորական հեռագիրը Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդին և Գերագույն Հոգևոր Խորհրդի պատասխանը. IV—V· 6։
Փրկչի Ս. Հարության տոնի առիթով թեմերից ստացված շնորհավորական հեռագրեր ու գրություններ. IV—V· 14։
Փրկչի Ս. Հարության տոնի առիթով Նորին Վեհափառության անունով Փարիզում ստացված շնորհավորական հեռագրեր ու գրություններ, IV—V· 11։
Փրկչի Ս. Հարության տոնի առիթով Քույր Եկեղեցիների պետերի հետ փոխանակված շնորհավորական հեռագրեր ու գրություններ. IV—V· 7։

## II. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ամանորի և Ս. Ծննդյան բարեմաղթություններ, I· 22
Առաջին տարին, X· 3։
Եկեղեցական Սահմանադրություն, VIII—IX· 5։
Թախծոտ գերեզմանը, IV—V· 3։
Կանբերի եպիսկոպոսական ժողովի նշանակությունը. VII· 7։
Մեր վերածնունդը և Աֆրիկիան, XI—XII· 8։
Սա է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, մի և անբաժան՝ Հայոց Հայրապետությունը, III· 3։
Ս. Լուսավորչի կանթեղը, II· 9։
Մեր Կաթողիկե Սուրբ Էջմիածին, VI· 6։

## III. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՆԹԱՊՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԱՐԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Մեծ պահոց ժամամուտներ, III· 8։— Աշխարհի մեծ Սուրբը. VI· 12։
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԱՐԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Մեծ պահոց խոհեր, III· 6։— Միասնությունը, I· 31։— Սուրբ Էջմիածին, VI· 17։
ԲԱԶԻՐՅԱՆ ՄԱՇՏՈՑ ԱՐԵՂԱ— Նահատակ կույսեր. VI· 13։
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— Մեկ Մարմին և մեկ Հոգի, VII· 10։— Ոսկեղեն մեծ Սիոնը և Սուրբ Էջմիածին, X· 42։— Պատասխան Տ. Զարեհ եպիսկոպոսին, VIII—IX· 25։
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— Վարդավառ. VII· 22։
ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Մեր նահատակները. II· 12։
ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ— Խաչի խորհուրդը. XI—XII· 18։
Աղոթք առ Սուրբ Աստվածածին, VIII—IX· 23։
Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի ուղևորությունը արտասահման և վերադարձը Մայր Աթոռ Ս. Էջմիածին. IV—V· 22։
Համազգային ուրախություն Ամենայն Հայոց Նորընտիր Հայրապետ Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ընտրության առթիվ. I· 25։
Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի մեկնումը արտասահման, II· 16։
Պաշտոնական հաղորդակցություններ, IV—V· 43։
Սովետական Միության Քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, VI· 27։
Սուրբ Աստվածածնին նվիրված շարականներ. VIII—IX· 22։
Վեհափառ Հայրապետի ճառը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, VIII—IX· 16։

## IV. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Առակք Սողոմոնի (Ա, 2—33), VII· 25։
Առակք Սողոմոնի (ԼԱ, 10—31), VIII—IX· 20։
Ավետարան ըստ Մատթեոսի (Ե, 1—48), VII· 27։
Ավետարան ըստ Ղուկասու (Ա, 26—56), VIII—IX· 21։

## V. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից. VII· 37. VIII—IX· 19. XI—XII· 25։

## VI. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՆԹԱՊՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ— Դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը Մայր Աթոռում. XI—XII· 39։
ՍԱՐԳՍՅԱՆ ԵՂԻՇԵ ԱՐԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Երուսաղեմի Հայոց Պատրիարքական տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և Հյուսիսային Ամերիկայի Հայոց Հայրապետական Նվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Մայր Աթոռում, VIII—IX· 42։
ՍԵԴՐԱԿՅԱՆ Հ.— Շինարարական աշխատանքներ Մայր Աթոռում. VII· 48։
Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի ճառը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում. VII· 13։
Առնության ավարտությունը, X· 64։
Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ Կաթողիկոսի մահվան երկրորդ տարելիցը. IV—V· 61։

Հայրապետական հանդիսավոր պատարագ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, IV—V՝ 44։

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում, VIII—IX՝ 15։

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Օրհնության հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր Տաճարում, I՝ 29։

Հայրապետական քարոզ ամանորի առթիվ Մայր Տաճարում, I՝ 27։

Հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության տասնյակ տարեդարձի առթիվ, X՝ 23։

Ճաշկերույթ Վեհարանում Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի գահակալության տասնյակ տարեդարձի առթիվ, X՝ 28։

Սահմանվար վարդապետական իշխանության տվչության, X՝ 60։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետը Սովետական Հայաստանի քաղաքացի, II՝ 15։

Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի [illegible] խորհրդակցության, VI՝ 20։

Պաշտոնական ընդունելություն և շնորհավորություն Վեհարանի Ծաղկյա դահլիճում Վեհափառ Հայրապետի գահակալության տասնյակ տարեդարձի առթիվ, X՝ 20

Ս. Էջմիածնի Մայր Տաճարի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի տաճարների և նրանց շրջակա շենքերի վերանորոգումն ու բարեկարգումը, VII՝ 46

Սուրբ Աստվածածնի տոնը Մայր Աթոռում, XI—XII՝ 32։

Սփյուռքահայ ուխտավորներ Մայր Աթոռում, VIII—IX՝ 45։

Վարդանանց հիշատակը և Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը Մայր Աթոռում, II՝ 18։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ (լուրեր Մայր Աթոռից). I՝ 33, II՝ 19, III՝ 16, IV—V՝ 46, VI՝ 22, VII՝ 34, VIII—IX՝ 31, X՝ 47, XI—XII՝ 37։

## VII. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ա. Հ.— Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանն այսօր, X՝ 50։

ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ— Հայաստանի պետական երգեցիկ խմբի համերգը Հոգևոր ճեմարանում, XI—XII՝ 87։

Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն Հոգևոր ճեմարանում, XI—XII՝ 20։

Հանդիսակատարություն Հոգևոր ճեմարանում Վեհափառ Հայրապետի գահակալության տասնյակ տարեդարձի առթիվ, X՝ 30։

Հոգևոր ճեմարանի վերաբացումը, VIII—IX՝ 39։

Սրբոց Թարգմանչաց տոնը Հոգևոր ճեմարանում, X՝ 62։

Վարդանանց տոնը Հոգևոր ճեմարանում, II՝ 32։

Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանում, IV—V՝ 50։

Հոգևոր ճեմարանում, VI՝ 28։

## VIII. ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ— Հովվական այցելություն Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմում, XI—XII՝ 97։

ԿԱԼԱՄԴԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ— Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի, XI—XII՝ 92։

ԹՈՒԼՈՒՄԻ ԵՂԻԱԿԻՄ— Վրացայոց թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Վարդան եպիսկոպոս Ախալքալաքում, VII՝ 41։

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ— Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Շիրակի թեմում, X՝ 50։— Շիրակյան խրճիկ, VII՝ 42։

ՍԱՐԳՍՅԱՆ ԽՈՐԵՆ ԱՐԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը Վրաստանի թեմում, VIII—IX՝ 43։

ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ն. (ԲԺԻՇԿ)— Ադրբեջանի թեմն այսօր, XI—XII՝ 100։

Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետը Մոսկվայի Հայոց Սուրբ Հարության եկեղեցում, VII՝ 29։

## IX. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. Գ. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.)— Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը հայ մատենագրության մեջ, I՝ 52, II՝ 44, III՝ 13։— Միջնադարում գործված հայատառ բնագրերի վերծանությունը, IV—V՝ 60։

ԱՃԱՌՅԱՆ Հ. (ՊՐՈՖ.)— Մեսրոպ Մաշտոց, I՝ 40, II՝ 28, IV—V՝ 58, VIII—IX՝ 48, XI—XII՝ 41։

ԱՄԱՏՈՒՆԻ Կ.— Մեսրոպ Թաղիադյան, IV—V՝ 93

ԱՆԱՍՅԱՆ Հ. Ս.— Դիտողություններ Ստեփանոս Սյունեցու կենսագրության վերաբերյալ, VIII—IX՝ 93, XI—XII՝ 68։

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. (ՊՐՈՖ.)— Մի զուգահեռ գրաբարի և աշխարհաբարի միջև, IV—V՝ 59։— Մխիթար Գոշ, II՝ 26։

ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա.— Գլաձորի համալսարանը, IV—V՝ 82։— Գլաձորի մանրանկարչության հիմնադիր վարպետ Մոմիկը, VIII—IX՝ 100, XI—XII՝ 82։

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Սուրբ Էջմիածնի և ռուսաց արքունիքի հարաբերությունների մերձեցումը Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, VIII—IX՝ 78։
ԿԱՆԱՆԴԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Պետրոյան ճեմարանի տեսչապաշտոնության դասախոս, VI՝ 42։
ԽԱՉԱՏՐՅԱՆ Հ.— Արտաշատ քաղաքի տեղագրության խնդրի շուրջը, III՝ 29, IV—V՝ 78։— Հայոց փառքը և նրա վերածնությունը, VIII—IX՝ 79։
ԽՈՒՄՅԱՆ Ա.— Նկարիչ Մանուկյանի արվեստի հիմնական գծերը, III՝ 30։
ԹՈՒՐՇՅԱՆ Հ.— Հայոց կրոնական գործիչ Ս. Ներսես Շնորհալին և Հայ եկեղեցին, IV—V՝ 97, VI՝ 63։— Հայ-Ծարերական եկեղեցական առնչությունները, VIII—IX՝ 80, XI—XII՝ 77։
ՀԵՎՈՆՅԱՆ Կ.— Պատարագներ նին Հայաստանում, VI՝ 87։
Կ. Գ.— Էջմիածնի Մայր Տաճարը սուրբ գրքերի և ճանապարհորդների աշխարհում, I՝ 68։
ՄԱՆԱՆԴՅԱՆ Հ. (ԱԿԱԴ.)— Համառոտ տեսություն հին Հայաստանի պատմության, VI՝ 31, VII՝ 64, VIII—IX՝ 64, XI—XII՝ 48։
ՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲԵՂԱ— Այրի վանք կամ Գեղարդա վանք, VIII—IX՝ 70։
ՆԱՀԱՆ ՍԻՄՈՆ— Կարապետ արքեպիսկոպոս Տեր-Մկրտչյանի, III՝ 40։
ՍԱՀԻՆՅԱՆ Ա.— Նոր նյութեր Էջմիածնի Մայր Տաճարի կառուցվածքի վերաբերյալ, VIII—IX՝ 80, XI—XII՝ 60։
ՍԱՐԳՍՅԱՆ Դ.— Շնհերուտի վանքը, III՝ 20։
ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵԼԻՔ ԱԲԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ)— Մայր Աթոռի վերակազմված թանգարանը, II՝ 20։
ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ.— Այգոյին մեծ բանաստեղծ Րաֆֆին Պատկանյանը, III՝ 49։

## X. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱՇԼԱԿ ՍԻԱՄԱՆ— Գևորգ Գեմիրճյան, XI—XII՝ 117։
ԳՈՒԼԱՆՃՅԱՆ Ն.— Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, II՝ 52։
Հոգեհանգիստ Մեսրոպ արքեպս. Անդրանիկյան, II՝ 23։
Հոգեհանգիստ Տ. Հարություն արքեպս. Մանուկյան, VIII—IX՝ 30։
Հոգեհանգիստ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյան, VIII—IX՝ 37։
Գատմաւորին վարույ և մահուան առ եռանելոյ Սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի. ի Կորյուն վարդապետի աշակերտէ նորին, VI՝ 10։

## XI. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Նորին Սուրբ Օծության Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամախոսությունը, VII՝ 25։
ՂՈՐՂԱՆՅԱՆ Կ.— Հայկական ՍՍՌ Գիտական ակադեմիայի նոր տարին, XI—XII՝ 104։
Հայկական արվեստի ու գրականության տասնօրյակը Մոսկվայում, VI՝ 68։
ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ, I՝ 00, II՝ 56, III, 57, IV—V՝ 106։

## XII. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱՂԱՋԱՆՅԱՆ Ն.— Թարգմանչի գերեզմանը, VII՝ 69։
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Գ.— Սուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը, XI—XII՝ 100։
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Էդ.— Արարատին և Ս. Էջմիածնին չուր, IV—V՝ 104։
ՄԱՆՎԵԼՅԱՆ Ս.— Նվաստիկ Մայր Աթոռի պարտական, XI—XII՝ 112։
Ուղղափառության նոր ժամերի արձագանքները Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Առաջինի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և գահակալության մասին, I՝ 27։
Նոր մատյան շինության Սոֆիայում, XI—XII՝ 113։
Սովետական Հայաստանի 35-րդ տարեդարձի տոնակատարությունը Փարիզի մեջ, II՝ 60։

## XIII. ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

«Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման համար» միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեում, I՝ 44։
Խաղաղության Համաշխարհային Խորհրդի դիմումը, I՝ 43։

## XIV. ԴՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱՆԹԱՊՅԱՆ ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ (ՎԱՐԴԱՊԵՏ) — Իմ մոգվեդի ճերմակ մասը, II՝ 24։
ԼՍԿԻՐՅԱՆ Մ.— Հայրենի երկիր, III՝ 56։
ՓԱՇԼԱԿ ՍԻԱՄԱՆ — Էջմիածին, VII՝ 53։
ՓԱՓԱԶՅԱՆ Փ.— Հայրենիքիս, III՝ 55։

## XV. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՆՈՏԱՑԻԱՆԵՐ. ՆԱՄԱԿՆԵՐ

ԹԱՎԱՔԵԼՅԱՆ, ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ— Նամակ խմբագրությանը, IV—V՝ 116։

ՀԱՅՐԻՅԱՆ Գ.— Դանիել Վարուժան, «Բանաստեղծություններ», IV—V՝ 112։

«Էջմիածին» ամսագիրը և իր ընթերցողները, VII՝ 62։

Վ. Վ.— Ա. Ինճիկյան, «Միքայել Նալբանդյանը»։— «Աղվեսագիրք»։— Աստղի. «Երկերի ժողովածու», հատոր I-ին։— Դ. Դեմիրճյան, «Երկերի ժողովածու», հատոր I-ին։— Աշոտ Հովհաննիսյան, «Շրջիկը պատմա-քննական լույսի տակ»։— Արիստոտել, «Պոետիկա»։— Միրզայի Խերանյան, «Պոեմներ»։— Վ. Նալբանդյան, «Վարդանանց պատերազմը և Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք»-ը»։— Անահիտ Ռաֆիկյան, «Սարոյան»։— Ռաբինդրանաթ Տագորի «Պարտիզպանը» հայերեն, III՝ 60.— Մ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թ. թ.», VI՝ 62։

Ժ.— Խաչատուր Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր 6-րդ։— Գ. Հովսեփյան, «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը»։— Ա. Ինճիկյան, «Միքայել Նալբանդյան», մենագրություն բանաստեղծի կյանքի և գրական գործունեության մասին։— Ա. Ղանալանյան, «Միքայել Նալբանդյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները», II՝ 62։

Ժ. Ձ.— Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», I՝ 62։

## XVI. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Դերենիկ Կարապետի Դեմիրճյան, XI—XII՝ 116։

Հանգիստ արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Գևորգյանի, XI—XII՝ 121։

Հանգիստ արժանապատիվ Տ. Խորեն ավագ քահանա Նոյեմյանի, XI—XII՝ 120։

Հանգիստ Տ. Գարեգին եպիսկոպոս Վրթանեսյանի, X՝ 68։

Հանգիստ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի, VI՝ 24։

## XVII. ԱՅԼԵՎԱՅԼՔ

Երախտագիտություններ, VII՝ 44։

Հայրապետական բարձր գնահատություն, VII՝ 32։

Հայրապետական բարձր գնահատություն, X՝ 71։

Մայր Աթոռի դիվանատան կողմից, XI—XII՝ 122։